



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ЭММА ХАНЗАДЯН

ԷՄՄԱ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՅԼԱՐ - ԴԱՐԱՆԻ

ԷԼԱՌ - ԴԱՐԱՆԻ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1979

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1979

Աշխատութիւնը նվիրված է էլան-Գարանի (Արովյան) նյութական մշակույթի պատմութեանը (մ. թ. ա. III հարամյակից միջնադար): Պեղված նյութերի միջոցով բացահայտվում են բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների մշակույթի բնորոշ հատկանիշները, որպէս էթնիկ նույն միջավայրի մշակութային դարգացման արդյունք: Լուսարանվում են վաղ երկաթի դարաշրջանի «արքայական քաղաքների» սոցիալ-տնտեսական էութեան հարցերը: Հայտնաբերված հարուստ նյութերի օգնութեամբ որոշվում է էլան-Գարանի հուշարձանի տեղը ոչ միայն Հայկական լեռնաշխարհում, այլև առաջավորասիական և ընդհանուր կովկասյան միջավայրում: Գիրքը նախատեսված է հնագետների և ընթերցող լայն մասսաների համար:

Պատասխանատու խմբագիր. պատմական գիտությունների դոկտոր

**Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Գիրքը հրատարակութեան են նրաշխարհի գրախոսներ՝ պատմական գիտությունների թեկնածուներ  
Ռ. Մ. ՔՈՐՈՍՅԱՆԸ և Հ. Ռ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ

**Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Հայկական լեռնաշխարհը դեռևս նեոլիթյան դարաշրջանից բնակեցված է եղել վաղ երկրագործական-անասնապահական տեղաբնիկ ցեղերով, որոնք մշակութային զարգացման բավական բարձր մակարդակի են հասել հատկապես վաղ բրոնզի դարաշրջանում, որի պատմության և մշակույթի ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում Առաջավոր Ասիայի և Կովկասի այդ հեռավոր անցյալի լուսարանման համար:

Մոտ 300,000 կմ<sup>2</sup> տարածք՝ բնդրվող, այսպես կոչված, «լեռնային կրդու» բարեբեր հովիտները, անտառապատ սարավանդերն ու ալպյան մարգագետիններով լեռնային գոտիները, մ. թ. ա. III հազարամյակից սկսած ծածկրվում են բնակատեղիների բավական խիտ ցանցով, որոնց ուսումնասիրությունը մեծ թափ է ստանում հատկապես վերջին տասնամյակում: Նորանոր հուշարձաններ են հայտնաբերվում և ուսումնասիրվում Աբախատյան դաշտավայրում, Շիրակում, Գուգարում, Արցախում: Ուսումնասիրություններ են կատարվում նաև պատմական Հայաստանի տարածքում, պեղվում և ուսումնասիրվում են հարբերդի ոսկերեք հովտի տասնյակների հասնող հուշարձանները:

Հայկական լեռնաշխարհի այդ ուշագրավ մշակույթը կրող հնագույն բնակիչների պատմության և էթնո-մշակութային զարգացման կարևորագույն օջախներից մեկը էլան է: Այն գտնվում է Երևանից 16 կմ հյուսիս-արևելք: Մեր օրերում էլանը կրկին դարձել է քաղաք և այժմ կրում է Արովյան անունը:

Էլանը տեղավորված է պատմական Կոտայքի սարավանդի վրա (բարձրությունը ծովի մակերևույթից 1200—1500 մ), որը կազմված է վերին պլիոցեն-ստորին շոբոնդական հասակի դոլերիտային և ավելի երիտասարդ անդեզիտա-բազալտային լավաներից: Կոտայքի սարավանդը սկսվում է Հատիսից ու Գուգարասարից (Գեղամա լեռնավահանի արևմտյան կողմում) և հարավ-արևմուտքում հասնում մինչև Նորֆի դարափուլը: Նրա արևմուտքում Հրազդանի գետահովիտն է, իսկ դեպի արևելք տարածվում է Ավանի գոգավորությունը, որտեղ ստորին միոցենի աղաբեր շերտերն են կերակրի աղի վիթխարի պաշարներով: Փանաֆեոից հարավ, Կոտայքի ալիքավոր լավային սարավանդը երկու լայն աստիճաններով (Փանաֆեոի և Արաբկիրի) իջնում է Աբախատյան հարթավայրը և Երևանի հյուսիսային մասում ավարտվում գառիքափ լանջերով:

Սարավանդի մակերևույթին կան առանձին հրաբխային կոներ, որոնցից մեկի վրա, Երևան—Քրիլիսի խճուղուց դեպի աջ, Արովյան քաղաքի հարավային ծայրաքևում տեղավորված է հինավուրց ամրոցը (նկ. 1):

<sup>1</sup> «Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն», Երևան, 1971, էջ 65—66, 309:

Ամրոցից ընդամենը 100 մ դեպի արևելք, պլիոցենի և եոպլիոցենի լճային նստվածքների վրա, սպիտակ ավազների մեջ տեղավորված է բնականտեղիի դամբարանադաշտը:

Բնականտեղիի շրջակա բարձունքներում տեղանքը փափուկ է, մեծ մասամբ դուր են և լայն տարածում ունեն կարկանդակները (փարաշեղջեր), որտեղ գերակշռում է տրապեզոիդային և օշինդրային բուսականությունը, սակայն սարավանդի ցածրադիր մասում, դեպի Կոտայք (Եղնավան) գյուղը ձգվող զոգավորությունում լայն տարածում ունեն շագանակահողերը<sup>2</sup>: Չնայած էլաոն ունի ցամաքային շուր կլիմա, և մթնոլորտային տեղումները (400—500 մմ) չեն բավարարում հողագործության պահանջները, սակայն Ակունք գյուղի մոտ, ստորին շորոհողական հասակի լավաների տակից բխող ֆաուստին աղբյուրները հնագույն ժամանակներից ի վեր ոռոգման լայն հնարավորություն են ստեղծել և էլաոի անպտուղ, փափուկ շրջակայքում դաշտավայրը դարձրել ծաղկող մի օազիս, հարուստ, փարթամ բուսականությամբ և պտղատու այգիներով (Նկ. 2):

Այժմ էլ այդ ֆաուստին աղբյուրներից հոսող ջուրը էլաոնում բաժանվում է երկու թևի: Բարձրորակ խմելու ջրի մի մասը մատակարարվում է Արովյան ֆաղափին, մյուս մասը օգտագործում է Երևանի բնակչությունը: Երկար ժամանակ ջրանցքը սնվել է այդ ջրով, որը հոսելով էլաոի բնականտեղիի հարավային կողմով, թեփվել է դեպի արևմուտք և անցնելով խնուղու տակով, միացել Հրազդան գետին:

Սակայն էլաոի բնակլիմայական բարենպաստ պայմաններին գումարվում է նաև նրա առանձնահատուկ աշխարհագրական դիրքը: Երևանի զոգավորությունից էլաոը բարձր է ընդամենը 250—300 մ և նրանից է սկսվում մուտքն Արարատյան դաշտավայրից դեպի լեռնաշխարհ, դեպի հյուսիս:

Այժմ էլ էլաոի եզրով է անցնում Երևան—Քրիլիսի խնուղին, որը ժամանակին արհունական ճանապարհ է եղել, և էլաոը, ինչպես ստորև կտեսնենք, դառնի ընթացքում պահակատան դեր է կատարել այդ ճանապարհին:

Գիտական աշխարհին էլաոը հայտնի է դարձել սկսած անցյալ դարի 60-ական թվականներից, երբ Մեսրոպ Սմբատյանցն առաջին անգամ հրատարակեց էլաոնում հայտնաբերված Արգիշտի I-ի սեպագիր արձանագրությունը և Մ. Նիկոլսկու վերձանմամբ պարզվեց<sup>3</sup>, որ էլաոը նախքան ուրարտական նվաճումները, կրել է Գարանի անունը<sup>4</sup>:

Հ. Անաոյանն այն ստուգաբանում է հնդեվրոպական լեզուներով՝ «իրանական փոխառությունը պահլավերեն «*daragan*» ձևից, հմմտ. Ավեստայի «*darana*» ամբողջություն», «բնակություն», «ապաստարան»: Այս բոլորը ծագում են *dar-* արմատից, բայց այս ձևով կան իրանական երեք տարբեր արմատներ. 1) *dar-* «նեղել», 2) «հսկել», 3) «պահել»<sup>4</sup>:

Ուրարտացիները, հավանաբար, տեղաբնիկների «Գարան»-ը արտահայտել են Գարանի ձևով՝ ավելացնելով սեփական տեղանուններին բնորոշ վերջավորությունը<sup>5</sup>:


<sup>2</sup> Նույն տեղում, էջ 311:

<sup>3</sup> М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, МАК, т. V, 1896, М., стр. 104—105.

<sup>4</sup> Գարան՝ հայերեն ծածուկ տեղ, թարգման, որ պահվելով, թշնամու վրա անակնկալ հարձակում են գործում, որոգայթ, թակարդ, ամբանալու տեղ:

<sup>4</sup> Հ. Անաոյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երևան, 1926, էջ 440:

<sup>5</sup> Ուրարտական տեղանունները սովորաբար վերջանում են -ու-ով, տվյալ դեպքում տեղաբնիկների «Գարան» տեղանվան վերջին «ն»-ն պատահաբար համընկել է ուրարտական վերջավորության ո-ի հետ:



Նկ. 1. Գարանի ամրոցը հարավ-արևելյան կողմից:



Այդ հնագույն բնակատեղիի մասին ամենավաղ գրավոր տվյալը վերաբերում է ուրարտական ժամանակաշրջանին:

Հայկական աղբյուրներում էլաոբ հիշատակվում է սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանի և Ղևոնդ Ալիշանի մոտ:

էլաոբ հնագիտական հետազոտություններ և պեղումներ են կատարել Ե. Լալայանը (1927) և Ե. Բայբուրդյանը (1929):

Ե. Լալայանը տարբեր դարաշրջանների մի շարք հուշարձաններ է հետազոտել էլաոբի շրջակայքում, պեղումներ կատարել ամրոցի լանջերում և սեպագիր արձանագրությունը կրող բլրի հարթ գագաթին: Ե. Բայբուրդյանը նույնպես կարճատև ստուգողական պեղումներ է կատարել ամրոցի հարավ-արևելյան լանջին:

Չնայած Ե. Լալայանի և Ե. Բայբուրդյանի հետախուզական պեղումներով ձեռք բերված նյութերը հատվածային բնույթ էին կրում և բավարար չէին բրոնզի դարաշրջանի պատմության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, այնուամենայնիվ նրանք հաստատում էին բրոնզի դարաշրջանի բազմաթիվ հուշարձանների գոյությունը էլաոբի տարածքում, որն, ինքնըստիներջան, կարևոր նշանակություն ուներ և հետևակարևոր էր բացում այդ դարաշրջանի հուշարձանների ուսումնասիրության համար:

Մենք 1960—1961 թթ. և 1969 թ. պեղել ենք ավագահանքի տարածքում տեղեկություններ համարանադաշտը, իսկ 1973 թվին՝ ամրոցը:

Բացի պեղումներից, էլաոբում, հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են տարբեր դարաշրջանների նյութեր, որոնք պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Մեծահանակ են էլաոբի ավագահանքի շահագործման ժամանակ 1947, 1954, 1963 թթ. պատահականորեն գտնված դամբարանային նյութերը (ՀՊՊԹ, № 1805, 1813, 1937 և 2261 ժողովածուներ): Ուշագրավ են նաև Արթուրյան ֆաղափի տարածքում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ եկած հնությունները:

Այսպիսով, պեղումներով և հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել ու կուտակվել են տարատեսակ, տարբեր ժամանակների հնագիտական նյութեր:

Ներկա աշխատության նպատակն է ուսումնասիրել էլաոբի տարածքում հայտնաբերված նյութերը և նրանց օգնությամբ հնարավորության սահմաններում հնագիտական մեթոդներով ներկայացնել տեղաբնիկների հասարակական կառուցվածքի պատմական մեկնաբանման բարդ պրոբլեմները:

էլաոբում այժմ հայտնի հուշարձանները բնորոշում են մ. թ. ա. III—I հազարամյակների տեղական մշակույթի զարգացման հաջորդական փուլերը: Հնարավորության սահմաններում տրվում է բրոնզի դարաշրջանի մշակույթի զարգացման յուրաքանչյուր փուլի բնութագիրը:

Աշխատությունում որոշվում է էլաոբի ժամանակագրությունը և մշակութային տեղը Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան հայտնի հուշարձանների շարքում:

Թաղման ձևերի ուսումնասիրությունը, իրերի վերլուծությունը հնարավորություն են տալիս բնութագրելու Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների կուլտուր-պատմական կյանքի զարգացման տարբեր կողմերը:

## ՉԼՈՒՄ I

### ԴՍՐԱՆԻ ԱՄՐՈՑՆ ՈՒ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

էլաոբի հարավային կողմում բարձրանում են երեք բլուրներ, որոնք հրաբխային, բազալտային լավաներ են և երկրաբանական պրոցեսների հետևանքով քայքայվելով, մնացել են բլրաշարքի ձևով:

Ամրոցն իր միջնաբերդով տեղավորված է արևելյան, եզրային մեծ բլրի վրա: Այն հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղված, ձվաձև շրջագծով, շուրջ 400 մ երկարությամբ և 250 մ լայնությամբ մի բլուր է, որ զբաղեցնում է 10 հա մակերես: Շրջակայքի նկատմամբ նրա բարձրությունը 40—45 մ է (նկ. 1):

Բլուրը բլուր կողմերից օղակված է պաշտպանական կառուցվածքներով: Նրա դարավանդներում այժմ էլ տարածվում են ժայռաբեկորներով շարված, հավանաբար տարբեր ժամանակներում կառուցված, կիկլոպյան պարիսպների մնացորդները: Հարավային կողմում՝ ձորակով անջատվող բարձրադիր հրաբխային զանգվածը (որի լանջին Արգիշտի I-ը թողել է իր արձանագրությունը) հարավից ծառայող մի հսկա պատնեշ է:

Պեղումներով ապացուցվեց, որ բլուրը բնակեցված է եղել սկսած մ. թ. ա. III հազարամյակից մինչև միջնադարը ներառյալ: Նրա լայնադիր դարավանդները ծածկված են եղել կլոր կացարաններով, որոնք շինարարական երկու շերտերով հանդերձ պահպանվել են բլրի հարավային դարավանդներում, իսկ հյուսիս-արևելյան լանջում այժմ էլ կանգուն են Ե. Լալայանի պեղած քարաշեն կլոր շինությունները:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում՝ բլրի հարավային լանջի արհեստական, լայնադիր

դարավանդները նույնպես բնակելի են եղել և շրջափակվել են նրանց եզրին տեղադրված ժայռաբերով կառուցված կիկլոպյան պարիսպներով, որոնք հատված առ հատված պահպանվել են շորս դարավանդներում:

Բլրի գագաթին ամրոցն է՝ պաշտպանական կիկլոպյան պարիսպներով շրջափակված (նկ. 2): Այն Դարանի քաղաքի միջնաբերդն է, որի մասին հիշատակություն է թողել Արգիշտի I-ը:

Արձանագրությունը փորված է ամրոցի դիմաց՝ նրա հարավային կողմում, ձորակով անջատվող վերը հիշատակված անմարդաբնակ բլրի լանջին, մի վիթխարի քառանկյունաձև ժայռաբեկորի վրա (նկ. 3):

Տասր տողանոց արձանագրությունն ազդարարում է.


- (1) Խալդի (աստվածն) արշավեց, իր զենքին
- (2) հպատակեցրեց էթիունի երկիրը:
- (3) Խալդին ուժեղ է, Խալդիի զենքը ուժեղ է:
- (4) Խալդյան զորություն արշավեց
- (5) Արգիշտին, Մենուայի որդին,
- (6) նվաճեց Ուլուանիի երկիրը՝
- (7) Դարանի քաղաքի երկիրը: Խալդյան
- (8) մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին,
- (9) թագավոր (է) հզոր, թագավոր՝ մեծ, թագավոր՝ Բիայնիլի,
- (10) տերը՝ Տուշպա քաղաքի<sup>2</sup>:

<sup>1</sup> Արձանագրությունն ունեցել է մի շարք հրատարակություններ, տե՛ս Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, стр. 259.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 259—260, հայերեն թարգմանեց՝ Ն. Վ. Հարությունյանը:

Այսպիսով, Արգիշտի I-ի արձանագրությունից պարզվում է, որ մենք գործ ունենք նրա կողմից նվաճված Ուլուանի երկրի և նրա Դարանի քաղաքի հետ, քաղաք, որ ծավալվել է ամրոցի առջև, զբաղեցրել ներկայիս Աբովյան քաղաքի գրեթե ամբողջ տարածքը: Նորակառույց քաղաքի

հնագույն ժամանակներից ի վեր ստրատեգիական կարևոր նշանակություն է ունեցել և, ինչպես իր ժամանակին նշել է Մ. Նիկոլսկին, լեռնաշխարհից եկող ճանապարհը էլառով է անցել դեպի Արաքսի և Հրազդանի հովիտները<sup>3</sup>, այսինքն դեպի Արարատյան դաշտավայրը:



Նկ. 3. Արգիշտի I-ի արձանագրությունը՝ փորագրված Դարանի ամրոցի դիմացի ժայռին:

շինարարության ժամանակ, նրա տարբեր հատվածներում հայտնաբերվել են քաղաքն օղակող պարիսպների մնացորդներ՝ ճարտարապետական համալիրներ, նկուղային հարկեր՝ գինու մառաններով (նկ. 114), հնագիտական տարատեսակ իրեր, խեցեղենի բեկորներ, որոնք հիմնականում բնորոշ են մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի մշակույթին, այսինքն ժամանակով կապվում են Դարանի ամրոցի հետ (նկ. 115—117, աղ. XVIII, 1—6):

Էլառը, իր աշխարհագրական դիրքի շնորհիվ,


Ղևոնդ Ալիշանի վկայությամբ, անգամ XIX դարում, այդ արբունական ճանապարհի վրա էլառը պահակատան դեր է կատարել<sup>4</sup>:

Այսպիսով, էլառն այն կարևոր դարբան էր, որը նվաճելով կարելի էր մուտք գործել Արարատյան դաշտավայրից դեպի լեռնաշխարհ և հակառակը:

<sup>3</sup> М. В. Никольский, «24. աշխ., էջ 103.

<sup>4</sup> Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Այրարատ, բնաշխարհ Հաստատանայց, տեղեկագրեաց Մ. Մխիթարեան, Վենետիկ, 1890, ս. Ղազար, էջ 290:





Սակայն Արարատյան դաշտավայրից դեպի էլառ, դեպի Դարանի ճանապարհը հեռավոր ժամանակներում դժվար թե Երևան—Քանաքեռ—Բալասոճիտ (Մհոբ) գծով ընթանար: Նախ՝ էլառի ամրոցն ընկած էր Երևան—Քբիլիսի մայրուղուց մոտ 1,5—2 կմ դեպի արևելք, որպիսի հանգամանքը գրկում էր նրան այդ ճանապարհի վրա դարբաս ծառայելու, ավելի ճիշտ, այն պահանջները հնարավորությունից, մյուս կողմից, այդ ճանապարհին չկար և ոչ մի ամրոց: Սակայն խոշոր նշանակություն ունեցող մայրուղին, որն անցնում էր ժամանակին բավական հզոր մի երկրի կենտրոնով, ինչպիսին Ուլուանին էր, անշուշտ, հարավից պետք է պաշտպանված լիներ:

Հավանաբար, հնագույն ճանապարհը Երևանից էլառ անցել է ոչ թե Քանաքեռով, այլ Ավանով, Առինջ գյուղի և Բալասոճիտի արևելյան եզրով, Շահաբ գյուղով մտել էլառի դաշտավայրը և Դարանի ամրոցի մոտով թեքվել հյուսիս ու միացել Քբիլիսյան խճուղուն:

Հետախուզության ընթացքում պարզվեց նաև, որ Ավան—էլառ ճանապարհին բարձրադիր բլուրների վրա կիկլոպյան պարիսպներով պաշտպանված ամրոցներ կան, որոնք, անշուշտ, Ուլուանի երկրի կենտրոնի՝ Դարանի ամրոցի և քաղաքի համար ֆորպոստի դեր են կատարել:

Հրաբխային կոներ ներկայացնող այդ բլուրներից մեկը գտնվում է Ավան—էլառ ճանապարհի ձախ կողմում, մոտավորապես Առինջի և Բալասոճիտի միջև: Ամրոցը պաշտպանված է որմնահեցերով (կոներֆորսերով) կազմված կիկլոպյան մի հզոր պարսպով: Հյուսիսային կողմում այն ունի բավականաչափ յուրօրինակ մուտք, որը պաշտպանական հետաքրքիր մի կառույց է: Ամրոցի ներսում պահպանվել են ճարտարապետական համալիրներ՝ ուղղանկյուն բազմասենյակ շինություններով: Բլուրը հատկապես հյուսիս, հյուսիս-արևելյան կողմերում ունի լայնադիր, արհեստական դարավանդներ, որոնք նույնպես հնագույն ժամանակներից ի վեր բնակեցված են եղել:

Դարավանդներում, ինչպես և ամրոցի ներսում գտնված նյութերը համոզում են, որ բլուրը բնակելի է եղել սկսած մ. թ. ա. III հազարամյակից մինչև ուրարտացիների նվաճումները, հավանաբար նաև ավելի ուշ: Ամրոցում հայտնաբերվեցին վաղ բրոնզի սև փայլեցրած խեցեղեն, միջին բրոնզին բնորոշ գունազարդ կավամանների բեկորներ: Սակայն պեղումներից հանված նյութերի մեջ գերակշռում է նախաուրարտական շրջանի խեցեղենը:

Այսպիսով, Ավան—էլառ ճանապարհով թըշնամին անարգել շէր կարող անցնել և, անշուշտ, պետք է հանդիպեր այս ամրոցի բնակիչների դիմադրությանը:

Ստրատեգիական տեսակետից ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում վերոհիշյալ ճանապարհին կառուցված երկրորդ պարսպապատ ամրոցը: Այն գտնվում է Շահաբից էլառի դաշտը մտնող ճանապարհից աջ, Արամուսից դեպի հարավ-արևմուտք, բնական մի բարձրադիր բլրի վրա, որին տեղացիները «Խուղոյի սար» են անվանում (նկ. 4): Բլրի գագաթը պաշտպանված է կիկլոպյան պարսպով, իսկ ամրոցի մակերեսով մեկ սփռված ուրարտական ժամանակաշրջանի մ. թ. ա. VIII—VII դդ. խեցեղենը՝ կարմիր թասերի-փիլանների, գավերի-կոնքերի բեկորներն անվիճելի են դարձնում ամրոցի ուրարտական ժամանակաշրջանին վերաբերելը: Սակայն ամրոցի տարածքում գտնված նախաուրարտական շրջանի սակավաթիվ նյութերը համոզում են, որ այդ ամրոցը տեղավորված լինելով Դարանի տանող մուտքի մոտ, անշուշտ, մինչև ուրարտացիները նույնպես ֆորպոստի դեր է կատարել Դարանի մատուցներում: Բլրի դիրքն այնպիսին է, որ Դարանին նվաճելուց հետո, ինչպես ստորև կտեսնենք, ուրարտացիները գերադասել են նոր ամրոց կառուցել կամ ամրանալ Արարատյան դաշտավայրից դեպի Դարանի հովիտը տանող այդ մուտքի եզրին, Արամուսի բլրի վրա:

Նվաճելով Դարանի ամրոցն ու նրա քաղաքը, այսինքն Ուլուանի երկրի կենտրոնը, Արգիշտի I-ը ապահովում էր անարգել ճանապարհը դեպի հյուսիս: Այդ իսկ առումով, բնականաբար, Դարանի ամրոցն ուներ ռազմաստրատեգիական, ինչպես նաև քաղաքական խոշոր նշանակություն, ուստի պատահական չէ, որ Արգիշտին ամրոցի դիմաց փորագրել է տվել իր հաղթանակը նշանավորող սեպագիր արձանագրությունը, որպես ամրոցի նվաճման կարևոր վավերագիր:

\* \* \*

էլառի ամրոցի գագաթին միջնաբերդն է, որի հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմում, այսինքն ճակատային մասում երկու շարքով պահպանվել են դարավանդների վրա կառուցված պաշտպանական պարիսպները (նկ. 5)<sup>5</sup>:

Միջնաբերդն անմիջապես օղակվում է բլուրի գագաթի եզրագծով տարածվող հնագույն

<sup>5</sup> Ամրոցի շահագրությունները կատարել են ճարտարապետներ Յու. Քամանյանը և Շ. Ահարոնյանը:

կիկլոպյան մի պարսպով, կառուցված՝ խոշոր և անտաշ բազալտի բեկորներով: Այն զերծ է որմնահեցերից և ունի ուղիղ համապատասխան կոր գծագրություն: Պահպանվել է մոտ 0, 8 մ լայնությամբ և 0,7 մ բարձրությամբ, երկու իրափ վրա դրված քարերի շարքով: Տեղ-տեղ նշմարվում են պատի միայն հիմքի քարերը:

Վել է երկու կողմերում դուրս բերված որմնահեցային ոչ մեծ ելուստներով: Մուտքի նկատմամբ ձախ թևի որմնահեցն անկյունային է և նրա թևը շարունակվում է դեպի ներս: Անշուշտ, այն նույնպես պաշտպանական նշանակություն է ունեցել, հնարավորություն ստեղծելով թշնամուն մուտքի ներսում ևս հարվածելու: Ստորև կտես-




Նկ. 4. Էլտոի դաշտավայրը, աջ կողմում Արամուսի բլուրը՝ ուրարտական ամրոցով:

Պարսպի մուտքը բլրի հյուսիս-արևմտյան կողմում է, այսինքն այն տեղադրել են միջնաբերդի ոչ ճակատային մասում, այլ նրանից մի փոքր արևմուտք, իսկ ամրոց տանող ճանապարհն անցնում է նրա հյուսիսային կողմով, պարսպին զուգահեռ, բլրի ցածրադիր լանջով: Մուտքի նման տեղադրումն, անշուշտ, պաշտպանական նշանակություն է ունեցել, նման դեպքում հարձակվողներին մշտապես հսկողության տակ առնելու՝ ճանապարհի ցանկացած հատվածում նրանց հարվածելու հնարավորություն ստեղծելով: Մուտքի բացվածքը լայն է (4, 76 մ), ինչպես չափագրությունում է ցույց տրված, այն ամրաց-

նենք, որ նրա առջև տարածվող մեծ աշտարակը ժամանակով չի կապվում այս վերջինիս հետ և հետագայում է կառուցվել:

Պարսպի մուտքը բացված է ժայռի բարձր եզրին և դեպի միջնաբերդ մուտքն իրագործվել է, անշուշտ, վեր բարձրացող աստիճանավանդակով: Ներկայիս գերեզմանները փորելիս այս պարսպի հիմքերի մոտ դուրս թափված հողում հայտնաբերվեցին մ. թ. ա. III հազարամյակին բնորոշ սև փայլեցրած խեցեղենի բեկորներ: Բացի այդ, ամրոցի կիկլոպյան պարսպի շարվածքում Ե. լալայանը գտել է նույն ժամանակի սև փայլեց-




Մ-4:200




▬	Մ.թ.Ա. III	<Ս.Զ.
▬	Մ.թ.Ա. II	<Ս.Զ.
▬	Մ.թ.Ա. I	<Ս.Զ.



Է Լ Ա Ռ  
 ԿՈՏԱՅՐԻ ԶՈՅԱՆ  
 ՂԱՐԱՍՆԻ  
 ԱՄՐՈՅԻ ԳԵՆԱԿԼՈՐ ԿՈՏԱԿԱԳԻՐՁ



Մ - 1:200

	Մ.Ձ.Ա. III	ՀԱԶ.
	Մ.Ձ.Ա. II	ՀԱԶ.
	Մ.Ձ.Ա. I	ՀԱԶ.

հնագույն պարսպի մուտքը, երկրորդ շարքի պարսպի կառուցողները նրա առջևում կանգնեցրած, ուղիքի գարդանկարով, վարդագույն աստառով խեցու բեկորները<sup>6</sup>:

Նկարագրված կիկլոպյան պարիսպն իր վերահիշյալ հատկանիշներով նման է Հայկական լեռնաշխարհի հնագույն ամրոց-բնակատեղիների պարիսպներին և, ամենայն հավանականությամբ, պատկանում է Գարանի ամրոցի վաղ շերտին, այսինքն վաղ բրոնզեդարյան ամրոցին:

Նման պարիսպներ ունեն Սառնաղբյուր գյուղի «Ղալաշի», «Քոփ քար» և Հոռոմ գյուղի ամրոցները, որոնց մեջ հետախուզական պեղումներով հայտնաբերված նյութերն ապացուցում են, որ նրանք հիմնականում թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակով<sup>7</sup>:

Ռելիեֆին համապատասխան գծագրությամբ պաշտպանական պարիսպ է ունեցել Մուխաննաթ-թափայի ստորին շերտի ամրոցը<sup>8</sup>, Շրեշ-բլուրը<sup>9</sup>, Գառնիի վաղ բրոնզեդարյան ամրոցը<sup>10</sup>, Կարսի շրջանի վաղ բրոնզեդարյան մի շարք հուշարձաններ<sup>11</sup>: Շենգավթի բնակատեղին պաշտպանված է որմնահեցեր ունեցող պարսպով<sup>12</sup>:

Այսպիսով, որմնահեցերով կիկլոպյան պարիսպների ավանդույթը բավական խոր արմատներ ունի: Այն սկիզբ առնելով դեռևս մ. թ. ա. III հազարամյակում, դառնում է Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան ամրաշինության բնորոշ հատկանիշը:

Պաշտպանական պարիսպներով են շրջապատված նաև մի շարք այլ վաղ բրոնզեդարյան բնակատեղիներ՝ Մաղկայի (Մալկա)<sup>13</sup>, Պարսկահայքի (Իրանական Ադրբեջան) Գեոյ-թեփեի «X2»

շերտի<sup>14</sup> և Յանիկ-թեփե վաղ բրոնզ I-ի ներքևից՝ III հորիզոնի բնակատեղիները<sup>15</sup>:

Ավելորդ չէ նշել, որ էլաոի վերահիշյալ կիկլոպյան պարիսպն իր ուղղաձիգ պատերով և մուտքը պաշտպանող որմնահեցերով հար և նման է Տրոյա I-ի պարսպին, որը վերագրվում է վաղ բրոնզի ամենավաղ փուլին<sup>16</sup>:

Այսպիսով, էլաոում հայտնաբերված հնագիտական նյութերը, ինչպես նաև վերահիշյալ գուգահեռը, հնարավորություն են տալիս Գարանի ամրոցի ամենավաղ կիկլոպյան պարիսպը թվագրելու մ. թ. ա. III հազարամյակի սկզբով:

Գարանի ամրոցի միջնաբերդը պաշտպանող կիկլոպյան պարսպի երկրորդ շարքը կառուցված է նախորդից մեկ դարավանդ ցած (նկ. 5,6): Այն ունի 3,0 մ հաստություն, շարված է նույնպես բազալտի անմշակ, խոշոր բեկորներով:

Պարսպի հյուսիսային ծայրաթևում հետիոտնի համար դեպի միջնաբերդ տանող մի նեղ մուտք է կառուցվել, որը երկու կողմից պաշտպանվել է որմնահեցերով: Հատկապես լավ է պահպանվել մուտքի աջ թևի որմնահեցը: Այն կառուցված է երեքից-չորս իրար վրա դրված խոշոր ծայրաթևկորներով: Պարսպի մյուս քարերի համեմատ այս աշտարակի արևելյան եզրը շարված է ավելի կանոնավոր և համեմատաբար խոշոր քարաբեկորներով: Այն ունի մոտ 4,0 մ երկարություն և պահպանվել է մոտ 2,0 մ բարձրությամբ: Աշտարակը դեպի վեր շարունակվելով, միացել է հնագույն պարսպի հիմքի պահպանված մասին: Մուտքը շատ նեղ է, ունի 1,0 մ լայնություն: Տեղ-տեղ երևում են դեպի միջնաբերդ տանող աստիճանները: Մուտքի որմնահեցից դեպի աջ, մոտ 5,9 մ հեռավորության վրա կառուցված է ևս մի ուղղանկյուն որմնահեց: Այն իր շափերով մասամբ տարբերվում է նախորդից (ունի 6,05 մ երկարություն, ելուստի լայնությունը 0,65 մ է), որից հետո պարիսպը դեպի արևմուտք ուղիքի համապատասխան, ուղիղ գծով շարունակվելով, ամրոցի ճակատային մասում հաստանում է և գլխավոր մուտքի մոտ ավարտվում առաջ եկող հզոր մի աշտարակով: Այսպիսով, օգտագործելով

<sup>6</sup> Б. А. Куфтин, Урартский «колумбарий» у подшвы Арабата и куро-аракский энеолит. Вестник Музея Грузии, т. XIII, Тбилиси, 1944, стр. 103, рис. 57.

<sup>7</sup> Կ. Կ. Աֆաղաբյան, Գիտությունների ուրարտական ամրաշինության վերաբերյալ, ՊՐՀ, Երևան, 1972, № 2, էջ 152—153:

<sup>8</sup> Ե. Բայրուդյան, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, ՀեՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 2, Երևան, 1937, էջ 276:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 210:

<sup>10</sup> Է. Խանգաղյան, Գառնի, IV, Երևան, 1969, էջ 23:

<sup>11</sup> W. Lamb, The culture, of North-East Anatolia and its Neighbour, AS, IV, 1954, p. 26.

<sup>12</sup> Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 171:

<sup>13</sup> Б. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1940, стр. 108.

<sup>14</sup> T. Burton-Brown, Excavations in Azarbaijan, 1948, London, 1955, p. 35.

<sup>15</sup> C. Burney, Excavations at Janik-Tepe (North-West Iran) „Iraq“, v. XXIII, № 2, 1961, p. 138—141.


<sup>16</sup> W. Müller, Troja, Wiederentdeckung der Jahrtausende. Leipzig, 1971, s. 36—38, 55—56, fig. 16, 28.



# Է Լ Ա Ռ

ԿՈՏԱՅԻ ԶԻՔՆՆ

ԴԱՐԱՆԻ  
ԱՍՐՈՅԻ ՀԱՏԱԿԱԿԱԻԾԸ






Է Լ Ա Ռ

ԿՈՏԱՅՔԻ ԶՐԶԱՆ

ԴԱՐԱՆԻ

ԱՄՐՈՅԻ ՃԱԿԱՏԸ Ա-Բ





աշտարակը կառուցվել է ամրոցի հատկապես արևելյան կողմում, որովհետև այս կողմից շատ լավ երևում է Արամուսի ամրոցը, որտեղից ազդանշաններով կարող էին զգուշացնել թշնամու երևալը, բացի այդ, առջևում սփռված էր դաշտավայրը, որտեղից կարելի էր սպասել հարավից եկող թշնամիներին:

Դարանի միջնաբերդի արևմտյան կողմում անմիջապես բակն է, որը զբաղեցնում է մոտ 1000 մ<sup>2</sup> մակերես: Ամրոցի հանույթում տեղադրված են բակի արևմտյան ծայրաթևում կիկլոպյան պարսպին կից շինությունները և նրա առջևում տարածվող քառասենյակ կացարանների համալիրը, որոնք, անշուշտ, ժամանակով ավելի երիտասարդ են, չեն կապվում միջնաբերդի համալիրի հետ և հավանաբար պատկանում են հելլենիստական ու միջնադարյան շերտերին (նկ. 4):

Ինչ վերաբերում է միջնաբերդի ներքին կառուցվածքին, ապա, բնականաբար, այն ժամանակի ընթացքում պետք է որոշակի փոփոխություններ կրած լինի: Սակայն առանց պեղումների հնարավոր չէ բացահայտել տարբեր դարաշրջաններում նրա պատերի շարվածքի, հարտարապետական ձևերի և համամասնությունների կրած փոփոխությունները: Անշուշտ, պեղվելու դեպքում միջնաբերդի կառուցվածքների ժամանակը որոշելու հարցում մեծ նշանակություն կունենար նաև հայտնաբերված հնագիտական նյութը:

Միջնաբերդի չափագրությունը կատարվել է պեղումները նախապատրաստելու նպատակով, ուստի նրանում հնարավոր են որոշ շեղումներ և անճշտություններ: Այժմ այն պեղել այլևս հնարավոր չէ, քանի որ ամրոցը դարձել է գերեզմանատուն, որի պատճառով շինությունների մեծ մասը քանդվել են, ոչնչացել:

Ամրոցն ունեցել է նաև գաղտնի մուտք: Բլրի հարավահայաց լանջի ստորոտում պահպանվել է միջնաբերդից ցած իջնող ժայռաբարձրով շինված մի գետնուղի: Ենթադրվել է, որ այն ամրոցի պաշարման ժամանակ բլրի ստորոտով հոսող առվից ջուրը բերելու նպատակով է կառուցված<sup>17</sup>: Չնայած այն չի պեղված, սակայն նրա արտաքին տեսքը, բացվածքը համոզում են, որ միջնաբերդը հարավային կողմից ստորերկրյա գաղտնի մուտք է ունեցել և, անշուշտ, ամրոցի պաշարման ժամանակ այն մեծ դեր է կատարել ինչպես ջրով մատակարարելու, այնպես էլ ար-

տաքին աշխարհի հետ կապ պահպանելու համար: Այսպիսով, ամրոցի պաշտպանական կառույցները հիմնադրվելով դեռևս մ. թ. ա. III հազարամյակում, դարերի ընթացքում վերակառուցվելով, ամրացվել են ու Հայկական լեռնաշխարհում մշակված ռազմական ճարտարապետությանը բնորոշ ձևերով ներկայացել ուրարտացիներին, որպես Դարանի ամրոց:

Հայկական լեռնաշխարհում ամրոցաշինության ակունքները շատ խորն են: Ցավոք, հարյուրավոր կիկլոպյան ամրոցներ դեռևս պեղված չեն, սակայն բազմասենյականոց համալիրները պետք է բնորոշ լինեն նաև նախաուրարտական ամրոցներին:

\* \* \*

Ամրոցը սիստեմատիկ պեղումների չի ենթարկվել: Ե. Լալայանը 1927 թ. մի ոչ մեծ խրամատ է փորել բլրի գագաթին և ապա պեղումներ ծավալել ամրոցի հյուսիս-արևելյան լանջերին:

Բլրի գագաթին, միջնաբերդի շինությունների հիմքերի մոտ պեղած՝ 5,0 մ երկարություն, և 3,0 մ խորություն ունեցող խրամատի վերին հորիզոնում, մոխրաշերտում, Ե. Լալայանը հայտնաբերել է կենդանիների ոսկորներ և քայքայված, փտած երկաթե նիզակ: Նրանից ցած բացել է հողով լցված, դեպի ցած խորացող մի անցք և այն համարել վերոհիշյալ գաղտնի մուտքի սկիզբը<sup>18</sup>:

Ամրոցի հյուսիս-արևելյան լանջին, ս. Ստեփանոս եկեղեցուց (որը կառուցված է ամրոցի դիմաց, նրա ստորին, լայնադիր հարթակում) մոտ 100 մ հեռավորության վրա, նա պեղել է յոթ կլոր կացարաններ, որոնց դամբարաններ է անվանում, իսկ նրանցում հայտնաբերված նյութերը վերագրում հղկած քարի դարի նախնական շրջանին<sup>19</sup>:

Այդ կացարաններից վեցը այժմ էլ կանգուն են: Երկու մեծ կացարաններն ստորին դարավանդում են, իսկ շորսը՝ տեղավորված են մեկ դարավանդ բարձր:

Կացարաններն ունեն 6,0—8,0 մ տրամագիծ (ներսի շրջագծից հաշված): Բոլորի համար հատակ է ծառայել բնական ժայռը: Ստորին դարավանդի կացարանի պեղումների ժամանակ բացվել են ժայռափոր տարատեսակ շինվածքներ, այդ թվում նաև տաշտածև մի կառուցվածք<sup>20</sup>,

<sup>17</sup> Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 59—60:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 59—60:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 40—42:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 50—53:

որոնք, անշուշտ, տնտեսական նպատակների են ծառայել: Նրանցում գտնվել են կավամանների բեկորներ, քարից գործիքներ, վանակատից դանակներ և կենդանիների ոսկորներ:

Հաջորդ, վերին դարավանդում պահպանված, միմյանցից մոտ 5,0 մ հեռավորության վրա գտնվող շոր կլոր կացարանները ճիշտ նույն կառուցվածքն ունեն, ինչ որ նախորդները:

Պեղված համարյա բոլոր կացարաններում բացվել են ժայռափոր հորեր, որոնցում, ինչպես նաև կացարանների հատակին, մոխրաշերտում, գտնվել են աշխատանքային քարե գործիքներ՝ աղորիքներ, սանդղկոթեր, վանակատից քերիչ-դանակներ, խեցեղենի բեկորներ և կենդանիների ոսկորներ<sup>21</sup>:

Առավել ուշագրավ են ամրոցի արևելյան լանջի «Կարոյի կալ» կոչվող տեղամասի պեղումները: Ե. Լալայանն այստեղ մոտ 70 մ<sup>2</sup> մակերեսով (14 մ երկարությամբ և 5,0 մ լայնությամբ) և 2,5 մ խորությամբ մի խրամատ է փորել և հայտնաբերել տարբեր դարաշրջանների ուշագրավ նյութեր:

Պեղման հրապարակի արևմտյան կողմում, հավանաբար վաղ միջնադարյան շերտում հայտնաբերվել են՝ թոնիր, խեցեղեն, կոտրված կարաս և նրա կողքին՝ սյան քառանկյունի պատվանդան, որի մեկ կողմում, ըստ Ե. Լալայանի, առյուծի քանդակ է եղել, մյուսում՝ վիշապի<sup>22</sup>: Այս շերտի հատակից մոտ 0,4 մ ցած, երեք սալերի տակ, բացվել է մի նոր շերտ, որում հայտնաբերված նյութերը, քարե գործիքները<sup>23</sup> (որոնք պահպանվում են Հայաստանի պատմության պետական թանգարանի № 127 ժողովածուում) պատկանում են վաղ բրոնզի մշակույթին:

Անշուշտ, մ. թ. ա. III հազարամյակի մշակութային շերտին են պատկանում նաև «Կարոյի կալի» մեկ այլ հատվածում, նրա հարավ-արևելյան անկյունում բացված, շրջանաձև շարված հինգ քարերով պատրաստված օջախն ու նրանում եղած կոտրած կարասը (որի մեջ գտնվել է կենդանիների ոսկորներով լի մի կարմիր կավաման), ինչպես և օջախի մոտ հայտնաբերված ոսկրե հերունները, վանակատից գործիքներն ու խեցեղենի բեկորները<sup>24</sup>:

Շերտագրական տեսակետից հատկապես ու-

շագրավ են նույն պեղվածքի շարունակությունում, երեք տեղում բացված, Ե. Լալայանի արտահայտությամբ, «աճյունի երեք շերտը» և նրանց միջև ընկած, մոտ 10 սմ հաստությամբ ունեցող հողի շերտերը, որոնք միասին 1,0 մ բարձրություն են ունեցել<sup>25</sup>: Ամենայն հավանականությամբ, այստեղ հատակներով միմյանցից անջատվող վաղ բրոնզեդարյան իրար վրա նստած կառուցողական երեք շերտեր են, որոնցում հայտնաբերվել են այդ դարաշրջանին բնորոշ նյութեր:

«Կարոյի կալում» պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ հորեր, որոնք տրեստեսական կարիքների են ծառայել, սակայն Ե. Լալայանի կողմից դիտվել են որպես դամբարաններ:

Հավանաբար, Ե. Լալայանին շփոթեցրել են բնակատեղիի մշակութային շերտերում և երբեմն էլ հորերում գտնված մարդկանց դանգերն ու կմախքի ոսկորները, որոնք երբեք կապ չունեն այդ մշակույթի հետ և անշուշտ ուշ ժամանակներում, թերևս XIX դարի վերջի և XX դարի սկզբին, լանջերում կատարված գերեզմանաբար շունեցող թաղումներ են: Մշակութային շերտերում ուշ շրջանի նման թաղումների մեք հանդիպում ենք նաև այլ հնավայրերի պեղումների ժամանակ: Օրինակ, Մեծամորի հյուսիս-արևմտյան լանջում այդ թաղումները թափանցել են տաճարական համալիրի շերտը, իսկ Ջրահովտում և Լճափի-բլրում նրանք հայտնաբերվում են վաղ բրոնզի վերին շերտում:

Ե. Բայբուրդյանը 1928 թ. շարունակելով «Կարոյի կալի» պեղումները, համոզվում է, որ Ե. Լալայանի բացած տակառանման կառուցվածքները դամբարաններ չեն, այլ հացահատիկի հորեր<sup>26</sup>: Նա Ե. Լալայանի պեղած խրամատի երկայնքով քառանկյունի է բացում և մոտ 41,7 մ<sup>2</sup> մակերես ընդգրկող հրապարակում հայտնաբերում երկու մշակութային շերտ<sup>27</sup>: Ըստ Ե. Բայբուրդյանի, ստորին շերտը (վաղ բրոնզեդարյան—է. Ն.) գրադեցրել է «կալի» զգալի մասը, իսկ վերին շերտը մասնակիորեն է պահպանվել, որում բացված քարաշին քառանկյունի շինությունն անկյունից մոտ 4,0 մ հեռավորության վրա, Ե.

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>26</sup> E. A. Байбуртян, По поводу древней керамики из Шреш-блуря, СА, №3, М.—Л., 1937, стр. 209.

<sup>27</sup> Նույնի՝ Псевдонеолитические поселения Армении. Проблемы истории материальной культуры, М., 1933, № 1—2, стр. 40. Նույնի՝ По поводу... стр. 210.

Լալայանի գտած առյուծաքանդակ պատվանդանից ոչ հեռու, Ե. Բայբուրդյանը հայտնաբերում է նրա երկրորդ օրինակը<sup>28</sup>: Ե. Բայբուրդյանը մերժում է Ե. Լալայանի կողմից էլաոի բնակատեղիի նեոլիթյան ժամանակով թվագրելը, և այն բնութագրում որպես տոհմատիրական հասարակարգի քայքայման ժամանակաշրջանի հուշարձան<sup>29</sup>:

Այսպիսով, Ե. Լալայանի և Ե. Բայբուրդյանի պեղումներով էլաոի ամրոցում հայտնաբերվել են միջնադարյան և հատկապես՝ վաղ բրոնզի դարաշրջանի նյութեր: Երկու տարվա այդ կարճատև պեղումներով ձեռք բերված մ. թ. ա. III հազարամյակի նյութերում մեծ տեղ է բռնում սև փայլեցրած խեցեղենը: Քարե իրերը գերազանցապես կոկիչներ, աղորիքներ, տրորիչներ, դուրեր և սանդղկոթեր են: Հայտնաբերվել են ոսկրե հերուններ, ասեղներ, իլիկի գլուխներ: Պեղման ընթացքում բացվել են հորեր, կիսով չափ լցված փտած հացահատիկով: Հայտնաբերվել են մեծ քանակությամբ մանր երջյուրավոր կենդանիների ոսկորներ:

Ամրոցի հյուսիս-արևելյան և արևմտյան փեշերի վերոհիշյալ պեղումներն, անշուշտ, մեծ հետաքրքրություն էին ներկայացնում: Սակայն անհրաժեշտ էր պարզել, թե վաղ բրոնզեդարյան բնակատեղին ամրոցում ի՞նչ տարածք էր ընդգրկել: Մյուս կողմից, դամբարանադաշտի պեղումներից հետո ամրոցի շերտագրությունը պարզելու մեծ անհրաժեշտություն առաջացավ: Այդ նպատակներն էին հետապնդում 1973 թ. ամրոցում կատարված հետախուզական պեղումները: Սակայն տարիներ առաջ ամրոցը դարձել է Արովյան քաղաքի գործող միակ գերեզմանատունը և բլրի մեծ մասը ծածկված է թաղումներով, որի պատճառով այն ենթարկվել է մեծ ավերածության: Թաղումներ կատարելու համար ճանապարհ են հարթել, ավերելով կիկլոպյան պարիսպներն ու ամրոցի շինությունների պատերը: Յուրաքանչյուր գերեզման փորելիս ոչնչացվել և ոչնչացվում են բազմաթիվ կառույցներ: Քանզված պատերի քարերը հեռացվում, կույտերի են վերածվում և պատմության էջերից իսպառ ջնջում էլաոի՝ դեռևս շուտամասիրված հեռավոր անցյալի էջերը:

Առաջին շերտագրական փոսորակը (P<sub>1</sub>) պեղվեց բլրի թաղումներից մասամբ զերծ մնացած հարավային լանջի զագաթից մոտ 9,5 մ

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 210:

<sup>29</sup> Նույնի՝ Псевдонеолитические поселения Армении стр. 42.

ցած գտնվող համեմատաբար լայն դարավանդում, որի մոտով արևելյան կողմից անցնում էր ժամանակակից թաղումների համար բացված ճանապարհը (նկ. 8): Փոսորակն ընդգրկում էր ընդամենը 15,7 մ<sup>2</sup> մակերես: Հյուսիսից հարավ գծով այն ունեւր 3,5 մ երկարություն, իսկ արևելքից արևմուտք՝ 4,5 մ: Հարավից այն եզերվում էր ժայռ քարերով կառուցված կիկլոպյան պարսպի հատվածով:

Սակերեսի ընկած քարերը և հողը հեռացնելուց հետո մոտ 0,7 մ հաստությամբ ունեցող լիցքում հայտնաբերվեց վերին հրապարակներից սահած տարբեր դարաշրջանների՝ միջնադարյան, հելլենիստական, և բրոնզի տարբեր փուլերին բնորոշ խեցեղեն: Սակայն 0,75 մ խորանալուց հետո, կավի երակներով մոխրախառը շերտում, ոսկորների և վանակատի անմշակ բեկորների հետ հայտնաբերվեց միայն I հազարամյակի սկզբի խեցեղեն: Շերտն ուներ ընդամենը 0,5—0,55 մ հաստություն, և 1,3 մ խորության մեջ ավարտվում էր խճապատ հատակով:

Խճի շերտը հեռացնելուց հետո, մակերեսից մոտ 1,4 մ խորության մեջ երևաց կորացող պատի շարվածք: Փոսորակը խորացվեց մոտ 2,3 մ: Նրա հյուսիսային կողմում բացվեց 0,9 մ բարձրությամբ, անմշակ քարերով կառուցված կորացող մի պատ, որը հնարավոր եղավ պեղել մոտ 5,0 մ երկարությամբ: Պատն արտաքինից հենված էր բլրի քարքարոտ, կրախառը բնական շերտի վրա, այսինքն բլրի բնական շերտը կտրել էին և նրա մեջ շարել պատը: Պեղման ընթացքում պարզվեց, որ բացված պատը կլոր կացարանի մի հատվածն է, որը հնարավոր չէրավ ամբողջացնել, քանի որ նրա մեջ անկանոն թափված էին մեծ-մեծ անմշակ քարեր, մյուս կողմից էլ հնարավոր չէր տեղաշարժել փոսորակը հարավից եզերող, ավելի ուշ ժամանակներում ժայռաբեկորներով կառուցած կիկլոպյան պատը: Այսպիսով, փոսորակի պեղումներն այլևս անհնար դարձան: Սակայն կլոր կացարանի ներսում, ոչ մեծ հատվածի մոխրաշերտում հայտնաբերվեցին մ. թ. ա. III հազարամյակի կեսերին բնորոշ սև փայլեցրած խեցեղենի բեկորներ՝ կիսագնդաձև կանթեր, փուլած շուրթերով, կոնաձև լայնացող իրանով, փոսիկազարդ օջախիկ-պատվանդան, սև փայլեցրած գավաթների բեկորներ, վարդագույն հասարակ թաղարի, թաս-քրեղանների բեկորներ, կավից շրջանակներ, կենդանիների ոսկորներ և այլն:

Պեղվող դարավանդում ստացվեց շերտա-

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 40—41, 50—52:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 48:


<sup>24</sup> Նույն տեղում, էջ 44:

պրակն հետևյալ պատկերը: Վերին 0,7 մ հաստություն ունեցող խառը խեցեղենով լանջի բերվածքին հաջորդում էր 0,5—0,55 մ հաստությամբ վաղ երկաթի շերտը, որին հավանաբար ժամանակակից է նաև լեռ քարերով պարսպի հատվածը: Համենայն դեպս վաղ բրոնզին բնորոշ շերտը կլոր կացարանի շարունակությամբ մտնում էր պարսպի քարերի տակ, ուստի պարսպն

1,0 մ խորանալուց հետո պարզվեց, որ պարսպը պահպանվել է 2,0 մ բարձրությամբ: Այն կառուցված էր մեծ ժայռաքեղոններով, երբեմն իրար վրա դրված երկու քարերով (մեծ քարերից մեկի բարձրությունը 1,6 մ էր): Անշուշտ, այս պատը ամրոցի պաշտպանական հանգույցներից մեկն է, սակայն նրա ժամանակը որոշելը դժվար է: Պատն այս հատվածում մաքրեցինք և բացե-

ԿՏՐՎԱԾՔ P-1, P-2, P-3

ՄԱՍՇՏԱՔ 1:200



Նկ. 8. Ամրոցում 1973 թ. պեղված փոսորակների կտրվածքները: 1. Լանջի բերվածք: 2. Պարսպպատերի քարի շարվածք: 3. Վաղ երկաթի դարաշրջանի մշակութային շերտ՝ խճապատ հատակով: 4. Ուշ բրոնզի մշակութային շերտ՝ խճապատ հատակով: 5. Միջին բրոնզի դարաշրջանի մշակութային շերտ: 6. Վաղ բրոնզի դարաշրջանի I շինարարական շերտ՝ կավակերտ հատակով: 7. Վաղ բրոնզի դարաշրջանի II շինարարական շերտ՝ կավակերտ հատակով: 8. Կրակավային ամուլ շերտ: 9. Բնական ժայռ:

ավելի երիտասարդ է, քան նրա տակ ձգվող կլոր կացարանի շերտը:

Այսպիսով, վերոհիշյալ փոսորակում մենք ունենք երկու շերտ՝ վաղ երկաթի և նրան անմիջապես հաջորդող վաղ բրոնզի շերտը: Սակայն վերին լիցքում հայտնաբերված նյութերը համոզում են, որ բլուրը բնակելի է եղել նաև ուշ բրոնզի, հելլենիստական դարաշրջաններում և միջնադարում:

Պեղման հաջորդ հրապարակն ընտրվեց վերոհիշյալ դարավանդից 0,5 մ ցած, գրեթե նույն ուղղությամբ, մի փոքր դեպի արևմուտք (P<sub>2</sub>): Մաքրվեց և բացվեց արևելքից արևմուտք տարածվող մեկ այլ կիկլոպյան պարսպի հատված և նրա առջևի դարավանդը (նկ. 8): Մոտ

ցինք՝ 6,0 մ երկարությամբ ու 1,0 մ խորությամբ նրա առջևի հրապարակում հայտնաբերվեցին տարբեր ժամանակաշրջանների խեցեղեն՝ զարդարուն կարասների բեկորներ, գավերի մասեր, հատիկազարդ հասարակ, անփայլ թաղարների բեկորներ և այլն:


Պեղման ընթացքում պարզվեց, որ այս հրապարակը նույնպես անհնար էր բացել, քանի որ ծածկված էր պարսպից թափված հսկա քարերով, որոնց հետևելը մեծ դժվարությունների հետ էր կապված: Բողնելով այս հատվածը, որի լայնությունը կիկլոպյան պարսպից սկսած մոտ 5,5 մ էր, սկսեցինք պեղել դեպի հարավ նրա շարունակությունը կազմող թեք լանջը: Հստ հերթականության այն պեղման երրորդ հրապար-

ակն է (P<sub>3</sub>): Այստեղ բացվեց 49 մ<sup>2</sup> մակերեսով մի քառակուսի (նկ. 9):

Թեք լանջը մաքրելու, հարթեցնելու ընթացքում, քառակուսու վերին հորիզոնում հայտնաբերվեցին անկանոն թափված քարեր, որոնք դժվարացնում էին պեղումները: Լիցքում հայտնաբերվեցին նաև կենդանիների ոսկորներ և տարբեր դարաշրջանների խեցեղեն՝ հելլենիստա-

Այս 0,8 մ հաստություն ունեցող շերտը վերոհիշյալ կորացող կառուցվածքով հանդերձ վերաբերում է ուշ բրոնզի դարաշրջանի II փուլին: Այն ավարտվում էր մոտ 0,1—0,15 մ հաստություն ունեցող խճապատ հատակով, որը ծածկված էր կավաշերտով: Հատակի տակ, փոսորակի հյուսիս-արևմտյան եզրի մի փոքր հատվածում, մոտ 2,0 մ երկարությամբ և 0,3 մ հաստությամբ

ՄԱՍՇՏԱՔ 1:50



Նկ. 9. P<sub>3</sub> փոսորակի հյուսիսային եզրի կտրվածքը: 1. Անկանոն թափված քարեր, լանջի բերվածքների տարբեր դարաշրջանների խեցեղենով: 2. Ուշ բրոնզի դարաշրջան: 3. Միջին բրոնզի դարաշրջան: 4. Վաղ բրոնզի դարաշրջանի I շինարարական շերտ: 5. Վաղ բրոնզի դարաշրջանի II շինարարական շերտ: 6. Մոխրի շերտեր:

կան շրջանի գունազարդ ասփաշների բեկորներ, կարմիր օյնոխոյի ձևավոր շուրթեր, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների խեցեղեն և մ. թ. ա. III հազարամյակին բնորոշ կավամանների բեկորներ:

Փոսորակում 0,2 մ խորանալուց հետո, քառակուսու արևելյան եզրին մոտ բացվեց մանր քարերով շարված, 0, 85 մ բարձրությամբ դեպի արևելք կորացող մի պատ (նկ. 9, 11): Պեղեցինք պատի միայն քառակուսու մեջ ընկած հատվածը: Այն ամբողջացնել չկարողացանք, քանի որ նրա մեջ արդեն ժամանակակից թաղում էր կատարված: Այսպիսով, այդ կառուցվածքի ինչ լինելը հնարավոր չեղավ պարզել: Այս կորացող պատից դեպի արևմուտք, այսինքն պեղվող քառակուսու մյուս հատվածներին բնորոշ էին մոխրի կուտակումներ, որոնց մեջ հայտնաբերվեցին ուշ բրոնզ II-ին բնորոշ խեցեղենի բեկորներ (աղ. XVI, 7, 8), կենդանիների ոսկորներ և թափված քարեր:

մոխրաշերտում հայտնաբերվեցին միջին բրոնզին բնորոշ խեցեղենի բեկորներ՝ գունազարդ կարասի վզի մաս, կետ-գծային զարդանկարով սև կճուճի բեկոր, փայլեցման եղանակով զարդանկարված կավամանի և վանակատի բեկորներ (աղ. XIII; 3,7): Անշուշտ, այն ամրոցի հարավային լանջում միջին բրոնզի դարաշրջանի շերտի առկայությունն է ապացուցում, որից պահպանվել էր, ինչպես տեսանք, հատակի մի փոքրիկ հատվածը, բնորոշ խեցեղենով հանդերձ: Վերոհիշյալ հատակների տակ, մոտ 1,15 մ խորության մեջ բացվեց մի նոր շերտ, որին բնորոշ էին կլոր կացարան և մ. թ. ա. III հազարամյակին հատկանշական իրեր (նկ. 10):

Շերտն ուներ մոտ 1,3 մ հաստություն: Կլոր կացարանի պատը բացվեց քառակուսու հյուսիսային եզրից: 2,5 մ դեպի հարավ: Այն պահպանվել էր 1,2 մ բարձրությամբ և ուներ 1,0 մ հաստություն, շարված էր միջին մեծության

անմշակ քարերի երկու շարքով: Պատի շրջագիծը թեքվում էր դեպի հյուսիս և այսպիսով կացարանի կեսը, անգամ կեսից մի փոքր ավելին մնում էր փոսորակի հյուսիսային եզրի տակ, այսինքն այն տարածվում էր դեպի վերը հիշատակված կիկլոպյան պարիսպը, որի առջևի հրապարակն

էին, իսկ նրանից ցած կավախառը շերտեր: Մոխրի կույտերով էր ծածկված կացարանի հատակը, որը պատրաստված էր 0,1—0,15 մ հաստությամբ ունեցող կավով: Կացարանում իրերը հայտնաբերվեցին մեծ մասամբ հատակի վրա՝ մոխրաշերտում: Դրանք քարե աշխատանքային



Նկ. 10. Վաղ բրոնզի դարաշրջանի I շինարարական հորիզոնի կլոր կացարանի հարավային հատվածը:


այդպես էլ շահողվեց պեղել՝ պարսպից ընկած խոշոր քարերի պատճառով:

Մոտ 6,0 մ տրամագիծ ունեցող այս կլոր կացարանի պեղված հատվածը համասեռ չէր: Նրա վերին հորիզոններին բնորոշ էր բաց գունավորում, միջին հատվածում մոխրի կուտակումներ

գործիքներ են՝ մակույկաձև աղորիքի բեկոր, սանդղկոթ, մանգաղի ներդիր, վանակատից գործիքներ, զարդարուն և հասարակ խեցեղենի բեկորներ: Նմանատիպ իրեր գտնվեցին նաև կլոր կացարանի պատի տակ՝ դրսի կողմից: Կացարանի հատակը հեռացնելուց հետո

պարզվեց, որ մշակութային շերտը շարունակվում է: Փոսորակի հյուսիսային եզրի կտրվածքում, մոտ 2,75 մ խորության մեջ բացվեց արևելքից արևմուտք ձգվող խոշոր քարերով շարված պատ, որն, անշուշտ, հաջորդ շինարարական

հնարավոր չէր պեղումները շարունակել: Այսպիսով, կլոր կացարանի տակ բացվեց մոտ 0,5 մ հաստությամբ ունեցող վաղ բրոնզեդարյան շինարարական II շերտը, որը տարածվում էր դեպի փոսորակի խորքերը:



Նկ. 11. Կլոր կացարանը, նրա վերևում ուշ բրոնզի դարաշրջանի կորացող պատի հատվածը, իսկ կլոր կացարանից ցած՝ վաղ բրոնզի շինարարական շերտի քարաշեն պատի հատվածը:

շերտին էր պատկանում (նկ. 11): Այս հատվածում պատին զուգահեռ տարածվող մոխրաշերտում դարձյալ հայտնաբերվեցին մ. թ. ա. III հազարամյակին բնորոշ խեցեղենի բեկորներ: Սակայն մոտ 3,0 մ խորության մեջ պեղման հրապարակը սաստիկ փոքրացել էր և այլևս

Պեղվող փոսորակի հարավային եզրն ավարտվում էր արևելքից արևմուտք ձգվող խոշոր քարաբեկորներով կառուցված, ավելի երիտասարդ մի պարսպով: Փոսորակում վաղ բրոնզեդարյան վերին շինարարական շերտի կլոր կացարանի պատի և այս պարսպի միջև ընկած



հատվածի վերին հորիզոնում, մրի, ածխի և մոխրի կուտակումներով, մոտ 0,3 մ հաստություն ունեցող շերտում հայտնաբերվեցին ուշ բրոնզի վաղ փուլերին բնորոշ խեցեղենի բեկորներ (աղ. XVI, 1—6):

Կլոր կացարանի պատի տակ, փոսորակի հարավ-արևմտյան հատվածում թափված խոշոր քարերի կույտը հնարավորություն չտվեց այդ սասում շերտը խորացնելու և ստիպված եղանք պեղումները շարունակել փոսորակի հարավ-արևմտյան անկյունում, մոտ 25 մ<sup>2</sup> մակերես զբաղեցնող տարածությունում, որտեղ կլոր կացարանի շերտից ցած խորացանք ևս 1, 25 մ և հասանք մայր գետին: Պարզվեց, որ փոսորակի վաղ բրոնզեդարյան II շինարարական շերտն սկսվելով 2, 75 մետրից, ավարտվում էր 4,0 մ խորության մեջ: Նրա վերին հորիզոնին բնորոշ էին շագանակագույն, գորշագույն խավեր, իսկ ստորին հատվածին՝ ավելի մուգ երանգներ: Հատակին մոխրի ամրացած խավեր էին, որից ցած ամուլ

կավահողն էր և բնական ժայռ: Շերտում հայտնաբերվեցին աշխատանքային քարե գործիքներ, կենդանիների ոսկորներ և խեցեղենի մի սովոր խումբ, որը հիմնականում կրում է ուլիսի, ուլիսի-ներճկված, լայնակոս և գծային երկրաչափական զարդանախշեր: Պեղման այս փոքր հատվածում հայտնաբերվեց խեցեղենի 135 բեկոր:

Բլրի վերոհիշյալ դարավանդում մշակութային շերտն ավարտվում է մոտ 4,0 մ խորության մեջ, բնորոշվում՝ բրոնզի երեք փուլերով:

Այսպիսով, պեղումներով ապացուցվում է, որ էլաոի ամրոցը գագաթից սկսած իր դարավանդներով ու լանջերի լայնադիր հրապարակներով բնակելի է եղել սկսած մ. թ. ա. III հազարամյակից մինչև միջնադարը ներառյալ: Իսկ նրա գագաթն իր կիկլոպյան պարիսպներով հանդերձ, տարբեր դարաշրջաններում պաշտպանական մի հզոր ամրոց է ծառայել էլաոի բնակիչների համար դեռևս մ. թ. ա. III հազարամյակից սկսած:

## Գ Լ Ո Ւ Ն Ի Ի

### Վ.Ա.Ղ. ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՆԵՐԱՆ

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան ինքնատիպ մշակույթը կրող տեղաբնիկների անցյալի պատմության ուսումնասիրության հարցում էլաոն իր ինքնուրույն տեղն ունի: Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական բարենըպաստ պայմաններով թելադրված տնտեսության հիմնական ճյուղերի բուռն վերելքը, բնականաբար, հանգեցրել են նրա ողջ տարածքում վաղ բրոնզեդարյան բնակատեղիների խիտ ցանցի երևան գալուն:

Ե. Լալայանը 1927 թ., իր ոչ երկարատև աշխատանքների ընթացքում, մի շարք բնակատեղիներ է հայտնաբերել և հետախուզական պեղումներ կատարել «Գյուլթուլկա» վայրում, «Աղամալյանի կալում», «Նախրատափ» վայրում, «Փոշտի դոշ» բլրակի գագաթին և, ինչպես վերը նշվեց, Դարանի ամրոցի արևելյան և հյուսիս-արևելյան լանջերին:

Ամրոցից մոտ 200 մ հյուսիս-արևմուտք «Գյուլթուլկա» բնակատեղիում, որի մակերեսին պարզորոշ նկատվել են կլոր կացարանների հիմնապատերը, Ե. Լալայանը պեղել է մանր քարերով շարված, 1,3—1,6 մ տրամագիծ ունեցող հինգ հորեր: Մոխրաշերտում հայտնաբերվել են խեցեղենի բեկորներ, վանակատի 36 բեկոր, քարից սանդղկոթեր (որոնց նա մուրճ է անվանում) և կենդանիների ոսկորներ<sup>1</sup>:

Երկրորդ բնակատեղին գտնվել է «Գյուլթուլկայի» և գյուղի միջև ընկած տարածքում, առվի ափին՝ «Աղամալյանի կալում», որտեղ Ե. Լալայանը պեղել է միմյանցից մոտ 30,0 մ հեռավորության վրա գտնվող հորեր և հայտնաբերել խեցեղենի բեկորներ, քարե գործիքներ<sup>2</sup>:

<sup>1</sup> Ե. Լալայան, Դարանի պեղումներ երկրաչափի Հայաստանում, էջ 37—38:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 38:

Երրորդ բնակատեղին գտնվել է գյուղից մոտ 1,0 կմ դեպի արևելահյուսիս, «Նախրատափ» դաշտում: Բնակատեղին բավական լայն մակերես է զբաղեցրել, սակայն դաշտը մշակելիս, վարելիս սաստիկ վնասվել է: Ե. Լալայանն այստեղ պեղել է երեք հորեր և մոխրի հետ խառը հայտնաբերել ոսկորներ ու իրեր<sup>3</sup>:

Չորրորդ բնակատեղին տեղավորված է եղել գյուղից 1,0 կմ դեպի արևմուտք՝ «Փոշտի դոշ» բլրի գագաթին: Այստեղ բնակարանները կառուցվել են Դարանի ամրոցի կացարանների նման՝ կրկնակի համակենտրոն շրջաններով: Ե. Լալայանը պեղել է դրանցից մեկը (կացարանի մեծ շրջանի տրամագիծը՝ 5,0 մ, փոքրիկը՝ 4,0 մ): Ներքին շրջանի ներսում 0,6 մ խորության մեջ հայտնաբերվել են ոսկորներով փոքրիկ կճուճ (նկ. 12, 2ՊՊԹ, № 127/457) և այլ իրեր<sup>4</sup>:

Ըստ Ե. Լալայանի, միայն «Գյուլթուլկայում» նա նկատել է «նախնական տների հիմնապատեր, բաղկացած մի կլոր սենյակից մի դռնով», իսկ մյուս բոլոր տեղերում նշում է, որ պեղել է «հրդեհած քարե դարի նախնական շրջանի դամբարաններ, շրջանաձև շարված անմշակ քարերով»<sup>5</sup>: Ինչպես վերը տեսանք, Ե. Բայբուրտյանն իր պեղումներով ապացուցեց, որ Ե. Լալայանի պեղածները բնակատեղիներ են, իսկ անմշակ քարերով շարված, 4,0 մ—6,5 մ տրամագծով կառուցվածքները՝ կլոր կացարաններ ու նրանց ներսում 1,0—1,5 մ խորությունից հայտնաբերվածները՝ ոչ դամբարաններ, այլ հացահատիկի և տնտեսական նշանակություն ունեցող հորեր<sup>6</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 38—39:


<sup>4</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 36—52:

<sup>6</sup> E. Байбуртян, По поводу древней керамики из Шреш-блуря, стр. 209.



Պարանի ամրոցը էլաոի վաղ բրոնզեդարյան անշուշտ զլխավոր, կենտրոնական բնակատեղին է եղել. մոտ 10 հա մակերես զբաղեցնող խոշոր մի ամրոց, որը շրջակայքի նկատմամբ ունեցել է իշխող դիրք: Նրա միջնաբերդը, ինչպես I գլխում տեսանք, պաշտպանված է եղել մուտքի մոտ աշտարակավոր կիկլոպյան պարսպով, որը ամրոցի հարավային կողմում ունեցել է ստորերկրյա գաղտնի ելք: Էլաոի մյուս, համեմատաբար ոչ մեծ բնակատեղիները, ավելի շուտ շենքեր, փոքրիկ ավաններ են, որոնք առաջացել են մ. թ. ա. III հազարամյակի տարբեր փուլերում, հավանաբար ցեղերի մշտական տրոհման, տարաբնակեցման հետևանքով:



Նկ. 12. Կճուճիկ դեղնավուն անփայլ մակերեսով, «Փոշոի դոշ» բնակատեղից:

Ամրոցի լայնադիր դարավանդները գագաթից մինչև նրա ստորոտը ծածկված են եղել բարաշեն կլոր կացարաններով, տնտեսական նշանակություն ունեցող տարատեսակ կառուցվածքներով՝ ժայռի մեջ փորված տաշտերով, սանդերով, հացահատիկի հորերով, որոնք մինչ այժմ էլ պահպանվել են ամրոցի հյուսիս-արևելյան կողմի դարավանդների կացարանների ներսում և նրանց բակում:

Ամրոցում հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան կառուցողական շերտեր, որոնք, բնականաբար, դաշտավայրերին բնորոշ արհեստական բլուրների հզորությունը չէին կարող ունենալ: Սակայն պեղված նյութերը, ինչպես նաև շինարարական բնույթի որոշ առանձնահատկություններ, հնարավորություններ են ընձեռում ամրոցի տարբեր հատվածներում բացված կառուցողական շերտերում տեսնելու ժամանակագրական տարբերություններ:


Անշուշտ, ավելի վաղ կարող են թվագրվել ամրոցի հյուսիս-արևելյան և արևելյան լանջերում հայտնաբերված շերտերը, Ե. Լալայանի պեղած ժայռաբեկորներով կառուցված կլոր կա-

ցարաններն ու նրանցում հայտնաբերված նյութերը, կացարաններ, որոնցից վեցը, ինչպես վերը նշվեց, այժմ էլ կանգուն են: Նրանցից երկուսը՝ հյուսիս-արևելյան լանջի ստորին դարավանդում են, չորսը տեղավորված են մեկ դարավանդ բարձր: Կացարանները շարված են բազալտի անմշակ ժայռաբեկորներով և, ինչպես Ե. Լալայանն է նշում, երկու շրջան ունեն, այսինքն կացարանի պատերը բարձրացվել են երկու շարք իրար միացած քարերով: Դրսի շրջանի քարերն ավելի խոշոր են (ունեն մոտ 1,0 մ, երբեմն՝ 1,5 մ բարձրություն և հաստություն), ներսի քարերի համեմատ:

Ինչ վերաբերում է հարավային լանջի դարավանդներում պեղվածներին՝ «P<sub>1</sub>» և հատկապես «P<sub>3</sub>» փոսորակների կլոր կացարաններին, ապա նրանց կառուցման եղանակը մի փոքր այլ է: Չնայած այս կացարանները նույնպես կրկնաշրջան են, սակայն դրսի շրջանի քարերը նախորդների նման ժայռաբեկորներ չեն և ներսի շրջանի քարերի մեծությունն ունեն, այսինքն նրանց պատերը բարձրացվել են երկշարք իրար վրա դասավորված միջին մեծության անմշակ քարերով: Ժամանակագրական տարբերություններ նկատվում են նաև խեցեղենը բաղադատելիս:

Ե. Լալայանի և Ե. Բայբուրդյանի պեղումներով հայտնաբերված խեցեղենը հիմնականում վաղ հատկանիշներ ունի: Ըստ ձևի նրանք բաժանվում են մի շարք խմբերի.


**Կարասների, մեծ կավամանների բեկորներ,** որոնք ունեն սև փայլեցրած մակերես, աղյուսա-



Նկ. 13. Կարասների բեկորների կտրվածքը:

գույն-վարդագույն անհարթ, կոպիտ աստառ: Նրանց գլանաձև բարձր վիզը թույլ ներճկումով կամ գրեթե առանց ներճկվելու ուղղահայաց կանգնած է կլորացող, ուռուցիկ ուսերի վրա: Շուրթը ուղիղ է, արտաքինից լայն, հարթ ժայլակնով դուրս շեշտված: Գագաթը նույնպես տափակ է (նկ. 13, 2ՊՊԹ, № 127/105—108, 110, № 161/31, 38): Նման կարասների բեկորներ բնորոշ են Արևիկի ստորին զերտերի խեցեղենին<sup>7</sup>, հայտնաբերվել են Ջրահովտի VI և նրանից ցած գտնվող շինարարական հորիզոններում (1974 թ., № 358)<sup>8</sup>, Պարսկահայքում նմանատիպ կարասների ամենամոտ զուգահեռները հայտնաբերվել են Գեոյ-թեփեի K<sub>1</sub> շերտում<sup>9</sup>:

**Փավաթների բեկորներ.** բոլորը սև փայլեցրած են, աստառը բաց գույնի: Ունեն գլանաձև,




Նկ. 14. Սև փայլեցրած գավաթի բեկոր՝ կիսագնդաձև կանթով: մի փոքր ներճկված վիզ, ուռուցիկ, կլորացող իրան, որը դեպի ցած թեքվելով, ավարտվում է ոչ մեծ հատակով: Վզից իրանի անցումը շեշտված է հորիզոնական գծային գոտիով, իսկ շուրթերը մի փոքր դուրս ճկվելով, ավարտվում են նեղ եզրակով: Որոշ բեկորներ վզի հիմքում ունեն կիսագնդաձև կանթ (նկ. 14, 2ՊՊԹ, № 161/121, 22): Ծիշտ նման կանթով գավաթների բեկորներ հայտնաբերվել են Ջրահովտի IX հորիզոնում (1974 թ., № 383), նախիջևանի Քյուլթեպեի II շերտում<sup>10</sup>, էլաոի ամրոցում հայտ-

<sup>7</sup> Պեղումները՝ հեղինակի, նյութերը հրատարակված չեն:  
<sup>8</sup> Ջրահովտը բազմաշերտ հուշարձան է, որտեղ հեղինակի կողմից վաղ բրոնզի դարաշրջանի առայժմ տասներեք շինարարական շերտ են պեղվել (տե՛ս Յ. Խանզադյան, Поселение Джраовит, АО, 1974, М., стр. 477—478).  
<sup>9</sup> T. Burton-Brown, Խշվ. աշխ., ազ. 10, Նկ. 138.  
<sup>10</sup> О. Абуллаев, Археологические раскопки в Кюльтепе, Баку, 1959, табл. 29; 3.

նաբերված վերոհիշյալ գավաթների անմիջական օրինակները գտնվել են դամբարանների պեղումների ժամանակ:

Այս ձևը համընդհանուր է Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի I կեսի խեցեղենի համար և երբեմն էլ տարածվում է նրա սահմաններից դուրս:

**Մեծ սափորներ-կճուճներ.** ձևով կրկնում են




Նկ. 15. Փոսիկազարդ, սև փայլեցրած սափորի բեկոր:

գավաթներին, միայն շափերով մեծ են: Հայտնաբերված բեկորներից ուշագրավ են հատկապես երկուսը: Մեկի ուռուցիկ ուսերին պահպանվել է կլոր փոսիկը (նկ. 15, 2ՊՊԹ, № 127/472):

Փոսիկազարդ սափորի բեկոր գտնվել է նաև Վարդենիսի շրջանի Ակունք գյուղի բնակատեղիում (2ՊՊԹ, № 2257/63):

Էլաոի մյուս սափորը զարդարված է եղել գույզ փոսիկների և ակոսներ-բեղիկների համադրությամբ, որոնց միայն մեկ հատվածն է պահպանվել (նկ. 16, 2ՊՊԹ, № 127/166): Ե. Լալայանի պեղած, դիմային զարդաքանդակով սա-




Նկ. 16. Զույգ փոսիկների և ակոսիկ-բեղիկների համադրությամբ զարդանկարված սափորի բեկոր (վերականգնված):

փորները մեկն էլ հրատարակվել է Բ. Ա. Կուֆտինի կողմից<sup>11</sup> և վերահրատարակվել՝ Վ. Լեմբի աշխատությունում<sup>12</sup> թեք, երկարավուն ակոսներով շրջապատված փոսիկ է պատկերված էլաոի № 1 դամբարանում հայտնաբերված քրեղանի ուսերին (նկ. 60): Ճիշտ նման զարդապատկեր է կրում նաև նախիջևանի Քյուլ-Քափալի II շերտում և Ասլան-Քեփեում (Մալաթիա) գտնված խեցեղենի բեկորները, սակայն վերջիններիս կլոր փոսիկը շրջապատված է ոչ թե մեկ, այլ երկուսից-երեք թեք, երկարավուն ակոսներով: Ավելորդ չէ նշել, որ Ասլան-Քեփեում գտնվել է նաև կարասի բեկոր, հար և նման վերոհիշյալ ուսերին, հարթ ժապավենով շեշտված շուրթերով կարասներին<sup>13</sup>:

Փոսիկներ-բեղիկների համադրությամբ է զարդարված նաև Ջրահովիտի IX—VI շինարարական հորիզոններից հայտնաբերված խեցեղենը, Ջազիկում գտնված կավամանը<sup>14</sup>: Գեոլ-Քեփեի K<sub>2</sub> և K<sub>3</sub> շերտերի խեցեղենի մի մասը զարդարված է փոսիկներ-ակոսիկների տարբեր համադրություններով<sup>15</sup>:

**Քրեղանների բեկորներ. մեծ մասամբ փոքր**




Նկ. 17. Փոսիկազարդ քրեղանի բեկոր:

չափերի են, ունեն ուժեղ դուրս ճկված, ներսից թեք անկյունով շեշտված շուրթեր և ուռուցիկ իրան՝ զարդարված կլոր փոսիկներով (նկ. 17,


<sup>11</sup> Б. Куфтин, Урартский „колумбарий“..., стр. 101 рис. 56.  
<sup>12</sup> W. Lamb, The culture of North-East Anatolia... fig. 3; 1.  
<sup>13</sup> K. Kökten, 1945 Jilinda türk tarih Kurumu adına japilan tarihöncesi arařtırmaları, Bellelen TTK, XI, Ankara, 1947, № 43, աղ. XCIII, նկ. 5.  
<sup>14</sup> Б. Куфтин, նշվ. աշխ., էջ 102—103, աղ. XXII—4.  
<sup>15</sup> T. Burton-Brown, նշվ. աշխ., նկ. 7—457, նկ. 9—304, նկ. 10—440.

18, ՀՊՊԹ, № 161/19, 20, № 127/25, 84): Խուլ կանթ-ելուստներով և փոսիկներով զարդարված նմանատիպ քրեղաններ հայտնաբերվել են էլաոի նաև դամբարաններում (նկ. 40, 43, 53, 63, 66): Խեցեղենի այս խումբը նույնպես բազմաթիվ դուզահուններ ունի: Նման շուրթերով փոսիկազարդ մեծ և փոքր քրեղաններ գտնվել են Արևի-



Նկ. 18. Փոսիկազարդ քրեղանի բեկոր.


կում, Մեծամորի վաղ բրոնզեդարյան շերտի ստորին հորիզոնում<sup>16</sup>: Արմավիր բլուրում հայտնաբերվածներն անզարդ են և հավանաբար մի փոքր ավելի վաղ<sup>17</sup>: Պատմական Հայաստանի տարածքում նման թասեր գտնվել են Ադիլջևազում, Արճեշի քարարկղում<sup>18</sup> և այլուր: Էլաոում հայտնաբերվել են նաև բաժակի մաս (նկ. 19, ՀՊՊԹ, № 127/60), տապակարանի բեկոր՝ ունկով (ՀՊՊԹ, № 127/97), մինիատյուր



Նկ. 19. Քրեղանիկի (ձախից) և բաժակի բեկորների կտրվածքը:


<sup>16</sup> է. Խանգադյան, Կ. Մկրտչյան, է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 19, նկ. 16, 17, էջ 20, նկ. 18:  
<sup>17</sup> Б. Куфтин, նշվ. աշխ., էջ 92, նկ. 50:  
<sup>18</sup> C. Burney, Eastern Anatolia in the chalcolitic and Early Bronze Age. As., vol. VIII, Ankara, 1958, p. 181, fig. 55, 56, p. 189, fig. 107—109.

սև փայլեցրած կճուճ՝ տափակ հատակով (նկ. 20, ՀՊՊԹ, № 127/456), օջախի հենակների բեկորներ (ՀՊՊԹ, № 127/98, 162, 460), կափարիչների մասեր, որոնք հար և նման են դամբարանադաշտում հայտնաբերվածներին՝ միջին մասը գոգավոր, եզրերը՝ բարձրադիր: Նրանց մակերեսը շագանակագույն է, բաց վարդագույն և սև փայլեցրած (ՀՊՊԹ, № 127/52, 55, 463, № 161/29 30):



Նկ. 20. Կճուճիկ, սև փայլեցրած:


Այսպիսով, Ե. Լալայանի և Ե. Բայբուրդյանի պեղումներով ձեռք բերված խեցեղենն ունի վաղ շրջանի հատկանիշներ և նրա զուգահեռները հնարավորություն են տալիս թվագրելու այն մ. թ. ա. III հազարամյակի I կեսով: Ի օգուտ վաղ թվագրությանն է խոսում նաև այն կարևոր հանգամանքը, որ վերոհիշյալ խեցեղենում լիովին բա-




Նկ. 21. Կարասի բեկոր, ուսերի վարդանկարով:

ցակայում են ուսերի-նեղակված պարուրազարդ կոմպոզիցիայով, երկրաչափական նրբագիծ բազմաշար զարդապատկերներով խեցեղենը, որոնք, ինչպես ստորև կտեսնենք, հատկապես բնորոշ են ամրոցի P<sub>3</sub> փոսորակի վաղ բրոնզեդարյան երկու շերտերի խեցեղենին: Դա, ան-

շուշտ, պատահականություն չէ: Այս հանգամանքի շնորհիվ ժամանակին էլաոի խեցեղենը ճանաչվել է որպես մի ուրույն լուրջ տարբերակ, զարդարված միայն փոսիկներով և խուլ-կանթ ելուստներով: Խեցեղենի վերոհիշյալ հատկանիշներն, անշուշտ, պետք է բացատրել ժամանակագրական տարբերությամբ:



Նկ. 22. Գավաթի բեկոր, վզի հիմքում գծային զարդագոտի:



Նկ. 23. Օջախիկ-պատվանդանի (1) և քրեղանի (2) բեկորներ:

Չնայած վերոհիշյալ ժողովածուում տեղ են գտել նաև ուսերի (նկ. 21, ՀՊՊԹ, № 127/88), գծային երկրաչափական զարդանկարով (նկ. 22, ՀՊՊԹ, № 127/86, 51) խեցեղենի բեկորներ, ավելի բնորոշ մ. թ. ա. III հազարամյակի II կեսին, սակայն նրանք, ինչպես Բ. Կուֆտինն է հիշատակում, հայտնաբերվել են ամրոցի կիկլոպյան պարսպի շարվածքում<sup>19</sup> և կապ չունեն խեցեղենի վերոհիշյալ ժողովածուի հետ:

<sup>19</sup> Б. Куфтин, նշվ. աշխ., էջ 103.

ժամանակին Բ. Ա. Կուֆտինը էլաոի վերահիշյալ խեցեղենը իրավացիորեն տեղադրել է ամենավաղ խմբի մեջ, համարելով ժամանակակից Բելտաշենի խեցեղենի I խմբին, Կիկեթի (Ս. Պշիխնայի պեղած) և հատկապես Բզդիրի «կավե քաղաքի» խեցեղենին<sup>20</sup>։ Սակայն ավելորդ չէ նշել, որ վերջին տասնամյակում Հայկական լեռնաշխարհում կատարված պեղումները հնարավորություն են բնծեռում Բզդիրի «կավե քաղաքի» խեցեղենի մեծ մասը, հատկապես պարուրազարդ և նրբագիծ երկրաչափական զարդա-

սանի շեշտված անցումներով սափորի բեկորը, իրանի սուր եզրին՝ ձվաձև մեծ փոսիկ (նկ. 25, ՀՊՊԹ, № 2625/16)։ Նման շեշտված անցումներով և ձվաձև մեծ փոսիկներով զարդարված սափորներ, գավաթներ, թաս-քրեղաններ բնորոշ են մ. թ. ա. III հազարամյակի II կեսի վաղ փուլերին։ Հայտնաբերվել են Ջրահովտի V—III շինարարական հորիզոններում (1974 թ., № 328, 339, 348, 349), Արևիկի IV շերտում (նրբեկից), Գառնիում<sup>22</sup>, Քաղսիի II տեղամասի № 2 դամբարանում (ՀՊՊԹ, № 1900/30)<sup>23</sup> և այլուր։




Նկ. 24. Փոսիկազարդ քրեղան, կափարիչ և օջախիկ-պատվանդան էլաոի դամբարանադաշտից։

նկարով խեցեղենը<sup>21</sup>, թվագրելու մ. թ. ա. III հազարամյակի II կեսով։ Այսպիսով, «կավե քաղաքի» խեցեղենի մի փոքր մասն է կրում վաղ հատկանիշներ, որը և կապված է էլաոի խեցեղենի վերոհիշյալ խմբի հետ։

Ժամանակով մի փոքր ավելի երիտասարդ են էլաոի ամրոցի հարավային կողմի վերին զարավանդի P<sub>1</sub> փոսորակի կլոր կացարանի ներսում հայտնաբերված կավամանների բեկորները։ Գրանք վարդագույն, անփայլ, հասարակ, մրոտ մեծ կավամանների բեկորներ են (ՀՊՊԹ, № 2625/15), սև փայլեցրած փոսիկազարդ (նկ. 23; 1, ՀՊՊԹ, № 2625/17) և դարչնագույն, շուրթի տակ խուլ կանթ-ելուստով (ՀՊՊԹ, № 2625/19)։ օջախիկ-պատվանդանների բեկորներ, ուլիկեֆ, շեշտված շուրթով, հասարակ և փայլեցրած քրեղանների բեկորներ, որոնցից մեկի ուսերին պահպանվել է կիսազնդաձև կանթի մասը (նկ. 23; 2, ՀՊՊԹ, № 2625/19)։ Զիշտ նման մի քրեղան հայտնաբերվել է էլաոի դամբարանադաշտում (նկ. 24, ՀՊՊԹ, № 1813/39)։ Թվագրող հատկանիշներ ունի հատկապես սև փայլեցրած, եռա-

Այսպիսով, ամրոցի վերին զարավանդի (P<sub>1</sub>) վաղ բրոնզեդարյան շերտը կլոր կացարանով հանդերձ, ժամանակագրորեն հաջորդել է Ս. Լա-



Նկ. 25. Եռասանի, շեշտված անցումներով կավամանի բեկոր՝ ձվաձև փոսիկով։

լայանի և Ս. Բայբուրդյանի պեղումներին և նախորդել P<sub>3</sub> փոսորակի շինարարական երկու հորիզոններին։

Ամրոցի III փոսորակում (P<sub>3</sub>) վաղ բրոնզեդար-

<sup>22</sup> Է. Խանգալյան, Գառնի IV, աղ. X։

<sup>23</sup> Պեղումները՝ Հ. Մնացականյանի, Ելուֆերը հրատարակված չեն։


յան երկու շինարարական շերտերի հաստությունը միասին կազմում էր 2,55 մ։ Ինչպես տեսանք, վերին՝ 1,3 մ հաստություն ունեցող շերտը մոտ 6,0 մ տրամագիծ, 1,2 մ բարձրություն ունեցող կլոր կացարանով հանդերձ, նստած էր ամուլ կավահողերի և բնական ժայռի վրա հանգչող, 1,25 մ հաստությամբ ստորին շերտի վրա։ Այս երկու շինարարական հորիզոններից հայտնաբերված է խեցեղենի մի սովոր խումբ, որոնց մեջ ժամանակագրական տարբերություններ տեսնելը դժվար է։

Կարասներ, մեծ կավամաններ։ Պահպանվել են նրանց վզի, ուռուցիկ իրանի և հատակների բեկորները, որոնք հիմնականում սև փայլեցրած են և ունեն բաց շագանակագույն, կարմիր և մոխրագույն աստառ (ՀՊՊԹ, № 2625/49, 78, 87, 93)։ Սակայն գտնվել են նաև դրսից և ներսից ալ կարմիր անգորով պատած կարասների բեկորներ (ՀՊՊԹ, № 2625/36, 85, 93), որոնք բնորոշ են վաղ բրոնզի մշակույթի վերջին փուլի խեցեղենին։

Հայտնաբերվել են ուղիղ, հաստ պատերով մեծ կավամանների բեկորներ, Հառիճի կարասի նման<sup>24</sup>։ Երկթեք շուրթը զարդարված՝ թույլ, սեղմելու եղանակով կատարված գծածածկ, զիզգազ ժապավենով (նկ. 26, ՀՊՊԹ, № 2625/85), կամ էլ թե վիզը զարդարված գծածածկ երկրաչափական զարդանախշերով (աղ. I; 1, ՀՊՊԹ, № 2625/93), որոնց զուգահեռները Գառնիի ամրոցի վաղ բրոնզի դարաշրջանի միջին շինարարական շերտի խեցեղենում են<sup>25</sup>։ Կարասների բեկորների մի մասի թույլ ներձկված գլանաձև վիզը կրում է ուլիկեֆ-ներձկման եղանակով կատարված վարդամոտիվներ (ՀՊՊԹ, № 2625/38), նման Գառնիում<sup>26</sup>, Ջրահովտում, Խնձոր-Խարբերդ<sup>27</sup>, Հազար-թեփեում (Մալաթիա)<sup>28</sup> գտնվածներին։

Էլաոի երկու շերտերին բնորոշ են նաև զարդանկարված իրանով կարասների բեկորներ։ Նրանք հիմնականում կրում են բազմազարդ պարույրներ և նրանց համադրությամբ կազմված կոմպոզիցիաներ, կատարված՝ ուլիկեֆ, ուլիկեֆ-ներձկման (աղ. I; 2, 3, ՀՊՊԹ, № 2625/93—հինգ

տարբեր բեկորներ) և թույլ սեղմելու եղանակով (ՀՊՊԹ, № 2625/52, 78)։ Բազմազարդ պարույրների մասնակցությամբ կազմված կոմպոզիցիաներով է զարդանկարված Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում հայտնաբերված կարասների մեծ մասը։ Արժե հիշատակել հատկապես Շենգավթի թռչնազարդ-



Նկ. 26. Հաստախեցի կավամանի բեկոր, շուրթին՝ զիզգազ, գծածածկ ժապավեն։

պարուրազարդ կարասներից մեկը<sup>29</sup>, Ջրահովտի պարուրազարդ, թռչնազարդ կարասները<sup>30</sup>, Քոսի-ձոթեր բնակատեղիում<sup>31</sup>, Արծն-Կարագում 3,0 մ խորությունից հայտնաբերվածները<sup>32</sup>, Բաբա-Գերվիշում գտնված պարուրազարդ կարասների բեկորները<sup>33</sup>, Բազմազարդ պարույրներն ու թռչունները Գեղամա լեռների և Սյունիքի ժայռապատկերների սիրված մոտիվներից են<sup>34</sup>։ Բազմազարդ պարույրներով կոմպոզիցիաներ բնորոշ են նաև Բզդիրի հովտի Յայջի բնակատեղիի խեցեղենին<sup>35</sup>, Ռելիեֆ, ուլիկեֆ-ներձկման եղանակով

<sup>29</sup> Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, նկ. 40։

<sup>30</sup> Հրատարակված չեն։

<sup>31</sup> Յ. Ханзадян, Энеолитическое поселение близ Кировакана, СА, I, М., 1963, стр. 159, рис. 7; 2։

<sup>32</sup> H. Koşay, K. Turyan, Erzurum-Karaz kazisi raporu TTK, Belleten, XXIII, 1959, № 91, p. 403, fig. a 98, p. 405, fig. a 145։

<sup>33</sup> И. Нариманов, Г. Исмаилов, Акстафачайское поселение у г. Казах, СА, № 4, М., 1969, стр. 152, рис 2; 9։

<sup>34</sup> Հ. Մարտիրոսյան, Հ. Բաղայան, Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀ, № 6, պրակ II, Երևան, 1971, նկ. 145, 148, 156, 179, 303, Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, ՀՀ, № 4, պրակ I, Երևան, 1970, նկ. 69, 70, 176, 205, 232։

<sup>35</sup> С. Burney, նշվ. աշխ., էջ 171—191, նկ. 129—131։

<sup>24</sup> Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, стр. 60, рис. 16։

<sup>25</sup> Է. Խանգալյան, նշվ. աշխ., էջ 46—47, նկ. 35։

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 47—48, նկ. 37։

<sup>27</sup> С. Burney, նշվ. աշխ., էջ 193, 197, նկ. 171։

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 201, նկ. 224։

կատարված զարդանախշեր են կրում նաև Բերկ-րիում (Զյուլֆուրուլաղ)<sup>36</sup> և ընդհանրապես վանա լճի շրջակայքի հուշարձաններում հայտնաբերված կարասների, մեծ կավամանների բեկորները<sup>37</sup>: Նման զարդանախշերով խեցեղեն հայտնաբերվել է նաև Խարբերդի ոսկեբեր հովտի հուշարձաններում, օրինակ՝ Կորուլութեփի մ. թ. ա. 2600—2100 թթ. թվագրվող V շերտում հայտնաբերված շագանակագույն կարասներ-մեծ կավամանները<sup>38</sup>, ինչպես և Հորոնվիլում և Սիվրիկայում (Մալաթիա) հայտնաբերված բեկորները<sup>39</sup>:

Այսպիսով, ուելիեֆ, ուելիեֆ-ներճկման եղանակով զարդանկարված մեծ կավամաններ-կարասները բնորոշ են հատկապես մ. թ. ա. III հազարամյակի II կեսի և վերջի հուշարձաններին, տարածման լայն շառավիղ ունեն և ընդգրկում են Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, անգամ նրա հարավ-արևմտյան ծայրամասը:

Էլաուի ամրոցի III դարավանդի շինարարական շերտերում հայտնաբերվել են նաև կետազարդ ֆիգուրներով կարասի և այլ կավամանների բեկորներ: Նրանցից մեկի վզի գծային գոտուց ցած պատկերված է խազելու եղանակով կատարված կետածածկ, կամ ասեղնաշար եռանկյունի (աղ. II; 5, 2ՊՊԹ, № 2625/53): Նման զարդանախշ է կրում Զրահովտի II (վերևից) շերտում գտնված, սև փայլեցրած գավաթի վիզը (1973, № 153): Կետաշար ֆիգուրներով են զարդարված էլաուի սև փայլեցրած կճուճիկներից մեկի ուսերը (աղ. III; 14, 2ՊՊԹ, № 2625/80, 90): Կետազարդ պատկերներ են կրում Կիրովականի հուշարձանների խեցեղենի մի մասը՝ Քոսի-ձոթիկի<sup>40</sup> և Մաշտոց բլուրի<sup>41</sup>: Աղստևի հովտում նման խեցեղեն հայտնաբերվել է Բաբա-Դերվիշ-շում<sup>42</sup>: Հյուսիսում այն հասնում է մինչև Քրիլիսի: Սարուբալում հայտնաբերված վարդագույն,

եռմասանի, շեշտված անցումներով կճուճիկի ակնոցաձև պարույրների կոմպոզիցիան ուղեկցվում է կետաշարով<sup>43</sup>: Կետազարդ պատկերներ են կրում Խարբերդի հովտում Տաշկուն-Մեկիի բնակատեղիի վաղ բրոնզեդարյան վերին շերտում հայտնաբերված կավամանները<sup>44</sup>, նաև Հոռոմ-խանի և Իսաբեյի (Արգուվան) խեցեղենի մի մասը<sup>45</sup>:

Այսպիսով, կետերի ուղեկցությամբ զարդապատկերներ բնորոշ են վաղ բրոնզի վերջին փուլերին և իրենց լիակատար զարդացումն են զբտնում միջին բրոնզի դարաշրջանի սև փայլեցրած խեցեղենում:

**Գավաթներ-կճուճիկներ.** ըստ ձևի երեք խմբի կարելի է բաժանել.

1. Դասական ոճի, բարձրարվեստ, նրբագեղ գավաթներ, կատարված բարձր ճաշակով և մեծ հմտությամբ: Բոլորը նրբախեցի են և ունեն ուժեղ թրծում: Նրանց բնորոշ են շեշտված անցումներ. ունեն ուժեղ ներճկված գլանաձև վիզ, ուռուցիկ դուրս շեշտված իրան, որից ստորին մասի անցումն արտահայտված է սուր եզրով: Ստորին մասը կարճ է, դեպի ներս մեծ թեքությամբ ունի և ավարտվում է փոքրիկ, ներճկված հատակով: Շուրթերը տակավին նուրբ են և ուժեղ դուրս ճկված, ավարտվում են նեղ եզրակով: Հայտնաբերված բեկորների մի մասը կարմիր փայլեցրած է (2ՊՊԹ, № 2625/34, 98), սակայն մեծամասնությունն ունի շողյուն սև փայլ, զարդարված է ուելիեֆ-ներճկված լայնակոս պարուրազարդ կոմպոզիցիաներով, սակավ նաև փոսիկներով:


Մինիատյուր, շողյուն փայլով գավաթիկների մի քանի բեկորներ են հայտնաբերվել (2ՊՊԹ, № 2625/31, 47, 49, 61, 65, 82), որոնցից մեկն ունեցել է շուրթի հետ եռանկյունաձև հարթակ կազմող, երկթեք կանթ (նկ. 27, 2ՊՊԹ, № 2625/65): Երկու այլ գավաթիկների փոսիկները իրանի ուռուցիկ մասի՝ սուր եզրագծի վրա են արված (2ՊՊԹ, № 2625/68): Նրբագեղ, շողյուն սև փայլով գավաթիկներից մեկի շուրթն ուժեղ դուրս է ճկվում և կտցածև կախվում (2ՊՊԹ, № 2625/47):

<sup>43</sup> Նյուֆերը հրատարակված չեն, գտնվում են Վրաստանի պետական թանգարանում:

<sup>44</sup> D. French, Aşvan excavations, 1970, Keban project 1970 activities, Ankara, 1972, p. 61—62, pl. 39; 22.

<sup>45</sup> C. Burney, Նշվ. աշխ., էջ 195, 201, նկ. 229, 230, 231.

Իրանի ուռուցիկ մասի ներճկված փոսիկն ու կտուցը, միևնույն ուղղության վրա են գտնվում (նկ. 28):



Նկ. 27. Նրբագեղ գավաթիկ, սև, շողյուն փայլով:

Կտցածև կախված շուրթերը նույնպես վաղբրոնզեդարյան խեցեղենի բնորոշ հատկանիշներից մեկն է: Շուրթից կախված կտուցներ ունեն Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի ոչ միայն գավաթները, այլև գրեթե բոլոր ձևերի կավամանները, ինչպես փայլեցրած զարդարուն, այնպես էլ հասարակ, անփայլ խեցեղենը՝ բաժակները, թաս-քեղանները, գավերը, թաղարները և այլն, որոնցից հայտնաբերվել են Գառնիում<sup>46</sup>, Շենգավթում (2ՊՊԹ, № 1618/152), Շրեշ-բլուրում (2ՊՊԹ, № 599), Զրահովտի վերին կլոր կացարանում և վաղ բրոնզից միջինի անցման փուլին բնորոշ շերտում (1971, 1972 և 1974 թ. պեղումներ № 60, 291), ինչպես նաև IX շինարարական հորիզոնում (№ 386): Կտցածև ելուստով կավամաններ հայտնաբերվել են նաև պատմական Հայաստանի մի շարք հուշարձաններում՝ Մշո դաշտի, Խարբերդի ոսկե հովտի բնակատեղիներում, Մալաթիայում, Աղիամանում և Մարաշում<sup>47</sup>: Նրանց վաղ օրինակները գտնվել են Թեփեշիկի և Սիլբիստանի ուշ խալկոլիթյան շերտերում<sup>48</sup>:

Ուելիեֆ-ներճկված պարուրազարդ կոմպոզիցիաներով գավաթների մի շարք բեկորներ են հայտնաբերվել (աղ. II; 8, 9, 12, 13, 2ՊՊԹ, № 2625/50, 52, 60, 80, 91, 102): Պահպանվել է նրանցից մեկի կոմպոզիցիոն կենտրոնը՝ զույգ


<sup>46</sup> Է. Խանգալյան, Գառնի, IV, էջ 60, նկ. 58.

<sup>47</sup> C. Burney, Նշվ. աշխ., էջ 167, 194, 197, նկ. 190.

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 163, նկ. 21—22, էջ 164, 194.

պարույրներով, որոնք ավարտվում են ակոսածածկ դաշտերով (աղ. II; 8, 2ՊՊԹ, № 2625/60): Մեկ այլ գավաթի կոմպոզիցիոն կենտրոնում թևավոր պարույրն է (աղ. II; 9, 2ՊՊԹ, № 2625/80):

Պարուրազարդ լայնակոս կոմպոզիցիաներով և այլ մոտիվներով զարդանկարված նրբագեղ, շողյուն սև փայլով դասական ոճի գավաթներ բնորոշ են հատկապես Արարատյան դաշտավայրի հուշարձաններին: Նրանց լավագույն օրինակները հայտնաբերվել են էջմիածնի շրջանի Շրեշ-բլուր<sup>49</sup> և Մոխրաբլուր<sup>50</sup> հուշարձաններում, Մասիսի շրջանի Ոսկեբլուրում<sup>51</sup> և Զրահովտի ամենավերին շինարարական հորիզոնում (1947 թ., № 270, 276—279), Շենգավթում (2ՊՊԹ, № 1330/20, 22, 34, 40, № 1442/108, № 1618/190), Աղավնատանը, Տրանկանոցում, Ակ-բլուրում, Իգդիրի հովտում՝ Ցալջի բնակատե-



Նկ. 28. Փոսիկազարդ գավաթիկի մաս, կտցածև կախված շրթով:

ղիում<sup>52</sup>: Ուելիեֆ-ներճկման եղանակով զարդանկարված խեցեղեն հայտնաբերվել է վանա լճի շրջակայքի հուշարձաններում<sup>53</sup>, Մանազկերտից

<sup>49</sup> Է. Խանգալյան, Շրեշ-բլուրի և Քյուլ-Քափաի խեցեղենի ու նրա արվեստը, ՊՐ2, Երևան, 1964, № 3, էջ 219—228, աղ. I, II:

<sup>50</sup> Б. Пиотровский, Поселения медного века в Армени, СА, XI, М.—Л., 1949, стр. 175, рис. 1.

<sup>51</sup> Նյուֆերը հրատարակված չեն:

<sup>52</sup> C. Burney, Նշվ. աշխ., էջ 191, նկ. 129—131, 139—143:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 181, նկ. 65:



մի փոքր արևմուտք՝ Բուլանըխում<sup>54</sup>, Մշո դաշտում՝ Շեյխ Պիրիմ բնակատեղիում<sup>55</sup>, Խարբերդի հովտում ուշագրավ են հատկապես Նսնքենդ (Հան Իրրահիմ Շահ) բնակատեղիում հայտնաբերված ուլիսի, ուլիսի-ներձկման եղանակով կատարված զարդանախշերով<sup>56</sup>, ինչպես նաև Թեփեջիկի զարդարուն խեցեղենը<sup>57</sup>, Դիմալին ուշագրավ պատկերներ են կրում Աշվանից մի փոքր հյուսիս՝ Բլուր (Իշուվա) բնակատեղիում



Նկ. 29. Առ փայլեցրած, զարդարուն գավաթի բեկոր:

հայտնաբերված գավաթները<sup>58</sup>, Հարավում, մի-զրացիոն ճանապարհով Հայկական լեռնաշխարհին բնորոշ այդ խեցեղենը տարածվում է մինչև Պաղեստին, որտեղ այն հայտնի է Կիրբեթ Կերակ անունով<sup>59</sup>:

Ռեյիսի, ուլիսի-ներձկման զարդանախշերի լոկալ, մի փոքր այլ տարածները բնորոշ են հյուսիսային հատվածի հուշարձաններին, Կիրովականի՝ Քոսի-Ճոթի, Քազավորանիստ, Մաշտոց բլուրներին<sup>60</sup>, Շիրակի դաշտի Կառնուտ, Հառիճ բնակատեղիներին<sup>61</sup>, Նոյեմբերյանի՝ Զուլանի հուշարձանին<sup>62</sup>, Աղստեի հովտում՝ Բաբա-Գեր-

վիշին<sup>63</sup>, ապա նաև Շուլավերիին<sup>64</sup>, հասնում մինչև Սաղկա (Բեշտաշենի ամրոցը)<sup>65</sup>:

2. Գավաթներ, որոնք շեղվում են դասական ոճից.

ա) Թեև ունեն դուրս ճկված և նեղ եզրակով ավարտվող շուրթեր, սակայն գլանաձև վիզն առանց ներձկվելու դեպի ցած լայնանում է և ուռուցիկ իրանի հետ ձուլվելով մի ամբողջություն կազմում: Նման գավաթների մի մասի վզից իրանի անցման տեղով հորիզոնական ներձկված գոտին պահպանվում է, սակայն այն դեկորատիվ է, կարծես վերապրուկային (ՀՊՊԹ, № 2625/96):

Մեկ այլ խումբ գավաթներ ձևով կրկնում են վերոհիշյալներին, սակայն այլևս չունեն անցումը շեշտող հորիզոնական գոտին (ՀՊՊԹ, № 2625/46, 54, 58, 96):

բ) Գավաթներ, որոնց ուսերը շատ ուռուցիկ չեն և վզից իրանի անցումը նշված է խորաբանդակ մեկ կամ ավելի գոտիներով: Նրանց մի մասը ուլիսի-ներձկման զարդեր է կրում իրանի ուռուցիկ մասում (Նկ. 29, 30, ՀՊՊԹ, № 2625/102), սակայն մեծամասնության վիզն ունի



Նկ. 30. Կարմիր փայլեցրած, վարդագույն աստաղով պարուրազարդ գավաթի բեկոր:

նրբագիծ, գծածածկ երկրաչափական զարդանախշերի նեղ և լայն ժապավեններ, իսկ ուռուցիկ իրանը՝ ուլիսի-ներձկման պարույրների բարդ կոմպոզիցիաներ (Նկ. 31, աղ. I—III, ՀՊՊԹ, № 2625/30, 89, 100): Երկրաչափական զարդանախշերի սիրված մոտիվներն են մեանդրը, եռանկյունին, շեղանկյունին, զիզազը, որոնք տարբեր համադրություններով են երևան գալիս:

Գավաթների վերոհիշյալ խումբն իր բազմաթիվ զուգահեռներն ունի առաջին հերթին Արա-

<sup>54</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:

<sup>55</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:

<sup>56</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:

<sup>57</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:

<sup>58</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:


<sup>59</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:

<sup>60</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:

<sup>61</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXI, XXII, նույնի՝ Հետազոտական պեղումներ Կիրովականի մեթոդաբանում, էջ 87, աղ. 5:

րատյան դաշտավայրում, հատկապես Շենգավիթի հովտում<sup>73</sup>, Դվինում (1959 թ. պեղումներ), Շեն-III (ՀՊՊԹ, № 1330/19, 34, 100, 112, № 1618/3, 90, 103, 107)<sup>66</sup>, մասամբ IV-ում, Զրահովտի ամենավերին վաղ բրոնզեդարյան շերտում


հովտում<sup>73</sup>, Դվինում (1959 թ. պեղումներ), Շեն-III (ՀՊՊԹ, № 1330/50, 60, № 1618/108), Կիրովականի «Դիմաց-թաղի» հուշարձաններում<sup>74</sup>, Արծն-Կարագում<sup>75</sup>:



Նկ. 31. Զարդարուն գավաթի բեկոր:

(1974 թ. № 218), Մասիսի շրջանի Լճափ-բլուրի վերին երկու շինարարական հորիզոններում<sup>67</sup>, Գառնիում<sup>68</sup>, Հյուսիսում այն դարձյալ լոկալ տարբերակներով է հանդես գալիս Կիրովականի, Շիրակի դաշտի, Աղստեի հովտի, Շուլավերի հնավայրերում<sup>69</sup>, Հարավում՝ Վանա լճի շրջակայքի հուշարձաններում<sup>70</sup>, հարավ-արևմուտքում, Խարբերդի Թեփեջիկ բլուրի<sup>71</sup> և Մալաթիայի Հոռոմիսան բնակատեղիի խեցեղենում<sup>72</sup>:

Էլաոի III դարավանդում հայտնաբերված գավաթներից մեկի ուռուցիկ իրանն ամբողջությամբ կանելուրազարդ է (ՀՊՊԹ, № 2625/91): Նման գավաթները բնորոշ են Շենգավիթի վերին շերտերին (ՀՊՊԹ, № 1330/233)<sup>76</sup>, հայտնաբերվել են Շրեշ-բլուրում (ՀՊՊԹ, № 60727), Դվինում (1959):



Նկ. 32. Գավաթի բեկոր՝ երկրաչափական զարդանկարով:

Էլաոի գավաթներից մեկի եռաշար գծածակ եռանկյունիների զարդանկարը (Նկ. 32,

Այս խմբի մեջ մտնող միջին մեծության և մինիատյուր գավաթիկների մի մասը փոքրիկ երկթեք կանթեր ունեն, որոնք շուրթի հետ եռանկյունաձև հարթակ կազմելով, ավարտվում են վզի միջին մասում (աղ. I; 8, II; 2, 4, ՀՊՊԹ, № 2625/51, 66, 81, 90, 96, 101): Նման կանթերով զարդարուն գավաթներ հայտնաբերվել են Գառ-

<sup>66</sup> Ի. Կարամանյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., էջ 78, նկ. 26, աղ. XXIII:

<sup>67</sup> Պեղումները՝ հեղինակի, նյութերը հրատարակված չեն:

<sup>68</sup> Նույնի՝ Գառնի, IV, էջ 15, նկ. 10, էջ 16, նկ. 11, 12, էջ 40, նկ. 31:

<sup>69</sup> Տե՛ս ծանոթ. 95—100:

<sup>70</sup> C. Burney, նշվ. աշխ., էջ 181, նկ. 67, 68:

<sup>71</sup> U. Esin, նշվ. աշխ., pl. 12; 3, 13, pl. 13; 3, 13:

<sup>72</sup> C. Burney, նշվ. աշխ., էջ 181, նկ. 67, 68:

<sup>73</sup> Ի. Կարամանյան, նշվ. աշխ., աղ. XXII, վերևում:

<sup>74</sup> Նույնի՝ Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., աղ. XXII:

<sup>75</sup> N. Koşay, K. Turfan, նշվ. աշխ., էջ 388, նկ. 322, 26:


<sup>76</sup> Ի. Կարամանյան, նշվ. աշխ., էջ 78, նկ. 27:



ՀՊՊԹ, № 2625/101), նույնպես սիրված զարդամոտիվ է մ. թ. ա. III հազարամյակի վերջով թվագրվող հուշարձանների խեցեղենի համար: Այն մի շարք տարբերակներով հանդիպում է Շենգավթի գավաթների վրա (ՀՊՊԹ, № 1330/296, 140, № 1618/136, 155, № 1442/57, 59)<sup>77</sup>, Ջրահովտի վերին շերտի խեցեղենում (1974 թ. № 51, 280), Մաղկայի XI<sup>78</sup> և Թեթրի-Սղարոյի<sup>79</sup> դամբանաբլուրների մ. թ. ա. III հազարամյակի վերջով թվագրվող խեցեղենում և այլուր: Այն իր գունային արտահայտությունն է գտել միջին բրոնզի խեցեղենի զարդանկարում, որոնց ցայտուն օրինակներից մեկը էլաոի № 40 դամբարանում հայտնաբերված հիզրիան է (նկ. 101):

Ուշագրավ են նաև դարչնագույն փայլեցրած հաստախեցի գավաթների բեկորները, որոնց վզին և ուսերին խազելու եղանակով անկանոն զծագրություններ են արված (ՀՊՊԹ, № 2625/89, 101): Թվում է, թե դրանք կախարդանքի, մագիայի հետ կապված պատկերներ են (աղ. I; 4, III; 11): Նմանատիպ անկանոն զծախմբերի պատկերներ են կրում Մաղկայի միջին բրոնզի դարաշրջանի մ. թ. ա. XVII դարի վերջով և XVI դարի սկզբով թվագրվող Զուրտակետի դամբանասրահների պատերը<sup>80</sup>:

**Սափորներ-կնուճներ**, որոնք կրկնում են գավաթների ձևը: Գտնվել են նրանց և նրբախե-



Նկ. 33. Վարդագույն կավամանի մաս՝ շրթից սկսվող կանթով: ցի զարդարուն, փայլեցրած օրինակները, և հասարակ, խոհանոցային անզարդ, անփայլ տեսակները (ՀՊՊԹ, № 2625/39, 42, 46, 80, 96, 98): Նրանք օժտված են շուրթից սկսվող ծապա-

<sup>77</sup> Նույնի՝ Գառնի IV, էջ 99, նկ. 87<sup>27</sup>:

<sup>78</sup> Э. Гогодзе, Периодизация и генезис курганной культуры Триалети, Тбилиси, 1972, табл. 7; 2.

<sup>79</sup> О. Джапаридзе, Археологические раскопки в Триалети в 1957—1958 гг., Тбилиси, 1960, табл. II.

վենաձև կամ երկթեք կանթերով (նկ. 33) և իրենց զուգահեռներն ունեն մ. թ. ա. III հազարամյակի II կեսի գրեթե բոլոր հուշարձաններում՝ Քոսի-Ճոթերում<sup>81</sup>, Գառնիում, Ոսկեվազում, Շենգավթում, Ջրահովտի վերին շինարարական հորիզոնում և այլուր:



Նկ. 34. Քրեղանների բեկորների կտրվածքներ:

էլաոի P<sub>3</sub> փոսորակի խեցեղենին բնորոշ են նաև քրեղաններ, որոնց դեպի դուրս ճկված, անկյուն կազմող մասով շուրթերը իշխում են նրբախեցի իրանի վրա (նկ. 34, ՀՊՊԹ, № 2625/32, 34, 38, 79, 81, 91, 95, 97), բաս-գավերի




Նկ. 35. Բասերի բեկորներ:

բեկորներ ունեն շեշտված (նկ. 35, 36, ՀՊՊԹ, № 2625/62, 79, 87, 97), կամ կտրած շուրթերով, իրանը երբևժն զարդարված երկրաշափական մոտիվներով (աղ. III; 12, ՀՊՊԹ, № 2625/36, 42, 46, 62, 80, 97), որոնց զուգահեռները Շենգավթի IV-ում են, Ջրահովտի վերին շինարարական

<sup>80</sup> О. Джапаридзе, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1969, стр. 179—192, табл. XXVIII—XXXII, рис. 66—73, стр. 264, 272.


<sup>81</sup> է. Խանգաղյան, Հետախուզական պեղումների կիրովականի մեթոդալոգում, աղ. 6, վերևում:

հորիզոնում, Հայքում (Իրեմիթ)<sup>82</sup>, սև փայլեցրած, զարդարուն շուրթերով բաժակների մասեր (նկ. 37, աղ. II; 1, 2, 4, ՀՊՊԹ, № 2625/40, 63, 97), որոնց զուգահեռները դարձյալ Շենգավթում են (ՀՊՊԹ, № 1618/97), Գառնիում<sup>83</sup>, Յայջիում<sup>84</sup>:



Նկ. 36. Թասի բեկոր՝ անկյունային շրթով:

էլաոի կավամանների կանթերից ամենաուշագրավը շուրթից ուղղահայաց իջնող, անցք ունեցող գլանաձև կանթն է (նկ. 38, ՀՊՊԹ, № 2625/95):



Նկ. 37. Բաժակի բեկոր զարդարուն շրթով:

Նման կանթով կավամաններ հայտնաբերվել են Շենգավթում (ՀՊՊԹ, № 1442/69)<sup>85</sup>, երկուսը՝ Ջրահովտում (1974 թ., № 37, 50): Անցքով երկարավուն կանթեր-կախիկներ ունեն նաև քարից քառանկյունաձև իրերը, որոնցից հայտնաբերվել են Արևիկում<sup>86</sup>, Ջրահովտում (1973 թ., № 95):

<sup>82</sup> C. Burney, նշվ. աշխ., էջ 179, 181, նկ. 40, 41, 43, 44:


<sup>83</sup> է. Խանգաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., աղ. XI, աջից, վերևում:

<sup>84</sup> Նույնի՝ Գառնի IV, էջ 58, նկ. 55:

<sup>85</sup> Նույնի՝ Հայկական լեռնաշխարհի մշակույթը, աղ. XI, աջից, վերևում:

<sup>86</sup> Նույնի՝ Раннебронзовое поселение близ с. Аревик. СА, № 4, М., 1969, рис. 1.

Սակայն նման կանթերով խեցեղեն հայտնաբերվել է նաև Հարավային Պաղեստինում՝ Բերշեբա-Հասուլի խալկոլիթյան շերտում, որը թվագրվում է մ. թ. ա. 3500 թվով<sup>87</sup> և համարվում Արևելյան Անատոլիայից եկած «կարճազանգ երկար, ուղիղ ընկած և շատ մազեր ունեցող քոչվոր» ցեղերի մշակույթ<sup>88</sup>: Նշվում է նաև, որ այդ մշակույթը մ. թ. ա. IV հազարամյակի սկզբին մուտք է գործել Բերշեբա, արդեն ձևավորված տեսքով: Ըստ Ջ. Մելլարտի նկարագրության, այդ խեցեղենն ունի ուղղահայաց փոքրիկ կանթեր՝ անցքով, կաշվից կամ կտորից կափարիչներ կապելու համար<sup>89</sup>:



Նկ. 38. Կավամանի բեկոր շրթից սկսվող գլանաձև կանթով:

Բացի վերը նկարագրված խեցեղենից P<sub>3</sub> փոսորակում հայտնաբերվել են նաև օջախի և տապակարանի բեկորներ (ՀՊՊԹ, № 2625/54, 62, 97, 99), վարդագույն և դարչնագույն կափարիչների մասեր (ՀՊՊԹ, № 2625/86), փուլած շուրթերով օջախիկ-պատվանդանների բեկորներ (ՀՊՊԹ, № 2625/54, 62, 97, 99), փոքր և մեծ տասներեք շրջանակ-խաղանիշներ (աղ. X; 19) և այլն:

Սրանք են հիմնականում ամրոցի հարավային լանջի III դարավանդի վաղ բրոնզի դարաշրջանի շինարարական երկու շերտերի խեցեղենի նմուշները, որոնց ուսումնասիրությունն ու զուգահեռները հնարավորություն են տալիս այդ շերտերը թվագրելու վաղ բրոնզի մշակույթի վերջին փուլերով:

Հօգուտ այդ թվագրության են խոսում խեցեղենի հետևյալ հատկանիշները.

<sup>87</sup> J. Mellaart, The Chalcolithic and Early Bronze Ages the Near East and Anatolia, p. 22, 26, pl. VII.

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 26—27:

ա) մեծամասնություն են կազմում նուրբ գծային, երկրաչափական մոտիվներով զարդանախշերը, որոնք գրեթե Շենգավթի նման բազմաթիվ ելեկտրոնով պարուրում են կավամանի վիզը, երբեմն նաև ուսերը: Վերջին տարիների պեղումներն ավելի քան հնարավորություն են տալիս համոզվելու, որ զարդանախշման տվյալ եղանակը բնորոշ է վաղ բրոնզի մշակույթի հատկապես վերջին փուլերին և իր շարունակական զարգացումն է ապրում նաև միջին բրոնզի դարաշրջանում:

բ) Քանակով, գծային երկրաչափական զարդանախշերով խեցեղենին շեն գիշում պարուրազարդ կոմպոզիցիաներով զարդանկարվածները, որոնք Զրահովտի շերտագրական տվյալների համաձայն, կարող են թվագրվել մ. թ. ա. III հազարամյակի II կեսով և վերջով:

գ) Մ. թ. ա. III հազարամյակի վերջում վաղ բրոնզեզարդան մշակույթն իր ծաղկումն է ապրում և ընդհանուրի հետ մեկտեղ խեցեղենն էլ հանդես է գալիս իր բազմազանությամբ, կատարելությամբ: Սև փայլեցրածի կողքին երևան են գալիս վարդագույն, կարմիր, դեղնավուն, բաց դարչնագույն փայլեցրած խեցեղեն: Հին ձևերը պահպանվում, կատարելագործվում են, լայն տարածում են գտնում կավամանի միևնույն ձևի տարբերակները: Առաջանում են նոր տեսակներ: Դարավերջում սինթեզվում են վաղ բրոնզի ամբողջ ընթացքին բնորոշ ձևերն ու զարդամոտիվները: Այստեղ կարելի է հանդիպել զարդանախշման բոլոր տարբերակներին՝ ուլիսֆ, ուլիսֆ-ներճրկված, լայնակոս, գծային և փոսիկազարդ խեցեղենի նմուշներին, սակայն նրանց ձևերը քանակական և որակական որոշ փոփոխություններ են կրում:

դ) Վերոհիշյալ հատկանիշներով խեցեղենը բնորոշ է Հայկական լեռնաշխարհի տարածքում տեղավորված բազմաթիվ հուշարձանների, այդ թվում նաև պատմական Հայաստանի՝ Իգդիրի հովտի, Վանա լճի շրջակայքի, Մանազկերտի, Մշո և Խարբերդի հովիտների, Մալաթիայի և Արզուվանի, հյուսիսում՝ Կարնո և Շիրակի դաշտերի, Աղստևի հովտի, Գուգարքի համար, ընդհուպ մինչև Մաղկա լեռները:

\* \* \*

Էլաոի վաղ բրոնզի դարաշրջանի բնակիչների հոգևոր և նյութական մշակույթի վերաբերյալ տակավին ուշադրավ տվյալներ ենք քաղում դամբարանների ուսումնասիրությունից:


Ավագահանքի տարածքում պեղված քան-

մեկ դամբարաններն ըստ կառուցվածքի բաժանվում են երեք տիպի. քարարկղներ (№ 4, 6), սալարկղներ (№ 3, 10, 36) և հիմնահողային խցեր (№ 1, 8, 9, 14—18, 20, 24, 37): Մյուս հինգ դամբարանները (№ 5, 11, 22, 26, 41) սաստիկ վնասված էին և նրանց ձևը հնարավոր չէրավ պարզել:

Դամբարաններից մեկը պատանու է (№ 34), երկուսը՝ երեխայի (№ 36, 41), մնացածները՝ մեծահասակների:

**ՔԱՐԱՐԿՂՆԵՐ**

**Դամբարան № 4 (Գկ. 39):** Հայտնաբերվեց 1960 թ., I տեղամասի հարավ-արևելյան կող-



Նկ. 39. Դամբարան № 4:

մում, 0,7 մ խորության մեջ: Այն ուղղված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Քարարկղի երկարությունը մոտ 1,5 մ էր, իսկ լայնությունը՝ 1,0 մ: Ծածկված էր երեք ոչ մեծ, բազալտե սալերով (մոտ՝ 0,6×0,4×0,65 մ մեծությամբ): Դամբարանի մեկ պատն ուղիղ էր, իսկ մյուսը մի տեսակ օվալաձև կամ ավելի ճիշտ՝ լայն աղեղ կազմելով միանում էր վերջինիս: Նման դամբարաններն ընդունված է անվանել պայտաձև: Այն կառուցված էր իրար վրա դրված մանր, անմշակ, սակավ մեծ քարերով: Կարճ պատերի (այսինքն զլխի և ոտքերի կողմերի) մանր քարերի շարքում դրված էին մեկական ոչ մեծ սալեր: Դամբարանի ներսի, մոտ 0,3 մ հաստությամբ ավազահողը

հեռացնելուց հետո, բացվեց թաղումը: Ննջեցյալը պառկած էր աջ կողքի, ոտքերը կծկած, ձեռքերն առաջ պարզած: Գանգը դամբարանի հարավային կողմում էր, դեմքով նայում էր արևելք: Կմախքը փտած էր: Վզի ողերի մոտ գտնվեց սպիտակ մածուկից գլանաձև ուլունք (աղ. VIII; 6, 2ՊՊԹ, № 2245/32), դեմքի դիմաց, նրանից մի փոքր ցած՝ խուլ կանթերով և փոսիկներով զարդարված մի քրեղան (նկ. 40, 2ՊՊԹ, № 2245/28), իսկ ծնկերի մոտ՝ փոլված շուրթերով օջախիկ-պատվանդանի վրա դրված էր կափարիչով ծածկված, փոսիկազարդ սափոր (նկ. 41, 2ՊՊԹ, № 2245/29—31):

**Դամբարան № 6 (աղ. IV; 1):** Հայտնաբերվեց 1960 թ., I տեղամասի արևելյան կողմում, № 4 դամբարանից մոտ 10,0 մ հեռավորության վրա: Ուղղված էր հարավից-հյուսիս: Քարարկղի երկարությունը մոտ 1,6 մ էր, իսկ լայնությունը՝ 1,0—1,1 մ: Դամբարանը ճիշտ նույն կառուցվածքն ուներ, ինչ որ նախորդը, սակայն բավականաչափ վնասված էր: Չկային ծածկի սալերը, նրա աղեղնաձև կորացող պատի միջին հատվածը բացակայում էր: Ննջեցյալը պառկած էր աջ կողքի, ոտքերը կծկած, ձեռքերն առաջ պարզած: Գանգը դամբարանի հարավային կողմում էր, դեմքով դեպի արևելք: Գանգի հետևի մասում հայտնաբերվեց փոսիկազարդ քրեղան, շուրթից սկսվող կանթով (աղ. V; 7, 2ՊՊԹ, № 2245/2), դեմքի դիմաց, մի փոքր ցած գտնվեց շուրթից սկսվող կանթով, փոսիկազարդ դավաթ (նկ. 74,



Նկ. 40. Քրեղան՝ զարդարված խուլ կանթերով և փոսիկներով (№ 4 դամբարանից):

աղ. V; 3, 2ՊՊԹ, № 2245/34), իսկ ծնկների մոտ ընկած էին օջախիկ-պատվանդանը (աղ. V; 2, 2ՊՊԹ, № 2245/35) և փոսիկազարդ մեկ սափոր (աղ. V; 1, 2ՊՊԹ, № 2245/33):

**ՍԱԼԱՐԿՂՆԵՐ**

**Դամբարան № 8:** Հայտնաբերվեց 1960 թ., I տեղամասում, հանքի հարավ-արևելյան կողմում: Այն բավականաչափ վնասված էր: Տեղում պահ-



Նկ. 41. Խեցեղեն № 4 դամբարանից:

պանվել էին եզրային երկու սալերը, գանգը, խառնված ոսկորներ ու երկու փոսիկազարդ գավաթներ, մեկի կանթը վզի հիմքում (աղ. V; 4, 2ՊՊԹ, № 2245/27), մյուսինը՝ շուրթից սկսվող (նկ. 73, 2ՊՊԹ, № 2245/26):


**Դամբարան № 10 (Գկ. 42):** Հայտնաբերվեց 1961 թ., II տեղամասում, հանքի հարավ-արևելյան եզրին, գետնի մակերեսից մոտ 0,4 մ խորության մեջ: Ուղղված էր հարավից-հյուսիս: Սալարկղի երկարությունը 0,95 մ էր, լայնությունը՝ 0,75 մ: Այն ծածկված էր շորս սալերով: Սալարկղի երկար կողքից մեկը քանդվել, թափվել էր հանքը, մյուսը՝ շարված էր, մոտ 0,4—0,5 մ երկարություն ունեցող երկու սալերով: Դամբարանի նեղ կողքում մեկական սալ էր դրված: Ոտքերի կողմի սալը մի փոքր ավելի մեծ էր (երկարությունը 0,7 մ) գլխամասի սալից (երկարությունը 0,5 մ): Թաղումը բացվեց մոտ

0,3 մ խորության մեջ: Կմախքը գտնվեց աջ կողքի պակած, ձեռքերը և ոտքերը կծկած, դեմքով դեպի արևելք: Գանգի հետևի մասում գտնվեց փոսիկներով և խուլ կանթ-ելուստներով զարդար-



Նկ. 42. Գամբարան № 10:

ված մի քրեղան (Նկ. 43, ՀՊՊԹ, № 2246/36): Գեմքի դիմաց՝ օջախիկ-պատվանդանի վրա դրված է եղել փոսիկազարդ սափոր (Նկ. 44, ՀՊՊԹ, № 2246/37, 38): Երկուսի կողերն էլ շարզվել էին



Նկ. 43. Քրեղան № 10 դամբարանից:

հանքի համար հրապարակ բացելիս: Գլխավերելում հայտնաբերվեցին մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներ և նրանց կողքին՝ բրոնզե դաշույն (Նկ. 71, ՀՊՊԹ, № 2246/35):

**Գամբարան № 36** (աղ. IV; 2): Հայտնաբերվեց 1969 թ., II տեղամասի արևելյան հատվածում, հանքի անմիջապես եղբին: Ուղղված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Գամբարանը փոքր էր (երկարությունը՝ 0,85 մ, լայնությունը՝ 0,6 մ), ծածկված երկու ոչ մեծ սալերով (մոտավորապես 0,8×0,5×0,13 մ մեծությամբ), որոնցից մեկը բազալտից էր, մյուսը՝ տուֆից: Սալերը հեռացնելուց հետո պարզվեց, որ այն բառանկյունաձև մի փոքրիկ սալարկղ է, որի երկար կողերում շարված են համեմատաբար փոքրիկ սալեր, իսկ կարճ կողերում մեկական մեծ սալ էր դրված, ոտքերի կողմում՝ կարմիր




Նկ. 44. Խեցեղեն № 10 դամբարանից:

տուֆից (երկարությունը՝ 0,73 մ; բարձրությունը՝ 0,4 մ և հաստությունը՝ 0,25 մ), իսկ զլխամասում բազալտից, շափերով ավելի փոքր (երկարությունը՝ 0,35, բարձրությունը՝ 0,4 մ, և հաստությունը՝ 0,06 մ): Մոտ 0,4 մ խորանալուց հետո պարզվեց, որ փոքր երեսա է թաղված: Կմախքը աջ կողքի էր, գլուխը հարավային կողմում, դեմքով արևելք, ոտքերը կծկած, ձեռքերը պարզած դեպի դեմքի առջևում գտնվող շափազանց փոքրիկ օջախիկն ու նրա վրա դրված կափարիչով ծածկված գավաթիկը (աղ. IV; 3—5, ՀՊՊԹ, № 2624/26, 27): Այս խմբից մի փոքր ցած, ծնկների դիմաց գտնվեց փոսիկներով և խուլ կանթերով զարդարված մի ոչ մեծ քրեղան (աղ. IV; 6):

**ՀԻՄՆԱՀՈՂԱՅԻՆ ԿԱՎԱՍԵՓ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ**

Պեղված դամբարանների շարքում մեծ թիվ են կազմում սալերով ծածկված քառանկյունաձև խցերը: Պատերը ծեփված էին կավի, ցեխի բավական ամուր շաղախով:

Հիմնահողային բոլոր դամբարանները պեղվել են 1961 թ. II տեղամասում, բացի № 1-ից և 37-ից: Բոլորն էլ լցված էին ավազով, նրանց համար հատակ է ծառայել հանքի սպիտակ ավազը:



Նկ. 45. Գամբարան № 8:

**Գամբարան № 1:** Հայտնաբերվեց 1960 թ., I տեղամասում: Մոտ 1,3 մ խորության մեջ բացվեց մեջքի վրա ձգված վիճակում մի կմախք, ձեռքերը կրծքին խաչած: Նրանից աջ հայտնաբերվեց մեկ այլ մարդու ոսկորների մի կույտ, մածուկից սպիտակ գլանաձև հինգ ուլունքներ (աղ. VIII; 6, ՀՊՊԹ, № 2245/4), իսկ կմախքից ձախ ընկած էին փոսիկազարդ սափորը (աղ. V; 6), քրեղանը (Նկ. 60, ՀՊՊԹ, № 2245/1) և օջախիկ-պատվանդանը (ՀՊՊԹ, № 2245/3): Մեջքի վրա

պակած կմախքը անշուշտ քրիստոնյայի էր, որի համար տեղ փորելիս, հանդիպելով հնագույն հիմնահողային դամբարանի, այն ավերել էին, կմախքն ու իրերը աջ ու ձախ նետել և նրանց տեղում նոր թաղում կատարել:

Պեղման ընթացքում պարզվեց, որ № 1 դամբարանից մի փոքր արևելք (մոտ 2 մ) № 4 լարարկղն է և որ վերջինիցս № 1 դամբարանը մոտ 0,7 մ խորն է:

**Գամբարան № 8** (Աղ. 45): Հայտնաբերվեց II տեղամասի կենտրոնում: Ուղղված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Ծածկված էր մեկ մեծ սալով (երկարությունը՝ 1,1, լայնությունը՝ 0,8 մ): Քառանկյունաձև խցի երկարությունը՝ 1,0 մ էր, լայնությունը՝ 0,7 մ, խորությունը՝ 0,7 մ: Կմախքը գտնվեց աջ կողքի, դեմքով՝




Նկ. 46. Խեցեղեն № 8 դամբարանից:

արևելք: Ոտքերը ծաված էին, ձեռքերը՝ առաջ պարզած: Գեմքի դիմաց՝ օջախիկ-պատվանդանի վրա դրված էր մի սափոր (Նկ. 46, ՀՊՊԹ, № 2246/32, 33): Գանգից վեր՝ մանր եղջյուրավոր կենդանու համարյա մի ամբողջ կրծքավանդակ էր դրված, որից մի փոքր ցած հայտնաբերվեց բրոնզե դաշույն (Նկ. 47, ՀՊՊԹ, № 2246/30): Վզի ողբերի մոտ գտնվեց կայծքարից, իլիկի գլխի նման մի կոճակ-ուլունք (աղ. VIII; 8), ՀՊՊԹ, № 2246/31):

**Գամբարան № 9** (աղ. VI; 1): Հայտնաբերվեց նախորդից 1,0 մ դեպի արևմուտք և նրանից մոտ 0,3 մ ավելի խոր: Գամբարանն ուղղված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Ծածկված էր երեք սալերով (մոտ 0,85—0,65 մ երկարությամբ և 0,45—0,15 մ լայնությամբ): Կավածեփ դամբարանն ուներ 1,0 մ երկարություն և



0,75 մ լայնություն: Մոտ 0,7 մ խորության մեջ բացվեց կմախքը՝ աջ կողքի պռակած, ոտքերը կծկած, ձեռքերը պարզած դեմքի դիմաց դրված ոսկորներով լի քրեղանը (աղ. VI; 2, և VII; 1, ՀՊՊԹ, № 2246/34):



Նկ. 47. Բրոնզե դաշույն № 8 դամբարանից:

**Դամբարան № 14 (Ճկ. 48):** Գտնվեց № 10 դամբարանի տակ, ավելի ճիշտը՝ նրա հարավային հատվածն էր ընկնում սալարկղի տակ: Այն սալարկղից մոտ 0,5 մ խորն էր: Դամբարանն ուղղված էր հյուսիսից հարավ, ծածկված էր երեք սալերով, երկուսը մեծ (մոտ 1,2—1,0 մ երկարությամբ), մեկը՝ փոքր: Երկու ծայրերում, կարճ կողմերում սալերի տակ մանր քարեր էին դրված, հավանաբար դամբանախցի վրա սալերն ավելի հարմար նստեցնելու նպատակով: Դամբարանն ուներ 1,0 մ երկարություն և 0,7 մ լայնություն: Մոտ 0,7 մ խորության մեջ բացվեց կրմախքը՝ պռակած աջ կողքի, ոտքերը կծկած, ձեռքերը ծալած դեպի դեմքի առջևի մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներով լի փոսիկազարդ քրեղանը (աղ. VI; 3, VII; 2, ՀՊՊԹ, № 2246/50):

**Դամբարան № 15 (Ճկ. 62):** Գտնվեց № 10 սալարկղից մոտ 0,7 մ դեպի արևմուտք և նրանից մոտ 0,3 մ խորը: Դամբարանն ուղղված էր հարավից հյուսիս: Ծածկված էր շորս սալերով: Դամբարանի արևելյան եզրին, ծածկի կենտրոնական մեծ սալի կողքին գտնվեց հասպիսից մեկ երեսը ռետուշով ծածկված մի դաշույն (նկ. 72, ՀՊՊԹ, № 2246/56), ձևով հար և նման № 10

սալարկղում հայտնաբերված բրոնզե դաշույնին (նկ. 71):

Դամբանախցի երկարությունը 1, 15 մ էր, լայնությունը՝ 0,85 մ: Մոտ 0,7 մ խորության մեջ բացվեց աջ կողքի պռակեցրած կմախքը, դեմ-



Նկ. 48. Դամբարան № 14:

քով՝ արևելք, ոտքերը կծկած, ձեռքերը պարզած դեպի ծնկները: Դեմքի դիմաց, օջախիկ-պատվանդանի վրա դրված էր կափարիչով ծածկված սափորը (նկ. 63, ՀՊՊԹ, № 2246/51—53): Գանգից վեր, սպիտակ ավազի վրա, դրված էր մանր եղջյուրավոր կենդանու մի ամբողջ կրծքավանդակ, որի մոտ գտնվեցին վանակատից պոչուկավոր երեք նետասլաքներ (նկ. 64, ՀՊՊԹ, № 2246/55): Գանգի հետևում դրված էր մանր եղջյուրավոր կենդանու ոսկորներով լի մի քրեղան (նկ. 63,

ՀՊՊԹ, № 2246/54): Անշուշտ, այս դամբարանը, ինչպես և № 14-ը ավելի հին են, քան № 10 սալարկղը:

**Դամբարան № 16 (Ճկ. 49):** Կավածեփ այս խցում, ի տարբերություն մյուս դամբարանների, կմախքը գտնվեց ձախ կողքի վրա պռակած,

**Դամբարան № 17 (Ճկ. 51):** Հայտնաբերվեց հանքի եզրին: Վրան պահպանվել էր ծածկի միայն մեկ սալը (երկարությունը՝ 0,95 մ, լայնությունը՝ 0,5 մ): Ոտքերի ոսկորները թափվել էին հանքը: Դամբարանը նախորդի նման ուղղված էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք և կմախքը գտնվեց




Նկ. 49. Դամբարան № 16:

դեմքով՝ արևելք: Այն բավականաչափ տուժել էր հանքը շահագործելիս: Տեղում պահպանվել էին դեմքի դիմաց դրված քրեղանն ու գավաթը (աղ. VI; 5 և VII; 3, ՀՊՊԹ, № 2246/57): Նրանց մոտ հայտնաբերվեցին նաև վանակատից գործիքներ (նկ. 50, ՀՊՊԹ, № 2246/58):

ձախ կողքի պռակած, դեմքով արևելք: Դեմքի դիմաց դրված էր մանր եղջյուրավոր կենդանիների կողողներով լի մի քրեղան (աղ. VI; 4, ՀՊՊԹ, № 2246/59), իսկ կոնքի մոտ՝ վանակատից գործիքներ (նկ. 52, ՀՊՊԹ, № 2246/60):

**Դամբարան № 18 (Ճկ. 65):** Հայտնաբերվեց նույնպես հանքի եզրին, № 17 դամբարանի կողքին, նրանից մոտ 0,3 մ բարձր: Ծածկի սալերից պահպանվել էին երկուսը՝ (մոտ 1, 4 մ երկարությամբ, մեծ սալի լայնությունը՝ 0,6 մ էր, փոքրինը՝ 0,5 մ): Հարավային կողմից սալերի տակ մանր քարեր էին դրված: Դամբարանն ուղղված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Դամբանախցի երկարությունը 1,0 մ էր, լայնությունը՝ 0,7 մ: Մոտ 0,8 մ խորության մեջ բացվեց աջ կողքի կծկված սաստիկ քայքայված կմախքը: Գանգի հետևում դրված էր կենդանիների ոսկորներով լի մեծ քրեղան (նկ. 66, աղ. VII; 6, ՀՊՊԹ, № 2246/69): Դեմքի դիմաց հայտնաբերվեց կափարիչով ծածկված սափոր (նկ. 67, ՀՊՊԹ, №



Նկ. 50. Վանակատի գործիքներ № 16 դամբարանից:

2246/61,62), իսկ գլխավերևում մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներ և բրոնզի մեծ դաշույն (նկ. 68, աղ. VI; 8, ՀՊՊԹ, № 2246/64):

Գեմքով դեպի վեր, դեպի՝ երկինք: Գանգից ձախ՝ կողոսկրներով լի բրոնզան էր (աղ. VII; 7, ՀՊՊԹ, № 2246/68): Առաջ պարզած ձեռքերի մոտ հայտ-




Նկ. 51. Դամբարան № 17:

**Դամբարան № 20:** Մավալով մյուս բոլոր դամբարաններից մեծ էր: Ուղղված էր հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Մածկված էր հինգ սալերով, որոնք միասին վերցրած ունեին 2,0 մ

նարբրվեցին վանակատից երկու դանակաձև շեղ-բեր-բերիչներ (նկ. 52, ՀՊՊԹ, № 2246/69):

**Դամբարան № 24:** Հայտնաբերվեց հանքի անմիջապես եզրին: Նրա մի կողմը փլվել էր և կրկում էին կճուճները: Դամբարանն ուղղված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Կմախքը



Նկ. 52. Վանակատե գործիքներ № 17 դամբարանից:


երկարություն: Դամբանախցի երկարությունը 1,3 մ էր, լայնությունը՝ 0,8 մ: Մոտ 0,8 մ խորանալուց հետո բացվեց ձախ կողքի կծկված կմախքը: Սակայն գանգը կողքի շեր, այլ



Նկ. 53. Քրեղան № 24 դամբարանից:

կծկված էր աջ կողքի, դեմքով նախորդի նման դեպի երկինք: Գանգից աջ հայտնաբերվեց կողոսկրներով լի բրոնզան (նկ. 53, ՀՊՊԹ, № 2246/78) և մեկ գավաթ (նկ. 59, ՀՊՊԹ, № 2246/79): Կոնքոսկրների մոտ դրված էր վանակատից դանակաձև շեղբ (նկ. 58, ՀՊՊԹ, № 2246/77):


**Դամբարան № 37 (նկ. 54):** Հայտնաբերվեց 1969 թ. մանկական № 36 դամբարանից մի փոքր



Նկ. 54. Դամբարան № 37:

հարավ: Ուղղված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Վրան ուներ երկու մեծ սալեր, մեկը՝ կարմիր տուֆից (երկարությունը՝ 0,8 մ, լայնությունը՝ 0,5—0,6 մ), իսկ մյուսը՝ բազալտից (երկարությունը՝ 0,8 մ, լայնությունը՝ 0,4—0,3 մ): Սալերը տեղ էին և երկուսի միջև առաջացած բաց տարածությունը լցված էր մանր քարերով: Դամբանախուցն ուներ 0,9 մ երկարություն և 0,66 մ լայնություն: Նրանում մոտ 0,4 մ խորանալուց հետո բացվեց աջ կողքի կծկված կմախքը, ձեռքերը պարզած դեմքի առջևում դրված փոսիկազարդ գավաթը (նկ. 55, ՀՊՊԹ, № 2624/28): Վզի ողերից մի փոքր ցած հայտնաբերվեցին


ժանիքից և քարից պատրաստված հմախիչներ (նկ. 56, ՀՊՊԹ, № 2624/29, 30):



Նկ. 55. Գավաթ № 37 դամբարանից:

Պեղված դամբարանների մի մասի կառուցվածքը հնարավոր չէր պարզել: Նրանցից տեղում պահպանվել էին կմախքի տարբեր մասեր, մեկ կամ երկու կավաման:

**Դամբարան № 5:** Հայտնաբերվեց 1960 թ., I տեղամասում, XIX դարի գերեզմանատան հարավային կողմում: Այն նույնպես ավերված էր: Տեղում մարդու ոսկորների հետ հայտնաբերվեց օջախիկ պատվանդան՝ ստորին մասում գծազարդերի ժապավեն (աղ. IX; 1, ՀՊՊԹ, № 2245/36):



Նկ. 56. Հմախիչներ № 37 դամբարանից:


**Դամբարան № 11:** Գտնվեց 1961 թ., II տեղամասում, հանքի եզրին, բոլոր կողմերից մեկուսացված մի փոքրիկ հրապարակում: Այն № 10 սալարկղից 2,0 մ հյուսիս էր և նույն շարքում էր կառուցված: Տեղում պահպանվել էր գանգը, ողնաշարի ողերի մի մասը և ձեռքերի ոսկորները: Դամբարանի ստորին հատվածը բացակայում էր: Ստացվում էր, որ հանգուցյալին աջ կողքի են պատկեցրել, դեմքով դեպի արևելք:



Չեռքերին հագցրել էին մեկական պարուրածև փաթաթվածքով ապարանջաններ, վզին մեկ շարան մածուկից սպիտակ, երկկոնիկ ուլունքներ: Դեմքից մի փոքր ցած դրված էր մեկ կանթանի կճուճ (նկ. 77, աղ. VIII; 1—5):

**Դամբարան № 22:** Հայտնաբերվեց 1961 թ., II տեղամասում, հանքի եզրին: Ավերվել էր հանքի համար հրապարակ բացելիս: Տեղում պահպանվել էր փոսիկազարդ քրեղանի բեկորը (ՀՊՊԹ, № 2246/75), մեկ սափոր (որի կանթը կտարվել էր, ՀՊՊԹ, № 2246/74) և բրոնզից տերեվածև տեղի ծայրը (նկ. 75, ՀՊՊԹ, № 2246/73):

**Դամբարան № 26:** Հայտնաբերվեց 1961 թ., II տեղամասում, հանքի հյուսիսային եզրին: Տեղում, մարդու ոսկորների հետ հայտնաբերվեց կավից բաժակ (նկ. 76, ՀՊՊԹ, № 2246/80):



Նկ. 57. Վանկատե գործիքներ № 20 դամբարանից:

**Դամբարան № 41:** Հայտնաբերվեց 1973 թ., I տեղամասում: Հանքի փլուզման հետևանքով դամբարանն ամբողջությամբ ոչնչացել էր և տեղում, երեսային գանգի և մի քանի ոսկորների հետ պահպանվել էր մի կեղծ կանթերով քրեղան (աղ. IX; 2, ՀՊՊԹ, № 2625/109):

Բացի պեղված դամբարաններից, հանքի շահագործման ժամանակ տարիների ընթացքում ավերվել են վաղ բրոնզեդարյան դամբարաններ, որոնց նյութերի մի մասը հանձնվել է ՀՊՊԹ: Դրանք շորս քրեղաններ են (ՀՊՊԹ, № 1805/42, № 1813/32, № 1870 և № 2261/4), երկու գավաթատիպ սափորներ (№ 1813/24, 26), գավաթներ, (№ 1813/25, № 2161/5), օջախիկ-պատվանդան (№ 1813/38), կափարիչ (№ 1813/39, նկ. 24), կվարցից օղակաձև ուլունքներ (աղ. IX; 4, ՀՊՊԹ № 2261/23) և այլն:

Այսպիսով, պեղված երեք տիպի դամբարանների ընդհանուր հատկանիշները հետևյալն են. բոլորը ծածկված են մեկից մինչև հինգ սալ քա-

րերով և լցված են ավազախառը հողով, որը, հավանաբար, գոյացել է դարերի ընթացքում: Դամբարանը կառուցվել է անհատի համար և նյութերով հարուստ է: Թաղման ծեսը բոլորի մոտ նույնն է: Բոլոր կմախքները պառկած են աջ կամ ձախ կողքի, կծկված վիճակում, ոտքերը ծավված, ձեռքերը կամ ծնոտի տակ, կամ դեպի դեմքն ու կճուճները պարզած: Անկախ դամբարանի ուղղությունից և կմախքի դիրքից, բոլորը պեղվել են նայում են արևելք (բացի № 20 և 24 դամբարանների կմախքներից, որոնց գանգերը դեմքով երկինք են ուղղված):

Սակայն պեղված դամբարանները վերոհիշյալ ընդհանուր հատկանիշներով հանդերձ, ունեն նաև տարբերիչ գծեր, որոնք էլառի վաղ բրոնզեդարյան թաղումները ժամանակագրական խմբերի բաժանելու հնարավորություններ են ընձեռում:

Այս հարցում առաջին հերթին մեծ կարևորություն ունի դամբարանների շերտագրությունը: Ինչպես վերը տեսանք, կավածեփ դամբարաններից մեկը (№ 14) հայտնաբերվեց № 10 սալարկղի տակ, նրանից 0,5 մ ցած, իսկ մյուսը (№ 15)՝ սալարկղի կողքին, նրանից մոտ 0,3 մ խորը: Նմանապես № 4 քարարկղից ոչ հեռու գտնված հիմնահողային № 1 դամբարանը նրանից մոտ 0,7 մ խորն էր: Անշուշտ, քարարկղներն ու սալարկղները շերտագրորեն հաջորդել են կավածեփ հիմնահողային դամբարաններին, ուստի վերջիններից ավելի երիտասարդ են: Մյուս կողմից հիմնահողային կավածեփ դամբարանների ավանդույթն ավելի խոր արմատներ ունի: Խարբերդի ոսկեբեր հովտում, Կորուչուլեփեի բնակատեղիի ու խալկոլիթյան շերտի (որ թվագրվում է մ. թ. ա. 3500—3000 թթ.) ամենավերևում հայտնաբերվել են մեծահասակների երկու մենավոր թաղումներ, կատարված՝ կավածեփ դամբարաններում<sup>90</sup>: Նրանց վաղ օրինակները հայտնի են նաև Ալիշար բլուրում, որտեղ նման հիմնահողային հասարակ, մեկ անձի համար պատրաստված դամբարանները բնորոշ են ստորին էնեոլիթյան շերտին<sup>91</sup>: Հարավային Թուրքմենիստան Գեոկսյուրի հում աղյուսով կառուցված էնեոլիթյան կոլեկտիվ դամբարանների կողքին մեծ տեղ ունեն անհատական թաղումները<sup>92</sup>:

<sup>90</sup> M. van Loon and H. G. Güterboeck, Korucutepe. excavations, 1970, Keban project 1970. Activities, Ankara, 1972, p. 84.

<sup>91</sup> Bittel Kurt, Prähistorische Forschungen in Kleinasien, Istanbul, 1934, p. 63.

<sup>92</sup> B. Массон, Экономика и социальный строй древних обществ, Л., 1976, стр. 156.

Կավածեփ հիմնահողային դամբարանները բնորոշ են Նախիջևանի Քյուլ-Քափայի նույնպես ստորին էնեոլիթյան շերտին, որտեղ այդ դամբարանները տեղավորված են I մշակութային շերտի կառույցների միջև, կամ նրանց տակ<sup>93</sup>: Փաստորեն նրանք էլառի հիմնահողային դամբարանների նախատիպերն են: Այդ դամբարանախցերը նույնպես կավածեփ են, շունեն որոշակի կողմնորոշում: Թաղման ծեսով էլ նրանք հիմնականում բավականաչափ մոտ են: էնեոլիթյան այդ դամբարաններում նույնպես կմախքները գտնվում են աջ կամ ձախ կողքի, կծկված վիճակում, դեմքով մեծ մասամբ դեպի արևելք, երբեմն դեմքը դեպի երկինք, ինչպես էլառի № 20 և 24 դամբարաններում, իսկ ձեռքերը ծնոտի տակ, կամ պարզած դեպի դեմքի դիմացի կավածեփ:

Քյուլ-Քափայի հիմնահողային 73 դամբարանների մեծ մասը կառուցված են մեկ անձի համար, սակավ հանդիպում են դամբարաններ երկուսից-չորս կմախքներով, որոնք հիմնականում զուրկ են իրերից: էլառի դամբարանների նման, այստեղ ևս, կավամանները կամ գանգի ետևում են գտնվում (դամբարան № 65), կամ դեմքի դիմաց (դամբարան № 66)<sup>94</sup>: էնեոլիթյան վերոհիշյալ դամբարաններում ննչեցյալների հիմնական ուղեկիցները նույնպես քարե և ոսկրե հմախներն ու ուլունքներն են, վանակատե դանակաձև շեղքերը<sup>95</sup>: Թաղման ծեսի այսքան մեծ նմանությունն, անշուշտ, հուշում է նրանց նաև էթնիկ նույն խմբին պատկանելը: Իհարկե, Քյուլ-Քափայի վերոհիշյալ թաղումներն ունեն նաև առանձնահատկություններ. կան կարմիր ներկված կմախքներ, նրանց մի մասը զուրկ է իրերից: Բոլոր դամբարաններում, որպես կանոն, բացակայում են հանգուցյալի հետ դրվող ուտելիքի հետքերը՝ կենդանիների ոսկորները<sup>96</sup>, առանձնահատկություններ, որոնք կարող են բացատրվել թաղման ծեսի ժամանակագրական հատկանիշներով:

էլառի կավածեփ դամբարաններում կատարված թաղումներում նկատվում են նրբին տարբերություններ: Նրանց հիմնական խումբը (№ 9, 14, 16, 17, 20, 24, 37), որն ամենաաղքատիկն


<sup>93</sup> O. Абуллаев, Погребальные памятники из поселения Кюльтепе. Археологические исследования в Азербайджане, Баку, 1965, стр. 29—44.

<sup>94</sup> Նույն տեղում, էջ 30, նկ. 1, էջ 31, նկ. 2:

<sup>95</sup> Նույն տեղում:

<sup>96</sup> Նույն տեղում:

է իրերով (աղ. VI; 1, նկ. 48, 49, 51, 54), իր որոշ հատկանիշներով ավելի մոտ է վերոհիշյալ էնեոլիթյան թաղումներին: Դամբարաններից հատկապես երեքը (№ 9, 14, 37) իրենց կմախքների դիրքով զանազանվում են էլառի վաղ բրոնզեդարյան բոլոր մյուս թաղումներից: Կրմախքները ոչ միայն կծկված են, այլև իրանի մասը կարծես կրծքի վրա լինի պառկեցրած, ողնաշարով դեպի վեր, բերանքսիվայր շրջված (աղ. VI; 1, նկ. 48): Նույն բանը մենք տեսնում ենք Քյուլ-Քափայի վերոհիշյալ դամբարաններում:



Նկ. 58. Վանկատե գործիք № 24 դամբարանից:

էլառի դամբարանախցերից երկուսում (մեծահասակների թաղումները № 9, 14) ընդամենը մեկ քրեղան էր դրված, հանգուցյալի դեմքին գրեթե կպած (աղ. VI; 1, նկ. 48), իսկ պատանու դամբարանում (№ 37) մեկ գավաթ և վզի ողբից ցած՝ քարից ու ոսկրից հմախներ (նկ. 54): Երկու այլ դամբարաններում (№ 20, 24) Քյուլ-Քափայի որոշ թաղումների նման<sup>97</sup>, ինչպես տեսանք, գանգերը դեմքով դեպի երկինք էին ուղղված և նրանց նման՝ ձեռքերի (№ 20) և կոնքի (№ 24) մոտ ունեին վանակատե դանակաձև շեղքեր (նկ. 57, 58):

Այս վաղ խմբի խեցեղենն աչքի է ընկնում իր անհամաչափ թրծումով, մեծ մասամբ տափակ հատակով, զարդանախշերի անփուլ կատարմամբ: Կան քրեղաններ, որ միայն զույգ խուլ կանթեր ունեն (աղ. VII; 7, դամբարան № 20), կամ հակառակ մյուս բոլոր քրեղանների, միայն մեկ երեսին ունեն անփուլ կատարված զույգ

<sup>97</sup> Նույն տեղում, տե՛ս դամբարաններ № 69, 77:

փոսիկներ (աղ. VI; 4, դամբարան № 17): Կավա-  
մանների ուսերը լրիվ կլոր չեն, այլ մի փոքր  
երկթեք, հատկանիշներ, որոնք բնորոշ են Արմա-  
վիր բլուրի, Ա. Ս. Ուվարովի կողմից պեղված  
դամբարաններից հայտնաբերված անդարդ քրե-  
զաններին<sup>98</sup>: Նման պրոֆիլով, անդարդ սև փայ-  
լեցրած քրեզաններ բնորոշ են Մասիսի շրջանի  
«Գյոռեր» կոչվող բնակատեղիի խեցեղենին<sup>99</sup>:  
Շեշտված ուսերով գավաթներ, քրեզաններ հատ-  
կանշական են Արևիկի ստորին հորիզոնների  
խեցեղենին:



Նկ. 59. Գավաթ № 24 դամբարանից:


Այս վաղ փուլերին վերաբերող խեցեղենի  
փոսիկները հիմնականում փոքր են, կլոր: Նման  
փոսիկներով է զարդարված էլաոի դամբարանա-  
դաշտում հայտնաբերված կարճավիզ, սև փայ-  
լեցրած գավաթը (ՀՊՊԹ, № 1813/36), № 24  
դամբարանում հայտնաբերվածը (նկ. 59): Փոք-  
րիկ փոսիկներով է զարդարված տափակ հատա-  
կով, ևս փայլեցրած մակերեսով, գրեթե կարմիր  
աստառով № 14 դամբարանի քրեզանը (աղ. VI;  
3, VII; 6): Փոքրիկ և խոր փոսիկներով զարդար-  
ված խեցեղեն բնորոշ է Զրահովտի, Արևիկի  
ստորին շերտերի վերոհիշյալ խեցեղենին<sup>100</sup>:  
Երկուսից-հինգ փոքրիկ փոսիկներով են զարդար-

<sup>98</sup> Б. А. Куфтин, Урартский «колумбарий»..., стр. 92—93, рис. 50, табл. XXIII.

<sup>99</sup> Հետախուզական աշխատանքներ՝ կատարված 1975 թ. հեղինակի կողմից:


<sup>100</sup> Հայտնաբերվել են 1924 թ. պեղումների ժամանակ, XIII—XI շերտերում (ներքևից), № 389, 399, 400 և Արևի-  
կում, 1975 թ. պեղումների ժամանակ:

ված Թեթրի-Մզարոյի դամբարաններից հայտնա-  
բերված գավաթները, սափորները, որոնց կիսա-  
գնդաձև կանթերը էլաոիի նման մի փոքր դուրս  
են ձգված<sup>101</sup>:



Նկ. 60. Քրեզան № 1 դամբարանից:

Անշուշտ, խեցեղենի այս վաղ խմբի մեջ է  
մտնում նաև էլաոի № 1 դամբարանում հայտնա-  
բերված տափակ հատակով, ուղիղ կանգնած  
շուրթերով փոքր քրեզանը: Նրա ուսերի շեշտված  
եզրից վեր, երկու երեսին պատկերված են կլոր  
փոսիկ՝ շրջապատված մեկական թեք, երկարա-  
վուն և նեղ ալոսիկներով (նկ. 60): Նման նեղ ա-  
լոսիկներով են զարդարված նաև Զրահովտի դամ-  
բարաններում հայտնաբերված, ուղիղ պատերով  
սև, ոչ ուժեղ փայլով բաժակը (ՀՊՊԹ, № 1939/40):  
Նրա հետ հայտնաբերված փոսիկազարդ գա-  
վաթը (ՀՊՊԹ, № 1939/43) և զույգ կիսագնդաձև  
կլուստներով (ՀՊՊԹ, № 1939/37), կամ էլ թե  
փոսիկի և կլուստի համադրությամբ զարդարված,  
սև փայլեցրած, վարդագույն աստառով քրեզան-  
ների բեկորները (ՀՊՊԹ, № 1939/39)<sup>102</sup> նույնպես  
հարում են մ. թ. ա. III հազարամյակի ամենա-  
վաղ խմբին:



Նկ. 61. Քրեզանի մաս՝ կիսագնդաձև և թամբաձև կլուստներով:

Վերը տեսանք, որ փոսիկների-բեղիկների  
համադրությամբ էր զարդարված էլաոի ամրոցի  
1927—1928 թթ. պեղված խեցեղենը (նկ. 16):  
Նախիջևանի Քյուլ-Յափայի II շերտի և Ասլան-  
թեփի խեցեղենը: Սակայն նման զարդանախ-

<sup>101</sup> Գ. Գորեշիշվիլու ղեկավարությամբ 1958 թ. կատար-  
ված պեղումներ, նյութերը հրատարակված չեն:

<sup>102</sup> Պեղումները՝ 2. Մնացականյանի, նյութերը հրա-  
տարակված չեն:

շերտով խեցեղենը բնորոշ է Զրահովտի IX—VI  
շերտերին և Գեոյ-թեփի հատկապես K<sub>2</sub> և K<sub>3</sub>  
շերտերին<sup>103</sup>, որոնք հնարավորություն են տալիս  
համոզվելու, որ երկարավուն ալոսների և փոսիկ-  
ների համադրությամբ զարդանկարված խեցե-  
ղենը հարատևում է մ. թ. ա. III հազարամյակի  
ամբողջ I կեսի ընթացքում:

Վաղ հատկանիշներ ունի նաև էլաոի դամ-  
բարանադաշտում հայտնաբերված երեք կիսա-  
գնդաձև և հավանաբար թամբաձև (որի մասն է  
պահպանվել) կլուստներով զարդարված քրեզանի  
բեկորը (նկ. 61, ՀՊՊԹ, № 1805/42), որը հի-  
շեցնում է էնեոլիթային խեցեղենի զարգամտիվ-  
ները և իր անմիջական զուգահեռներն ունի  
բավական վաղ թվագրվող (մ. թ. ա. IV հազար-  
ամյակի վերջին քառորդ) Սամշվիլդի դամբա-  
րանային խեցեղենում<sup>104</sup>: Ընդհանրապես խեցե-  
ղենի այս վաղ խմբի ամենամոտ զուգահեռները  
Կիկեթի, Թամարիսի<sup>105</sup> և Սամշվիլդի քարարկա-  
յին խեցեղենում են<sup>106</sup>:

Մ. թ. ա. III հազարամյակի վաղ փուլերի  
հետ են կապվում նաև պատանու դամբարանում  
(№ 37) հայտնաբերված իրերը, ինչպես անփուլթ  
կատարված, ծուռ իրանով փոսիկազարդ գա-  
վաթը (նկ. 55), այնպես էլ բավական արխաիկ  
տեսքով հմախլ-կախիկները: Մեկը կախելու հա-  
մար անցքով ժանիքից հմախլ է (նկ. 56, ձախից),  
մյուսը՝ ֆելզիտային դեղնամոխրագույն քարից,  
ձկնորսական կարթի տիպի կամ մանգաղանման  
հմախլ-կախիկ (նկ. 56, աջից): Վերջինս բոլոր  
կողմերից լավ հղկած է, կոկած և դիմային կող-  
մում ունի խորաքանդակ, թեք գծով: Վերին մա-  
սում զազաթի մոտ՝ կողքից երկկողմանի շաղա-  
փումով անցք է բացված: Այս երկու հմախլների  
ամենամոտ զուգահեռները հայտնաբերվել են  
Կվախիկների ամենաստորին՝ C<sub>3</sub> շերտի շերտե-  
րից մեկում, որը պեղող հնագետների կողմից  
թվագրվում է մ. թ. ա. III հազարամյակի սկզբ-  
քով<sup>107</sup>: էլաոի տիպի ժանիքից հմախլներ գտնվել  
են լճաշենում, հողային աշխատանքների ժամա-  
նակ (ՀՊՊԹ, № 2024), Արծն-Կարագում<sup>108</sup>, շան  
ատամից՝ Ամիրանիս-գորայի I շերտին հասա-

<sup>103</sup> Տե՛ս ծանոթ. 50:

<sup>104</sup> Г. Мирцхулава, Самшвилде, Тбилиси, 1975  
стр. 81, табл. XXV; 6.

<sup>105</sup> Г. Пхскадзе, Энеолит квемо картли, Тбилиси  
1963.

<sup>106</sup> Г. Мирцхулава, նշվ. աշխ.:

<sup>107</sup> А. Джавахишвили, Л. Глонти, Урбниси, 1-  
Тбилиси, 1962, стр. 26, табл. IV; 424, 425, стр. 64.

<sup>108</sup> Н. Коşау, К. Turfan, նշվ. աշխ., էջ 411, նկ. а  
190, 199.

կակից մանկական դամբարաններում, որոնք  
էլաոի վերոհիշյալ դամբարանից ժամանակով մի  
փոքր երիտասարդ են, թվագրվում են մ. թ. ա.  
2675±170 թթ.<sup>109</sup>:

Սակայն վայրի կենդանիների ատամներից  
կախիկներ-հմախլներ կրելու ավանդույթը շատ  
խոր արմատներ ունի: Նման հմախլներ՝ կախելու  
համար անցքով, հայտնաբերվել են Գարի-Կա-  
մարբանդի (Հյուսիսային Իրան) ու ձեզուլիթյան  
շերտերում<sup>110</sup>, նաև Չաթալ Հոյուկի VI շեր-  
տում<sup>111</sup>:



Նկ. 62. Դամբարան № 15:

Ուշագրավն այն է, որ նման կախիկները  
հարատևում են մինչև վաղ երկաթի դարաշրջանը  
ներառյալ: Կենդանիների ատամներից կախիկ-  
ները հայտնաբերվել են մ. թ. ա. II հազարամ-  
յակի կեսով թվագրվող Բամուտյան դամբարանա-  
բլուրներում (Չեչեն-Ինգուշեթիա)<sup>112</sup>, էլաոի № 7

<sup>109</sup> Т. Чубинишвили, К древнейшей истории юж-  
ного Кавказа, Тбилиси, 1971, стр. 71.

<sup>110</sup> С. Coon, Cave explorations in Iran, 1949, Phi-  
ladelphia, 1951, p. 56.

<sup>111</sup> J. Mellaart, Earliest civilisations of The Near  
East, London, 1965, fig. 103.

<sup>112</sup> Р. Мунчаев, В. Саруаидз, Бамутские курганы  
эпохи бронзы, КСИА, вып. 93, 1964, стр. 93, рис. 27;  
10, стр. 97.

դամբարանում (նկ. 143; 2), որն, ինչպես IV գլխում կտեսնենք, թվագրվում է մ. թ. ա. X—IX դդ.:

Կարթանման կախիկ-հմախիլներ գործածելու ավանդույթը նույնպես բավական վաղ է: Ոսկրից պատրաստված նմանատիպ հմախիլներ հայտնաբերվել են Թեսալիայի նեոլիթյան հուշարձաններում և Չաթալ Հույուկի VI շերտում<sup>113</sup>:



Նկ. 63. Խեցեղեն № 15 դամբարանից:

Այսպիսով, էնեոլիթյան թաղումներին հարող կավածեփ դամբարաններից հայտնաբերված իրերի վաղ զուգահեռներն իրենց հերթին, էլաոի դամբարանների վերոհիշյալ խումբը մ. թ. ա. III հազարամյակի սկզբով թվագրելու հնարավորություններ են ընձեռում:

Ժամանակով վերոհիշյալներից մի փոքր երիտասարդ են հիմնահողային № 15 և 18 դամբարանները (նկ. 62, 65), որոնք կմախքի դիրքով, դեմքի դիմաց դրված կավամանների խմբավորումով ավելի մոտ են քարակղզիներին, սալարկղզիներին և նյութերով էլ համեմատաբար ուշադրալի են նրանցում որոշ փոփոխություններ են նկատվում թաղման ծեսի մեջ, ավելանում են իրերն ու զոհաբերությունները: Բացի մսե կերակուրով լի քրեղանից, հանգուցյալի հետ դամբարան է դրվում զոհված կենդանու գրեթե մի ամբողջ կրծքավանդակ: Ճաշով լի քրեղանը, որ մինչ այդ դրվում էր դեմքի դիմաց, գրեթե բերանին կպած, տեղափոխվում է գանգի ետևի մասը: Գեմքի դիմաց այժմ օջախիկ-պատվանդանի վրա դրված, կափարիչով ծածկված, հավանաբար խրմիչքով լի սափորն է:

Դամբարան № 15-ի խեցեղենը բնորոշվում է կլորացող իրանի սահուն անցումներով: Այն

<sup>113</sup> J. Mellaart, Նշվ. աշխ., նկ. 102 a, e. H. Günter Buchholz and V. Karageorghis, Allägäis und Altkupros Leipzig, 1972, s. 50, 260, abb 466.

ղարդարված է փոսիկներով և ելուստներով: Քրեղանը (նկ. 63) ուռուցիկ ուսերին կրում է փոսիկներ և խորանարդաձև ելուստներ: Նման մի քրեղանի բեկոր, ավելի մասսիվ խորանարդաձև ելուստով և փոսիկով, հայտնաբերվեց 1961 թ. դամբարանադաշտում, հանքի կտրվածքի մեջ (աղ. IX; 6, 2ՊՊԹ, № 2246/82): Սահուն անցումներով նմանատիպ անզարդ քրեղաններ հայտնաբերվել են Վանա լճի շրջակայքի հուշարձաններում՝ Արճեշում, Ադիլչևազում<sup>114</sup>, Խարբերդի հովտում՝ Նորշեն-Թեփե բազմաշերտ հուշարձանի վաղ բրոնզեդարյան շերտում<sup>115</sup>: Դամբարանում գտնված գավաթատիպ սափորիկը, որն աչքի է ընկնում խեցու նրբությունից և կատարման վարպետությամբ, իրանի կենտրոնական մասում ունի փոքրիկ խուլ կանթ, երկու կողմից մեկական փոսիկով շրջապատված: Սափորը փոսիկ ունի նաև կիսագնդաձև կանթի տակ (աղ. VII; 5): Զարդանախշման այս եղանակը բնորոշ է Զրահովտի IX—VI շերտերի խեցեղենին, Գեոյ-Թեփեի K3 շերտին:



Նկ. 64. Վանակառե նետասլաքներ № 15 դամբարանից:

Անշուշտ, շպետք է մոռանալ, որ Գեոյ-Թեփեի խեցեղենի որոշ մասը ձևով մի փոքր տարբեր է Հայկական լեռնաշխարհի խեցեղենից: Դամբարան № 15-ի քրեղանի և սափորի անմիջական զուգահեռները Արճեշի քարակղզային խեցեղենում է<sup>116</sup>, իսկ սափորի կափարիչի զուգահեռը՝ Խարբերդի հովտի Ծսենքավան հուշարձանում<sup>117</sup>: Ինչ վերաբերում է վանակատից պոչուկավոր նետասլաքներին (նկ. 64), ապա նրանք բազմաթիվ զուգահեռներ ունեն վաղ բրոնզեդարյան հու-

<sup>114</sup> C. Burney, Նշվ. աշխ., էջ 189, նկ. 107—109, էջ 181, նկ. 53, 86:


<sup>115</sup> H. Hauptmann, Die grabungen auf dem Norşun tepe, Keban project, Activities, Ankara, 1972, p. 103, Taf. 72—79.

<sup>116</sup> C. Burney, Նշվ. աշխ., էջ 185, նկ. 89.

<sup>117</sup> H. Ertem, Han Ibrahim şah excavations, 1971, Keban project 1971 Activities. Ankara, 1974, p. 65—69, pl. 61—2.

շարձաններում և լայն տարածում են ստացել Եկսած մ. թ. ա. III հազարամյակի սկզբից:

Անշուշտ, այս դամբարանի հետ է կապվում, նրա արևմտյան կողմում, ծածկի սալի մոտ հայտնաբերված հասպիսից պատրաստված, պոչուկ շունեցող փետուրի ձևի դաշույնը, որի մեկ երեսը հարթ է, իսկ մյուսը մի փոքր երկթեք է և ուստուղով ծածկված (նկ. 72): Դաշույնը, հավանաբար, վրիպել են հուղարկավորության ժամանակ: Բրոնզից պատրաստված նման մի դաշույն հայտնաբերվեց № 10 սալարկղզում: Սակայն հասպիսից պատրաստվածը ժամանակով վերջինիցս ավելի վաղ է: Այն շերտագրորեն կապվում է № 15 դամբարանի հետ, որը սալարկղզից մոտ 0,3 մ ավելի խորն էր: Դաշույնն, անշուշտ, ունեցել է փայտից կամ ոսկրից կոթառ, որը շի պահպանվել: Կայծքարից պատրաստված ոսկրե կոթառով



Նկ. 65. Դամբարան № 18:

նմանատիպ ծխական դաշույնի ամենավաղ օրինակները հայտնաբերվել են Չաթալ Հույուկի VI A 29 շերտում<sup>118</sup>:

Վաղ հատկանիշներ ունի նաև № 18 դամբարանում (նկ. 65) հայտնաբերված խեցեղենը: Կարճավիզ և տափակ հատակով քրեղանի ոչ շատ ուռուցիկ իրանը երկու կողմից զարդարված է զույգ, մանր և անփույթ կատարված փոսիկներով շրջապատված փոքրիկ ելուստով (նկ. 66, աղ. VII; 6): Ծիշտ նման զարդանախշերի խմբավորումով է զարդարված Մեծամորի վաղ բրոնզեդարյան մշակույթի ստորին հորիզոնում հայտ-

<sup>118</sup> J. Mellaart, Çatal Hüyük, London, 1967, էջ 100, աղ. XIV:

նաբերված քրեղանի բեկորը<sup>119</sup>: Չուով էլաոի քրեղանն է հիշեցնում Մուշի մոտ, Բիթլիս տանող ճանապարհի կողքին գտնվող Սոգկոմ-Թեփեի



Նկ. 66. Քրեղան № 18 դամբարանից:

բնակատեղիում հայտնաբերված, ելուստներով զարդարված կարճավիզ քրեղանը<sup>120</sup>: № 18 դամբարանում հայտնաբերված գավաթատիպ սափորի ուսերը նույնպես փոքրիկ փոսիկներով են զարդարված (նկ. 67):




Նկ. 67. Սափոր՝ կափարիչով, № 18 դամբարանից:

Ուշադրության է արժանի գանգից վեր, կենդանիների ոսկորների հետ հայտնաբերված, թեք ուսերով, մեծ, երկարավուն շեղքով, լայն և տափակ պոչուկով բրոնզե դաշույնը (նկ. 68): էլաոի

<sup>119</sup> է. Խանգադյան, Կ. Մկրտչյան, է. Պարսամյան, Մեծամոր, էջ 19—20, նկ. 16:

<sup>120</sup> C. Burney, Նշվ. աշխ., էջ 185, նկ. 89:

դաշույնի ամենամոտ զուգահեռ հայտնաբերված է Կիրովականի երկրագիտական թանգարանի բակում, հողային աշխատանքների ժամանակ (նկ. 69), սակայն վերջինիս մեջքը մի փոքր բարձր է: Դաշույնի հետ գտնված բեղիկներ-փոսիկներով



Նկ. 68. Դաշույն № 18 դամբարանից:


Նկ. 69. Բրոնզե դաշույն՝ Կիրովականից:

զարդարված, սև փայլեցրած կավամանի բեկորը (նկ. 70)<sup>121</sup>, ինչպես նաև № 18 դամբարանի վերո-

<sup>121</sup> Գտնվում են Կիրովականի երկրագիտական թանգարանում:

հիշյալ խեցեղենը, դարձյալ իրենց զուգահեռներն ունեն Ջրահովտի IX—VI հորիզոններում և Գեոյ-թեփեի K<sub>2</sub> և K<sub>3</sub> շերտերում<sup>122</sup>:

Այսպիսով, էլաոի № 15 և 18 դամբարանների թվագրության վերին սահմանը հավանաբար մ. թ. ա. 2700 թ. է: էլաոի № 8 կավածեփի դամբարանում հայտնաբերված եռանկյունաձև իրանով, թեք համաչափ ուսերով և նեղ, երկար պոչուկով տափակ դաշույնը (նկ. 47, աղ. VII; 9) ավելի կատարելագործված ձև ունի, քան № 18 դամբարանում հայտնաբերված վերոհիշյալ դաշույնը: Սակայն մյուս կողմից այն ավելի վաղ է, քան էլաոում՝ Ե. Լալայանի գտած մի փոքր օվալաձև իրանով, անհամաչափ թեք ուսերով և նեղ պոչուկով դաշույնը (աղ. VII; 10, ՀՊՊԹ, № 127/421): Վերջինս



Նկ. 70. Խեցու բեկոր՝ հայտնաբերված Կիրովականի դաշույնի հետ:

ավելի մոտ է էջմիածնի դաշույնին (աղ. VII; 11, ՀՊՊԹ, № 712/1) և Արծն-Կարագի, մոտ 4,0 մ խորությունից հայտնաբերված նեղ պոչուկով և համեմատաբար մասսիվ իրանով դաշույնին<sup>123</sup>, որոնք անմիջապես նախորդում են միջին բրոնզի Կարմիր-վանքի տիպի դաշույններին (աղ. VII; 12)<sup>124</sup>:

էլաոի, էջմիածնի և Արծն-Կարագի վերոհիշյալ դաշույններին բավական մոտ է նովոսվոբոդնիի Ն. Ի. Վեսելովսկու պեղած № 1 դամբարանուրի դրմենում հայտնաբերված դաշույնը<sup>125</sup>: Այն վերաբերում է «Կուբանյան մեծ դամբարանաբլուրների» երկրորդ փուլին (մ. թ. ա. 2300—

<sup>122</sup> T. Berton Brown, Նշվ. աշխ., աղ. V—342, նկ. 9, 294, նկ. 10, 449, 385, 315, նկ. 12, 538.

<sup>123</sup> N. Koşay, K. Turfan, Նշվ. աշխ., էջ 409, նկ. 4 178.

<sup>124</sup> A. Мартыросян, Նշվ. աշխ., էջ 51, նկ. 20 ա.

<sup>125</sup> ОАК за 1898, СПб., 1901, Кубанская область, раскопки Н. И. Веселовского в ст. Царской, стр. 33—34, табл. II; 24.

2000 թթ.)<sup>126</sup> և ժամանակով համընկնում վերոհիշյալ դաշույններին:



Նկ. 71. Բրոնզե դաշույն № 10 դամբարանից:

Նկ. 72. Հասպիսե դաշույն № 15 դամբարանի եզրից:


Վերը տեսանք, որ էլաոի սալարկղները (№ 3, 10, 36) շերտագրորեն մոտ 0,4—0,5 մ ավելի բարձր էին կառուցված հիմնահողային դամբարաններից և իրենց նյութերով էլ մի փոքր երիտասարդ են № 15 և 18 դամբարաններից: № 10 սալարկղում հայտնաբերված փետուրի ձևի, հազիվ նկատելի շեղումով մեջքով առանց դաստակի բրոնզե դաշույնը (նկ. 71), հավանաբար, սերվում է տեղական նախատիպերից, նույնությամբ կրկնում է № 15 դամբարանի մոտ հայտնաբերված հասպիսե դաշույնին (նկ. 72), սակայն նրանից ավելի երիտասարդ է:

էլաոի բրոնզե դանակին բավական նման է Նալչիկի մոտ (Կարարդինո-Բալկարիա) «Սաղկի»

<sup>126</sup> А. Иессен, К хронологии больших кубанских курганов, СА, XII, 1950, стр. 163, табл. II; 3. Նույնի՝ Майкопская культура и ее датировка, Тезисы докладов на заседаниях отделения исторических наук АН СССР, посвященных итогам полевых исследований 1961 года, М., 1962, стр. 21. А. А. Формозов, Каменный век и энеолит Прикубанья, М., 1965, стр. 145.

տեղամասի դամբարանուրում հայտնաբերվածը, որը վերագրվում է «Կուբանյան մեծ դամբարանաբլուրների» վաղմայկոպյան ժամանակաշրջանին (մ. թ. ա. 2500—2400 թթ.)<sup>127</sup>:

էլաոի սալարկղների սահուն անցումներով, խուլ կանթ-ելուստներով և փոսիկներով զարդարված խեցեղենը նման է նախորդներին, սակայն երևան են գալիս արդեն փոքրիկ, ներձկված հատակներ, շուրթից սկսվող երկթեք կանթեր (նկ. 73, դամբարան № 3, 6), հատկանիշներ, որոնք բնորոշ են Ջրահովտի V—IV շինարարական հորիզոններին, որտեղ նրանք ուղեկցվում են մի նոր տիպի՝ փոքրիկ հատակով, եռմասանի շեղումով անցումներով, մեծ կլոր և ձվաձև փոսիկներով զարդարված խեցեղենով, որոնք բացակայում էին նախորդ շինարարական հորիզոններում:



Նկ. 73. Գավաթ, № 3 դամբարանից:

Շուրթից սկսվող երկթեք կանթի տակ փոսիկով գավաթներ բնորոշ են Գառնիի ստորին շերտին (ՀՊՊԹ, № 1965/6, 8, № 2176/54)<sup>128</sup>: Սև փայլեցրած սահուն անցումներով և փոքրիկ, ներձկված հատակներով գավաթներ հայտնաբերվել են Խարբերդում, Աշվան-կալից հարավ՝ Տաշկուն-Մեկի բնակատեղիում, որի վաղ բրոնզի երեք

<sup>127</sup> А. А. Иессен, Археологические памятники Кабардино-Балкарии, МИА, № 3, М.—Л., 1941, стр. 17, рис. 2; 5. Նույնի՝ К хронологии..., стр. 163. Նույնի՝ Майкопская культура..., стр. 21, P. M. Мунчаев, Кавказ на заре бронзового века, М., 1975, стр. 334—335.

<sup>128</sup> է. Խանգալյան, Գառնի, IV, էջ 17, նկ. 13, էջ 38, նկ. 28, էջ 55:



փուլերին բնորոշ են կլոր փոսիկներով զարդարված խեցեղեն<sup>129</sup>:

Էլաոի սալարկղներին ժամանակակից է նաև Սաղկայում, Բարմակսիզի խճուղու մոտ հայտնաբերված սալարկղային թաղումը, որը նույնպես փոքր է, կառուցված մեկ հոգու համար: Նրանում հայտնաբերված սև փայլեցրած խեցեղենը, հատկապես ներճկված հատակով գավաթը աղերսվում է վերը հիշատակված կավամանների հետ<sup>130</sup>: Բ. Ա. Կուֆտինը, իրավամբ, այդ խեցեղենը տեղագրում է Կիկեթի տիպի I խմբի վաղ խեցեղենի և Շենգավթի, Շրեշ-բլուրի տիպի խեցեղենի միջև<sup>131</sup>:



Նկ. 74. Գավաթ № 6 դամբարանից:

Ավելորդ չէ նշել, որ նման գավաթները հասել են մինչև հյուսիս-արևելյան Կովկաս: Թերեքի հյուսիսային ափին՝ Մեկենյան ստանիցայի մոտ (Չեչենո-Ինգուլեթիա) պեղված № 4 դամբարանաբլուրի № 16 դամբարանում հայտնաբերված փոքրիկ հատակով, վղի հիմքում կիսագնդաձև կանթով սև փայլեցրած գավաթը, ինչպես ճիշտ նկատել են Ե. Ի. Կրուպնովն ու Ն. Յա. Մերպերտը, իր անմիջական զուգահեռներն ունի Սաղկայի վերոհիշյալ գավաթում, Գեոյ-թեփեի, Արճեշի և այլ հուշարձանների մ. թ. ա. III հազարամյակի կեսով թվագրվող խեցեղենում<sup>132</sup>: Մյուս կողմից նրանք գտնում են, որ այդ գավաթը բավական մոտ է մայկոպյան մշակույթին: Սակայն Բ. Ա. Մունչաևը իրավացիորեն ժխտում է նրա մայկոպյան մշակույթին պատկանելը և այն կապում «բուռարաբայանի» հետ<sup>133</sup>:

<sup>129</sup> D. French, նշվ. աշխ., աղ. 39:8, էջ 60—62:  
<sup>130</sup> Б. Куфтун, Археологические раскопки в Триалети, стр. 116—117, рис. 125, 126.  
<sup>131</sup> Նույն տեղում, էջ 115—116:  
<sup>132</sup> Е. Крупнов, Н. Мерперт, Курганы у станицы Мекенской, Древности Чечено-Ингушетни, М., 1963, стр. 40—41, рис. 6; 10.  
<sup>133</sup> Р. Мунчаев, նշվ. աշխ., էջ 285:

Ամիրանիս-գորա բնակատեղիի արևմտյան մասի դամբարանադաշտի № 38 և 49 սալարկղները<sup>134</sup>, հավանաբար, նույնպես ժամանակակից են էլաոի սալարկղներին:

Այսպիսով, վերոհիշյալ զուգահեռները հնարավորություն են ընձևում էլաոի № 8 հիմնահողային դամբարանը և № 3, 10, 36 սալարկղները մ. թ. ա. 2700—2500 թթ. թվագրելու:

Ինչ վերաբերում է քարարկղներին, այսինքն այստեղև դամբարաններին (նկ. 39, աղ. IV; 1), ապա նրանք հավանաբար անմիջապես հաջորդել են սալարկղներին և շարունակվել III հազարամյակի II կեսում:

Նախորդ դամբարանների հետ համեմատելիս, պայտածե քարարկղներում թաղման նրբին տարբերություններ են նկատվում: Խախտվում են կավամանների տեղերը: Ճաշով լի քրեղանը այլևս գանգի հետևում չէ, այլ դեմքից մի փոքր ավելի ցած, օջախիկ պատվանդանով սափորը իջեցված է ծնկների մոտ, հավանաբար այդ պատճառով էլ ձևերը նախորդների նման ոչ թե ծնոտի տակ են, կամ դեպի դեմքի դիմացի կավամանը պարզած, այլ իջեցված են ծնկների մոտի կավամանների կողմը: Խեցեղենում երևան են գալիս նոր տարրեր, որոնք իրենց լիակատար զարգացումն են գտնում մ. թ. ա. III հազարամյակի II կեսում և հարատևում մինչև վերջին փուլերը: Հատակները փոքրանում են և ներճկվում: Երևան են գալիս շուրթի հետ եռանկյունաձև հարթակ կազմող երկթե կանթեր, երբեմն հարթակի կենտրոնում եռանկյունաձև բացվածք (նկ. 74, աղ. V; 3, դամբարան № 6): Նման տիպի կանթեր, վերին հարթակը փոսիկազարդ և կանթի տակ փոսիկ, բնորոշ է դառնում մ. թ. ա. III հազարամյակի I կեսից — II կեսի անցման շրջանի խեցեղենի համար և լայն տարածում գտնում գրեթե բոլոր հուշարձաններում: Նման կանթերով խեցեղենի բեկորներ հայտնաբերվել են Գառնիում, Շենգավթում (ՀՊՊԹ, № 1330/45, 66, 269)<sup>135</sup>, Ոսկեվազում (ՀՊՊԹ, № 2247/9), Զրահովտի II շինարարական հորիզոններում և էլաոի ամրոցի P<sub>3</sub> փոսորակում (նկ. 40):

Սակայն այդուհանդերձ վերոհիշյալ պայտածե դամբարաններում հայտնաբերված խեցեղենը

<sup>134</sup> Т. Чубинишвили, Амиранис Гора, Тбилиси, 1963, табл. VII. Նույնի՝ Древнейшая культура в двуречье Куры и Аракса, Тбилиси, 1965, табл. II; 1.  
<sup>135</sup> Է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 56, նկ. 52, 53:

բնորոշվում է սահուն անցումներով և կլոր փոսիկներով, հատկանիշներ, որոնք բնորոշ են մ. թ. ա. III հազարամյակի հատկապես I կեսին և մասամբ պահպանվում են նաև II կեսի վաղ փուլերում:



Նկ. 75. Տեղի ծայր № 22 դամբարանից:

Այս նույն ժամանակով կարող է թվագրվել, հավանաբար, նաև № 22 դամբարանը, ուր հայտնաբերված տեղի ծայրի (նկ. 75) մի փոքր ավելի զարգացած տեսակները հայտնաբերվել են Արծրն-Կարազի B<sub>1</sub> շերտում<sup>136</sup> և էշերիի դոլմեններում<sup>137</sup>:

Անշուշտ, մ. թ. ա. III հազարամյակի II կեսով և վերջով կարող են թվագրվել էլաոի № 5, 11 և 26 դամբարանները:

Դամբարան № 5-ում հայտնաբերված օջախիկ-պատվանդանը, որի կիսագնդաձև կանթը հակառակ նմանատիպ օջախիկների, շուրթի և իրանի միացման տեղում չէ, այլ կոնաձև դեպի ցած լայնացող իրանի կենտրոնում, ստորին եզրին կրում է զույգ զիզզազների զարդագոտի (աղ. IX; 1): Նման զարդագոտիներ հատկապես բնորոշ են վաղ բրոնզի մշակույթի վերջի, նաև միջին բրոնզի անցման փուլի խեցեղենին: Այդ նույն տիպի գծային գոտիներով են զարդարված Զրահ-

<sup>136</sup> Н. Коşay, К. Turfan, նշվ. աշխ., էջ 409, նկ. 177:  
<sup>137</sup> Б. Куфтун, Материалы к археологии Колхиды, том II, Тбилиси, 1950, табл. XXXII, рис. 5.

հովտի I շերտում հայտնաբերված գավաթը (1966 թ., № 7), II շերտում հայտնաբերված թասի շուրթը՝ ներսից, վաղ բրոնզից միջինի անցման շերտում հայտնաբերված փքսափողը, ինչպես նաև Զարջաոխի (ՀՊՊԹ, № 1893/3) և Լենինականի գավաթները<sup>138</sup>:

Դամբարան № 26-ում հայտնաբերված իրանի միջին մասում մի փոքր սեղմված գլանաձև բաժակ (նկ. 76) իր զուգահեռներն ունի Գառնիի և Շենգավթի վերին շերտերում<sup>139</sup>:

Ավելի զարգացած ձևեր ունեն № 11 դամբարանում հայտնաբերված նյութերը, հատկապես մեկ կանթանի սափորը (նկ. 77, աղ. VIII; 1, 2): Նրա շուրթերն ուժեղ դուրս են ճկված: Հակառակ մյուս բոլոր վերոհիշյալ սափորների, վղից-իրանի անցումը շեշտված չէ, սահուն է: Սափորի ստորին, երկկոնիկ մասն էլ շատ կարճ է, իրանի հետ միացման տեղում սուր եզրի վերին մասում, կանթի հակառակ կողմում զույգ մեծ, ձվաձև, ոչ խոր փոսիկներ ունի: Կանթը երկթե է և շուրթը կանթի մասում ձգվում, հարթակ է կազմում: Կանթի ձախ կողմում, սափորի ուսերին ռելիեֆ-ներճկման եղանակով ինչ-որ զարդանախշ է արված, սակայն կավամանի այդ հատվածը վնասված է: Սափորի հատակը փոքր է և




Նկ. 76. Բաժակ № 26 դամբարանից:

ուժեղ ներճկված: Արտաքինից այն ուժեղ սև փայլ ունի, իսկ վղի և շուրթի մի մասը դրսից, նաև աստառը մուգ դեղնավուն են: Այն թե՛ իր կառուցվածքով, թե՛ կանթի ձևով զարդանախշերով, ամբողջությամբ կրում է վաղ բրոնզի մշակույթի վերջին փուլերի խեցեղենին բնորոշ հատկանիշներ: Նման խեցեղենը հատկանշական է Զրահովտի II և I շերտերի (1973 և 1974 թթ.

<sup>138</sup> Է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 110—111, նկ. 92, 93:  
<sup>139</sup> Նույն տեղում, էջ 57, նկ. 54:



պեղումներ) խեցեղենին: Նման անցումներով գավաթի մի բեկոր հայտնաբերվել է էլաոի P<sub>3</sub> փոսորակի վաղ բրոնզի դարաշրջանի շինարարական հորիզոնում (ՀՊՊԹ, № 2625/96):



Նկ. 77. Սափոր № 11 դամբարանից:

Ուշագրավն այն է, որ էլաոի սափորին ձևով, կանթով և կանթի մոտի ակոսաձև պատկերով հար և նման են Կարաբուղաղբենդի (Դաղստան) № 2 դամբարանադաշտի I դամբարանում հայտնաբերված, չափերով փոքր կավամանները<sup>140</sup>, Ըստ Ռ. Մ. Մուսնաևի և Կ. Ֆ. Սմիռնովի այդ դամբարանադաշտի մետաղը ամբողջությամբ համապատասխանում է մայկոպյան մշակույթի նովոսվորոդնիյան փուլին<sup>141</sup>, որն, ինչպես վերը տեսանք, թվագրվում է մ. թ. ա. 2300—2000 թթ.:

էլաոի № 11 դամբարանի մածուկից երկկոնիկ և շրջանաձև ուլունքների (աղ. VIII; 5), ինչպես և պարուրաձև փաթաթվածքով ապարանջանների (աղ. VIII; 3, 4) անմիջական զուգահեռները Ջրահովտի III շերտի հատակի տակ հայտնաբերված դամբարանի նյութերում են (1974 թ., № 22, 25): Սակայն նման պերճանքի առարկաներ հայտնաբերվել են և վաղ հուշարձաններում՝ Օզնիի 1948 թ. պեղված № 1 մանկական դամբարանում (վՊԹ, № 255—258), Կվացխելիբիում<sup>142</sup>, Սաշխերիում<sup>143</sup>, և ավելի ուշ՝ Դաղստանի և Չեչենյայի ինչպես միջին բրոնզի դամբարանային

նյութերում (Գատին կալե, Գինչի)<sup>144</sup>, այնպես էլ բրոնզի մշակույթի զարգացման հաջորդ փուլերում՝ ներառյալ մինչև մ. թ. ա. I հազարամյակի սկիզբը<sup>145</sup>:

Հայկական լեռնաշխարհում պարուրաձև փաթաթվածքով ապարանջանները նույնպես հարատևում են մինչև վաղ երկաթի դարաշրջանը, որի լավագույն օրինակները են Կարմիր-բլուրի նախաուրարտական դամբարաններից մեկում հայտնաբերված ապարանջանները (ՀՊՊԹ, № 1806/4, 5): Հավանաբար նույն ժամանակով կարող է թվագրվել նաև էլաոի դամբարանադաշտում պատահականորեն հայտնաբերված ապարանջանը (աղ. XVIII; 10):

Այսպիսով, էլաոի № 11 դամբարանի իր նյութերով կարող է թվագրվել վաղ բրոնզի մշակույթի վերջին փուլով:



Նկ. 78. Գավաթ էլաոի դամբարանադաշտից:

Մ. թ. ա. III հազարամյակի II կեսով է թվագրվել էլաոի դամբարանադաշտում պատահականորեն հայտնաբերված եռմասանի, շեշտված անցումներով, փոքրիկ, ներձկված հատակով գավաթը (նկ. 78, ՀՊՊԹ, № 1813/25): Ավելի ուշ, մ. թ. ա. III հազարամյակի վերջով կարող է թվագրվել դարձյալ դամբարանադաշտում հայտնաբերված, կտրած շուրթերով, հաստախեցի, լայն տափակ հատակով թասը, որի եզրը մի կողմում թեթևակի ներձկված է (աղ. IX; 3, ՀՊՊԹ,

№ 1813/28): Այն իր բազմաթիվ զուգահեռներն ունի Շենգավիթ IV-ում:

Խեցեղենի տիպաբանական համեմատությունները մի շարք ուսումնասիրողների, այդ թվում նաև տողերիս հեղինակին<sup>146</sup> վաղ բրոնզեդարյան հուշարձանների և էլաոի դամբարանների խեցեղենի թվագրության հարցում ժամանակին հանգեցրել են ոչ ճիշտ հետևությունների: Սակայն նշվել է նաև, որ ստույգ շերտագրական տվյալների բացակայության պայմաններում հուշարձանների մի մասը դեռևս ժամանակագրական առումով իրենց ճիշտ տեղը չեն գտել և «այդ հուշարձանների թվագրությունը որոշակի չէ, կարող է լուրջ ուսումնասիրության և որ այն իր վերջնական լուծումը կստանա շերտագրություն տվող մի շարք խոշորագույն հուշարձանների ուսումնասիրությամբ»<sup>147</sup>:

Մյուս կողմից, ճիշտ չէ նաև էլաոի դամբարաններն ամբողջությամբ վաղ բրոնզի մշակույթի հնագույն հուշարձանների շարքում տեղադրելը, ինչպես այդ անում են Տ. Չուբինիշվիլին և Կ. Քուշնարյովան<sup>148</sup>: էլաոի դամբարանների ժամանակագրական շրջանակներն, ինչպես իրենք են արտահայտվում, որոշվում է նրանցում հայտնաբերված խեցեղենով, որը մեկ դեպքում համարում են մ. թ. ա. III հազարամյակի I կեսի սահմաններից դուրս չեկող<sup>149</sup>, իսկ նույն աշխատության մեկ այլ հատվածում կամայականորեն այն տեղադրում են վաղ բրոնզի դարաշրջանի խեցեղենի զարգացման II փուլում և թվագրում մ. թ. ա. III հազարամյակի կեսերից սկսած<sup>150</sup>:

Վերը տեսանք, որ էլաոի դամբարանները թվագրելիս հենվում ենք ոչ միայն խեցեղենի տիպաբանական համեմատությունների, այլ հատկապես դամբարանների տեսակների, նրանց ծագումնաբանության և շերտագրության, թաղման ծեսի մեջ տեղի ունեցող փոփոխությունների, ինչպես նաև ուղեկցող իրերի հասակային տարբերությունների վրա:

Առաջին հայացքից թվում է, թե էլաոի երեք տիպի դամբարաններում գտնված խեցեղենում տարբերություններ տեսնել հնարավոր չէ: Հայտ-

նաբերված շորս տեսակի կավամանները նույն հատկանիշներն են կրում: Խոր քրեղանները զարդարված են խուլ-կանթերի, ելուստների և փոսիկների համադրությամբ: Գավաթներն ու նման կառուցվածքի սափորներն ունեն կիսագնդաձև կանթեր և փոսիկներ: Սակայն դրանք միմյանց հետ բաղդատելիս նկատվում են ձևերի ու զարդանախշերի կատարման նրբին տարբերություններ, որոնք, անշուշտ, կարելի է բացատրել վաղ բրոնզի դարաշրջանի զարգացման տարբեր փուլերում, էվոլյուցիոն զարգացման հետևանքով նրանց կրած փոփոխություններով:

էլաոի դամբարանային խեցեղենը տարբեր փուլերի տարանջատելու հնարավորություն են ընձեռում հեղինակի կողմից պեղվող Արևիկի և Ջրահովտի վաղ բրոնզեդարյան բազմաշերտ հուշարձանների շերտագրական տվյալները: Այդ հուշարձանների ուսումնասիրությունից պարզվում է, որ վաղ բրոնզեդարյան խեցեղենը՝ փոսիկներ, ելուստներ, խուլ կանթեր, կիսագնդաձև կանթեր է կրում մ. թ. ա. III հազարամյակի սկզբից մինչև մ. թ. ա. II հազարամյակի սկիզբը: Բացի այդ, սահուն անցումներով փոսիկազարդ խեցեղենը, որն ավելի բնորոշ է Ջրահովտի IX—VI շերտերին, պահպանվում է նաև V—III շերտերում: Սակայն, ինչպես վերը նշվեց, V—III շերտերում նրա կողքին երևան է գալիս մի նոր տիպի, այսպես ասած՝ դասական ոճի, եռմասանի շեշտված անցումներով, մեծ կլոր և ձվաձև փոսիկներով զարդանկարված խեցեղեն: Մյուս կողմից, կան ձևեր, որոնք սկիզբ առնելով մ. թ. ա. III հազարամյակի նախնական փուլերում, հարատևում են մինչև վերջը: Օրինակ՝ Արագածի սալարկղում հայտնաբերված սև փայլեցրած քրեղանը, ուսերին զույգ կիսագնդաձև ելուստներ<sup>151</sup>, հար և նման է էլաոի վաղ դամբարաններում հայտնաբերվածներին, սակայն զարդարված է նաև վաղ բրոնզի մշակույթի վերջին փուլերին բնորոշ, խազելու եղանակով կատարված երկրաչափական զարդանախշերով: Նմանապես, Հաոիճում հայտնաբերված վաղ տիպերը հիշեցնող փոսիկներով և խուլ կանթերով զարդարված քրեղանը, որի ուսերը կրում են նաև գծածածկ զիզգազ ժապավենների զարդամոտիվ<sup>152</sup>, նույնպես բնորոշ է վաղ բրոնզից միջինի անցման փուլին: Այդ իսկ պատճառով խեցեղենի զուգահեռները նշելիս, հնարավոր չէ

<sup>140</sup> P. Мунчаев и К. Смирнов, Археологические памятники близ села Карабудахкент, МИА, № 68, М.—Л., 1958, стр. 165, рис. 5; 5, 8.

<sup>141</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>142</sup> А. И. Джавахишвили, Л. И. Глопти, № 24-27, табл. XXXVI.

<sup>143</sup> О. М. Джапаридзе, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры. Тбилиси, 1961, стр. 265.

<sup>144</sup> М. Гаджиев, Из истории культуры Дагестана в эпоху бронзы, Махачкала, 1969, стр. 47, рис. 20; 11, 12, стр. 51, рис. 22; 39, стр. 61, рис. 27; 9. В. Марковин, Новый памятник эпохи бронзы в Горной Чечени, Древности Чечено-Ингушетии, М., 1963, стр. 52, рис. 1; 9, рис. 23; 2, 3.

<sup>145</sup> Նույն տեղում, էջ 125. М. Гаджиев, Дагестан и Юго-восточная Чечня в эпоху средней бронзы. Древности Дагестана, Махачкала, 1974, стр. 25, 26.

<sup>146</sup> է. Խաճաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., էջ 71—77:

<sup>147</sup> Նույն տեղում, էջ 94, 97:

<sup>148</sup> Т. Чубинишвили, № 24, 27, էջ 122, К. Кушнарева, Т. Чубинишвили, Древние культуры южного Кавказа (V—III тыс. до н. э.), Л., 1970, стр. 72.

<sup>149</sup> Նույն տեղում:

<sup>150</sup> Նույն տեղում, էջ 157:

<sup>151</sup> А. Мартиросян, Армения в эпоху..., стр. 45, рис. 13.

<sup>152</sup> Т. Хачатрян, № 24, 27, էջ 69, № 4. 31а.


բավարարվել նրանց տիպարանական համեմատություններով, այլ պետք է դիտել նաև, թե խեցեղենի և այլ նյութերի ինչ միջավայրում է այն երևան գալիս:

Վերը տեսանք, որ էլառում պեղված դամբարանները սկիզբ առնելով մ. թ. ա. III հազարամյակի նախնական փուլերում, հարատևում են մինչև նրա վերջը:

\*\*\*

էլառի ամրոցից և դամբարաններից հայտնաբերված նյութերը վկայում են նաև տնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության և անասնապահության ինտենսիվ զարգացումը, զբղանց զուգընթաց մետաղագործության, խեցեգործության և արտագործության այլ ճյուղերի աննախընթաց վերելքը:


Ինչպես մյուս վաղ բրոնզեդարյան բնակատեղիներին, այնպես էլ էլառին բնորոշ են մեծ քանակությամբ քարից աշխատանքի գործիքներ: Դրանք տանձաձև իրանով և շերեփանման գոգավորությամբ գործիքներ են (նկ. 79; 2, նկ. 80,



Նկ. 79. Սանդղիկներ:

աղ. X; 4, ՀՊՊԹ, № 161/2, 5), գետաքարից պատրաստված մասսիվ դուրեր (աղ. X; 7—12, ՀՊՊԹ, № 161/1, 3, 4), կարմիր տուֆից անիվներ (աղ. XI; 22, ՀՊՊԹ, № 161/71, № 2625/105) և երկկողմանի խոր գոգավորություններով գործիք (ՀՊՊԹ, № 161/71), մոխրագույն քարից գուրզի մաս (ՀՊՊԹ, № 2625/56), մեծ քանակությամբ քարից կոկիչներ (նկ. 81, ՀՊՊԹ, № 127/44, 46, 47, 153, № 161/4 և № 2625/41, 45, 49):

էլառի մոտակայքի վանակատի հանքերը լայն հնարավորություններ են ընձեռել տնտեսությանը ծառայող մեծ քանակությամբ, տարատեսակ գործիքներ պատրաստելուն (աղ. XI, ՀՊՊԹ, № 2625/20, 35, 41, 55, 67, 94, 103):



Նկ. 80. Շերեփանման գործիք քարից:


էլառի ամրոցում հայտնաբերվել են նաև ոսկրե հերուններ (աղ. X; 13—15, ՀՊՊԹ, № 127/20, 21, 25, 138), ասեղ (աղ. X; 17, ՀՊՊԹ, № 127/27), շյուղ (աղ. X; 16, XI; 18, ՀՊՊԹ, № 2625/35), իլիկի գլուխ (աղ. X; 18, ՀՊՊԹ, № 127/355), կավից տարբեր շափերի շրջանակներ (աղ. X; 19), որոնք հատկանշական են Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան գրեթե բոլոր հուշարձանների համար:

Ուշագրավ են կրակից շիկացած գլանաձև և հատած կոնի տիպի տարբեր մեծության շեշաքարերը (աղ. XI; 19, ՀՊՊԹ, № 2625/56—58), որոնք հայտնաբերվել են P<sub>3</sub> փոսորակի կառուցողական շերտում: Նման քարե գործիքների մի խումբ գտնվել է Գառնիի ձուլարանի մոտ, մոխրակուտում, մետաղի նստվածքներով կթղանների և այլ քարե գործիքների հետ. ենթադրվում է նրանց ձուլման գործին մասնակցելու հնարավորությունը<sup>153</sup>: էլառի դամբարաններից հայտնաբերված դաշույնների տիպերի բազմազանությունը նույնպես մետաղագործության առաջընթացի ու

<sup>153</sup> Է. Խանգաղյան, Գառնի IV, աղ. IX, վերևում:

ձուլման գործի զարգացման լավագույն վկաներն են:

Քանդված դամբարաններից մեկում գտնված սրածայր, քառակող ներձկումներով բրոնզե փոքրիկ տեղի ծայրը, որն ավարտվում է կոթառի մեջ հագցնելու կարճ և նուրբ պոչուկով (աղ. IX; 5, ՀՊՊԹ, № 2261/25), իր զուգահեռներն ունի Շենգավթում<sup>154</sup>, Նախիջևանի Քյուլ-թափայի I և II շերտերում<sup>155</sup>, նմանատիպ տեղերի տարածվածությունը Փոքր Ասիայում (Ալիշար I, II), Իրանում (Թեփե Հիսար I) և Կովկասում<sup>156</sup>, անշուշտ, վկայում են փոխանակային և ընդհանրապես մշակութային սերտ կապերի առկայությունը:



Նկ. 81. Կոկիչ քարից:

Վերը տեսանք, որ էլառում մեծ զարգացում է ստացել նաև խեցեգործությունը: Վաղ փուլերից եկող կրկնվող ձևերի կողքին, մ. թ. ա. III հազարամյակի II կեսից սկսած, նկատվում է ձևերի և շափերի բազմազանություն, որակի բարձրացում, մակերեսի մշակման և զարդամոտիվների բարձր կատարելություն:

Անշուշտ, այս բոլորը վկայում են տարատեսակ արհեստների զարգացումը:

Սակայն էլառում ինտենսիվ զարգացում են ապրում հատկապես տնտեսության հիմնական ճյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը:


Ամրոցի պեղումների, ինչպես նաև էլառի տարածքում տեղավորված մյուս վերոհիշյալ վաղ բրոնզեդարյան բնակատեղիների հետախուզության ժամանակ, երկրագործության հետ կապված նյութական բազմաթիվ մնացորդներ են հայտնաբերվել: Դրանք հողի մշակմանը ծառայող, փորելուն հարմարեցրած վերջավորությունով քա-

<sup>154</sup> Նույնի՝ Հայկական լեռնաշխարհի մշակույթ..., էջ 59, նկ. 10.

<sup>155</sup> О. Абуллаев, К вопросу о древней металлургии Азербайджана, МИА, № 125, М.—Л., 1965, стр. 67, рис. I; 2, 4.

<sup>156</sup> Б. Кухтин, Урартский «колумбарий»..., стр. 116.


րից գործիքներ են, հավանաբար քաշող ուժի միջոցով պարզունակ գուլանի խոփեր (աղ. X; 6, ՀՊՊԹ, № 2625/104, № 161/4), բերքահավաքին ծառայող, բաց շագանակագույն և մուգ պինեգույն կայծքարից մանգաղի պահանջավոր ներդիրներ (նկ. 82, ՀՊՊԹ, № 2625/67, 103):



Նկ. 82. Մանգաղի ներդիրներ էլառից:

Բրոնզե մանգաղները, որոնք էլառում դեռևս հայտնի չեն, սակայն գտնվել են այլ հնավայրերում (Գառնի, Լճափի-բլուր, Նախիջևանի Քյուլ-թափա, Ամիրանիս-գորա, Խիզանաանտ-գորա C շերտ, պատմական Հայաստանում՝ Բլուր), հավաստում են աշխատանքի միջոցների կատարելագործումը: Հողի մշակմանը ծառայող գործիքների կատարելագործման, անշուշտ, նպաստում էր երկրագործության առաջընթացին:

Մի ստվար խումբ են կազմում հատկապես հացահատիկի մշակմանը ծառայող գործիքները՝ տարատեսակ աղորիքները (աղ. X; 1, 2, ՀՊՊԹ, № 2625/53, 68, 73, № 127/47, 470—471, № 161/2, 10, 132, 135—138), սանդերը (նկ. 83, ՀՊՊԹ, № 2625/48, 84), երկու ծայրերն աշխատեցված գլանաձև, երկարավուն մեծ և փոքր սանդկոթերը (նկ. 79; 1, աղ. X; 3, ՀՊՊԹ, № 2625/34, 57, № 127/161):



նկ. 83. Սանդ:

էլաոի բնակատեղիներում, ինչպես պեղումներն են ապացուցում, հացահատիկը պահվել է մեծ կարասների մեջ, հորերում: Ամրոցի տարածքում բնակվող յուրաքանչյուր ընտանիք իր կացարանի ներսում կամ բակում ունեցել է հացահատիկը պահելու համար կարասներ և հորեր: Վերը տեսանք, որ ամրոցի հյուսիս-արևելյան լանջի արհեստական դարավանդներում մինչ այժմ պահպանվել են ժայռակերտ հորեր, հացահատիկի շտեմարաններ, նաև ժայռի մեջ փորված սանդեր, տաշտանման և այլ տիպի կառուցվածքներ: Հացահատիկի հորերի կենտրոնացում է նկատվում նաև ամրոցի արևելյան լանջին «Կարոյի կալում», որտեղ Ծ. Լալայանի և Ծ. Բայբուրդյանի պեղումների ժամանակ հայտնաբերվել են փտած հացահատիկով կիսով չափ լեցուն, տակառաձև, միմյանց բավական մոտ գտնվող հորերի մի ստվար խումբ<sup>157</sup>:

Չնայած էլաոում գտնված հացահատիկն ուսումնասիրված չէ, սակայն Արարատյան դաշտավայրի մի շարք հուշարձաններից՝ Արևիկից, Ոսկեվազից, Նախիջևանի Քյուլ-Քափայից, Շենգավթից և ընդհանրապես Կովկասի վաղ բրոնզեդարյան հնավայրերից հայտնաբերված ածխացած հատիկների ուսումնասիրությունից պարզվում է, որ վերոհիշյալ ժամանակաշրջանում օգտագործվել են հնագույն կլորահատիկ ցորենի

<sup>157</sup> E. Байбуртян, По поводу древней керамики..., нстр. 209. Նույնի՝ Псевдонеолигические поселения Арменин, стр. 210.

մերկահատիկ և թեփուկավոր տեսակները, դարու երկշար և վեցշար տեսակները, կորեկը: Ուսումնասիրություններն ապացուցում են վաղ բրոնզեդարյան շրջանում հացաբույսերի խառը ցանքսերի առկայությունը, որն ունի հնագիտական և ազգագրական մի շարք զուգահեռներ:

Արարատյան դաշտավայրում, մ. թ. ա. III հազարամյակում հավանաբար աճեցրել են վուշ: Ջրահովտի խեցեղենի վրա պահպանված գործվածքի հետքերը նմանվում են վուշի գործվածքին: Դադատանում հայտնաբերվել են վուշի հատիկներ, և նրա գործվածքի հետքերով՝ խեցեղենի բեկորներ<sup>158</sup>:

էլաոում 1973 թ. III դարավանդի (P<sub>3</sub>) ստորին շերտի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին գաղտրիկ ազգիների (Nonea pulla (L) Дс., семейство бурачниковых) ընտանիքին պատկանող վայրի բույսերի բավականաչափ հատիկներ, որոնց արմատներում ներկող նյութեր են պարունակվում: Ըստ Զ. Ա. Յանուշևիչի, այդ բույսերը կարող էին օգտագործվել որպես ներկանյութ, կայուն վառ կառմիր նեղ ստանալու համար և հատիկների մաքուր վիճակում հայտնաբերվելն ապացուցում է այդ ներկաբույսերի հատուկ ցանքսերի գոյությունը<sup>159</sup>, նման հատիկների մի մեծ քանակություն, նույնպես մաքուր վիճակում, առանց այլ բույսերի խառնուրդի, հայտնաբերվել է նաև Ջրահովտի վաղ բրոնզեդարյան միջինի անցման փուլի շերտում:

Անշուշտ, այս բոլորը՝ երկրագործական գործիքների կատարելագործումը, հացահատիկի տեսակների ավելացումը, ցանքատարածությունների մեծացումը, որը հնարավորություն էր տալիս նաև ներկաբույսեր մշակել, հավաստում են երկրագործության բուռն վերելքը:

Պեղումներով ձեռք բերված ոսկրաբանական նյութերը վկայում են, որ մշակույթի զարգացման հենց ամենավաղ փուլերից սկսած, էլաոում նրկատվում է մանր եղջյուրավոր կենդանիների զխաբանակի աճ: Ամրոցի հյուսիսային և արևելյան լանջերի 1927—1928 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերվել են մեծ քանակությամբ մանր եղջյուրավոր և աննշան քանակությամբ խոշոր եղջյուրավոր կենդանիների ոսկորներ<sup>160</sup>: Արևելյան լանջի «Կարոյի կալում» քարերով շար-

<sup>158</sup> P. Мунчаев, Кавказ на заре бронзового века, стр. 379.

<sup>159</sup> Անալիզները կատարվել են Քիշինում՝ Զ. Ա. Յանուշևիչի կողմից:

<sup>160</sup> E. Байбуртян, №24. աշխ., էջ 40:

ված օջախի կողքին հայտնաբերվել է գառան մի ամբողջ կմախք<sup>161</sup>: Ինչպես ամրոցի, այնպես էլ էլաոի մյուս բնակատեղիների հորերում գտնվել են մանր եղջյուրավորների ամբողջական կմախքներ և տարբեր ոսկորներ<sup>162</sup>: էլաոի վաղ բրոնզեդարյան դամբարաններում, ինչպես տեսանք, հայտնաբերվել են բացարձակապես մանր եղջյուրավորների ոսկորներ: Մ. թ. ա. III հազարամյակի I կեսով թվագրվող դամբարաններում, գանգից վեր, ուղղակի ավազի վրա դրված էին այժի կամ ոչխարի երբեմն մի ամբողջական կրծքավանդակ: Որպես կանոն նման ոսկորներով էին լցված նաև լայնաբերան քրեղանները: Այսպիսով, բնականաբար, մշակույթի զարգացման վաղ փուլերում անասնապահությունը պայմանավորված էր հեշտ տեղաշարժվող և քիչ խնամք պահանջող մանր եղջյուրավոր կենդանիներով:

Ամրոցի մ. թ. ա. III հազարամյակի վաղ փուլերին վերաբերող շերտերում հայտնաբերված ձիու և էշի ոսկորները<sup>163</sup>, վկայում են նաև հեռագնաց անասնապահության գոյությունը: Հոտի աճը վերահիշյալ ժամանակաշրջանում, ինչպես ճիշտ նկատել է Բ. Բ. Պիտտովսկին, ավելի հեշտ ձևով էր տալիս հավելյալ մթերքներ, քան կրկրագործությունը<sup>164</sup>, Բացի մսից, կաթնամթերքներից, մորթուց, մանր եղջյուրավորները տվել են մեծ քանակությամբ բուրդ, որը հումքի բազա է ծառայել նաև մանածագործության համար: Այսպիսով, անասնապահությունը վաղ բրոնզի մշակույթի հենց վաղ փուլերից սկսած դառնում է էլաոի տեղաբնիկների եկամտի հիմնական աղբյուրը:

Մ. թ. ա. III հազարամյակի II կեսից սկսած էլաոում ավելի շատ զբաղվում են խոշոր եղջյուրավոր կենդանիների բուծմամբ: Ամրոցի հարավային լանջի P<sub>3</sub> փոստրակի վաղ բրոնզեդարյան երկու շինարարական հորիզոններից հայտնաբերված ոսկրաբանական նյութերում գերակշիռ մեծամասնություն են կազմում խոշոր եղջյուրավոր կենդանիների ոսկորները<sup>165</sup>: Վերին շինարարական հորիզոնում հայտնաբերված 56 ոսկորներից միայն 14-ն են պատկանում մանր եղջյուրավոր-

<sup>161</sup> Նույն տեղում:

<sup>162</sup> Ծ. Լալայան, նշվ. աշխ., էջ 62:

<sup>163</sup> E. Байбуртян, №24. աշխ., էջ 40:

<sup>164</sup> Б. В. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 40.

<sup>165</sup> Ոսկրաբանական նյութերն ուսումնասիրվել են Ն. Մ. Երմոլովայի կողմից:

ներին՝ ոչխարին և ընտանի այժին, մյուսները խոշոր եղջյուրավոր կենդանիների ոսկորներ են: Երկրորդ շինարարական հորիզոնից գտնված ոսկրաբանական նյութերում նկատված է խոշոր եղջյուրավոր կենդանիների ոսկորների գերակշռություն: Հայտնաբերված թվով 74 կտոր ոսկորներից 41-ը խոշոր եղջյուրավոր կենդանիների են, տասներկուսը՝ մանր եղջյուրավորների անորոշ ոսկորներ (չորսը՝ ոչխարի, մեկը՝ ընտանի այժի), նաև խոզի, ձիու և շան ոսկորներ: Ոչխարի մնացորդներում գտնվել է նաև շատ խոշոր անհատի անրակոսկր, որն ըստ Ն. Մ. Երմոլովայի, պետք է վերագրել մուֆլոնին: Գտնվել են նաև ազնիվ եղջերուի, ջեյրանի և կուլանի ոսկորներ, որոնք վկայում են անտառների գոյությունը Կոտայքի սարավանդում:

Ավելորդ չէ նշել, որ խոշոր եղջյուրավոր կենդանիների գերակշռություն է նկատվում մ. թ. ա. III հազարամյակի II կեսի հուշարձաններում՝ Քոսի-Ճոթերում<sup>166</sup>, Բաբա-Գերվիշ II-ում<sup>167</sup>, իսկ խոշոր եղջյուրավոր կենդանիների զոհաբերություններ՝ հայտնի են Հաոիճի դոմեններում<sup>168</sup> Ջառչարիսի քարարկում (Ապարան)<sup>169</sup>: Այն ավելի բնորոշ է դառնում միջին բրոնզի դարաշրջանի թաղումների համար:

Այսպիսով, վաղ բրոնզի մշակույթի վերելքի պայմաններում, խոշոր եղջյուրավոր կենդանիների աճը բնական երևույթ է, մասամբ սրանով էր պայմանավորված նաև զույգային անհավասարության խորացումը, փոխանակության միջոցով հարստության կուտակումը, անասնապահական ցեղերի վերնախավի առաջացումն ու հզորությունը, հին արևելյան երկրների հետ առևտրական և մշակութային սերտ կապերի ամրապնդումը, հասարակության ներսում սոցիալական ուժեղ շերտավորումը և պետական ապարատի առաջացման (ստեղծման) անհրաժեշտությունը:

Անշուշտ, էլաոի տեղաբնիկների տնտեսությունը հիմնականում անասնապահական բնույթ ունեն, որ և խթանեց մշակույթի նոր ձևերի առաջացման:

<sup>166</sup> է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 40:

<sup>167</sup> К. Кушнарева, Т. Чубунишвили, №24. աշխ., էջ 100:

<sup>168</sup> Т. Хачатрян, №24. աշխ., էջ 36:

<sup>169</sup> С. Даль, Череп примитивного домашнего быка ранней бронзы в Джарджарисе. Աշխատություններ ՀՊՊԹ-ի, հատ. V, Երևան, 1959, էջ 133—141:

ՄԻՋԻՆ ԲՐՈՆՉԻ ԴԱՐԱՇՐՁԱՆ

Վաղ բրոնզի մշակույթն իր տնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության և անասնապահության զարգացմամբ և տարատեսակ արհեստների առաջադիմությամբ, նորանոր ձեռքբերումներով, ամուր և կայուն բազա հանդիսացավ միջին բրոնզի մշակույթի համար, որը Հայկական լեռնաշխարհի հինավուրց ավանդույթների անմիջական շարունակողը և էթնիկ նույն միջավայրում բրոնզի մշակույթի զարգացման հաջորդ փուլն է ներկայացնում, ընդգրկելով տարածման նույն սահմանները:

Այն բնորոշվում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների մի նոր որակով, հասարակության ուժեղ շերտավորմամբ, որոնց ակնառու վկաններն են առաջնորդների հսկայածավալ դամբանաբուրներն իրենց բազմահարուստ նյութերով և դրանց կողքին ընչազուրկ, ստորին խավի աղքատիկ դամբարանները:

Էլաոի միջին բրոնզի մշակույթը ներկայացվում է դամբարանային նյութերով: Անտարակույս, բնակատեղին դարձյալ Դարանի ամրոցն է, որտեղ, ինչպես վերը տեսանք, III դարավանդի փոստրակի ու բրոնզեդարյան շերտի տակ հայտնաբերվեցին միջին բրոնզի խեցեղենի մի քանի բեկորներ: Սակայն, դժբախտաբար, ամրոցը պեղված չէ և մենք հնարավորություն չունենք ներկայացնելու այդ դարաշրջանի բնակատեղին:

Էլաոի միջին բրոնզեդարյան բնակիչների դամբարանադաշտը նույնպես ավազահանքն է, որի շահագործման ժամանակ ոչնչացված դամբարաններից տարիների ընթացքում հայտնաբերվել և թանգարան է հանձնվել խեցեղենի մի սովոր և ուշագրավ ծողովածու:

1960—1961 թթ. և 1969 թ. դամբարանադաշտում պեղվել են միջին բրոնզեդարյան տասնմեկ

դամբարաններ, որոնց մեծ մասի միայն հատվածներն են պահպանվել: Նրանք մասամբ ավերվել են հանքի շահագործման ժամանակ, իսկ մի մասն էլ տուժել է ուշ քրիստոնեական թաղումներից: Էլաոի դամբարանադաշտն ընդհանրապես աչքի է ընկնում տարբեր դարաշրջաններում կատարված թաղումների խտությամբ:

Դամբարանները հիմնահողային են, թաղման ծեսին բնորոշ է դիակիզումը և դիաթաղումը: Դամբարանները ուղղված էին արևելքից արևմուտք:

Առաջին տեղամասում (հանքի հյուսիսային հատվածում) պեղվել են № 2, 28, 30, և 31 դամբարանները: Մնացած յոթը՝ № 25, 29, 32, 34, 36, 39 և 42 հայտնաբերվել են երկրորդ տեղամասում:

Պեղված դամբարանները և պատահականորեն հայտնաբերված նյութերը բնորոշում են միջին բրոնզի զարգացման բոլոր փուլերը և նրանք այստեղ կենդանիացված ժամանակագրական հերթականություններ:

Միջին բրոնզի վաղ փուլերով կարող են թվագրվել № 25, 28, 29, 32 դամբարանները և պատահականորեն հայտնաբերված մի քանի կճուճներ:

Դամբարան № 32, հայտնաբերվեց 1961 թ. պեղումների ժամանակ, դամբարանադաշտի հարավ-արևելյան եզրին: Նրա մեծ մասը փլվել էր հանքի շահագործման ժամանակ, տեղում, սպիտակ ավազի կտրվածքում, պահպանվել էին գունազարդ կճուճն ու խոշոր եղջյուրավոր կենդանու կողոսկրները:

Կճուճը եզակի է թե՛ իր ձևով և թե՛ զարդանկարով (նկ. 84, շՊՊԹ, № 2246/100)<sup>1</sup>: Այն բա-

<sup>1</sup> Э. Ханзаян, Расписной сосуд с зооморфными изображениями из Элара, СА, № 4, М., 1966, стр. 173—175 рис. 1.

վական արխաիկ տեսք ունի, թվում է թե ընդօրինակվել է փայտից պատրաստված նախափայերից: Կարճ, գլանաձև վիզն ավարտվում է դուրս ձկլած լայնադիր շուրթերով: Իրանը եռմասնի է, բազկացած՝ վերին, հորիզոնական փրվածքով զարդարուն հարթակից, ուղղահայաց պատերով միջին մասից, որը նույնպես զարդանկարված է և ստորին, դեպի ցած նեղացող մասից: Հատակը հարթ է, թեթևակի ներձկված: Կճուճը պատրաստված է ձեռքով, լավ հունցած և թրծած ավազախառը, վարդագույն կավից: Արտաքինից պատած է ալ կարմիր անգորով: Վերին լայնադիր հարթակը և կճուճի միջին մասը զարդարված են սև փայլաներկով արված յուրօրինակ պատկերներով: Միջնամասի զարդադաշտը երկու ծայրերում եզերվում է ուղղահայաց կարճ զիգզազներով ծածկված զարդաժապավեններով:


Կճուճի վերին հարթակում պատկերված են ձգված իրանով, պոչավոր, երկարավիզ, երկոտանի, արխաիկ ինչ-որ կենդանիների շարք, իսկ նրանցից վեր՝ լողացող տարատեսակ ձկներ: Կենդանիներն ու ձկներն ալիքաձև զիգզազ ժապավեններով են ծածկված, որով, անշուշտ, շեշտվում է նրանց ջրի հետ աղերսը, հավանաբար նրանց ծովային լինելու հանգամանքը: Կենդանիները թվով վեցն են, շնայած հիմնականում նման են միմյանց, սակայն ունեն նաև մասնակի տարբերություններ: Երկուսն ունեն ակնաչներ. ոմանց պոչը հիշեցնում է ծովացուլը: Նրանք շափերով էլ միմյանցից տարբերվում են: Կենդանիներից վեր պատկերված ձկները նույնպես տարատեսակ են, միմյանցից զանազանվում են լողակների քանակով, գլխի ձևով, շափերով:

Կճուճի, մոտ 12 սմ լայնություն ունեցող միջին հատվածում պատկերված են ալիքազարդ լայն զիգզազ ժապավեններ, որոնց գագաթները պսակվում են շեղանկյուններով: Այդ ժապավեններով առաջացած անկյուններում գետեղված են ալիքածածկ և ցանցազարդ սրածայր եռանկյունիներ, որոնք կրկնվում են ութ անգամ:

Այսպիսով, այդ հեռավոր անցյալի բրուտագործ-արվեստագետն այս կճուճի վերին հարթակում հավանաբար պատկերել է ծովը, օվկիանոսն իր ձկներով և ֆանտաստիկ կենդանական աշխարհով, իսկ նրանից ցած՝ ցամաքն իր գետերով և լեռներով:

Էլաոի կճուճն իր կառուցվածքային մի շարք հատկանիշներով՝ հումասանիության մեջ, անցումների շեշտվածությամբ, մի փոքր ներձկված հատակով հարում է վաղ բրոնզի վերջին փուլերի խեցե-

ղենին, հատկանիշներ, որոնք աստիճանաբար անհետանում են և այլ ձևեր ընդունում միջին բրոնզի հաջորդ փուլերում: Իր միջին մասի զարդանկարով նույնպես այն մասամբ աղերսվում է վաղ



Նկ. 84. Գունազարդ կճուճ № 32 դամբարանից:

բրոնզի խեցեղենի նրբագիծ կենտրոնական գծածածկ զիգզազ ժապավենների և նրանց անկյուններում գետեղված եռանկյունիների զարդամոտիվների հետ: Ավելորդ չէ նշել, որ Ֆրանկանոցի վաղ բրոնզի սև փայլեցրած կավամանի ու լիթիք զարդանախշերի կոմպոզիցիոն վերջավորությունները, էլաոի նման, հանգուցվում են շեղանկյուններով (ՇՊՊԹ, № 588): Նկատի ունենալով



վերոհիշյալ հատկանիշները, էլաոի կճուճը կա-  
րելի է դիտել որպես միջին բրոնզի գունազարդ,  
մոնոքրոմ խեցեղենի վաղ նմուշներից մեկը: Այն  
դեռևս պահպանում է վաղ բրոնզեդարյան խեցե-  
ղենի որոշ հատկանիշներ, սակայն կատարված  
է նոր եղանակով և արդեն միջին բրոնզին բնորոշ  
զարդանկարների նոր որակով:

**Դամբարան № 29**, հայտնաբերվեց նախոր-  
դից մի փոքր արևմուտք, դարձյալ հանքի եզրին:  
Դամբարանի միայն ստորին հատվածն էր պահ-  
պանվել կմախքի ոտքի ոսկորներով, որոնց դիրքից  
պարզորոշ զգացվում էր, որ նա թաղվել է աջ  
կողքի կծկված վիճակում: Մակուկների մոտ  
հայտնաբերվեցին գորշագույն կճուճ, բրոնզե  
դաշույն, իսկ նրանից մի փոքր վեր՝ միսիատյուր  
թասիկ և գունազարդ քրեղանի կեսը:

Թաղարը հասարակ է, հաստախեցի, գորշա-  
գույն, բավականաչափ կոպիտ, վատ թրծած, ոչ  
լավ կոկած, անհարթ մակերեսով (նկ. 85, ՀՊՊԹ,  
№ 2246/111): Ունի ուռուցիկ իրան, ներծկված,  
կարճ վզիկ, դեպի դուրս լայնացող և թեթևակի  
հաստացող շուրթեր: Թաղարն ավարտվում է  
տափակ, սակայն ոչ շատ լայն հատակով: Նման  
կոպիտ և գորշ խոհանոցային կավամանները




Նկ. 85. Հասարակ թաղար և թասիկ № 29 դամբարանից:

բնորոշ են միջին բրոնզի մշակույթին և հարա-  
տեում են նրա բոլոր փուլերում, կրելով աննշան  
փոփոխություններ: Սակայն էլաոի կավամանը,  
իր համեմատաբար նեղ հատակով և մասամբ  
փուլած շուրթերով, ավելի հարում է միջին բրոն-  
զի առաջին փուլի նմանատիպ կավամաններին,  
հայտնաբերված՝ Հաոիճի, մ. թ. ա. II հազարամ-  
յակի սկզբով թվագրվող հիմնահողային դամբա-  
րաններում<sup>2</sup>:

<sup>2</sup> Т. Хачатрян, ԵՊՀ. աշխ., էջ 97, ԿԿ. 46, 47:

Վաղ հատկանիշներ ունի նաև դամբարանում  
հայտնաբերված գունազարդ քրեղանը: Նրա ու-  
ռուցիկ ուսերը զարդարված են բավական վատ  
պահպանված, վարդագույն անգորի վրա սև փայ-  
լաներով կատարված, փոքր ու մեծ գծածածկ  
զիգզագ ժապավեններով (նկ. 86, ՀՊՊԹ, № 2246/  
92): Վերոհիշյալ զարդաձևերն, անշուշտ, սկիզբ



Նկ. 86. Գունազարդ քրեղան՝ № 29 դամբարանից:

են առել վաղ բրոնզի դարաշրջանի սև փայլեց-  
րած խեցեղենի նուրբ գծային զարդանախշերից,  
միայն թե վերջիններիս զիգզագ գոտիներն ու  
երկթեք ժապավենները հաճախ ուղեկցվում են  
գծածածկ եռանկյունիներով, շեղանկյուններով և  
երկրաչափական այլ պատկերներով (տե՛ս էլա-  
ոի ամրոցի III դարավանդի, Շենգավթի, Գառնիի,  
Դվինի, Լճափի-բլուրի և համաժամանակյա այլ  
հուշարձանների խեցեղենը): Վաղ բրոնզի վերջին  
փուլերում, հատկապես միջինի անցման փուլում,  
նկատվում է այդ զարդագոտիների պարզեցման  
հակում (տե՛ս Լենինականի, Զարչառիսի, Ար-  
թիկի խեցեղենը<sup>3</sup> և Հաոիճի № 34 դամբարանի  
քրեղանը<sup>4</sup>): Ուշագրավն այն է, որ Եգեյան աշ-  
խարհում գծածածկ առանձին զիգզագներով են  
զարդարված Փիլակոպի, Մելոսի վաղ բրոնզեդար-  
յան կենդանակերպ կավամանի երկու երեսները<sup>5</sup>:  
Կատարման եղանակով, զարդամոտիվով նրանք  
հար և նման են Հայկական լեռնաշխարհի վաղ  
բրոնզեդարյան նուրբ գծային եղանակով կատար-  
ված զիգզագներին:

Միջին բրոնզի դարաշրջանում այդ զիգզագ-  
ները նույնպես մեկուսի են, առանց այլևայլ

<sup>3</sup> Է. Խանգաղյան, Գառնի IV, էջ 110, նկ. 92, էջ 111,  
նկ. 93:

<sup>4</sup> Т. Хачатрян, ԵՊՀ. աշխ., էջ 60, 31a ձախից:

<sup>5</sup> Hans Günter Buchholz, Vassos Karageorghis, ԵՊՀ.  
աշխ., էջ 363, նկ. 1100, էջ 90:

պաճուճանքների, դառնում են մոնոմենտալ, ամ-  
փոփում են կավամանի ամբողջ իրանը և, ի տար-  
բերություն նախորդ փուլերի, կատարվում մի  
նոր, խորը փորելու եղանակով: Նման զարդագո-  
տիներ են կրում Գառնիի ամրոցում հայտնաբեր-  
ված գորշագույն կավամանը (ՀՊՊԹ, № 1964/44)<sup>6</sup>,  
Լճաշենի դեղնավուն և մուգ շագանակագույն  
կավամանները (ՀՊՊԹ, № 2049/233, 239, 241),  
որոնցից մեկի զիգզագ գոտին փորագրված է  
առանց հատող գծիկների (ՀՊՊԹ, № 2049/244)<sup>7</sup>:  
Նման զարդագոտիներ կատարվում են նաև գու-  
նազարդման եղանակով: Օրինակ՝ էջմիածնի  
վարդագույն անգորով պատած կճուճի վրա զիգ-  
զագ գոտին կատարված է սև փայլաներով  
(ՀՊՊԹ, № 556/22):

Ինչպես տեսանք, էլաոի գունազարդ քրե-  
ղանը շնայած նոր որակ է ձեռք բերում, սակայն  
իր երկկոնիկ իրանով և զարդամոտիվներով դեռևս  
առնչվում է վաղ բրոնզի վերջին փուլերի սև  
փայլեցրած խեցեղենի հետ:

Ինչ վերաբերում է դամբարանում հայտնա-  
բերված բրոնզե դաշույնին (նկ. 87), ապա այն  
իր տափակ և օվալաձև իրանով, լայն պոչուկով  
մասամբ հիշեցնում է Մաղկայի մ. թ. ա. III  
հազարամյակի վերջի և II հազարամյակի սկզբի  
XIX ու LX դամբարաբլուրների դաշույնները<sup>8</sup>,  
Սպեկտորալ անալիզի տվյալներով, էլաոի դաշույնը  
պատրաստված է մկնդեղաանագային բրոնզից  
(այն պարունակում է 4,8% մկնդեղ և 1,75%  
անագ)<sup>9</sup>:

Այսպիսով, էլաոի № 29 դամբարանում հայտ-  
նաբերված վերոհիշյալ իրերը հնարավորություն  
են տալիս այն վերագրելու միջին բրոնզի ամենա-  
վաղ փուլին:

Միջին բրոնզի I փուլով կարող է թվագրվել  
№ 28 դամբարանը, որը բավականաչափ վնասվել  
էր XIX դարի վերջի կամ XX դարի սկզբի գերեզ-  
մանը փորելիս:

Դամբարանից մնացել էին ընդամենը երկու  
կավամաններ, որոնք հայտնաբերվեցին 2,5 մ


<sup>6</sup> Է. Խանգաղյան, ԵՊՀ. աշխ., էջ 108, նկ. 91:

<sup>7</sup> Պեղումներ՝ 2. Մնացականյանի, Եյութերը հրատա-  
րակված չեն:

<sup>8</sup> В. Куфтин, Археологические раскопки в Триале-  
ти, стр. 467, табл. СХV слева, стр. 104, рис. 109, на  
верху слева. Э. Годадзе, Периодизация и генезис кур-  
ганной культуры Триалети, табл. 9; 2, табл. 12; 4, стр.  
102.

<sup>9</sup> Անալիզները կատարել է Ա. Ց. Գևորգյանը:

խորության մեջ, վերոհիշյալ գերեզմանի կողքին,  
շրջված վիճակում: Կավամաններից մեծը խորը  
թաղար է (աղ. XII; 6, ՀՊՊԹ, № 2246/90), գրն-  
դաձև իրանով, լայնաբերան, հաստ և կոպիտ  
դուրս ճկված շուրթերով և տափակ հատակով,  
արտաբուստ ամբողջությամբ կրապատ: Երկրորդը՝  
փոքրիկ թասիկ է (աղ. XII, 3, ՀՊՊԹ, № 2246/89),  
ստորին մասը քայքայված: Երկուսն էլ հասարակ  
խոհանոցային են, անզարդ, կոպիտ: Նրանց գու-  
գահեղենները Հաոիճի առաջին խմբի դամբարանա-  
յին խեցեղենում է<sup>10</sup>, Ուզերլիկ-թեփեի ստորին  
շերտի խեցեղենի առաջին խմբում<sup>11</sup>:



Նկ. 87. Բրոնզե դաշույն № 29 դամբարանից:

Միջին բրոնզի մշակույթի I փուլով կարող է  
թվագրվել նաև դամբարանադաշտի արևմտյան  
եզրին 1961 թ. պեղված № 25 դամբարանը: Այն  
ուղղված էր արևելքից արևմուտք: Կմախքը գտնվեց  
աջ կողքի, կծկված վիճակում, ձեռքերն ու ոտքերը  
ծալված: Վնասված էր դամբարանի հատկապես  
հարավ-արևելյան հատվածը: Ոտքի ոսկորների  
մեծ մասը հանքն էր թափվել, իսկ մեջքի ողորի  
մոտ դրված գունազարդ, սև և գորշագույն զար-  
դարուն կճուճների միայն բեկորներն էին մնացել՝  
կափարիչի հետ միասին: Գեմքի դիմաց դրված  
էր փոքրիկ թասիկ և գունազարդ մի քրեղան:

<sup>10</sup> Т. С. Хачатрян, ԵՊՀ. աշխ., էջ 97, նկ. 46, էջ 98,  
նկ. 49:

<sup>11</sup> К. Х. Кушнарева, Новые данные о поселении  
Узерлик-тепе, около Агдама, МИА, № 125, М.—Л., 1965,  
стр. 82, рис. 12.



Թասանման մի փոքր գոգավորվող մակերեսով քարից կափարիչները, ինչպես ստորև կտեսնենք, հատկանշական են միջին բրոնզի մշակույթի համար, սակայն էլաոի կափարիչը հակառակ մյուսների ունի բունակ (աղ. XII; 1, ՀՊՊԹ, № 2246/97): Դամբարանում հայտնաբերված վարդագույն, հասարակ թասիկը (աղ. XII; 2, ՀՊՊԹ, № 2246/95) նույնպես բազմաթիվ զուգա-




Նկ. 88. Կամարածե զարդանկարով կարճավիզ կճուճ № 25 դամբարանից:

հեռներ ունի միջին բրոնզեդարյան հուշարձաններում: Ինչ վերաբերում է գորշագույն և սև խամրած փայլով կճուճների բեկորներին, ապա նրանք իրենց ձևով և զարդանկարով (նկ. 88, 89, ՀՊՊԹ, № 2246/93) կրկնում են Ուզբեղիկ-Քեփեի ստորին շերտի II խմբի, մ. թ. ա. II հազարամյակի առաջին երկու դարերով թվագրվող, թույլ փայլով կճուճների ձևերն ու զարդանկարը<sup>12</sup>: Նրանք ունեն նուրբ խեցի, շագանակագույն աստառ: Վզի հիմքըն ու ուռուցիկ իրանը զարդարված են փորելու եղանակով կատարված եղենաշարով և հատկապես կամարածե ժապավենների մեջ ամփոփված զիգզագներով: Փորելու, խազելու եղանակով կատարված զիգզագների պատկերներով զեղնագորշագույն մի կճուճ էլ հայտնաբերվել է էջմիածնի շրջանի Գրամփա և Աղջաղալա գյուղերի միջև գտնվող դամբարանադաշտի քանդված դամբարաններից մեկում (էԳԹ, № ԳԳ9/374), սանրատամ շեղանկյունների զարդանկարով գունազարդ կավամանի, գծածակ, խազելու եղանակով անփուլթ կատարված ծուռ ու մուռ ժապավեններով զարդարված, երկկո-

<sup>12</sup> К. Кушнарева, Կճ. աշխ., էջ 88, Կճ. 18; 7, 9, 10, էջ 89, Կճ. 3, 10, էջ 90, Կճ. 21, 22, էջ 93:

նիկ իրանով մեկկանթանի կավամանի հետ, որոնք Հ. Մարտիրոսյանի կողմից իրավացիորեն դասվում են միջին բրոնզի հնագույն հուշարձանների շարքը<sup>13</sup>: Ուշագրավն այն է, որ էլաոի դամբարանում ևս այդ ուզբեղիկյան տիպի խեցեղենին ընկերակցում է սանրատամ շեղանկյունների զարդանկարով գունազարդը (նկ. 90, ՀՊՊԹ, Կ 2246/94): էլաոի ամրոցում նման զարդանկարով գունազարդ խեցու մի բեկոր հայտնաբերվեց վաղ բրոնզի ուշ փուլի սև փայլեցրած, նրբագիծ երկրաշափական զարդանախշերով խեցեղենի միջավայրում (աղ. XIII; 5):

Սանրատամ շեղանկյունների զարդագոտին, կատարված նուրբ գծային եղանակով, եզերում է Բեդենիի դամբանաբլուրում հայտնաբերված եռոտանի սև փայլեցրած կավամանի շուրթերը և Ծաղկայի XI դամբանաբլուրի ձվաձև կավամանի գոտկատեղը<sup>14</sup>: Խեցեղենի վերոհիշյալ խումբը թվագրվում է մ. թ. ա. 2200—2100 թթ.<sup>15</sup>:



Նկ. 89. Խորաքանդակ զարդանախշերով կճուճ № 25 դամբարանից:

Սանրատամ շեղանկյունների զարդագոտիների վաղ օրինակները, սակայն, փորագրման եղանակով կատարված, մեզ հայտնի են նաև Եգեյան աշխարհի վաղ բրոնզեդարյան հուշարձաններից<sup>16</sup>: Կարճաղբյուրի (Վարդենիսի շրջան,

<sup>13</sup> А. Мартиросян, Армения в эпоху..., стр. 52.


<sup>14</sup> Э. Гогодзе, Կճ. աշխ., աղ. 7; 6:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 95, տե՛ս ժամանակագրական աղյուսակը:

<sup>16</sup> H. Günter Buchholz, V. Karageorghis, Կճ. աշխ., էջ 415, Կճ. 1526, 1527:

ՀՊՊԹ, № 1559), Ախլաթյանի (Սիսիանի շրջան)<sup>17</sup> և Ուզբեղիկ-Քեփեի վերին շերտերում հայտնաբերված գունազարդ խեցեղենի նման<sup>18</sup>, Եգեյան հուշարձանների խեցեղենի վրա նրանք ուղեկցվում են բազմաշար ուղղագիծ, կամ զիգզագ գոտիներով, երբեմն էլ կետաշարով: Փորելու եղանակով կատարված զիգզագների և շեղանկյունների նման զուգակցությամբ է զարդարված նաև Իլթո բնակատեղիի (Կախեթիա) IV և մասամբ III շերտերի, վաղ բրոնզի III փուլի կամ միջինի անցման փուլի սև փայլեցրած խեցեղենը<sup>19</sup>:

Սանրատամ շեղանկյունների զարդանկարով գունազարդ խեցեղենը հատկանշական է միջին բրոնզի մշակույթի ինչպես վաղ, այնպես էլ ուշ փուլերին և բավական լայն տարածում ունի Հայկական լեռնաշխարհում և նրա սահմաններից դուրս<sup>20</sup>:



Նկ. 90. Սանրատամ շեղանկյուններով զարդարված գունազարդ կավամանի բեկոր № 25 դամբարանից:

Վերոհիշյալ խեցեղենի հետ սերտորեն առնչվում է նաև դամբարանում հայտնաբերված աղյուսագույն կամ բաց վարդագույն խորը քրեղանը (նկ. 91, ՀՊՊԹ, № 2246/96): Նրա ուռուցիկ ուսերը զարդարված են սև փայլաներկով կատարված


<sup>17</sup> է. Խանգաղյան, Լճաշենի № 6 կուրգանը, ԳԱ «Տեղեկագիր», № 2, 1960, Երևան, էջ 68—69, նկ. 4:

<sup>18</sup> К. Кушнарева, Կճ. աշխ., էջ 94, Կճ. 26; 5, էջ 95, Կճ. 27:

<sup>19</sup> Ш. Дедабришвили, Памятники эпохи ранней и средней бронзы, Труды Кахетской археологической экспедиции, т. I, Тбилиси, 1969, стр. 54, 56, 57, рис. 14; 1:

<sup>20</sup> Սանրաման գուգահեռները տե՛ս է. Խանգաղյան, Գառնի IV, էջ 90—92, Նույնի՝ Մեծամոր, էջ 24:

հորիզոնական շորս ուղղագիծ գոտիներով և նրանց տակ շորս զիգզագ գոտիներով: Ծիշտ նման զարդանկար է կրում նաև Խարբերդի հովտում Քեփե-չիկի միջին բրոնզի գունազարդ թաղարներից մեկը<sup>21</sup>: Քառաշար զիգզագ գոտիներ են պատկերված Ենեգավթի վերին շերտում հայտնաբերված գունազարդ կավամանի զարդանախշերի կոմպոզի-



Նկ. 91. Գունազարդ քրեղան № 25 դամբարանից:

ցիայի շարքում<sup>22</sup>: Մեկուսի, այդ եռաշար զիգզագների գոտին պատկերված է էջմիածնի գլանաձև բարձր վզով գունազարդ կճուճի վերին հատվածում (ՀՊՊԹ, № 1785/1): Մի փոքր ուշ, միջին բրոնզի հաջորդ փուլերում սանրատամ շեղանկյունների հետ համակցված այդ զարդագոտիները, ինչպես վերը տեսանք, պահպանում են Կարճաղբյուրի, Ախլաթյանի, Ուզբեղիկ-Քեփեի կավամանների իրանը: Կոպիտ, փորելու եղանակով կատարված բազմաշար, ուղղաձիգ և զիգզագ գոտիների համադրությունը բնորոշ է Եգեյան վաղ բրոնզեդարյան հուշարձաններին (մ. թ. ա. 2300—1800 թթ.)<sup>23</sup>:

Սակայն փորելու եղանակով կատարված բազմաշար զիգզագների և ալիքների զարդագոտին եզերված՝ կարճ, թեք, գծիկների կամ կետիկների խիստ շարանով, Հայկական լեռնաշխարհում երբևեց է գալիս վաղ բրոնզի վերջին փուլի, կամ ավելի ճիշտ, վաղ բրոնզից միջինի անցման փուլի մի նոր տիպի, նոր զարդաձևի մուգ շագանակագույն, սակավ սև կամ շեկ գույնի խեցեղենի վրա:

Տեղական մշակույթին բոլորովին օտար այս

<sup>21</sup> U. Esin, Tepecik Excavations, 1970, Keban project, 1970 activities, Ankara, 1972, աղ. 103; 1:

<sup>22</sup> Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակութունը... էջ 100, աղ. LXIX:

<sup>23</sup> H. Günter Buchholz and V. Karageorghis, Կճ. աշխ., էջ 400, № 1506, էջ 413, № 1520, էջ 415, № 1526, Gisela Zahlhaas, Funde der bronzezeit auf Zypern, Katalog der Ausstellung, München, 1977, s. 21, 29, abb. 7:



կավամաններից մի քանիսը հայտնաբերվել են լճաշենի № 120 դամբարանի, մ. թ. ա. III հազարամյակի վերջին բնորոշ խեցեղենի միջավայրում և պեղող հնագետի կողմից վերջիններս ճանաչվում են որպես կրկնակի թաղման արդյունք<sup>24</sup>: լճաշենի № 123 հիմնահողային դամբարանում հայտնաբերված տասներեք անզարդ և զարդարուն շագանակագույն կավամանները<sup>25</sup> բացարձակապես այս նոր և օտար խմբին են պատկանում: Վաղ բրոնզի վերջին փուլի հետ կապող, նրանց միակ հատկանիշը ուսերի կամ շուրթի տակ պատկերված խիտ եղևնաշարն է (տե՛ս Շենգավթի սև փայլեցրած նրբագիծ զարդանախշերով խեցեղենը (ՀՊՊԹ, № 1330/113, № 1442/100):

Որ խեցեղենի այս նոր տիպը իրոք երևան է եկել մ. թ. ա. III հազարամյակի վերջում, այսինքն վաղից միջին բրոնզի անցման փուլում, հաստատում է նաև Մաղկայի XIV դամբարանը՝ որում հայտնաբերված կավամաններից մեկը, որի վրա մենք տեսնում ենք հին զարդաձևերի՝ բազմազար պարույրի և նոր օտար տարրի, կուպիտ, փուրելու եղանակով կատարված կետերով եղբրված, եռաշար ալիքների զարդամոտիվի համադրություն<sup>26</sup>:

Վաղ բրոնզի զարդանախշերի վերապրուկները և նոր տիպի խեցեղենը համատեղ շարունակվում են նաև միջին բրոնզի I փուլի հուշարձաններում, որի լավագույն օրինակներից է Մաղկայի VIII և հատկապես XVIII դամբարանաբլուրների խեցեղենը<sup>27</sup>:

Հետաքրքրական է, որ այդ նոր տիպի կուպիտ, փուրելու եղանակով կատարված զարդամոտիվները դարձյալ բնորոշ են Եգեյան աշխարհի վաղ բրոնզեդարյան հուշարձաններին: Վերևից և ներքևից թեք, կարճ, փոքրիկ գծիկներով և կետիկներով եղբրված բազմաշար գոտիներով են զարդարված կիպրոսի, Կրետեի և Եգեյան այլ հնավայրերի երկարավիզ ջրամանները, պաշտամունքային, ծիսական սկահակները, ինչպես և տերակոտային արձանիկների կուրծքը, վիզը, գոտկատեղը<sup>28</sup>:

<sup>24</sup> 2. Մնացակաճյան, լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, ՊԲՀ, № 2, 1965, Երևան, էջ 96, աղ. II, 1—3:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 99—100, աղ. II, 17—19:

<sup>26</sup> Զ. Գոգաձե, նշվ. աշխ., աղ. 8, 6:

<sup>27</sup> Նույն տեղում, աղ. 20, 25; 23, 24, 29—32:

<sup>28</sup> H. Günter Buchholz, նշվ. աշխ., էջ 408, № 1495, էջ 414, № 1522, էջ 469, № 1713, 1714, 1717:

Սակայն նմանությունները Եգեյան աշխարհի և Անատոլիայի հետ միայն խեցեղենով չի սահմանափակվում: Պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհի հնավայրերում մ. թ. ա. III հազարամյակի վերջում երևան են գալիս իրեր, որոնք իրենց մետաղական կազմով կապվում են դարձյալ Արևմուտքի, հատկապես՝ Կենտրոնական Անատոլիայի հետ: Ինչպես Ա. Յ. Գևորգյանն է նշում, Անատոլիայում սկսած մ. թ. ա. III հազարամյակի կեսից մկնդեղային բրոնզի հետ լայն տարածում է գտնում անագային բրոնզը, այն դեպքում, երբ Հյուսիսային Կովկասում, Վրաստանում (Ձաղինս, Ցարցիս-գորա, Սաշխերի, արխազական դոլմեններ) կիրառվում են պղնձ-մկնդեղա-ծարիրային համաձուլվածքները<sup>29</sup>: Սակայն Հայաստանի մ. թ. ա. III հազարամյակի վերջի բնակատեղիներում գտնված մի շարք իրեր, Անատոլիայի նման, պատրաստված են անագային բրոնզից, օրինակ՝ Ջրահովտի ձուլակտորը, Լենինականի խողովակակոթառ կացինը<sup>30</sup>, իսկ Շենգավթում հայտնաբերված ականջի օղի անագի պարունակությունը կազմում է 8%<sup>31</sup>:

Այժմ դժվար է ասել արդյոք մ. թ. ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբում Հայկական լեռնաշխարհ էթնիկական նոր տարրեր են թափանցել, թե՞ այդ նորի երևան գալը կարելի է բացատրել որպես Կենտրոնական Անատոլիայի և Եգեյան աշխարհի հետ սերտ համադր-ծակցության, առևտրական և մշակութային կապերի խորացման արդյունք, որն, ինչպես ստորև կտեսնենք, ակնառու է միջին բրոնզի զարգացման նաև հաջորդ փուլերում:


Որ այդ մշակութային կապերը մ. թ. ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբում սերտ է եղել նաև այլ երկրների հետ, վկայում է էլառի դամբարանազաշտում հայտնաբերված գունազարդ խեցեղենը:

Կարճ վզիկով, մի փոքր ձգված, կլորացող իրանով գունազարդ կճուճներից մեկի իրանի վերին հատվածը կրում է ուշագրավ զարդանախշեր, որոնք հորիզոնական գոտիներով բաժանված են միմյանցից (գունավոր նկար I; 1, ՀՊՊԹ, №

<sup>29</sup> A. H. Геворкян, Древнейшая металлургия и горное дело Армении. Автореферат диссертации, М, 1972, стр. 10—12.

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> М. А. Кашкай, И. Р. Селымханов, Из истории древней металлургии Кавказа, Баку, 1973, стр. 85.



I. Գունազարդ կճուճներ էլառի դամբարանազաշտից



1805/33): Վրի հիմքի գոտուց ցած պատկերված են ցանցածածկ շեղանկյունների: Նրան հաջորդող զարդադաշտում իրար մեջ հագած շորսական անկյունների զարդամոտիվն է, որը մեկընդմեջ զուգորդվում է ուղղահայաց սանդղիկներով: Այս կոմպոզիցիան եզրափակում է այիբածածկ զիզ-զազը, որը բոլորում է կճուճի իրանը: Անհրաժեշտ է նշել, որ զարդապատկերների բազմազանությունը, լայն գոտիներով տեղադրումը հատկանշական է վաղ բրոնզի գծային երկրաչափական զարդագոտիներով խեցեղենին և ավանդաբար, ինչպես տեսնում ենք, այն շարունակվում է զարգացման նաև հաջորդ փուլերում:

Ցանցազարդ շեղանկյունները ի հայտ են գալիս Թազաքենդի խեցեղենի վրա: Այն սիրված զարդամոտիվ է Կարմիր վանքի բազմազան խեցեղենի համար<sup>32</sup>, որը Հ. Մարտիրոսյանի կողմից իրավացիորեն վերագրվում է միջին բրոնզի վաղ փուլերին<sup>33</sup>: Այժապատկերների հետ զուգորդված այն զարդարում է էջմիածնի բազմազան քրեզանը (ՀՊՊԹ, № 556/46): Ճիշտ նման քրեզան էլ հայտնաբերվել է Գեոյ-թեփեում<sup>34</sup>: Ցանցածածկ շեղանկյունների զարդանկարով գունազարդ խեցեղեն հայտնաբերվել է նաև Խարբերդի հովտում<sup>35</sup>:

Այսպիսով, էլաոի գունազարդ կճուճի զարդանախշերը սիրված են Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի վերջի և II հազարամյակի սկզբի խեցեղենի համար, սակայն հարատևում են միջին բրոնզի նաև մյուս փուլերում. օրինակ, նման զարդանկար է կրում էլաոի՝ 1963 թ. հայտնաբերված թասը (նկ. 108, ՀՊՊԹ, № 2261/2), Թազաքենդի՝ է. Ռեսլերի պեղած կճուճը<sup>36</sup> և ուշ բրոնզի վաղ փուլերի էջմիածնի երկարավիզ կավամանը (ՀՊՊԹ, № 556/18):

էլաոի կճուճի զարդանկարը եզրափակող այիբածածկ զիզազ գոտին դարձյալ բնորոշ է Արարատյան դաշտավայրի խեցեղենին (ՀՊՊԹ, № 556/45): Սակայն կոմպոզիցիոն ամբողջական պատկերով էլաոի կճուճն իր ամենամոտ զուգահեռն ունի Պարսկահայքում՝ Սուլդուզի հովտի խեցեղենում: Հասանելուում հայտնաբերված կարճավիզ, մի փոքր ավելի կլորացող իրանով, դեղ-

նանարնչագույն անգորով պատած կճուճի վրա մենք տեսնում ենք զարդանախշման նույն սկզբունքը, համանման կոմպոզիցիոն պատկեր, որը միայն աննշան մանրամասներով է տարբերվում էլաոի կճուճի զարդանախշերից: Հասանելուի կճուճի վրա պատկերված է նույն զույգ հորիզոնական գոտիներով անշատված զարդադաշտը: Նրա վերին հրապարակով, էլաոին նման, անցնում է ցանցածածկ շեղանկյունների գոտի: Սակայն երկրաչափական ֆիգուրների փոխարեն, թռչունների շարան է պատկերված: Այս զարդադաշտերը դարձյալ եզերվում են ալիքածե գոտիներով<sup>37</sup>: Հասանելուի կճուճը թվագրվում է մ. թ. ա. 2100 թվով: Վերոհիշյալ զուգահեռները հաստատում են էլաոի կճուճի վաղ թվագրությունը և միաժամանակ ապացուցում մշակութային սերտ կապերի առկայությունը Հայկական լեռնաշխարհի և Իրանական Ադրբեջանի միջև վաղ բրոնզի վերջին և միջին բրոնզի մշակույթի հաստատման շեմին:

էլաոի դամբարանադաշտում հայտնաբերված գունազարդ կավամանների մի մասն իրենց ձևով, զարդանկարով նույնպես հարում են վաղ փուլերին և կարող են թվագրվել միջին բրոնզ I-ով: Դրանք խորը թաս-քրեզաններ են, որոնցից մեկը զարդարված է ճատրակաձև ֆիգուրներով և գծածածկ եռանկյունիների շարանով (տախտ. I; 4, ՀՊՊԹ, № 1813/14), իսկ մյուս, նուրբ շուրթերով քրեզանը, որի իրանն աննշան երկկոնիկ է, զարդարված է երեք շարք զիզազ գոտիներով (նկ. 92, ՀՊՊԹ, № 1813/10): Մեծամորում նման զարդանկարով մի քրեզանի բեկոր հայտնաբերվեց Թազաքենդի տիպի պարուրազարդ կավամանի և վաղ բրոնզի մշակույթի վերջին փուլերին բնորոշ սև և կարմիր փայլեցրած խեցեղենի միջավայրում<sup>38</sup>: Բազմաշար զիզազների զարդամոտիվը ավելի վաղ ավանդույթներ ունի: Վարդագույն անգորի վրա անընդմեջ զիզազներով պարուրված մի կավաման հայտնաբերվել է Սիալի III-ում և թվագրվում է մ. թ. ա. 4000 թվով<sup>39</sup>:

Ոչ պակաս հետաքրքրական է կլորացող իրանով կարճավիզ գունազարդ կճուճը, վերին կեսը զարդարված՝ այժապատկերներով, իրար մեջ հագած անկյուններով, գագաթներով միացած ցանցա-

<sup>32</sup> А. Спицын, Некоторые Закавказские могильники. Изв. Археологической комиссии, вып. 29, СПб., 1909, рис. 50, 58, 60—63.

<sup>33</sup> А. Мартыросян, №24. աշխ., էջ 19—50.

<sup>34</sup> Т. Burton-Brown, №24. աշխ., աղ. 148 в.

<sup>35</sup> К. Коктен, №24. աշխ., աղ. XCIV.

<sup>36</sup> К. Кушнарева, Тазакендский могильник в Армени, СА, № 1, 1960, М., стр. 141, рис. 3; 14.

<sup>37</sup> R. Dyson, Earli cultures of Solduz, Azerbaïjan, A Survey of Persian Art, vol. XIV (1967). Asian Institute of Pahlavi University, pl. 1483 A.

<sup>38</sup> Պեղումները՝ հեղինակի, նյութերը հրատարակված չեն, տե՛ս ՄԹ. № 10/133:

<sup>39</sup> J. Mellqart, Earliest Civilizations..., p. 75, Yll. 46.

ծածկ ե բազմաշար անկյուններով, եռանկյունիների պատկերներով (նկ. 93 ա, բ, 2ՊՊԹ, № 1813/13): Այս զարդանախշերն իրենց աղերսներն ունեն մ. թ. ա. III հազարամյակի վերջի և II-ի սկզբի խեցեղենում: Այժապատկերների զարդագոտիները



Նկ. 92. Գունազարդ քրեղան էլաոի դամբարանադաշտից:

է կրում Արագածի սև փայլեցրած խեցեղենը<sup>40</sup>: Իրար մեջ հագած անկյունների զարդանկարը տեղավորված է Շենգավթի վերին շերտում հայտնաբերված, սև փայլեցրած, գնդաձև իրանով կճուճի ուսերի զարդանախշերի վերին շարքում<sup>41</sup>: Եղևնաշարի ու իրար մեջ հագած անկյունների շարանով է զարդանկարված Խարբերդում՝ Եսենքենդի (Հան Իբրահիմ Շահ) վաղ բրոնզի դարաշրջանի գունազարդ կավամանի բեկորը<sup>42</sup>: Նման զարդանախշերը թագաբենդյան տիպի խեցեղենի բնորոշ մոտիվներն են, որոնց վաղ օրինակները հայտնաբերվել են Զրահովտի և Այգեվանի վաղ բրոնզից միջինի անցման փուլի շերտերում:

Թագաբենդյան այս վաղ խմբին են հարում էլաոի երկու այլ կճուճներ, որոնք կարճ վզիկով և ուռուցիկ, գնդաձև իրանով հիշեցնում են Շենգավթի վերին շերտի վերոհիշյալ գունազարդ կճուճը և Թագաբենդում հայտնաբերվածները<sup>43</sup>: Երկուսն էլ արտաքինից պատած են բաց վարդագույն անգորով: Զարդանախշերը կատարված են անփուլթ և մեծ մասամբ ջնջված են: Երկուսի իրանը մի փոքր ծուռ է: Նրանցից մեկն ունի


<sup>40</sup> А. Мартиросян, ԿՊԹ, աշխ., էջ 43, նկ. 11:

<sup>41</sup> Ս. Սարգսյան, նշվ. աշխ., նկ. 20/1, էջ 185, աղ. LIX:

<sup>42</sup> Н. Ертец, ԿՊԹ, աշխ., աղ. 41, 5:

<sup>43</sup> К. Кушнарева, ԿՊԹ, աշխ., էջ 140—141, նկ. 2, 3:

տասնմեկ անհամաչափ եռանկյունիներ, որոնցից ամենամեծը ցանցապատ է, իսկ մնացածները ծածկված են թեք, զուգահեռ գծերով (տախտ. I, 5, 2ՊՊԹ, № 1813/12): Մյուս կավամանը, որ շափերով ամենից մեծն է (նկ. 94, 2ՊՊԹ, № 1813/11), զարդարված է այժապատկերների և ցանցադաշտերի համադրությամբ: Նման զարդապատկերներ են կրում Թագաբենդի խեցեղենի մեծ մասը, Հաոիճի № 15 դամբարանի քրեղանն ու № 66 դամբարանի կճուճը, որոնք թվագրվում են մ. թ. ա. XIX—XVIII դդ.<sup>44</sup>:




Նկ. 93 ա, բ. Գունազարդ կճուճ էլաոի դամբարանադաշտից:

Վերջին տարիներս Արարատյան դաշտավայրում պեղվող բնակատեղիների՝ Զրահովտի, Մեծամորի, Այգեվանի շերտագրական տվյալները հավաստում են, որ վերոհիշյալ զարդաձևերով՝ այժապատկերներով, պարույրներով, ցանցադաշ-

<sup>44</sup> С. Хачатрян, ԿՊԹ, աշխ., էջ 102, նկ. 53, էջ 105, նկ. 61, էջ 109:

տերով կավամանները, ինչպես նաև ճատրակազարդ, զիգզագ ալիքներով և սանրատամ շեղանկյուններով զարդանկարված գունազարդ խեցեղենը հարատևում է մինչև միջին բրոնզի վերջին



Նկ. 94. Գնդաձև իրանով մեծ գունազարդ կավաման էլաոի դամբարանադաշտից:


փուլերը, ուղեկցվում՝ շագանակագույն և սև ազաթափայլ պոնկտիրազարդ, փայլեցման եղանակով զարդանկարված, ինչպես և հասարակ խոհանոցային կոպիտ խեցեղենով:

Ուշագրավ է էլաոում հայտնաբերված բրոնզի դաշույնը, որն ունի կարճ և լայն լեզվակ՝ անցքով: Իրանը եռանկյունաձև է, միջին մասը մի փոքր բարձր, ուսերը կլորացող (նկ. 95, 2ՊՊԹ, № 1700): Այն թվագրված է մ. թ. ա. II հազարամյակի I կեսով<sup>45</sup>: Նման դաշույններ բնորոշ են միջին բրոնզի մշակույթի համար: Նրանց ամենավաղ տիպերը սկիզբ են առնում վաղ բրոնզից միջինի անցման փուլում, որի լավագույն օրինակներից մեկը, արխաիկ տիպի, գտնվել է Շուլավերիի № 4 դամբարանաբլուրում<sup>46</sup>: Նրա լեզվակը բավական լայն է և երկար ու առանց անցքի: Չնով վաղ է նաև Կամոյում գտնված և վրաստանի թանգա-

<sup>45</sup> С. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, стр. 60.

<sup>46</sup> „Отчет квемо-картлийской археологической экспедиции“, Тбилиси, 1975, стр. 211, табл. XXV; 3.

րանում պահվող դաշույնը (նկ. 96, ՎՊԹ, № 20—05 : V — 4), որի լեզվակը, սակայն, անցք ունի: Վերջինիս ավելի մոտ է Ստեփանակերտի № 119 դամբարանաբլուրի դաշույնը<sup>47</sup> և Դիդի-Ախալսոփելիում սև փայլեցրած խեցեղենի հետ գտնվածը<sup>48</sup>: Սակայն էլաոի դաշույնն ավելի մոտ է Մաղկայի XVIII դամբարանաբլուրում հայտնաբերվածին, որը թվագրվում է միջին բրոնզ I-ով, այսինքն մ. թ. ա. XX—XVIII դարերով<sup>49</sup>: Այնուամենայնիվ նմանատիպ դաշույնները հարատևում են միջին բրոնզի բոլոր փուլերում, որի լավագույն վկաներից են Սամթավրոյում հայտնաբերվածը (մ. թ. ա. XVIII—XVI դդ.)<sup>50</sup>, Հարավային Օսեթիայում՝



Նկ. 95. Բրոնզե դաշույն Նկ. 96. Բրոնզե դաշույն էլաոի դամբարանադաշտից:

Քվասաթալիի № 1 դամբարանի դաշույնը<sup>51</sup>, Կամոյում գտնված մեկ այլ դաշույն, որի լեզվակի անցքի մեջ պահպանվել է կոթառին ամրացնելու գամը (2ՊՊԹ, № 20/202):

<sup>47</sup> К. Кушнарева, Памятники медного века в Нагорном Карабахе, СА, XX, 1956, стр. 173, рис. 2; 1.

<sup>48</sup> О. Джапаридзе и Т. Чубиншвили. Новый культурный очаг энеолита и бронзовой эпохи в Картли. Вестник Гос. музея Грузии, т. XV—В, 1949, стр. 29, рис. 3а.


<sup>49</sup> Э. Гогодзе, ԿՊԹ, աշխ., էջ 103, աղ. 25; 28:

<sup>50</sup> Т. Чубиншвили. Древнейшие археологические памятники Мцхета, Тбилиси, 1957, стр. 123, табл. VIII, № 2280.

<sup>51</sup> О. Джапаридзе, Квасатальский могильник эпохи бронзы в Юго-Осетии, КСИИМК, вып. 60, М., 1955, стр. 24, рис. 2; 10.

Խեցեղենի մի ուշագրավ ժողովածու են ներկայացնում էլաոի քանդված դամբարաններից հավաքված և 1947 թ. Պատմության պետական թանգարան հանձնված կավամանները (տե՛ս 2ՊՊԹ, № 1805):

Հատկապես հետաքրքրական է ժողովածուի մոնոգրամ գունազարդ կճուճը, որն իր գնդաձև իրանով հիշեցնում է Շենգավթի վերին շերտում



Նկ. 97. Քոչնազարդ կավամանի բեկոր էլաոի դամբարանադաշտից:

հայտնաբերված, սև փայլեցրած զարդարուն կրճուճը<sup>52</sup>: Սակայն դեպի դուրս ճկված բարձրադիր շուրթերով, ինչպես նաև զարդանկարով այն տարբերվում է վերջինից և հավանաբար կարող է թվագրվել միջին բրոնզի I փուլով (տխտ. I; 2, 2ՊՊԹ, № 1805/32): Նրա վզի հիմքն օղակող երեք ալիքաձև գոտիներից ցած պատկերված են ալիքածածկ կիսաշրջաններ և նրանցով առաջացած անկյուններում լողացող բաղեր: Այդ զարդադաշտը եզերող հորիզոնական գոտուց ցած դարձյալ ալիքածածկ կիսաշրջաններ են և նրանց անկյուններից կախված երեքական ուղղահայաց ալիքներ: Նման թռչունի պատկեր է կրում նաև էլաոի դամբարանադաշտում 1961 թ. հայտնաբերված գունազարդ կճուճի բեկորը (նկ. 97, 2ՊՊԹ, № 2246/91): էլաոի կճուճի նման ալիքածածկ կիսաշրջաններով է զարդարված էջմիածնի խորը թասը (2ՊՊԹ, № 556/8):

Ուշագրույթյան են արժանի ժողովածուում տեղ գտած երկկոնիկ փարշերը, որոնց վերին, լայնադիր գլանաձև պատերը ուղիղ են, կամ միջին մասում թեթևակի ներձկված և ստորին հատվածի հետ միանում են ուղիղ շեղված եզրագոտիով: Փարշերից երկուսը բաց շագանակազույն են (2ՊՊԹ, № 1805/4, 8), երրորդը՝ մուգ շագանակազույն (նկ. 98, 2ՊՊԹ, № 1805/12):

<sup>52</sup> Ս. Սարգսյան, նշվ. աշխ., նկ. 20:

Վերջինս ունի ձևավոր կանթ, որն սկսվում է շուրթի հիմքում, և ավարտվում փարշի երկկոնիկ եզրին: Կավի որակով, գույնով, կատարման եղանակով նրանք բավական մոտ են Շենգավթի ամենավերին շերտի խեցեղենին: Կանթի ձևը նույնպես նոր է: Այն մասամբ հիշեցնում է Կիրովականի Քոստանթեր բնակավայրից ոչ հեռու, Կամակատար կոչվող սրբավայրի մոտակայքում գտնված գունազարդ գավաթի կանթը<sup>53</sup> և Ոսկեվազի դամբարանուրի կավամանները<sup>54</sup>: Սակայն վերջիններից էլաոի փարշերը ժամանակով ավելի վաղ են, ձևով լրիվ տարբեր: Ոսկեվազի կավամանների նման, հատակին փորված շրջաններ չունեն, հատկանիշներ, որոնք, ինչպես ստորև կտեսնենք, բնորոշ են ավելի ուշ փուլերի համար: Նրանց կանթերն, ի տարբերություն էլաոի, սկսվում են ուղղակի շուրթի վերին եզրից, սլացիկ դեպի վեր և արտաքինից թեթևակի ներձկվելով ավարտվում՝ կավամանի գոտկատեղում: Ոսկեվազում հայտնաբերված կավամանների կանթերը նմանեցվում են փոքրասիական ձևերին<sup>55</sup>:

Ժողովածուում տեղ գտած գլանաձև բարձր վզով և կլորացող իրանով դարչնաշագանակազույն, գեղեցիկ ձևավորված ութ կճուճները (աղ. XII; 7, 2ՊՊԹ, № 1805/1—3, 5—7, 18—19) չունեն զարդեր, բացի մեկից, որը վզի հիմքից ցած, ուսերին կրում է եռաշար կետագծերով կազմված, գազաթներով ցած շորս զույգ եռանկյունիներ (նկ. 99, աղ. XII; 5, 2ՊՊԹ, № 1805/13), զարդարելու մի նոր ձև, որը սկիզբ է առնում միջին բրոնզի դարաշրջանում: էլաոի կճուճն իր զարդանախշման ևղանակով հիշեցնում է Գառնիի թռչնազարդ հիդրիայի հետ գտնված մուգ շագանակազույն փայլուն մակերեսով երկարավիզ կճուճը<sup>56</sup>: էլաոի կճուճներն իրենց ձևով հարում են Կիրովականի սև փայլեցրածներին, սակայն որոշ մանրամասներով տարբերվում են նրանցից:

էլաոի կճուճները համեմատաբար ցածրադիր են, մեծ մասի վզի հիմքում ունեն հազիվ նշմարվող հորիզոնական գոտի, իսկ Կիրովականի սև փայլեցրած կճուճներն ունեն զույգ ուղիղ գոտիներ (2ՊՊԹ, № 1861/11, 13, 15—17): Բացի

<sup>53</sup> Է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 88, նկ. 82:

<sup>54</sup> Г. Арешян, Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века, СА, М., 1973, №4, стр. 40—49.

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> Է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 112, նկ. 94:

այդ, վերջիններս մի մասը ծածկված է քայլող դրոշմիչով կատարված զարդանկարով: Այսպիսով, էլաոի խեցեղենի վերոհիշյալ խումբը նախորդում է Կիրովականին: Վերջիններիս ժամանակով ավելի մոտ են էլաոի նույն ժողովածուի, վզի հիմքում երեք խորաբանդակ գոտիներով կճուճը (2ՊՊԹ, № 1805/26) և № 30 դամբարանում հայտնաբերվածը՝ վզի հիմքում զույգ հորիզոնական, փորված



Նկ. 98. Շագանակազույն փարշեր էլաոի դամբարանադաշտից:

գոտիներ (աղ. XII; 8, 2ՊՊԹ, № 2246/98): Սա քանդված մի դամբարան էր, որտեղ բացի կճուճից և կենդանիների ոսկորներից, այլ իրեր չգտնվեցին:

Ինչ վերաբերում է էլաոի վերոհիշյալ ժողովածուի գորշասևավուն կիսագնդաձև խորը թասերին (2ՊՊԹ, № 1805/9—11), ապա նրանք բավական նման են էլաոից նոր գյուղ տանող ճանապարհի եզրի դամբարաններից հայտնաբերվածներին (2ՊՊԹ, № 1697, 1698, 1716—1717) և ձևով հիշեցնում են Ոսկեվազի բարձրադիր կանթերով գունազարդներին: էլաոի գորշազույն թասերից մեկը, Ոսկեվազիին նման, հատակին ունի խորաբանդակ շրջանաձև զույգ գոտիներ (աղ. XII; 9, 2ՊՊԹ, № 1805/23), հատկանիշներ, որոնք բնորոշ են միջին բրոնզի III փուլի խեցեղենին: Նման գոտիներ են կրում նաև Գեղարտուի ուշ բրոնզի վաղ փուլի, փայլեցման եղանակով զարդանկարված թաս-քրեղանները (2ՊՊԹ, № 2078/3, 8, № 2209/15) և նույն ժամանակաշրջանի Լոռի-բերդի խեցեղենը<sup>57</sup>:

<sup>57</sup> Պեղումները՝ Ս. Դեվլյանի, Նյութերը հրատարակված չեն:

էլաոի քրեղաններից ամենամեծը (աղ. XII; 10, 2ՊՊԹ, № 1805/24) անփայլ, շեկ գույնի, լայնաբերան, նուրբ շուրթերով, իր ձևով, գույնով, որակով հարում է ուշ բրոնզի վաղ փուլերի նմանատիպ խեցեղենին, օրինակ՝ Ցամաքաբերդում հայտնաբերվածներին (2ՊՊԹ, № 1941/72):

Հավանաբար XVII—XV դդ. կարող են թվագրվել էլաոի ձկնազարդ կճուճն ու № 31, 34 և


42 դամբարաններում հայտնաբերված գունազարդ կավամանները:

Դամբարանադաշտում 1947 թ. պատահականորեն հայտնաբերված ուռուցիկ, կլորացող իրանով, ոչ բարձր գլանաձև վզով, դուրս ճկված շուրթերով, փայլուն, կարմիր անգորով պատած կճուճն (նկ. 100, 2ՊՊԹ, № 1813/16) իր ձևով ասես կրկնում է Թագաթենդի, Կամոյի պարուրազարդ կճուճները, ինչպես նաև Հառիճի II խումբին, սակայն կրում է բոլորովին այլ կոմպոզիցիոն պատկեր, բնորոշ միջին բրոնզի զարգացման հաջորդ փուլերին, հատկապես միջին բրոնզ III-ին: Կճուճի շուրթը հատված է թեք գծիկներով, վիզը՝ շորս ուղղահայաց գծերի վեց խմբով: Ուսերի՝ սեպաձև հորիզոնական գոտիներից ցած տարածվում են ալիքազարդ մետոպներ և շերտներ, որոնց ծայրերն ավարտվում են օղակներով: Շերտների անկյուններում պատկերված են լողացող ձկներ, որոնք տարբերվում են էլաոի վերը ներկայացրած կենդանազարդ կճուճի ձկներից: Վերջիններս չունեն լողակներ և բոլորովին այլ եղանակով են կատարված:

էլաոի երեք քանդված դամբարաններից (№ 31, 34, 42) յուրաքանչյուրում հայտնաբերվել են



մեկական գունազարդ կավամաններ, որոնք ուղեկցող այլ նյութեր շունեն և մոտավորապես կարող են թվագրվել վաղ բրոնզ II-ով կամ III-ով:




Նկ. 99. Գարնաշագանակազույն կճուճ էլաոի դամբարանադաշտից:

Միրով է կատարված № 42 դամբարանում հայտնաբերված դասական ոճի գունազարդ, մեծ հիդրիան (նկ. 101): Իր ձևով և զարդանկարի երկդաշտ կոմպոզիցիայով այն հիշեցնում է Գառնիի կետագծազարդ շագանակազույն կճուճի հետ հայտնաբերված՝ թռչնազարդ հիդրիան<sup>58</sup>:

Էլաոի հիդրիայի եռահարկ եռանկյունիների մոտիվը Հայկական լեռնաշխարհում սկիզբ է առնում դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում: Այն Շենգավթի սև փայլեցրած, նուրբ գծային զարդանախշերով խեցեղենի սիրված զարդամոտիվներից է (ՀՊՊԹ, № 1330/296, № 1442/57)<sup>59</sup>: Մեկ այլ երանգով այն երևան է գալիս Կարմիր վանքի բազմազույն խեցեղենի զարդադաշտում<sup>60</sup>: Ուղղահայաց շարքերով և այլ տարրերակներով ներանք զարդարում են Կենտրոնական Անատոլիայում՝ Կապադովկիայում<sup>61</sup> և հատկապես Ալիշար III-ում (մ. թ. ա. 2200—2000 թթ.) հայտնաբերված խեցեղենը<sup>62</sup>: Գունային մի նոր խաղով այն պատկերված է Մեծամորի մ. թ. ա. XV դարի վերջի

և XIV դարի սկզբի խեցեղենի վրա<sup>63</sup>: Սակայն էլաոի հիդրիայի վրա այդ եռաշար եռանկյունիների զարդամոտիվը երևան է գալիս միջին բրոնզին բնորոշ նոր հատկանիշներով և հաստատում այդ զարդամոտիվի օգտագործման ավանդույթի տեղական խոր արմատները:

Նրկդաշտ կոմպոզիցիաները սիրված են միջին բրոնզի զարգացած փուլի խեցեղենի համար: Նրանցով են զարդարված Գառնիի<sup>64</sup> և Ղըրղիի հիդրիաները (ՀՊՊԹ, № 2311/1)<sup>65</sup>, էջմիածնի մ. թ. ա. II հազարամյակի կեսով թվագրվող դամբարաններում հայտնաբերված կճուճները<sup>66</sup>,



Նկ. 100. Չկնազարդ կճուճ էլաոի դամբարանադաշտից:

Ջուռնաբադի հիդրիաները<sup>67</sup>, նաև Սաղկայի I և VII դամբարանաբլուրում հայտնաբերվածները<sup>68</sup>, որոնք Օ. Զափարիձեի կողմից թվագրվում են

<sup>58</sup> Է. Խանգալյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 26, 27, աղ. IV; 9:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 98, նկ. 87, 23—27:

<sup>60</sup> A. Снуцян, նշվ. աշխ., նկ. 49, 54:

<sup>61</sup> Henri de Genuillac, Ceramique Cappadoctenne v. II, Paris, 1926, p. 38, fig. 73—74. Նույն գրքի II մաս աղ. 5 bis, № 122:

<sup>62</sup> N. Özgüç, Marble idols and statuettes from the excavations at Kültepe, Belleten TTK, XXI, № 81, 1957, Ankara, fig. 24:

<sup>63</sup> A. Мартиросян, նշվ. աշխ., էջ 67, աղ. II:

<sup>64</sup> Я. Гуммель, Крашеная керамика в долине Ганджа-чай, Известия Аз. ФАН, № 5, 1939, Баку, стр. 37—41, фиг. I:

<sup>65</sup> B. Кухтин, Археологические раскопки в Триалети, стр. 80, рис. 89, стр. 399, табл. LXXXII:

<sup>66</sup> O. Джапаридзе, Археологические раскопки в Триалети, стр. 272:

<sup>67</sup> B. Алиев, К изучению культуры расписной керамики в Азербайджане, МКА, VI, Баку, 1965, стр. 63—64, табл. 1; 2:

<sup>68</sup> O. Абуллаев, Археологические раскопки в Кюльтепе, табл. 35, рис. 2; 7:

<sup>69</sup> Э. Гозадзе, նշվ. աշխ., աղ. 15; 4, աղ. 19, 20:

<sup>70</sup> Է. Խանգալյան, նշվ. աշխ., աղ. XXXIII:

մ. թ. ա. XVII դ. I կեսով<sup>69</sup>: էլաոի հիդրիան, անշուշտ, վերոհիշյալ միջավայրի ծնունդ է:

Հավանաբար մի փոքր ավելի երիտասարդ է № 31 դամբարանում հայտնաբերված կճուճը (աղ. XII; 11, ՀՊՊԹ, № 2246/99): Նախորդի նման նրա շուրթը գծածածկ է, սակայն վզի ալիքների խմբերը երկու կողմից շրջափակված են ուղղահայաց ժապավեններով: Ուսերը զարդարում են ալիքազարդ մետոպները և շերտները: Սակայն մետոպների ալիքների փնջերը, հակառակ նախորդի, ուղղահայաց դասավորություն ունեն, հատկանիշ, որը կատարման մի նոր եղանակով շարունակվում է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի խեցեղենում: էլաոի վերոհիշյալ կավամանի շերտների անկյուններում նկատված են երեք օղակներից բաղկացած խմբեր: Օղակների համադրությամբ են զարդանկարված էլաոի դամբարանադաշտում հայտնաբերված գունազարդ թասը (տխտ. I; 3) գեղակազմ հիդրիայի վզի կոմպոզիցիոն դաշտը (աղ. XIII; 1, ՀՊՊԹ, № 2246/91) և ամրոցում 1973 թ. պեղված P3 փոստրակում վաղ բրոնզեդարյան շերտից վեր, մի փոքր հատվածում, շագանակազույն կետագծազարդ խեցեղենի բեկորների հետ հայտնաբերվածը (աղ. XIII; 7, ՀՊՊԹ, № 177):

էլաոի վերոհիշյալ կճուճին բավականաչափ նման են Նախիջևանում, Ազնաբլուրտ գյուղի դամբարանում հայտնաբերվածը<sup>70</sup> և Շոու-թեփի օղակազարդ կճուճները<sup>71</sup>, էջմիածնի գունազարդ կճուճը (ՀՊՊԹ, № 556/3):

Օղակների համադրությամբ են զարդարված նաև Սաղկայի միջին բրոնզի III փուլով թվագրվող I և VII դամբարանաբլուրների հիդրիաները<sup>72</sup>, Կիրովականի դամբարանաբլուրի հիդրիան (ՀՊՊԹ, № 1861/23, 24)<sup>73</sup>:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի գունազարդ խեցեղենի ամենասիրված զարդամոտիվներից են նաև օղակները: Նրանք հավանաբար մ. թ. ա. III հազարամյակի սև փայլեցրած խեցեղենի կլոր փոսիկների գունային արտահայտությունն են, որը բնորոշ է դառնում միջին

<sup>69</sup> O. Джапаридзе, Археологические раскопки в Триалети, стр. 272:

<sup>70</sup> B. Алиев, К изучению культуры расписной керамики в Азербайджане, МКА, VI, Баку, 1965, стр. 63—64, табл. 1; 2:

<sup>71</sup> O. Абуллаев, Археологические раскопки в Кюльтепе, табл. 35, рис. 2; 7:

<sup>72</sup> Э. Гозадзе, նշվ. աշխ., աղ. 15; 4, աղ. 19, 20:

<sup>73</sup> Է. Խանգալյան, նշվ. աշխ., աղ. XXXIII:

բրոնզի խեցեղենի համար, սկսած նրա ամենավաղ փուլից՝ թագաբենդյան խեցեղենից<sup>74</sup>:

Միջին բրոնզի զարգացած փուլերով կարող է թվագրվել նաև № 34 դամբարանում հայտնաբերված հիդրիան, որի ալիքածածկ մետոպներն ու գույգ շարքով արտահայտված շերտները ծածկում են հիդրիայի գրեթե ամբողջ իրանը (աղ. XII; 12, ՀՊՊԹ, № 2246/114):



Նկ. 101. Գունազարդ հիդրիա № 42 դամբարանից:

Անշուշտ, միջին բրոնզի III փուլով կարող են թվագրվել էլաոի նաև № 35 և 39 դամբարանները, որոնք պեղվել են 1969 թ., II տեղամասի հարավ-արևելյան եզրում, միմյանցից մոտ 7,0 մ. հեռավորության վրա: Նրանց մեծ մասը ոչնչացել էր հանքի շահագործման ժամանակ:

Դամբարան № 39-ից տեղում միայն շորս կավամաններ էին մնացել՝ հասարակ, գորշազույն փոքրիկ թաս-աղամանը (ՀՊՊԹ, № 2624/47), սև փայլեցրած գլանաձև վզով, կլորացող իրանով կճուճը (ՀՊՊԹ, № 2624/48), որի անմիջական զուգահեռները վերը ներկայացված № 1805 ժողովածուում է (աղ. XII; 7) և գնդաձև իրանով շագանակազույն և սև խամրած փայլով խոր

<sup>74</sup> Նույն տեղում, էջ 98, նկ. 86; 4:

թասերը, որոնք ասես № 35 դամբարանի թասերի կրկնօրինակը լինեն (ՀՊՊԹ, № 2624/49, 50):

Դամբարան № 35-ի միայն արևելյան հատվածն էր պահպանվել, որից զգացվում էր, որ այն քառանկյունաձև հիմնահողային դամբարան է եղել, ուղղված՝ արևելքից արևմուտք: Նրանում հայտնաբերվեցին խոշոր ու մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներ և խեցեղեն: Մարդու ոսկորները բացակայում էին և դժվար է ասել, թե մենք այստեղ դիակիրզման հետ գործ ունենք, թե նրանք դամբարանի մեծ մասի հետ հանքն են թափվել:



Նկ. 102. Շագանակագույն թասեր № 35 դամբարանից:

Դամբարանում հինգ տիպի կավամաններ են հայտնաբերվել: Երկկոնիկ իրանով դարչնասևավուն հարթ մակերեսով փարշի մաս (աղ. XIII; 6, ՀՊՊԹ, № 2624/20), որը հիշեցնում է № 1805 ժողովածուի փարշերը (նկ. 98), սակայն ավելի զարգացած ձև ունի. գնդաձև իրանով շագանակագորշադույն խամրած փայլով, կլորացող շուրթերով թասեր (նկ. 102 ՀՊՊԹ, № 2624/21, 22), հար և նման № 39 դամբարանում հայտնաբերվածներին: Հատկանշական է դարչնաշագանակագույն, բարձր գլանաձև վզով և ձգված կլորացող իրանով դասական ոճի կճուճը, որի միայն մասերն էին պահպանվել (աղ. XIII; 2, ՀՊՊԹ, № 2624/24): Նրա՝ դեպի դուրս ծավիլող, կլորացող շուրթերը, Գառնիի (ՀՊՊԹ, № 2124/49, 50) և Կիրովականի (ՀՊՊԹ, № 1861/7—19) սև խամրած փայլով նույնատիպ կճուճների նման, ներսից եզերվում են խորաքանդակ հորիզոնական գո-

տիով: Կճուճի վզի հիմքը և ուսերը զարդարված են կետագծաշար քայլող դրոշմիչով կատարված զուգահեռ գծերի փնջերով և գծային մետապների մեջ ամփոփված կետագծաշար զիզագծերով: Ծիշտ նման կճուճների բեկորներ հայտնաբերվել են ամրոցի III դարավանդում (Ք3), օղակազարդ վերոհիշյալ հիդրիանների բեկորների հետ մեկտեղ (աղ. XIII; 3, ՀՊՊԹ, № 2625/77):

Էլաոի № 35 դամբարանում հայտնաբերվել են նաև երկու գունազարդ կավամաններ՝ մեկը կիսագնդաձև թասի բեկոր է շուրթից ցած, իրար մեջ հագած կիսաշրջանների զարդանկարով (աղ. XIII; 4, ՀՊՊԹ, № 2624/23), մյուսը՝ ամբողջական գունազարդ հիդրիա, գլանաձև վզով, կլորացող բարձրադիր իրանով: Գծածածկ շուրթերը դեպի դուրս են ճկված և ներսից վերոհիշյալ կետագծազարդ կճուճի նման ունեն խորաքանդակ հորիզոնական գոտի, սակայն թույլ շեշտված (նկ. 103, ՀՊՊԹ, № 2624/19): Հիդրիայի վիզը զարդարված է ուղղահայաց գոտիների մեջ ամփոփված երեք խումբ ալիքների փնջերով: Այն վզի հիմքում ունի ալիքազարդ զույգ ուլիեֆ գոտիներ, որոնք դարձյալ հիշեցնում են Կիրովականի սև խամրած փայլով քայլող դրոշմիչով զարդանկարված կրճուճները: Հիդրիայի ուսերը զարդարված են շղակներով եզերվող շերտերով, որոնք ներսում ունեն ալիքների զույգ շարքեր:

Էլաոի № 35 դամբարանի խեցեղենը մի կողմից հարում է Կիրովական-Մաղկա խմբին, սակայն մյուս կողմից մոտ է այդ մշակույթի վերջին փուլերով թվագրվող հուշարձանների խեցեղենին:

Ինչպես տեսանք, ձևով էլաոի կետագծազարդ կճուճին բավական մոտ են Գառնիի և Կիրովականի սև խամրած փայլով կճուճները: Բացի այդ, էլաոի գորշագույն թասերի, երկկոնիկ փարշի, ինչպես նաև կիսաշրջանների զարդաշարով գունազարդ թասի անմիջական զուգահեռները դարձյալ Գառնիի հիմնահողային դամբարանի խեցեղենում են<sup>75</sup>: Ընդհանրապես բազմաշար կիսաշրջանների զարդագոտիով գունազարդ թասերը բավական լայն տարածում ունեն Հայկական լեռնաշխարհի միջին բրոնզի դարաշրջանի հուշարձաններում, սկսած Արարատյան դաշտավայրից մինչև Մաղկայի XV հիմնահողային դամբարանը<sup>76</sup>:

<sup>75</sup> Է. Խանգաղյան, նշվ. աշխ., աղ. XXV:

<sup>76</sup> Կիսաշրջանների զարդամոտիվով գունազարդ թասերի մանրամասն զուգահեռները տե՛ս Է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 86—88:

Բազմաշար կիսաշրջանների զարդանախշեր են կրում էլաոի դամբարանադաշտում հայտնաբերված երկու այլ գունազարդ թասեր, որոնցից մեկի կիսաշրջաններով առաջացած անկյուններով օղակներ են արված (տխտ. I; 3, ՀՊՊԹ, № 1910), իսկ մյուսի շուրթի տակ, զույգ հորիզոնական ալիքաձև գոտիներից ցած կախված են վեցաշար կիսաշրջաններ (նկ. 107, ՀՊՊԹ, № 2261/3):

Էլաոի № 35 դամբարանի խեցեղենին բավական մոտ են Ավանի և Քանաքեռի խճուղիների հատման վայրում, հողային աշխատանքների ժամանակ բացված հիմնահողային դամբարանի խեցեղենը՝ գորշագույն թասերը (ԵՔԹ № 2259/6—8), կիսաշրջանների զարդանախշով գունազարդ թասը և հիդրիաները, որոնք ունեն շերտեր օձազարդեր, կեոխաշեր<sup>77</sup>:

Էլաոի խեցեղենի նմանությունը մեծ է նաև Նորատուսի մ. թ. ա. XV—XIV դդ. թվագրվող դամբարանի կավամանների հետ՝ գնդաձև իրանով գորշագույն թասերի, շագանակագույն կճուճների, որոնց վզի հիմքը էլաոի կճուճի նման զարդանկարված է քայլող դրոշմիչով, իսկ ուսերը զիզագծածածկ մետապներով, որոնք ինչպես ճիշտ նկատել է Հ. Ա. Մարտիրոսյանը իրենց հետագա զարգացումն են գտնում ուշ բրոնզի և ապա նախաուրարտական բնակատեղիների խեցեղենում<sup>78</sup>: Նրանց ցայտուն օրինակներին մենք հանդիպում ենք էլաոի վաղ երկաթի դարաշրջանի դամբարանային խեցեղենում (աղ. XX; 3, 5), Թաղաքենդի (ՎՊԹ, № 28—58, 168, 169) և Մեծամորի բնակատեղիի նախաուրարտական խեցեղենում<sup>79</sup>:

Նորատուսի հիդրիայի վրա ընդամենը մեկ շերտ է պատկերված, որի ներսում էլաոիին նման զույգ զիզագ ալիքներ են անցնում, մեկում անգամ երեք ալիք: Նման զույգ ալիքներ է կրում նաև Նախաշիրի գունազարդ հիդրիայի շերտեր<sup>80</sup>, իսկ մնացած մեզ հայտնի բոլոր գունազարդ կավամանների շերտերի ներսում միայն մեկ ալիք է պատկերված: Այսպիսով, այս նրբին երանգներով անգամ Նորատուսի և էլաոի խեցեղենը համահունչ են:

<sup>77</sup> Ս. Սալյան, Գ. Միխայելյան, Գունազարդ անոթների հայտնաբերում Երևանում, ՊՐԶ, 1971, № 2, Ս. Սալյան, Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, III, 1972, էջ 6—7, աղ. II:

<sup>78</sup> A. Мартиросян, նշվ. աշխ., էջ 73—75, աղ. IV:

<sup>79</sup> Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 39, նկ. 49, էջ 125, նկ. 122:

<sup>80</sup> Օ. Абулладеев, նշվ. աշխ., աղ. 35; 3:

Վերջապես, էլաոի նեղ սանրիկով կատարված կետագծազարդ զարդանկարով խեցեղենի գուգահեռներին մենք հանդիպում ենք Մաղկայի մ. թ. ա. XVI—XV դդ. թվագրվող I և II դամբարանաբլուրների խեցեղենում<sup>81</sup> և Հարավային Օսեթիայի Նուլի գյուղի, Ս. Պշելինայի կողմից ուսումնասիրված կոլեկտիվ թաղումներով դամբարանների սև և գորշագույն փայլեցրած խեցեղենում, որոնք բրոնզե այլ իրերի հետ ուղեկցվում են նաև Նորատուսի տիպի դաշտայնով<sup>82</sup> և Բ. Ա. Կուֆտինի կողմից թվագրվում մ. թ. ա. XV—XIV դդ.<sup>83</sup>:



Նկ. 103. Գունազարդ հիդրիա № 35 դամբարանից:

Այսպիսով, էլաոի № 35 դամբարանի խեցեղենը կարծես մի կապող օղակ լինի Կիրովական-Մաղկա խմբի և միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլի՝ Նորատուսի ու Նուլիի խմբերի միջև և կարող է թվագրվել մ. թ. ա. XV դարի II կեսով:


Էլաոի № 2 դամբարանը պեղվեց 1960 թ., I տեղամասում: Այն վաղ բրոնզեդարյան № 4 պայտաձև քարակղզից մի փոքր արևմուտք էր և նրանից մոտ 0, 3 մ խորը: Դամբարանը հիմնահողային էր՝ ուղղված արևելքից արևմուտք: Ըստ իրերի զբաղեցրած տարածության, նրա երկարու-

<sup>81</sup> Э. Гозадзе, նշվ. աշխ., էջ 107, աղ. 15; 21, 16; 13:

<sup>82</sup> Б. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 года в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949, стр. 31—35, рис. 12, табл. XVIII; 2:

<sup>83</sup> Նույն տեղում, էջ 51:

թյունը՝ 1,8 մ էր, լայնությունը՝ 1,2 մ: Սակայն դամբարանի հյուսիս-արևմտյան կողմում, կճուճներից մեկի կողքին բացված միջնադարյան քարարկղը և դամբարանում խոշոր եղջյուրավոր կենդանիների վերջավորությունների և կողոսկրների ցաք ու ցրիվ վիճակը, ինչպես նաև կավամանների կույտերով տեղավորված լինելը համոզում են, որ դամբարանն ավերել են վերոհիշյալ քարարկղը կառուցելիս (նկ. 104, աղ. XIV; 1): Ժամանակին, հավանաբար, № 2 դամբարանն ավելի մեծ տարածք է զբաղեցրել, գուցե և ավելի ուշագրավ նյութեր ընդգրկել:



Նկ. 104. Դամբարան № 2:

Դամբարանի մանրակրկիտ զննումը համոզեց, որ մենք գործ ունենք դիակիզման ծեսի հետ: Նրանում բացակայում էին մարդու ոսկորները: Իրերի մի խումբը դամբարանի արևելյան հատվածում էր, մյուսը՝ արևմտյան, իսկ մեջտեղում գտնվեցին կարմիր տուֆից թասանման գոգավորվող կափարիչ, վանակատից շեղբ և միջուկ:

Արևելյան խմբում մեկ ջարդված կճուճ էր, հինգ կիսագնդաձև թասեր, երկկոնիկ փարչ և կտրած շուրթերով, ձվաձև պրոֆիլով փոքրիկ կավաման: Արևմտյան խմբում՝ չորս կճուճ՝ մանր եղջյուրավոր կենդանիների ոսկորներով լի շորս թաս և մինիատյուր աղաման:

Անշուշտ քարի պաշտամունքի հետ է կապված դամբարանում վանակատի անմշակ բեկոր, շեղբ կամ միջուկ դնելը: Բացի էլաոի դամբարանից (աղ. XIV; 8, 9, ՀՊՊԹ, № 2245/24, 25) նման բեկորներ հայտնաբերվել են Գառնիի վերոհիշյալ հիմնահողային դամբարանից<sup>84</sup>, Նորատուսի դամբարանից<sup>85</sup>:

<sup>84</sup> Է. Խանգաղյան, նշվ. աշխ., աղ. XXV; 7:

<sup>85</sup> А. Мартыросян, նշվ. աշխ., էջ 74:

Վերոհիշյալ ժամանակաշրջանի դամբարանների համար հատկանշական են նաև էլաոի № 2 դամբարանի տիպի հասարակ, փոքրիկ, խոր թասիկ-աղամանները (աղ. XIV; 7, ՀՊՊԹ, № 2245/22) և քարից կափարիչները (աղ. XIV; 6, ՀՊՊԹ, № 2245/23), որոնցից մի քանիսը հայտնաբերվել են Կիրովականի դամբարանաբլուրում (ՀՊՊԹ, № 1860/12, 13), Նորատուսի վերոհիշյալ դամբարանում<sup>86</sup>, Կամոյի թատրոնի բակի, թաղաբնիկյան տիպի խեցեղենով դամբարանում (գրտնըվում է Կամոյի թանգարանում), Լորուտում: Նրման կափարիչները հյուսիսում հասնում են մինչև Ախմետա: Ինչպես տեսանք, թասանման գոգավորվող կափարիչ, սակայն բնականով, գտնվել է էլաոի № 25 դամբարանում (աղ. XII; 1), իսկ կոնաձև կափարիչ վարդագույն տուֆից հայտնաբերվել է էլաոից Նոր գյուղ տանող ճանապարհի մոտ գտնվող դամբարաններից (ՀՊՊԹ, № 1703):

էլաոի № 2 դամբարանում հայտնաբերված խեցեղենը հիմնականում հասարակ է, խոհանոցային: Կճուճներն ունեն ոչ շատ բարձր գլանաձև վիզ, մի փոքր դեպի դուրս լայնացող ծավված շուրթեր, կլորացող, ձգված իրան, տափակ հատակ: Բոլոր վեց կճուճները վարդագույն գույն են, ոչ լավ կոկած, անզարդ մակերեսով, միայն ամենամեծն (աղ. XIV; 2, ՀՊՊԹ, № 2245/5) ունի սև, խամրած փայլով մակերես, վզի հիմքում խազելու եղանակով կատարված զույգ հորիզոնական գոտիներ: Նման գոտիներ ունի նաև կճուճներից ամենափոքրը (աղ. XIV; 3, ՀՊՊԹ, № 2245/9), իսկ մյուս երեք կճուճների անցումները սահուն են (աղ. XV; 2, 4, ՀՊՊԹ, № 2245/6): Կճուճներից մեկն ավարտվում է դեպի վեր և դեպի դուրս ճկված շուրթերով (աղ. XV; 5, ՀՊՊԹ, № 2245/10):

Դամբարանում հայտնաբերված անհամաչափ թրծումով, թեթևակի կրապատ, բաց վարդագույն-գորշագույն խոր թասերը չափերով գրեթե նույնն են և ունեն կտրված, մի փոքր դեպի ներս թեքված շուրթեր, տափակ հատակ: Թասերից մի քանիսի շուրթերի անցումը սահուն է (աղ. XIV; 10, ՀՊՊԹ, № 2245/11—14), իսկ մի մասը հիմքում ունի խոր, հորիզոնական գոտի (աղ. XV; 1, ՀՊՊԹ, № 2245/15—19): Նրանք իրենց որակով և մասամբ ձևով տարբերվում են Կիրովական—Մաղկա խմբի թասերից, ինչպես և էլաոի վերը ներկայացվածներից: № 2 դամբարանի թասերին ավելի մոտ են Կամոյում, Ե. Լալայանի պեղած դամբարաններից

<sup>86</sup> Նույն տեղում:

գտնվածները (ՀՊՊԹ, № 115/81, 146) և մասամբ Նուլիի վերոհիշյալ դամբարաններում հայտնաբերվածները, որոնց մի մասն, ի տարբերություն էլաոի, օժտված են կանթերով<sup>87</sup>:

էլաոի դամբարանի վերոհիշյալ կճուճներն իրենց ձևով և վզի հիմքի գոտիով, շնայած հեռավոր կերպով հիշեցնում են Կիրովականի դամբարանների, Գառնիի հիմնահողային դամբարանի սև ագաթափայլ կճուճները, սակայն որոշ մանրամասներով, կատարելությամբ և որակով զիջում են վերջիններին: Նրանցում նկատվում են ձևերի հասարակացում և ավելի անկումային հատկանիշներ: Այդ տեսակետից էլաոի կավամաններին ավելի մոտ են Ցամաքաբերդի, հավանաբար ուշ բրոնզի վաղ փուլերի դամբարանների խեցեղենը, որտեղ երկարավիզ, ուշ բրոնզին բնորոշ դեղնագորշագույն փայլեցրած կճուճի հետ (ՀՊՊԹ, № 1941/57)<sup>88</sup> գտնվել են էլաոի № 2 դամբարանի տիպի, վզի հիմքում թույլ շեշտված գոտիով, անփայլ, սև, գորշագույն, գլանաձև վզով կճուճներ (ՀՊՊԹ, № 1941/67) և դեղնավուն, մրոտ, կտրած շուրթերով ուռուցիկ ուսերով թասեր (ՀՊՊԹ, № 1941/72):



Նկ. 105. Խեցեղեն էլաոի դամբարանադաշտից:

էլաոի վարդագույն, հասարակ, կոպիտ, ոչ լավ մշակված մակերեսով երկկոնիկ փարչը (աղ. XIV; 4, ՀՊՊԹ, № 2245/20), շնայած իր ձևով հիշեցնում է Գառնիի<sup>89</sup> և էլաոի վերոհիշյալներին, սակայն նույնպես կորցնում է նրանց հստակ ձևն ու շեշտված անցումները և ավելի մոտ է դարձյալ Նուլիում հայտնաբերվածին (ՎՊԹ, № 29—61, 53):


էլաոի դեպի ներս թեքված, կտրած շուրթերով, ձվաձև, դեղնավուն փայլեցրած մակերեսով կրապատ կավամանը շուրթի հիմքում ունի լայն խորաքանդակ գոտի (աղ. XIV; 5, ՀՊՊԹ, № 2245/

<sup>87</sup> Ե. Կյֆուսի, նշվ. աշխ., էջ 33—34, նկ. 11:

<sup>88</sup> Պեղումները՝ 2. Մնացականյանի, Նյութերը հրատարակված չեն:

<sup>89</sup> Է. Խանգաղյան, նշվ. աշխ., աղ. XXV; 5:

21): Այն նման է Գառնիի դամբարանում<sup>90</sup> և էջմիածնում հայտնաբերվածներին (էԳԹ, № 1/30): Սա մի նոր ձև է և իր հետագա զարգացումն է ստանում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի խեցեղենում:




Նկ. 106. Մեծ, գունազարդ թաս էլաոի դամբարանադաշտից:

Այսպիսով, էլաոի № 2 դամբարանի խեցեղենում, մի կողմից նկատվում է միջին բրոնզի դարաշրջանին բնորոշ նույնատիպ ձևերի որակի անկում, մյուս կողմից ի հայտ են գալիս նոր ձևեր (փարչն ու ձվաձև կավամանը), որոնք ավելի բնորոշ են դառնում զարգացման հաջորդ փուլերի համար: Նկատի ունենալով վերը հիշատակված բոլոր հատկանիշները, էլաոի № 2 դամբարանը կարելի է թվագրել մ. թ. ա. XV դարի վերջով և XIV դարի սկզբով:

Ժամանակով էլաոի № 2 դամբարանին է հարում 1963 թ. հայտնաբերված խեցեղենի ժողովածուն: Այն բաղկացած է երեք գունազարդ խոր թասերից և հասարակ, կոպիտ, առանց անզարդ, դեղնավուն, բաց վարդագույն, մրոտ, անզարդ խոհանոցային խեցեղենից ու մինիատյուր կավաման խաղալիքներից: Դրանք վատ մշակված կավից պատրաստված, անհամաչափ ծուռ իրանով, երբեմն շատ թեք բերանով, տափակ հատակով կավամաններ են (աղ. XV, 8, 9, 11, ՀՊՊԹ, № 2261/6, 11, 12, 13), կոնաձև դեպի ցած նեղացող, կտրած շուրթերով թասեր (աղ. XV; 12, ՀՊՊԹ, № 2261/10, 17), ձգված իրանով, փոված շուրթերով, դեղնաշիկավուն կճուճ (աղ. XV; 5, ՀՊՊԹ, № 2261/1), որոնք մշտապես ուղեկցում են միջին բրոնզի գունազարդ խեցեղենին, նրա զարգացման բոլոր փուլերում:

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 84—86, աղ. XXV; 6:

Հավանաբար երեխայի հետ են թաղվել խաղալիք-կավամանները (նկ. 105, աղ. V; 6, 7): Վերը տեսանք, որ երեխայի հետ փոքրիկ կավամաններ զննելու սովորույթը էլառում սկիզբ է առնում դեռևս մ. թ. ա. III հազարամյակից (տե՛ս աղ. IV; 3—6):



Նկ. 107. Գունազարդ խորը թաս էլառի դամբարանադաշտից:


Դամբարանում հայտնաբերված դեղնավարդագույն խաղալիք-գավաթիկը (նկ. 105, 3, ՀՊՊԹ, № 2261/20) իր ձևով և շեշտված նստուկով բավական մոտ է Միծեռնակաբերդի նմանատիպ գավաթին (ՀՊՊԹ, № 1036/1), Կիրովականի<sup>91</sup> և Մաղկայի VII դամբարանաբլուրի ոսկե թասերին<sup>92</sup>: Ուշագրավ են նաև կարճ ոտքով մինիատյուր սկահակները (նկ. 105; 1, ՀՊՊԹ, № 2261/18 և աղ. XV; 7): Ընդհանրապես էլառի վերոհիշյալ ժողովածուի հասարակ, անզարդ խեցեղենն իր բազմաթիվ զուգահեռներն ունի միջին բրոնզի խեցեղենում: Սկիզբ առնելով այդ մշակույթի վաղ փուլերում, այն հարատևում է մինչև նրա վերջը:

Ինչ վերաբերում է ժողովածուի գունազարդ երեք թասերին, ապա նրանցից հատկապես եր-

<sup>91</sup> А. Мартиросян, ԶՎ. աշխ., էջ 66, նկ. 32:

<sup>92</sup> Б. Кухтин, Археологические раскопки в Триаleti, стр. 437, табл. С1.

կուսն իրենց մի փոքր դեպի ներս թեքված և կտրած շուրթերով մոտենում են ուշ բրոնզի խեցեղենին (նկ. 106, 107, ՀՊՊԹ, № 2261/9, 3): Նրանց գծածածկ շուրթերի տակ, զույգ ալիքաձև զոտիներից ցած կախված են ալիքազարդ շերտեր կամ բազմաշար կիսաշրջաններ, որոնք, ինչպես վերը տեսանք, միջին բրոնզի սիրված զարդամոտիվներից են: Նմանապես երրորդ գունազարդ թասի (նկ. 108, ՀՊՊԹ, № 2261/2) ալիքազարդ շեղանկյունների գոտին և նրանից ցած զույգ ալիքաձև ներճկումներով զիզզազազարդ ժապավենները հատկանշական են միջին բրոնզի գունազարդ խեցեղենին և հարատևում են մինչև նրա վերջին փուլերը: Էլառի թասն իր շեղանկյուններով նմանվում է էջմիածնի ուշ բրոնզի վաղ փուլի



Նկ. 108. Գունազարդ թաս էլառի դամբարանադաշտից:

երկարավիզ գունազարդ կճուճի զարդանկարին (ՀՊՊԹ, № 556/18): Անշուշտ, էլառի վերոհիշյալ թաս-քրեղանները կարող են թվագրվել մ. թ. ա. II հազարամյակի կեսով:

Այսպիսով, էլառը լինելով միջին բրոնզի, այդ ընդարձակածավալ մշակութային միասնության կարևորագույն օջախներից մեկը, իր հերթին լրացնում և հարստացնում է այն ուշագրավ նյութերով:

Գ Լ Ո Ւ Խ IV

ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ


Վերջին երկու տասնամյակներում ի հայտ եկած հսկայածավալ դամբարանադաշտերի՝ Լճաշենի, Արթիկի և Լոռի բերդի կոմպլեքսների պեղումները նոր լույս են սփռում Հայկական լեռնաշխարհի բրոնզի մշակույթի ծաղկման շրջանի հասարակության պատմության ուսումնասիրության ասպարեզում:

Չնայած էլառում ևս ավազահանքի տարածքում նման մեծածավալ դամբարանաբլուրներ մինչև վերջերս կանգուն էին, սակայն ինչպես Ե. Լալայանի, այնպես էլ տողերիս հեղինակի կողմից պեղվածները ցավոք թալանված էին:

Էլառի ուշ բրոնզի դարաշրջանի մշակույթի վերաբերյալ մենք պատկերացում ենք կազմում ամբողջում պահպանված ոչ սովոր շերտերի և քանդված դամբարաններից հայտնաբերված նյութերով:

Առաջին գլխում տեսանք, որ ամբողջ III (P<sub>3</sub>) փոստրակում ուշ բրոնզի երկու շինարարական շերտեր էին պահպանվել: Նրա հարավային հատվածում, վաղ բրոնզեդարյան շերտից անմիջապես վեր, մոտ 0,3 մ հաստությամբ ոչ ծավալուն շերտ, որտեղ հայտնաբերվեցին քարից գործիքներ՝ աղորիքների բեկորներ, սանդղկոթեր, շրջանաձև կափարիչ (ՀՊՊԹ, № 2625/73) և մ. թ. ա. XIV—XIII դդ. բնորոշ խեցեղեն: Դրանք հասարակ խոհանոցային կավանոթների բեկորներ են, զարդարված հորիզոնական ալիքների հատիկների, բազմաշար գծագոտիների համադրությամբ (աղ. XVI; 1, 2, ՀՊՊԹ, № 2625/72), զարդարուն կարասների բեկորներ և սև ազաթափալ խեցեղեն: Շերտում հայտնաբերված ոչ շատ բարձր վզով կճուճների բեկորները՝ ուսերին խորաքանդակ գոտիներ, վզին փայլեցման եղանակով կատարված ուղղա-

հայաց ժապավեններ (աղ. XVI; 5, 6, ՀՊՊԹ, № 2625/72), որոնք երբեմն իջնում են նաև ուսերի վրա (նկ. 109, ՀՊՊԹ, № 2625/73), կամ կլորացող շուրթերով թասերի բեկորները՝ զարդարված փայլեցման եղանակով կատարված ցանցադաշտով, անկյուն կազմող գծախմբերով (աղ. XVI; 3, 4,




Նկ. 109. Փայլեցման եղանակով զարդանկարված կճուճի բեկոր P<sub>3</sub> փոստրակից:

ՀՊՊԹ, № 2625/78), իրենց զուգահեռներն ունեն Արթիկի կատակոմբաներում և ընդհանրապես բնորոշ են ուշ բրոնզի խեցեղենի I խմբին, Մեծամորի բնակատեղիի մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող խեցեղենին, Գեղարտուի № 2 կրոմլեխում, Լճաշենի № 1 դամբարանաբլուրում և № 3 կրոմլեխում (ՀՊՊԹ, № 2009/12), Մուխաննաթ-թափախում (ՀՊՊԹ, № 1439/421, 556, 575), Երևանի



մաքրման կառույցների գործարանի մոտի դամբարանադաշտում (ՀՊՊԹ, № 2304/51, 55, 56) հայտնաբերված խեցեղենին<sup>1</sup>:



Նկ. 110. Կճուճ Կիրովականից:

Փոսորակի վերին հատվածի ուշ բրոնզի դարաշրջանի մոտ 0,8 մ հաստությամբ ունեցող շերտը հագեցված՝ ուլիկներով գորգարուն կարասների բեկորներով, գնդաձև վարդարուն թաղարներով և թասերի բեկորներով, ուսերը զարդարված խորաքանդակ հորիզոնական ալիքաձև և բազմագիծ գոտիներով (աղ. XVI; 7, 8, 11, 12, ՀՊՊԹ, № 2625/70) իրենց զուգահեռներն ունեն մ. թ. ա. XII դ. թվագրվող Արթիկի II խմբի, Գառնիի № 99 դամբարանի և Դիլիջանի խեցեղենում<sup>2</sup>:


Ուշ բրոնզի վաղ փուլերով են թվագրվում 1947 թ. դամբարանադաշտում հայտնաբերված երկու կավամանները և կտրած շուրթերով թասերը: Կավամաններից մեկը գնդաձև իրանով մեծ թաղար է, ուսերին՝ փայլեցման եղանակով կատարված, անկյուն կազմող գծախմբեր և նրանցից ցած՝ շրտ խորաքանդակ հորիզոնական գոտիներ (աղ. XVII; 1, ՀՊՊԹ, № 1805/25): Թե իր ձևով և թե զարդանախշերի կատարման եղանակով

<sup>1</sup> Т. Хачатрян, Նշվ. աշխ., էջ 192, նկ. 95, էջ 195, նկ. 104, 105, 108, է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, է. Պարսամյան, Մեծամոր, էջ 23-29, նկ. 28, աղ. VII; 2, 4, աղ. VI, А. Мартыросян, Армения в эпоху..., стр. 92, рис. 44; 6. Ս. Սալյան, Լ. Կարապետյան, Նորահայտ դամբարանադաշտը Երևանի լոտ, ՊՐՀ, 1963, № 4, էջ 283, աղ. II; 9:

<sup>2</sup> Т. Хачатрян, Նշվ. աշխ., էջ 226, նկ. 139, 140, է. Խանգաղյան, Գառնի IV, էջ 128, նկ. 97, Կատալոգ Գիլիջանի երկրագիտական թանգարանի, կազմեցին՝ Ս. Սալյան, Հ. Հովհաննիսյան, Երևան, 1969, աղ. XIX; 7, 8:

կով ու զարդամոտիվներում այն աղերսվում է մ. թ. ա. XIV—XIII դդ. խեցեղենի հետ, բազմաթիվ զուգահեռներ ունի Արթիկի խեցեղենի I խմբում, Մեծամորի համաժամանակյա շերտում<sup>3</sup>, նրան բավական մոտ է նաև Խնձորուտում (Կիրովականի շրջան) գտնված թուշնագուրի կանթով բարձրարվեստ կավամանը (նկ. 110, ՀՊՊԹ, № 1176/3):

Դամբարանադաշտում հայտնաբերված երկրորդ կճուճը երկարավիզ է, ուսերին հորիզոնական խորաքանդակ գոտիներ, վզին՝ փայլեցման եղանակով կատարված ուղղահայաց ժապավեններ, իսկ ստորին մասն ամբողջությամբ ցանցածածկ (նկ. 111, ՀՊՊԹ, № 1805/22): Նույն եղանակով են զարդարված Արթիկի ուշ բրոնզեդարյան խեցեղենի I խմբի երկարավիզ կճուճները, Կարմիր բլուրից հարավ գտնվող դամբարանա-



Նկ. 111. Փայլեցման եղանակով զարդանկարված կճուճ էլաոի դամբարանադաշտից:

դաշտից հայտնաբերվածները<sup>4</sup>, Ակնալճի դամբարանադաշտում գտնված կճուճը (ՀՊՊԹ, № 767/6) և այլն:

<sup>3</sup> Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1933, стр. 103, табл. 15; 2, стр. 104, табл. 16; 3. Նույնի՝ Древняя культура Ширака, стр. 191, рис. 33, стр. 193, рис. 100. է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, է. Պարսամյան, Մեծամոր, էջ 28, աղ. VII; 5:

<sup>4</sup> Т. Хачатрян, Նշվ. աշխ., էջ 192-193, նկ. 95-101, Ս. Սալյան, Լ. Կարապետյան, Նշվ. աշխ., էջ 282, աղ. I; 4, 7:

Կտրած շուրթերով թասերից մեկը երկկոնիկ մասից վեր, հորիզոնական գոտիներով առաջացած դաշտերում, ունի երկու զույգ, անփուլ թասերով արված ալիքաձև զարդագոտիներ (ՀՊՊԹ, № 1813, № 41), իսկ մյուս թասի վերին մասն ավելի կարճ է, զարդարված դարձյալ զիղզյա գոտիով (աղ. XVII; 2, ՀՊՊԹ, № 1805/51): Զույգ ալիքաձև գոտիներով զարդարված մի թասիկ էլ հայտնաբերվել է էլաոից նոր գյուղ տանող ճանապարհին (ՀՊՊԹ, № 1695): Նման թասեր հայտնաբերվել են Մարմարաշենում (ՀՊՊԹ, № 1730), Մուխանաթ-թափայում (ՀՊՊԹ, № 1216/81, 178), Երևանի մաքրման գործարանի մոտ գտնվող դամբարանադաշտում (ՀՊՊԹ, № 2304/52): Այն բնորոշ է նաև Արթիկի խեցեղենի I խմբին (ՀՊՊԹ, № 2327/499)<sup>5</sup>:

Շեշտված հատակով, մի փոքր ներս թեքված կլորացող շուրթերով էլաոի երկու քրեղանները երկկոնիկ մասում ունեն հորիզոնական գոտի, ուսերին փորագրված են բազմաշար ուղղագիծ գոտիներ (ՀՊՊԹ, № 92, № 1805/57): Նրանց զուգահեռները գտնվել են Կիրովականի «Դիմաց-թաղի», մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող դամբարանների խեցեղենում (ՀՊՊԹ, № 1216/2, 11, 23, 27), Արթիկի խեցեղենի II խմբում<sup>6</sup>:

Ուշագրավ են դամբարանադաշտում հայտնաբերված նաև բրոնզե իրերը:

Դաշույններից մեկը տերեւաձև է, կենտրոնական ուլիկի երակով: Ունի կարճ և կլորացող վերջավորությամբ լեզվակ, որի կենտրոնում և թեք ուսերին երեք անցքեր են բացված՝ փայտե կամ ոսկրե դաստակն ամրացնելու համար (նկ. 112, ՀՊՊԹ, № 93): Այն իր ձևով բավական մոտ է Լենինականում հայտնաբերված ուշ բրոնզի վաղ փուլով թվագրվող դաշույններին<sup>7</sup>, և, անշուշտ, ժամանակակից է նրանց:


Դամբարանադաշտում գտնված մյուս դաշույնը, Հայկական լեռնաշխարհին բնորոշ և մ. թ. ա. XIV դարի վերջին լայն տարածում գտած գլանաձև միաձույլ դաստակով, զարդարուն, տափակ շեղքով դաշույնների տարբերակներից մեկն է (ՀՊՊԹ, № 1813/1): Դաշույնի եզրերը թեքությամբ սրված են, իսկ կենտրոնական մասը զարդարված է երկարավուն ուլիկի սեպիկով,

<sup>5</sup> Т. Хачатрян, Материальная культура..., стр. 110, табл. 18; 9:


<sup>6</sup> С. Есаян, Ереван, табл. 30; 8. Т. Хачатрян, Древняя культура Ширака, стр. 226, рис. 139, 140:

<sup>7</sup> Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակատեղիներ և դամբարանադաշտեր, ՀՀԷ, II, Երևան, 1969, աղ. XV, 6, 7:

երկու կողմերում ուլիկի-ներձկման եղանակով կատարված՝ երկօւլ երակներով, որոնք դեպի ծայրն իջնելով, ձուլվում են: Դաստակի մեջ սահայանվել է կարծր շաղախը: Դաշույնը պատած է ազնվածանդով (նկ. 113):



Նկ. 112. Բրոնզե դաշույն էլաոի դամբարանադաշտից:



Նկ. 113. Միաձույլ դաստակով բրոնզե դաշույն էլաոի դամբարանադաշտից:

Գլանաձև դաստակով, եռանկյունաձև զարդարուն շեղքով դաշույններ այժմ հայտնի են Հայկական լեռնաշխարհի մոտ քսանվեց հնավայրերից, որոնք թվագրվում են մ. թ. ա. XIV—VIII դդ.: Վրաստանի տարածքում այս դաշույններից հայտնաբերվել են Սամթավրոյում<sup>8</sup>, մեծ թվով՝ Իորո-Ալազանի ջրավազանում<sup>9</sup>: Հյուսիսում նրանք հասնում են Հարավային Օսեթիա, Կուբան,

<sup>8</sup> Г. Ломтадзе, Бронзовые кинжалы и мечи из древнейших погребений самтаврского могильника, Тбилиси, 1974:

<sup>9</sup> К. Пицхелаури, Основные проблемы истории племен Восточной Грузии в XV—VII вв. до н.э., Тбилиси, 1973:

Կումբուլտա<sup>10</sup>, որոնք, անշուշտ, ներմուծված պետք է համարել:

Սակայն այդ քանակից հնավայրերում հայտնաբերված դաշույններն ունեն մի շարք տարբերակներ: Նրանք հիմնականում միմյանցից զանազանվում են գլանաձև դաստակի երկու տարատեսակներով, ինչպես նաև շեղբի ու դաստակի միացման եղանակով:

Դաշույնների մի խմբի գլանաձև դաստակները բաղադրական են, ունեն երկայնակի միացող եզրեր, որոնք կամ հպվում են միմյանց, կամ ճեղքվածքով արտահայտվում: Հաճախ նրանց մեջ փայտե ներդիր է լինում: Այս դաշույնների շեղբի հիմքն ավարտվում է շեղանկյունաձև թիթեղով, որից և սկիզբ է առնում գլանաձև, սնամեջ դաստակը: Դաշույնների այս խմբին են հարում վերոհիշյալ հնավայրերում հայտնաբերվածների մի մասը:

Դաշույնների մեկ այլ խմբի գլանաձև դաստակը միաձույլ է, շունի կարի կամ միացման որևէ հետք: Սնամեջ կոթառը, որպես կանոն, լցված է կարծր շաղախով: Նրանց շեղբի հիմքը, ի տարբերություն վերոհիշյալների, արտահայտված է մի փոքր ուղիղ լայնադիր ակոսազարդ ժայլակներով, որից սահուն անցումով սկսվում է գլանաձև դաստակը: Այս խմբի դաշույնները հիմնականում պատած են ազնվածանգով: Նման դաշույններ հայտնաբերվել են Կամոյում (ՀՊՊԹ, № 20/86), էջմիածնում (ՀՊՊԹ, № 711/3), Արթիկում<sup>11</sup>, Լճաշենում<sup>12</sup>: Էլաոի դաշույնը հարում է այս վերջին խմբին: Նրա շեղբի գեղեցիկ ձևավորումը, եզրերի նրբությունն ու ազնվածանգի փայլը համոզում են, որ այն ժամանակին աչքի է ընկել իր գեղարվեստական հատկանիշներով: Սամթավրոյում հայտնաբերված նմանատիպ դաշույններից երկուսը, որոնք նույնպես արվեստի լավագույն նմուշներ կարող են համարվել, աչքի են ընկնում համաձուլվածքի բարձր որակով, որը բոլորովին զուրկ է անագի պարունակությունից, սակայն իր կազմում ունի 7,28% ծարիր<sup>13</sup>: Անշուշտ, ծարիրի առկայությունը նպաստել է դաշույնների նաև որակի բարձրացմանը, քանի որ Սամթավրոյի «դասական» անագային

բրոնզից ձուլված նմանատիպ երկու այլ դաշույնների պահպանվածությունը, ինչպես նշում է Գ. Ա. Լոմթաթիձեն, անհամեմատ ավելի վատ է<sup>14</sup>: Էլաոի դաշույնը շնայած քիմիական անալիզի չի ենթարկվել, սակայն նրա ամրությունն ու եզրերի նրբությունն, անշուշտ, նույնպես համաձուլվածքի որակով է պայմանավորված: Գուցե դաշույնների և ընդհանրապես այլ իրերի ազնրնաթանգը առաջացել է մետաղը ծարիրով ծածկելու հետևանքով:

Ֆինկի և Կոպպի տվյալներով, մետաղը ծարիրով ծածկելու պրակտիկան Եգիպտոսում հայտնի է եղել V կամ VI դինաստիայի ժամանակաշրջանում<sup>15</sup>:

Էլաոի դամբարանադաշտում բացի վերոհիշյալ դաշույններից հայտնաբերվել է նաև կլոր ձողից պատրաստված ապարանջան, որի ծայրերն ավարտվում են սնկաձև գլխիկներով (աղ. XVIII; 8, ՀՊՊԹ, № 1805/53), նրա զուգահեռները մեզ դեռևս հայտնի չեն, սակայն ճիշտ նույն տիպի գլխիկներով են ավարտվում Արթիկի մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող № 79 դամբարանում հայտնաբերված այժի քանդակի պատվանդանի ծայրերը<sup>16</sup>: Հավանաբար նույն ժամանակով կարող է թվագրվել նաև Էլաոի ապարանջանը:

\*\*\*


Վաղ երկաթի դարաշրջանում (մ. թ. ա. XI—IX դդ.) Էլաոն արդեն քաղաք էր և կրում էր Դարանի անունը: Այն մեզ ներկայանում է Աբովյան քաղաքի տարածքում շինարարական տարբեր տեղամասերում հայտնաբերված նյութերով, Դարանի ամրոցի շերտագրությունը պարզելու նպատակով անցած փոսորակի, դամբարանադաշտում պեղված և պատահականորեն հայտնաբերված դամբարանների նյութերով:

Նորակառույց քաղաքի շինքերի հիմքերը փորելիս տարիների ընթացքում բացվել են Դարանի քաղաքի բնակելի շինությունների մեկուսացած խմբերի, տնտեսական նշանակություն ունեցող կառույցների հիմքեր: Այդ շինություններում հայտնաբերվել է խեցեղենի մի ոչ մեծ, սակայն բնորոշ ժողովածու, որն իր հերթին հնարավորություն է տալիս քաղաքը նախաուրարտական ժամանակաշրջանով թվագրելու: Տարբեր հատվածներում հայտնաբերվել են նաև քաղաքն օղակող պարիսպների հիմքեր (նկ. 114):

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Ա. Лукас, Материалы и ремесленные производства древнего Египта, М., 1958, стр. 312.

<sup>12</sup> Т. Хачатрян, ԳՂԳ, էջ 218, նկ. 129:



<sup>13</sup> Б. Куфтин, Археологическая маршрутная экспедиция в 1945 г., стр. 27—28, табл. IX; 1, 2, МАК, вып. VIII, М., 1900, стр. 8, т. XI, стр. 227, табл. XCVI, рис. 5.


<sup>14</sup> Т. Хачатрян, ԳՂԳ, էջ 178, նկ. 86.

<sup>15</sup> Հ. Մարտիրոսյան, ԳՂԳ, աղ. XVI.

<sup>16</sup> Г. Ломтадзе, ԳՂԳ, աղ. XIII; 2, աղ. XIV; 2, 3:



Քաղաքի կենտրոնական մասում և № 2 միջ-  
նակարգ դպրոցի բակում, հողային աշխատանք-  
ների ժամանակ գտնվել են կարասներով լի մա-  
սաններ (աղ. XVIII; 1): Նույն դպրոցի մոտա-



Նկ. 115. Կանկուրազարգ կճուճ Դարանի քաղաքից:

կայքում և քաղաքի արևելյան հատվածի շենքերի  
հիմքերը փորելիս հայտնաբերվել են զլանածև  
վզով, երկկոնիկ ցածրագիր իրանով ազաթափայլ  
զավաթներ (աղ. XVIII; 6, ՀՊՊԹ, № 2625/8, 11),  
որոնք իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն  
Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. X—IX դդ.  
թվագրվող հուշարձաններում: Նմանատիպ դա-  
վաթներ հայտնաբերվել են Մեծամորի միջնաբեր-  
դի նախաուրարտական շերտում<sup>17</sup>, Կարմիր-բլուրի  
դամբարաններում և քաղաքի նախաուրարտական  
շերտում<sup>18</sup>, Դվինի և Մուխաննաթ-թափայլի վերո-  
հիշյալ շերտերում, Փիփում (Չազլիկ, ՀՊՊԹ, №  
1185) և այլուր:

Դարանի քաղաքին բնորոշ են մոխրագույն և  
սև ազաթափայլ ուռուցիկ իրանով լայնաբերան  
կճուճներ՝ ուսերին հորիզոնական խորաբանդակ  
գոտի (աղ. XVIII; 2, ՀՊՊԹ, № 2624/7), կամ՝  
իրանը զարդարված անրնդմեջ կանկուրներով  
(նկ. 115, ՀՊՊԹ, № 2624/1, 13): Նմանատիպ  
կճուճներ հայտնաբերվել են Մեծամորի դամբար-  
աններում (ՀՊՊԹ, № 2233/30, 35), Դվինում,  
նրանց տարբերակները գտնվել են Կարմիր-բլուրի  
քաղաքում և դամբարաններում<sup>19</sup>:


<sup>17</sup> Է. Խաճազյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մե-  
ծամոր, էջ 38, նկ. 47. աղ. X; 6, 8:

<sup>18</sup> А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван  
1961, стр. 61, рис. 276.

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 44, նկ. 17, էջ 64, նկ. 29ա, էջ 65,  
նկ. 29բ:

Քաղաքի կենտրոնական հատվածում և ման-  
կապարտեզի մոտ գտնվել են փայլեցման եղա-  
նակով կատարված ցանցադաշտով կավամասների  
բեկորներ (նկ. 116, ՀՊՊԹ, № 2624/14), հասա-  
րակ, անփայլ, սակայն զարդարուն մակերեսով  
մեծ թաղարների մասեր (աղ. XIX; 1, 2, ՀՊՊԹ,  
№ 2624/12), նաև զլանածև վզով և ձաղարածև  
զուրս շեշաված, փոված շուրթերով, սև ազաթա-  
փայլ մեծ և փոքր կճուճների բեկորներ (աղ. XVIII,  
3, 5, ՀՊՊԹ, № 2624/2, 17): Այս բարձրարվեստ  
կճուճների լավագույն օրինակները հայտնի են  
Դվինից, Կարմիր-բլուրից<sup>20</sup>, Մեծամորից<sup>21</sup>, Կամո-  
յից (ՀՊՊԹ, № 115/51, 173, 195, 204):

Դարանի քաղաքի տարածքում հայտնաբերվել  
են նաև մեծ սափորների բեկորներ՝ զարդարված  
ուղղահայաց դժափնջերով (աղ. XVIII; 4), կամ  
խիտ ալիքաշարով ծածկված մետոպներով (աղ.  
XIX; 5, ՀՊՊԹ, № 2624/9): Վերջին զարդանկարն  
իր զուգահեռներն ունի Կարակայսյում (ՀՊՊԹ, №  
2180), Մուխաննաթ-թափայլում (ՀՊՊԹ, № 1216/  
103, № 1439/413), Մեծամորում<sup>22</sup>: Նույն հուշար-  
ձաններում են նաև Դարանիում հայտնաբերված  
խեցու բեկորի (ՀՊՊԹ, № 2624/9) պրոֆիլացված  
շուրթերով, յուրօրինակ կանթերով, խորաբանդակ  
զարդանախշերով սև ազաթափայլ և զարդարուն  
հատակով թաս-ափսեների բեկորների զուգահեռ-  
ները (նկ. 117, աղ. XIX; 3, 4, 6, 9, ՀՊՊԹ, №  
2624/5, 15, 18)<sup>23</sup>:



Նկ. 116. Ցանցազարդ կավամանի բեկոր Դարանի քաղաքից:

Այսպիսով, Դարանի քաղաքի տարածքում  
հայտնաբերված խեցեղենի վերոհիշյալ ժողովա-  
ծուն իր բազմաթիվ զուգահեռներն ունի նախա-  
ուրարտական ժամանակաշրջանի խեցեղենում և,  
անշուշտ, կարող է թվագրվել XI—IX դդ.:

Դարանի ամրոցում վաղ երկաթի դարաշրջանի  
մշակութային շերտի մի փոքր հատված՝ 0,5—

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 60, նկ. 27ա, էջ 62, նկ. 28բ:


<sup>21</sup> «Մեծամոր», էջ 40, նկ. 53, էջ 41, նկ. 54, 55, էջ  
42, նկ. 56, 57:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 40, նկ. 50:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 50, 51, նկ. 70, 71, աղ. XXXVI;  
5, XXXVII; 8:



0,55 մ հաստությամբ, ինչպես վերը տեսանք, ի հայտ է եկել I շերտագրական փոստրակում (P<sub>1</sub>), որտեղ հայտնաբերված նյութերում թվագրող հատկանիշներ ունի խեցեղենը: Դրանք զարդարուն կարասների (նկ. 118, ՀՊՊԹ, № 2625/43),




Նկ. 117. Կանթով կավամանի մաս Դարանի բազալից:

հասարակ թաղարների (աղ. XVI; 13, 14, ՀՊՊԹ, № 2625/14) բեկորներ են, որոնք իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Մեծամորի մ. թ. ա. X—VIII դդ. թվագրվող շերտերում, Մուխանաթ-թափայի, Կարմիր-բլուրի, Դվինի նախաուրարտական շերտերում: Հայտնաբերված մեծ կավամանների բեկորները՝ զարդարված մետաղներում ամփոփված դիզազաններով (աղ. XIX; 8, 11, ՀՊՊԹ, № 2625/27), դարձյալ իրենց զուգահեռներն ունեն Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտում, Մեծամորի Նրդեհված և Մուխանաթ-թափայի համաժամանակյա շերտում (ՀՊՊԹ, № 1216/103, № 1439/413, 534), Կարմիր-բլուրի դամբարանային խեցեղենում, որոնք թվագրվում են վաղ երկաթի դարաշրջանով<sup>24</sup>: Նույն շերտում են հայտնաբերվել ուելիեֆ կոճակներով զարդարված կավամանների բեկորները (աղ. XIX; 7, ՀՊՊԹ, № 2625/69), որոնցից ուշագրավ է հատկապես հասկազարդ ծապավենով և նրանից ցած, սեպածածկ եռանկյունիների զագաթին՝ ուելիեֆ կոճակներով խեցու բեկորը (աղ. XVI; 16, ՀՊՊԹ, № 2625/18): Այն սիրված զարդամոտիվ է մ. թ. ա. XIII—IX դդ. թվագրվող հուշարձանների խեցեղենի համար: Սեպածածկ կամ բջջածածկ եռանկյունիներ՝ եզերված ուելիեֆ կոճակներով, զարդարում են Կամոյում հայտնաբերված սեղանաձև կանթերով ազաթափայլ զրնդաձև կճուճների իրանը (ՀՊՊԹ, № 115/96, 254,

259), Կիրովականի 1966 թ. «Դիմաց-թաղում» պեղված № 1 դամբարանի բարձրարվեստ խեցեղենը (ԿԳԹ, № 441/19), Գոլովինոյի № 6 դամբարանի կճուճը, էլաոի № 7 (նկ. 130), № 40 դամբարաններում հայտնաբերվածները (աղ. XVII; 4), Մեծամորի և Դվինի բարձրորակ խեցեղենը<sup>25</sup>:

էլաոի վերոհիշյալ շերտում հայտնաբերված մոխրագույն կավամանի բեկորներից մեկը կրում է փորելու եղանակով կատարված զույգ համակենտրոն շրջաններ (աղ. XVI; 15, ՀՊՊԹ, № 2625/69): Այս զարդամոտիվը նույնպես սիրված է մ. թ. ա. XIII—VIII դդ. մշակույթի խեցեղենի համար: Նման զարդանախշեր ունեն Ռեդկին-լագերի, Կամոյի (ՀՊՊԹ, № 115/263), Ասողաձորի (ՀՊՊԹ, № 1908/109), Կարմիր-բլուրի դամբարաններից հայտնաբերված կճուճները<sup>26</sup>: Բացի խեցեղենից, փոստրակում գտնվեց նաև բրոնզե գինդ (աղ. XX; 2), որն իր բազմաթիվ զուգահեռներն ունի համաժամանակյա հուշարձաններում:



Նկ. 118. Հարդարուն կարասի բեկոր ամրոցի Մ<sub>3</sub> փոստրակից:


Ամրոցում «Կարոյի կալ» տեղամասում է հայտնաբերվել հատիկաշար եռանկյունիներով զարդարված, մեծ, ազաթափայլ կճուճի բեկորը (նկ. 119, ՀՊՊԹ, № 127/454): Ստորև կտեսնենք, որ հասկերն ու հատիկները մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի ոչ միայն խեցեղենի, այլև պաշտամունքային իրերի, պերճանքի առարկաների ամենասիրված զարդամոտիվներն են:

Այսպիսով, քաղաքի տարածքում հայտնաբերված և ամրոցի այդ փոքրածավալ պեղումներով

<sup>25</sup> Ս. Մևրոպյան, Ուշ բրոնզեդարյան դամբարաններ Կիրովականի «Դիմաց» թաղամասում, ՊՀԲ, 1971, էջ 281—285, նկ. 3: «Կատալոգ Դիլիջանի...», էջ 23, աղ. 11; 7: «Մեծամոր», էջ 39, նկ. 49, էջ 43, նկ. 60:

<sup>26</sup> В. Вурубов, Предметы древности в хранилище «Общества любителей Кавказской Археологии», вып. I, Тифлис, 1877, табл. XII; 1. «Կատալոգ Երևան բազալի պատմության թանգարանի հնագիտական իրերի», III, կազմեց՝ Ս. Սասյանը, Երևան, 1972, էջ 161, աղ. XXIX; 9:

ձեռք բերված նյութերով ապացուցվում է կյանքի հարատևությունը Դարանիում ընդհուպ մինչև ուրարտացիների մուտքը, Արգիշտի I-ի կողմից նրա նվաճումը:



Նկ. 119. Հատիկազարդ կավամանի բեկոր Դարանի ամրոցից:

Սակայն վաղ երկաթի դարաշրջանի նյութական մշակույթի և սոցիալական հարաբերությունների վերաբերյալ ավելի բան արժեքավոր տվյալներ ենք քաղում դամբարանների ուսումնասիրությունից:


էլաոի դամբարանադաշտում հայտնաբերված խեցեղենի մեծ մասը, որ կենդանացվի ստորև, հիմնականում թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակի ամենավերջով և հատկապես I հազարամյակի սկզբով. օրինակ՝ մ. թ. ա. XI—IX դդ. կարող են թվագրվել մի խումբ երկարավիղ կճուճներ, որոնց մի մասը վրի հիմքում և իրանի երկկոնիկ մասում ունի խորաքանդակ հորիզոնական գոտի (ՀՊՊԹ, № 1813/12), կամ՝ ալիքաձև և բազմաշար ուղղաճիճ գոտիներ (աղ. XVII; 3, ՀՊՊԹ, № 1805/20, 44, 46, № 1813/18, 19, 20, 28, № 1694, 1840): Այս կճուճներն իրենց զուգահեռներն ունեն Կարմիր-բլուրից հարավ գտնվող դամբարանադաշտի խեցեղենում, Դիլիջանում՝ Բ. Բ. Պիտրովսկու պեղած, մ. թ. ա. X—VIII դդ. թվագրվող դամբարաններում, էջմիածնում (ՀՊՊԹ, № 766/85), Արթիկի դամբարաններում (ՀՊՊԹ, № 2208/20, 161, № 2327/460, № 2346/515), Մարմարաշենի խեցեղենում (ՀՊՊԹ, № 1728),

Կարմիր-բլուրի (վՊԹ, № 28—58; 141, 159), Երևանի մաքրման կառույցների մոտ գտնվող մ. թ. ա. XII—IX դդ. թվագրվող խեցեղենում<sup>27</sup> և այլուր:

Նույն հուշարձաններում են էլաոի նաև զրնդաձև իրանով ազաթափայլ և հասարակ խոր թաղարների զուգահեռները, որոնց ուսերը զարդարված են խորաքանդակ բազմաշար ուղղաճիճ, գոտիներով, ալիքներով կամ հատիկների եղենաշարով, հասկաշարով (ՀՊՊԹ, № 1805/14, № 1623; 30, 50): Որոշ կավամանների նաև հատակն է պսակված հատիկաշարով (ՀՊՊԹ, № 1805/27):

Մեկ խումբ կճուճներ ուսերին կրում են հորիզոնական բազմաշար ալիքների զարդանրկարը (աղ. XVII; 5, ՀՊՊԹ, № 1805/29, № 1813/17, № 1693) և իրենց զուգահեռներն ունեն մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող հուշարձաններում՝ Մեծամորի № 6 և 9 դամբարաններում, քանդված դամբարաններից մեկում (ՀՊՊԹ, № 2233/24), Կարմիր-բլուրի 1967 թ. պեղված նյութերում և նրանից հարավ գտնվող դամբարանադաշտում (ՀՊՊԹ, № 2304/11):

Մ. թ. ա. X—IX դդ. կարող են թվագրվել տափակ, զարդարուն շուրթերով կավամանների մեկ այլ խումբ՝ ազաթափայլ ալիքազարդ շուրթով քրեղանները (աղ. XVII; 6, ՀՊՊԹ, № 1813/42), որոնցից մեկը զարդարուն է՝ սկսած շուրթից մինչև իրանի երկկոնիկ մասը, իսկ նրա հատակին փորագրված է բազմազալար պարույրը (աղ. XVII, 7, ՀՊՊԹ, № 1805/15):



Նկ. 120. Սկոտեղ էլաոի դամբարանադաշտից:

Ձեռով բավականաչափ շուրթինակ է էլաոի մոխրագույն սկոտեղը, տափակ շուրթին թևք, խորաքանդակ հատիկներ, որոնք հյուսվածքի տպավորություն են թողնում, իսկ երկկոնիկ մասից ցած, մինչև հատակն ունի փայլեցման եղանակով կատարված ծապավեններ (նկ. 120, ՀՊՊԹ, № 92): Տափակ, զարդարուն շուրթերով

<sup>27</sup> С. Есаян, Ереван, табл. 32; I, 5, 6. Նույնի՝ Կատալոգ Դիլիջանի..., էջ 15, աղ. XV; 1, «Կատալոգ Երևան բազալի պատմության թանգարանի հնագիտական իրերի», II, Երևան, 1967, էջ 26, աղ. VI; 1, 5, 6:

<sup>24</sup> А. Мартиросян, Город Тейшебаини, стр. 41—43, рис. 15а, в. Նույնի՝ Армения в эпоху..., стр. 176, рис. 72; 1.2 «Մեծամոր», էջ 44, նկ. 61, էջ 125, նկ. 122 С. Есаян, Ереван, стр. 37—39, табл. 24.

կավամաններ հատկանշական են Ռեդկին-լագերի խեցեղենին (ՀՊՊԹ, № 1746/21), Մեծամորին<sup>28</sup>, Աթարբեկյանին (ՀՊՊԹ, № 1925/10), Կամոյին (ՀՊՊԹ, № 115/249), նման սկոտեղներ հայտնաբերվել են Սանահինում (ՀՊՊԹ, № 92a), Սամթավրոյի մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող № 19 և 168 դամբարաններում<sup>29</sup>:

Ուշագրավ են 1954 թ. ավազահանքի շահագործման ժամանակ բացված դամբարանից հայտնաբերված նյութերը՝ կապարից մանյակը, բրոնզից ասեղն ու ապարանջանը, սարդիոնից ուլունքներն ու տասներեք կավամանները (աղ. XX; 1, 3—5, 7, 8, աղ. XXI; 1, 2):

Ինչպես սև ագաթափայլ փոքրիկ թասիկը (ՀՊՊԹ, № 1937/6)՝ եռանկյունաձև կանթ-ելուտով, պրոֆիլացված վերին մասով խորը քրեղանը և կանելուրագարդ մեկ կանթանի կավամանը (աղ. XX; 1, ՀՊՊԹ, № 1937/5, 7), այնպես էլ հասարակ մրոտ, կանթի գագաթին երկու բշտիկներով, մեծ կոպիտ թաղարը (ՀՊՊԹ, № 1937/10) իրենց զուգահեռներն ունեն Արթիկի խեցեղենի III խմբում, Մեծամորի համաժամանակյա շերտում և № 1, 6 դամբարաններում, Կարմիր-բլուրի (ՀՊՊԹ, № 1705/54) և Կարմիր-բերդի դամբարաններում<sup>30</sup>: հուշարձաններ, որոնք թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ.:

Գլանաձև վզով, փոված շուրթերով կճուճներից մեկը կանելուրագարդ է (աղ. XX; 4, ՀՊՊԹ, № 1937/8): Այն իր զուգահեռներն ունի Մեծամորի բնակատեղիում, № 9 և 4 դամբարաններում, Կարմիր-բերդի № 29 դամբարանում, Կարմիր-բլուրի № 4—5 դամբարաններում, որտեղ հայտնաբերվել են նաև բրոզե մատանի, հերուն, ծարիրից կիսագնդաձև ճարմանդ և թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ.<sup>31</sup>:

Կճուճներից մյուս երկուսը կրում են զիզզագազարդ մետաղներ, մեկը գծիկներով, մյուսը կիտաշարով կատարված (աղ. XX; 3, 5, ՀՊՊԹ,

№ 1937/11, 12): Վերը տեսանք, որ նման զարդանկարով խեցեղենի բեկորներ գտնվել էին նաև ամրոցում (աղ. XIX; 8, 11) և որ նրանք նրևան են գալիս ուշ բրոնզի վաղ փուլերում, սակայն լայն տարածում են գտնում մ. թ. ա. XI—VIII դդ. թվագրվող հուշարձաններում՝ Կարմիր-բլուրի, Գվինի, Մեծամորի, Մուխաննաթ-թափայի (ՀՊՊԹ, № 1216/103, № 1439/413, 534) հրդեհված շերտերի խեցեղենում, Կարմիր-բերդի դամբարանային խեցեղենում<sup>32</sup>:

Վերոհիշյալ տիպի մի կճուճ էլ հայտնաբերվել է Սաղախլոյում, Ժ. Մորգանի կողմից, որի կախված եռանկյունիները, զիզզագնեռի փոխարեն, գծիկների ուղղահայաց շարքերով են ծածկված<sup>33</sup>:

Սակայն նմանությունները վերոհիշյալ հուշարձանների հետ միայն խեցեղենով չի սահմանափակվում: Դամբարանում հայտնաբերված սարդիոնից եռանիստ, գլանաձև, գնդաձև և կոտորած-ուլունքներն (աղ. XXI; 2, ՀՊՊԹ, № 1937/4) ու բրոնզե ասեղը (աղ. XX; 8, ՀՊՊԹ, № 1937/3) իրենց բաղմամբով զուգահեռներն ունեն համաժամանակյա հուշարձաններում: Ատամնավոր ապարանջանի (աղ. XXI; 1, ՀՊՊԹ, № 1937/1) զուգահեռները հայտնաբերվել են Մեծամորի № 6, Կարմիր-բլուրի № 3 և Կարմիր-բերդի վերոհիշյալ դամբարաններում, նրա տարատեսակները լայն տարածում ունեն մ. թ. ա. I հազարամյակի հուշարձաններում<sup>34</sup>, մեծ քանակությամբ հայտնաբերվել են Ա. Ա. Իվանովսկու պեղումների ժամանակ<sup>35</sup>, հայտնի են Կիրովաբադ-խանլարյան հուշարձանների խմբում<sup>36</sup>, Մինգեչաուրում<sup>37</sup>:

<sup>32</sup> А. Мартиросян, Армения в эпоху..., стр. 176, рис. 72; 1, 2. «Մեծամոր», էջ 44, նկ. 61, էջ 125, նկ. 122: Ս. Եսայանի պեղած դամբարաններում С. Есаян, Ереван, стр. 37—38, табл. 24; 10. Վրաստանի պետական թանգարանում պահվող Կարմիր-բերդի խեցեղենը (ՎՊԹ, № 28, 58; 140, 168, 169):

<sup>33</sup> J. de Morgan, Mission scientifique Au Caucase, é hudes archéologiques historiques, I, Paris, 1889, էջ 146, նկ. 151:

<sup>34</sup> «Մեծամոր», էջ 174, նկ. 167, А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 66, նկ. 29b, С. Есаян, նշվ. աշխ., աղ. 26. Նույնի՝ Հայաստանի պետական թանգարանի բրոնզե ապարանջանները, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 2, 1964, էջ 87—88, աղ. 3:

<sup>35</sup> А. Ивановский, По Закавказью, МАК, вып. VI, М., 1911, табл. II.

<sup>36</sup> Н. Минкевич-Мустафаева, О датировке и хронологических этапах некоторых памятников Азербайджана эпохи поздней бронзы и раннего железа, МКА, IV, Баку, 1962, стр. 126.

<sup>37</sup> Г. Асламов, Р. Ваидов, Г. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959, табл. XX; 16.

Դամբարանում գտնված կապարի կլոր ձողից պատրաստված մանյակը (աղ. XX; 7, ՀՊՊԹ, № 1937/2) նման է № 7 դամբարանում հայտնաբերվածներին. ստորև կտեսնենք, որ նրանք նույնպես բնորոշ են մ. թ. ա. I հազարամյակի սկզբի հուշարձաններին:

Այսպիսով, բերված զուգահեռները հնարավորություն են տալիս էլաոի վերոհիշյալ դամբարանը մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրելու: Վերոհիշյալ նյութերից մի փոքր ավելի երիտասարդ է մեկկանթանի երկկոնիկ փարջը (աղ. XXI; 4, ՀՊՊԹ, № 2261/14), որն իր ձևով նմանվում է մ. թ. ա. VIII—VII դդ. թվագրվող հուշարձաններում հայտնաբերվածներին: Նման փարջեր հայտնաբերվել են Ղաչաղանում (ՀՊՊԹ, № 1892/14), իսկ զարդարուն տեսակները՝ Գոլովինոյում<sup>38</sup>, Դիլիջանում<sup>39</sup>:

էլաոի դամբարանադաշտում հայտնաբերվել են ուսումնասիրվող ժամանակաշրջանի նաև առանձին մետաղական իրեր: Վաղ երկաթի դարաշրջանով կարող են թվագրվել նաև խողովակաձև անջատիչը և թռչնաձև կախիկ-զանգակը: Անջատիչը կենտրոնական մասում, խողովակի երկու կողմերում, շրջանաձև տափակ ելուստ-ականջիկներ ունի, որոնցից մեկը պարուրագարդ է (նկ. 121, ՀՊՊԹ, № 1702): Նման անջատիչ-զարդախողովակներ, որոնք հավանաբար ձիասարքին են ծառայել, մեծ մասամբ բնորոշ են մ. թ. ա. XI—IX դդ. հուշարձաններին, հայտնաբերվել են Քումանյանում՝ Քարինջ-Մարց խճուղու շինարարության ժամանակ (ՀՊՊԹ, № 1710), Կարմիր-բերդում (ՎՊԹ, № 28—58 : 92), Կիրովականի «Դիմաց-թաղում» (ԿՆԹ, № 441): Կավազույն օրինակները գտնվել են Մեծամորի № 34 դամբարանում (ՄԹ, № 6/97)<sup>40</sup>, Դիլիջանի Կամոյի փողոցի դամբարանում, լայնաժապավեն, ճարմանդագարդ ապարանջանի հետ<sup>41</sup>, որն իր զուգահեռներով, ինչպես կտեսնենք, թվագրվում է մ. թ. ա. XII—XI դդ.: Նրանք բնորոշ են նաև Խանլարի № 1 դամբարանաբլուրին<sup>42</sup>, հայտնաբերվել են նաև Արցախի՝ Վարանդայի աջ ափին Կարա-բուլաղ գյուղի մոտ պեղված № 87 դամբարանում<sup>43</sup>,

<sup>38</sup> А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, стр. 66, табл. XI; 3, 4.

<sup>39</sup> «Կատալոգ Դիլիջանի...», էջ 71—72, աղ. XXXIX; 2, 3, աղ. LXI; 5, 6, Աղ. XLI; 5, 6:

<sup>40</sup> Պեղումները՝ հեղինակի, նյութերը հրատարակված չեն:


<sup>41</sup> «Կատալոգ Դիլիջանի...», աղ. XXVII; 3, 7:

<sup>42</sup> Я. Гуммель, Погребальный курган (№ 1) около Еленендорфа, Баку, 1931, рис. 42, 43.

<sup>43</sup> А. Ивановский, նշվ. աշխ., աղ. IX; 6:

ապա Մինգեչաուրում<sup>44</sup> և Արևելյան Վրաստանում<sup>45</sup>:

էլաոի թռչնաձև կախիկն ունի ծակոտկեն իրան, փոքրիկ պոշ, երկար վիզ, կախ կտուց և ռելիեֆ, փոքրիկ աչքեր (աղ. XVIII; 9, ՀՊՊԹ, № 1699): Հայտնի է, որ թռչունը արևի պաշտամունքն է խորհրդանշել: Նման կախիկներ-զանգակներն իրենց տարատեսակներով լայն տարածում ունեն ուշ բրոնզի և հատկապես՝ վաղ երկաթի դարաշրջանի հուշարձաններում:



Նկ. 121. Զարդախողովակ էլաոի դամբարանադաշտից:

Նույն ժամանակաշրջանով կարող են թվագրվել դամբարանադաշտում հայտնաբերված ապարանջանները: Դրանք միացող (ՀՊՊԹ, № 1805/47), տափակեցրած և ծավլած ծայրերով (ՀՊՊԹ, № 1805/54, 147) ապարանջաններ են, որոնց նմանները հայտնաբերվել են էլաոի նաև № 38 դամբարանում, որն ինչպես ստորև կտեսնենք, թվագրվում է մ. թ. ա. XI դարով:

Ուշագրավ է պարուրաձև հնգագալար ապարանջանը (աղ. XVIII; 10, ՀՊՊԹ, № 1813/5), որն առանց ուղեկցող նյութերի և առանց մետաղական անալիզի տվյալների, դժվար է թվագրել, քանի որ նմանատիպ ապարանջաններն, ինչպես I գլխում տեսանք, սկիզբ են առնում դեռևս մ. թ. ա. III հազարամյակում և հարատևում մինչև մ. թ. ա. I հազարամյակի սկիզբը: Նրանց հարատևման լավագույն ապացույցներից են Զարխեջում<sup>46</sup> և Կարմիր-բլուրի նախաուրարտական դամբարանադաշտում հայտնաբերվածները (ՀՊՊԹ, № 1806/4, 5):

Սակայն բացի ավազահանքի տարածքի դամբարանադաշտից, էլաոում վաղ երկաթի դարաշրջանի մեկ այլ դամբարանադաշտ էլ տես-

<sup>44</sup> Г. Асламов, Р. Ваидов, Г. Ионе, Древний Мингечаур, табл. XXI; 30.

<sup>45</sup> К. Ницхелаури, նշվ. աշխ., աղ. LXI; 1.

<sup>46</sup> А. Мартиросян, Армения в эпоху..., стр. 201.

դավորված է եղել Արգիշտի I-ի արձանագրությանը կրող բլուրի գագաթի տափարակ հարթության հյուսիսային եզրում, որտեղ մի քանի տարի առաջ, այդ քարքարոտ հարթակում դեռևս պահպանված էին կրկնաշրջան կրովի սյուներ:

Այդ կրովի սյուներից մի քանիսը պեղվել է մանրամասն նկարագրվել են Ե. Լալայանի կողմից<sup>47</sup>: Նրանց մեծ մասը թալանված է եղել, սակայն հրեման հայտնաբերվել են վանակատի բեկոր, մարդկանց և կենդանիների ցաք ու ցրիվ ոսկորներ, կոտրած կավամաններ, որոնցից մեկի վրա, ըստ Ե. Լալայանի, «եղունգով արված օրնամենտ» է եղել: Այդ կրովի սյուներից մեկում (№ 5) կոտրած կավամանի հետ գտնվել է բրոնզե նիզակի ծայր (աղ. XVIII; 7, № 127/424)<sup>48</sup>: Այն ունի գլանաձև կոթակ՝ ճեղքով և տերևաձև ծայր, որն օժտված է կենտրոնական լայն մեջքով: Նիզակի ծայրը հրատարակված է և թվագրված մ. թ. ա. II և I հազարամյակների սահմաններով<sup>49</sup>: Այն իր անմիջական զուգահեռներն ունի Պապանինոյի ջրամբարի կառուցման տեղամասում հայտնաբերված նյութերում, Զարխեշում, որոնք իրավացիորեն Հ. Մարտիրոսյանի կողմից թվագրվում են Գոլովինոյի «գինվորի դամբարանի» և Ունակի ժամանակով, այսինքն մ. թ. ա. XII դ. և XI դ.<sup>50</sup>: Էլաոի նիզակի ծայրը ժամանակակից է վերջիններս:

Մեկ այլ նիզակի ծայր կենտրոնական, կոթարացող ուղիղ մեջքով, որը գլանաձև կոթակի շարունակությունն է կազմում, թերի է և հայտնաբերվել է ավազահանքի դամբարանադաշտում (աղ. XX; 6, ՀՊՊԹ, № 2624/46): Նման նիզակի ծայրեր բավական լայն տարածում ունեն մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի հուշարձաններում:

Բացի վերոհիշյալ պատահական հայտնագործություններից, էլաոի ավազահանքի դամբարանադաշտի II տեղամասում, 1961, 1969 և 1973 թթ. պեղվել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի ինը դամբարան, որոնցից չորսը՝ (№ 12, 13, 19 և 40) սալարկղներ են, հինգը՝ (№ 7, 21, 23, 27, 38) հիմնահողային դամբարաններ:

Սալարկղները հայտնաբերվեցին ավազահանքի հարավահայաց լանջի ժամանակակից

բնակելի տների մոտակայքում, որոնց մի մասն այժմ ավերակների է վերածվել: Պեղումների ընթացքում պարզվեց, որ դամբարանների մեծամասնությունը ոչնչացվել է այդ շենքերի հիմքերը փորելիս: Ամբողջական էին միայն արևելքից արևմուտք ուղղված՝ 1,3—1,5 մ երկարություն և 1,1—1,2 մ լայնություն ունեցող № 19 և 40 սալարկղները: Այդ անհատական թաղումները ծածկված էին (մոտ 1,8—2,0 մ երկարություն և 1,2—1,4 մ լայնություն ունեցող) մեկական սալով: Դամբարանների երկար կողերը կառուցված էին երկուական, իսկ կարճ կողերը՝ մեկ սալերով: Ուշագրավն այն է, որ ննջեցյալին պակասեցրել են դամբարանի ոչ թե երկայնքով մեկ, ինչպես սովորաբար ընդունված է, այլ՝ լայնությամբ, աջ կողքի, կծկված վիճակում, գանգը հյուսիսային կողմում, դեմքով՝ արևմուտք: Նման ձևի մեկ թաղում էլ հեղինակի կողմից պեղվել է Մեծամորում<sup>51</sup>:

Էլաոի սալարկղային թաղումներն աղբատիկ են: Նրանցում հայտնաբերվեցին մի քանի ուլունքներ և երկուսից-երեք կավամաններ:

**Դամբարան № 19-ում**, կմախքի ողերի մոտ, մեջքի մասում դրված էին պրոֆիլացված շուրթերով երկու գորշագույն և բաց դարչնագույն թասեր, որոնցից մեկն ուսերին ունի ելուստ կանթ՝ անցքով (աղ. XVII; 14, 15, ՀՊՊԹ, № 2246/66, 67), իսկ ձեռքերի մոտ՝ գտնվեց լայնաբերան կավաման, ուռուցիկ ուսերին հատիկների զույգ գոտիներ (աղ. XVII; 13, ՀՊՊԹ, № 2246/65): Այս կավամանների զուգահեռները Կարմիր-բլուրի (ՀՊՊԹ, № 1705/57), Երևանի, Կարմիր-բլուրի, նաև Մեծամորի մ. թ. ա. VIII թվագրվող դամբարանային խեցեղենում է<sup>52</sup>:

**Դամբարան № 40-ում** կմախքի մեջքի ողերի մոտ ընդամենը երկու հասարակ կավամաններ էին դրված, մեկը զարդարված եղևնաշար հատիկներով (աղ. XVII; 8), մյուսի ուսերի հորիզոնական ուղղագիծ և ալիքաձև գոտիներն ընդմիջվում են զույգ-կիսագնդաձև ելուստների երեք խմբերով (աղ. XVII; 4, ՀՊՊԹ, № 2625/106, 107): Ստորև կտեսնենք, որ վերոհիշյալ ելուստները վաղ երկաթի խեցեղենի սիրված զարդամոտիվներից են:

Նույն հուշարձաններում են նաև № 12 և 13 դամբարաններում հայտնաբերված խեցեղենի

<sup>51</sup> Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 175:

<sup>52</sup> «Կատալոգ Երևան քաղաքի», II, աղ. VII; 6. «Կատալոգ Երևան քաղաքի», III, աղ. XII; 7, XIV; 3, «Մեծամոր», աղ. XIV—XV:

չուգահեռները: Օրինակ, № 12 դամբարանի ուղղագիծ և ալիքաձև գոտիներով զարդարված, սև ազաթափայլ կճուճի և անփայլ, լայնաբերան կրճուճի (աղ. XVII; 17, 18, ՀՊՊԹ, № 2246/43, 44) անմիջական զուգահեռները հայտնաբերվել են Երևանի, Կարմիր-բլուրի, Կարմիր-բլուրի և Մեծամորի նախաուրարտական դամբարանային խեցեղենում<sup>53</sup>:

**Դամբարան № 18-ում** սարդիոնից երկկոնիկ և բազմանիստ ուլունքների հետ (աղ. XVII; 12) հայտնաբերված կանելուրազարդ և հորիզոնական գոտիներով սև, ազաթափայլ և գորշագույն կավամանների (աղ. XVII; 9—11, ՀՊՊԹ, № 2246/46—48) զուգահեռները դարձյալ վերոհիշյալ հուշարձաններում են<sup>54</sup>:

Այսպիսով, պեղված սալարկղները հիմնականում կարող են թվագրվել մ. թ. ա. IX—VIII դարերով:

Ավազահանքի կտրվածքի հարավային եզրագծում պեղված հիմնահողային դամբարանները, 7, 21, 23, 27, 38), որոնք վնասվել են հանքի շահագործման ընթացքում (բացի № 38-ից), ժամանակով մի փոքր վաղ են վերոհիշյալ սալարկղներից:

Նյութերով բավական հետաքրքրական է № 38 դամբարանը (նկ. 122): Մոտ 1,85 մ երկարություն և 0,9 մ լայնություն ունեցող տեղ սալաքարը ծածկում էր դամբարանի երկարությունը: Նրա տակ, արևմտյան, հյուսիս-արևմտյան անկյունում մանր քարեր էին դրել՝ սալաքարը դամբարանի վրա հարմար նստեցնելու նպատակով:

Քառանկյունաձև հիմնահողային դամբարանում, որն ուներ 1,7 մ երկարություն և 0,7 մ լայնություն, թաղումը բացվեց 0,9 մ խորության մեջ: Սա անհատական մի թաղում էր, կմախքը ընկած էր ձախ կողքի, գանգը դամբարանի արևելյան կողմում, դեմքով դեպի հարավ: Կմախքի ոսկորները մասամբ խախտված էին: Ստորին ծնոտը և ուսերի ոսկորները գտնվեցին գանգից վեր, կողոսկրների մի մասը դամբարանի հյուսիսային կողմում էր, վրան՝ բրոնզից մի ապարանջան: Ձախ ձեռքի ոսկորները երկու ապարանջաններով և բրոնզի նուրբ լարից պատրաստված մատանիով, դամբարանի ձախ մասում

<sup>53</sup> «Կատալոգ Երևան քաղաքի», II, աղ. VII, 3, С. Есаян, Ереван, стр. 37—38, табл. 24, А. Мартirosян, Город Тейшебанни, стр. 62, рис. 286, Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 175, աղ. XXXVII; 5:

<sup>54</sup> «Կատալոգ Երևան քաղաքի», II, էջ 33, աղ. XI; 4, 6, աղ. XIII; 17, 18:

Ինչ, իսկ նրանցից ոչ հետո, դեմքի դիմաց, դրված էին լայնաժապավեն հասկազարդ ապարանջան ու երկու այլ ապարանջաններ: Կրծոսկորների մոտ հայտնաբերվեցին՝ զույգ, կիսագնդաձև կոճակներ՝ բրոնզից, կոնքոսկորների մոտ՝ զույգ ապարանջաններ: Ոտքերի մոտ, դամբարանի արևմտյան եզրում դրված էին երեք կավաման, որոնցից մեկը՝ երկարավիզ կճուճը, գտնվեց շրջած վիճակում: Լայնաբերան մեծ քրեղանը լի էր մանր եղջյուրավոր կենդանու կողոսկորներով: Դամբարանի տարածքում, տարբեր տեղերից գտնվեցին բրոնզից տանձաձև կախիկներ, քառակող մատանի, մածուկից և սարդիոնից ուլունքներ: Այստեղ գերիշխում էր իրերի և ոսկորների ցաք ու ցրիվ վիճակը:

Դամբարանում հայտնաբերված նյութերը հիմնականում պերճանքի առարկաներ էին: Մածուկից պատրաստված գնդաձև, գլանաձև, շրջանաձև տափակ ուլունքները սև և սպիտակ են, իսկ օղակաձև ուլունքները՝ հիմնականում երկնագույն: Այս շարքում տեղ են գտել նաև սարդիոնից երկու ուլունք (նկ. 123, ՀՊՊԹ, № 2624/52):

Մածուկից վերոհիշյալ ուլունքները բազմաթիվ զուգահեռներ ունեն ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի մշակույթում: Մեծ քանակությամբ նման ուլունքներ հայտնաբերվել են Արթիկի մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող դամբարաններում: Օրինակ՝ պաստայից մեկ շարան սև և սպիտակ գլանաձև ուլունքներ հայտնաբերվել են 1962 թ. պեղված № 135 դամբարանում (ՀՊՊԹ, № 2255/21), լայնաժապավեն միածույլ ապարանջանների հետ միասին (ՀՊՊԹ, № 2255/15): Նման ուլունքներ բնորոշ են դամբարանային և այլ համալիրների (ՀՊՊԹ, № 2173/228—32, 313—317, № 2255/4, 134): Գլանաձև գունավոր ուլունքներ հայտնաբերվել են նաև Կամոյում (ՀՊՊԹ, № 20/162), մեծ քանակությամբ Դվինի նախաուրարտական շերտում (ՀՊՊԹ, № 2292/267—276, 315—320)<sup>55</sup>, Մեծամորի մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի դամբարաններում և այլն:

Էլաոի շրջանաձև ուլունքների զուգահեռներին կարելի է հանդիպել նույնպես Արթիկի նյութերում (ՀՊՊԹ, № 2173/251, 252, 350—351) և ընդհանրապես վաղ երկաթի ժամանակաշրջանի համարյա բոլոր հուշարձաններում: Օղակաձև ուլունքների մեկ շարան հայտնաբերվել է Արթիկի № 289 դամբարանում (ՀՊՊԹ, № 2327/166ա), լայնաժապավեն զարդարուն ապարանջանի հետ միասին:

<sup>55</sup> Նյութերը հրատարակված չեն:


<sup>47</sup> Ե. Լալայան, Դամբարանների պեղումները..., էջ 53—58:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>49</sup> С. Есаян, Оружие и военное дело..., стр. 21.

<sup>50</sup> А. Мартirosян, Армения в эпоху..., стр. 122, 114.

սին: Այդ ուլունքները էլաոի դամբարանի ուլունքների նման հիմնականում երկնագույն մածուկից են պատրաստված:



Նկ. 122. Դամբարան № 38:

Այսպիսով, Արթիկում հայտնաբերված վերոհիշյալ ուլունքների մեծ մասը ուղեկցվում են լայնաթափափ են զարդարուն ապարանջաններով և հիմնականում թվագրվում մ. թ. ա. XII—XI դդ.<sup>56</sup>:

էլաոի № 38 դամբարանում հայտնաբերված Լրկկոնիկ իրանով կախիկը, կիսագնդաձև կամ վահանաձև կոճակները և մատանիները (ՀՊՊԹ, № 2624, աղ. XXII; 8, 3, 4, 6) նույնպես լայն տա-

րածում ունեն մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I-ի սկզբով թվագրվող նյութերի ժողովածուներում, Դիլիջանի Կամոյի փողոցի<sup>57</sup>, Արթիկի դամ-

բարաններում (ՀՊՊԹ, № 2327/5, 285, 343, 362, 467/153, 542, 427):

Չափով և ձևով էլաոի կոճակների նմանները հայտնաբերվել են Կամոյում (ՎՊԹ, № 20—05, II—4), Լճաշենի ուշ բրոնզի վաղ փուլերի դամբարանությունում (ՀՊՊԹ, № 2009/354, 356), Շամբոր գետի հովտի և Կարմիր-բերդի<sup>58</sup> դամբարաններում:

<sup>57</sup> «Կատալոգ Դիլիջանի...», էջ 55—58, աղ. XXVII; 6, XXVIII; 5:

<sup>58</sup> Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ..., էջ 185, Նկ. 174, Ա. Իվանովսկի, Նշվ. աշխ., աղ. VIII; 12, 13:

<sup>56</sup> Կ. Խաչատրյան, Древняя культура Ширака, стр. 210.

Սակայն էլաոի դամբարանի նյութերի շարքում առաջնակարգ տեղ են զբաղում ապարանջանները, որոնք բոլորովին և կատարման եղանակի ստորաբաժանվում են շորս տիպի:

I. Ապարանջաններ՝ բրոնզի կլոր ձողից (մոտ 6,5 սմ տրամագծով), ծայրերը ձեռնածակ և դեպի ներս օղակաձև ծալված (Նկ. 124; 1, 2, ՀՊՊԹ, № 2624/40, 41): Նման ապարանջաններ, միայն դեպի դուրս ծալված ծայրերով, հայտնաբերվել են Կամոյում (ՀՊՊԹ, № 120/3), Զոլաբարում (ՀՊՊԹ, № 1998/23, 24), իսկ էլաոի նման դեպի ներս ծալված ծայրերով՝ Մինգիշաուրի մ. թ. ա. II հազարամյակի վերջի դամբարաններում<sup>59</sup>:

II. Ներսից տափակ, դրսից կլոր, իրար վրա եկած ծայրերով (մոտ 5—5,5 սմ տրամագծով) ապարանջաններ: Նրանց ծայրերն ու միջին մասը զարդարված են եղևնաշարով (Նկ. 124; 3, ՀՊՊԹ, № 2624/39): Այս ապարանջանների գուգահեռներն Արթիկում են (ՀՊՊԹ, № 2327/339, 396), Երեվանի Զեյթուն թաղամասում, կահույքի ֆաբրիկայի մոտ գտնվող դամբարանադաշտում<sup>60</sup>:

III. Կլոր իրանով, կտրած ծայրերով ապարանջաններ, երկուսի ծայրերը միացած, երկուսին՝ անջատ (աղ. XXII; 1, 2, 7, 9, ՀՊՊԹ, № 2624/35—38): Բոլորը զարդարուն են և ունեն 6—6,5 սմ տրամագիծ: Այս տիպի ապարանջանները տարածման լայն շառավիղ ունեն, հայտնաբերվել են Արթիկի մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող դամբարաններում (ՀՊՊԹ, № 2327/146)<sup>61</sup>, մեծ քանակությամբ Կամոյում (ՀՊՊԹ, № 20/173, 177, 178, 236), էջմիածնում (ՀՊՊԹ, № 702/7, № 705/8), Ճամբարակում (ՀՊՊԹ, № 2001/11), Նորատուսի № 11 դամբարանում, որ թվագրվում է մ. թ. ա. X դ. վերջով և IX դ. սկզբով<sup>62</sup>, Զոլաբարում (ՀՊՊԹ, № 1998/18), Բջնիում (ՀՊՊԹ, № 319/6), Խաչրուլաղի (Դաշքեսանի շրջան) մ. թ. ա. II հազ. վ. և I հազ. սկ. թվագրվող քարարկրղում<sup>63</sup>, մեծ քանակությամբ Մինգիշաուրում<sup>64</sup>:

<sup>59</sup> Գ. Асламов, Р. Ваидов, Г. Ноне, Նշվ. աշխ., աղ. XX; 20:

<sup>60</sup> Ս. Ամիրջան, Հնագիտական նոր հայտնաբերում Երեվանի տերիտորիայում, ՊՐԶ, № 3, Երևան, 1969, էջ 268—275, աղ. II; 9:


<sup>61</sup> Կ. Խաչատրյան, Նշվ. աշխ., էջ 209, Նկ. 122:

<sup>62</sup> А. Мартыросян, Армения в эпоху... стр. 196, табл. XX; 14—17.

<sup>63</sup> Գ. Кесаманлы, О Хацбулагских каменных ящиках, МКА, т. VI, Баку, 1965, стр. 41—43, табл. 43; 1:

<sup>64</sup> Գ. Асламов, В. Ваидов, Г. Ноне, Նշվ. աշխ., աղ. XX; 8, 9, 12, 17, 19, 21:

IV. Ապարանջանը բարձր արվեստով է կատարված (աղ. XXII; 5, ՀՊՊԹ, № 2624/34): Բրոնզի մոտ 2 սմ լայնությամբ ունեցող ժայռավենից պատրաստված, միաձույլ այս ապարանջանի մակերևույթը ամբողջությամբ զարդարուն է: Այլ ունեցող մատանու նման ապարանջանի կենտրոնը պսակված է համակենտրոն շրջաններով զարդարված վահանաձև ճարմանդով, որի գագաթն ափարտվում է կիսագնդիկով, իսկ եզրերը պսակված են մանր գնդիկների շարանով: Վահանաձև




Նկ. 123. Ուլունքների մածուկից և սարգիտից (№ 38 դամբարանից):

ճարմանդից սկիզբ առնող և նրա մոտ ավարտվող եռաշար, հյուսածո, ցորենի հասկ հիշեցնող զարդագոտիները զբաղեցնում են ապարանջանի ամբողջ մակերեսը: Ապարանջանի բոլոր զարդերը վերադիր են: Ավելի ուշիկի և արտահայտված ապարանջանի վերին և ներքին եզրերը, որոնք կենտրոնական վահանի շորս կողմերում ավարտվում են բարձրադիր կիսագնդերով: Վահանաձև ճարմանդի մասում ապարանջանը ներսից փոս է բնկած, հավանաբար այդ զարդակոճակը ազուցել են ապարանջանին և զողել նրա հետ: Ներսի կողմից փոս բնկած մասի եզրերն ավելի հաստացված են, բացի այդ ապարանջանի երկու եզրերին ներսի կողմից բրոնզե լար են զողել՝ ամրություն տալու նպատակով: Զողման հետքերն անկառու են նաև ապարանջանի արտաքին մակերեսին՝ ուշիկի ճարմանդի եզրերին, նրա վերին և ներքին անկյուններում կիսագնդաձև ելուստների մոտ և հասկաձև հյուսվածքների եզրերին:

Ինչպես են պատրաստվել հասկազարդերը: Հասկի յուրաքանչյուր թևը բրոնզի հաստ լար է, լավ ոլորած: Երկու նման ոլորած լարեր զրել են



կողք-կողքի, ամրացրել ու ծեծել մուրճիկով, և այդ ծեծելու եղանակով ստացվել է հասկազարդը: Ապարանջանի մակերեսը ունի բնական գոտիներով բաժանել են երեք մասի և յուրաքանչյուր մասում



Նկ. 124. Ապարանջաններ № 38 դամբարանից:

տեղադրել ոլորված երկուական բրոնզե լարեր և այդ լարերը ծեծելով ստացել են հասկազարդը: Ապարանջանի մեջտեղի գոտին ունի բնական արվել, այդ իսկ պատճառով էլ կենտրոնական հասկազարդը բարձրագույն է:

Այս ապարանջանի զուգահեռները քիչ չեն և

նրանք երևան են գալիս ոչ պակաս ուշագրավ իրերի միջավայրում:

Հայկական լեռնաշխարհում լայնածայավեն երկու տիպի ապարանջաններ են հայտնաբերվել. ա) ճարմանդավոր միաձույլ զարդարուն ապարանջաններ (հար և նման էլաոի ապարանջանին), որոնցից հայտնաբերվել են՝ Երևանի Զեյթունի թաղամասում (ՀՊՊԹ, № 2374/7), Գիլիջանի Կամոյի փողոցի քարակղզում, Այրումում (ՀՊՊԹ, № 2225/44), Արթիկի մի շարք դամբարաններում՝ № 135-ում (երկու հատ, ՀՊՊԹ, № 2255/15) և № 287-ում (ՀՊՊԹ, № 2327/145)<sup>65</sup>:

բ) Ապարանջաններ, որոնք կենտրոնում ճարմանդ շունեն և նրանց վերջավորություններն ավարտվում են օղակով կամ կոճականման ելուստով: Նման ապարանջաններից մի քանիսը հայտնաբերվել են Արթիկի դամբարաններում (ՀՊՊԹ, № 2327/3, 387, 537, 569)<sup>66</sup>, Երևանի Աբովյան փողոցում՝ հողային աշխատանքների ժամանակ (ՀՊՊԹ, № 527), Մեծամորի № 28 դամբարանում:

Ճարմանդավոր միաձույլ, զարդարուն վերոհիշյալ ապարանջանները կարծես թե մեկ ընդհանուր կաղապարում լինեն ձուլված, բոլորի տրամագիծը 6,5 սմ է, լայնությունը՝ 2 սմ: Չնայած բոլորն էլ հար և նման են էլաոի ապարանջանին, սակայն որոշ մանրամասներով տարբերվում են նրանից: Այս տիպի ապարանջանների միջին մասը հասկազարդ չէ, այլ ունի «վազող» պարույրի զարդագոտի: Բացի այդ, նրանց կենտրոնական ճարմանդն ավելի ցայտուն է արտահայտված, ցցուն և վերին ու ստորին մասերում շունեն էլաոի տիպի ունի կիսաշրջաններ, սակայն զարդաճարմանդի աչ և ձախ կողմերում ունեն ուղղահայաց շարքով երեքական փոքր գամեր, որոնք կենտրոնում հասկազարդների և «վազող» պարույրների վերջավորությունները ամրացնում են ապարանջանին:

Այս ապարանջանների զարդաճարմանդն, անշուշտ, առանձին է պատրաստվել և ապա զոդելու եղանակով ամրացվել ապարանջանին: Ներսի կողմից ճարմանդի գոգավոր մասը լցված է ինչոր նյութով, որը հավանաբար նրան կայունություն տալու նպատակով է արված: Այդ տեսակե-

<sup>65</sup> Ս. Ամիրջան, նշվ. աշխ., էջ 271, աղ. II; 12. «Կատալոգ Գիլիջանի...», էջ 55, աղ. XXI; 1, Ս. Սալյան, Հայաստանի պատմության թանգարանի բրոնզե ապարանջանները, էջ 86, աղ. 2; 11, Կ. Կարամյան, նշվ. աշխ., էջ 210, նկ. 123:

<sup>66</sup> Նույն տեղում:

տից ուշագրավ է Այրումում հայտնաբերված ապարանջանը (ՀՊՊԹ, № 2225/44): Զգացվում է, որ նախապես զարդարել են ապարանջանի ամբողջ մակերեսը, որից հետո ամրացրել են կոնաճե զարդաճարմանդը, այդ իսկ պատճառով վազող պարույրի մի կեսը մնացել է կենտրոնում ամրացվող զարդաճարմանդի տակ: Ի տարբերություն մյուս ապարանջանների, Այրումի ապարանջանը վերին և ներքին մասերում երկու կողմից ունի կիսագնդաձև ելուստ-գամեր, որոնք նման են էլաոի կիսագնդերին, սակայն ծավալով բավական զիջում են նրան:

Դամբարանային նյութերում հաճախակի են կոնաճե զարդակոճակները հար և նման ապարանջանների կենտրոնը զարդարող զարդաճարմանդներին: Օրինակ՝ նման մի զարդաճարմանդ գտնվել է Գիլիջանի Կամոյի փողոցի քարակղզում, միաձույլ, ճարմանդավոր ապարանջանի հետ<sup>67</sup>: Արթիկի զարդաճարմանդը էլաոի ապարանջանի ճարմանդի նման փեշերին ունի ունի կիսագնդերի շարան (ՀՊՊԹ, № 2773/106)<sup>68</sup>, իսկ № 310 դամբարանում հայտնաբերվածի եզրերը պսակված են հյուսածո զարդագոտիով (ՀՊՊԹ, № 2327/312): Կոնաճե զարդաճարմանդ՝ եզրերին գնդիկների շարան, հայտնաբերվել է նաև Երևանի Զեյթունի թաղամասում, դարձյալ զարդաճարմանդով ապարանջանի հետ<sup>69</sup>: Կոնաճե զարդաճարմանդ հայտնաբերվել է նաև Կարմիր-բերդում: Այն, ապարանջանների նման, իր վրա կրում է հասկազարդ կարգադրի (ՎՊԹ, № 28—58 : 15):

Լայնածայավեն միաձույլ ապարանջանների I խմբին են հարում պատահական հայտնաբերված երկու ապարանջան, որոնք, սակայն, զերծ են կենտրոնական կոնաճե զարդաճարմանդից: Դրանցից Ալավերդիում հայտնաբերվածը (ՀՊՊԹ, № 1435)<sup>70</sup> բավական մասսիվ է, միաձույլ, տրամագիծը նախորդների նման 6,5 սմ է, սակայն նրանցից մի փոքր հաստ է և լայն (13 սմ): Նախորդների նման եզրերը զարդարված են հասկազարդ գոտիներով, իսկ կենտրոնի «վազող» պարույրների շարքում տեղ են գրել երկու գորտի պատկերներ, որոնց միջև զետեղված է ուղղահայաց պատկերված ութաճև պարույրների նկարը: Կենտրոնական կոնաճե զարդաճարմանդի փո-

<sup>67</sup> «Կատալոգ Գիլիջանի...», XXVII; 4:

<sup>68</sup> Կ. Կարամյան, նշվ. աշխ., էջ 79, աղ. 6; 11:

<sup>69</sup> Ս. Ամիրջան, նշվ. աշխ., էջ 217, աղ. II; 5:

<sup>70</sup> Ս. Սալյան, Հայաստանի ապարանջանները, էջ 86, աղ. 2; 10:

խարեն այստեղ ներկայացված է պարույրի մետաղաձև կիսագնդիկ:

Երկրորդ ապարանջանը՝ հայտնաբերված Հանդում (Ղփչաղ, ՀՊՊԹ, № 1271), առաջին խմբի ապարանջանների նման եզրերին ունի հասկազարդ գոտի, իսկ միջին մասում՝ «վազող» պարույրների գոտի, սակայն վերջիններից տարբերվում է նրանով, որ կենտրոնում կոնաճե զարդաճարմանդի փոխարեն ունի ուղղահայաց պատկերված հասկազարդեր: Նախապես նրա երկու ծայրերը միացած չեն եղել և եզրվել են հասկազարդով: Ապա նրանց բրոնզե թիթեղով զոդել են և այդ հատվածում նույնպես հասկազարդ պատկերել: Այս ապարանջանը հայտնաբերվելուց հետո մակերեսը ծեծել են և համարյա բոլոր զարդապատկերները վնասել:

Էլաոի ապարանջանին հար և նման են նաև II խմբի ապարանջանները, որոնք, ինչպես նշվեց, ի տարբերություն ճարմանդավորների, օղակաձև վերջավորություններ ունեն:

Այս ապարանջանների մի մասը էլաոի նման միայն հասկազարդ են, օրինակ՝ Մեծամորում հայտնաբերվածը, Երևանի ապարանջանը (ՀՊՊԹ, № 527) և Արթիկի տասնհինգ ապարանջանները<sup>71</sup>:

Այսպիսով, շնայած մասնակի տարբերություններին, վերոհիշյալ լայնածայավեն զարդարուն ապարանջանները հար և նման են միմյանց և նրանց ուղեկցում են համանման նյութեր: Լայնածայավեն զարդարուն ապարանջաններով համարյա բոլոր դամբարաններին բնորոշ են բրոնզից վահանաձև կոճակներ, օձուկով քունքազարդեր, երկկոնիկ կախիկներ, մածուկից պատրաստված զանաճև, կոճակաձև, օղակի տիպի սև, սպիտակ և երկնագույն ուլունքներ:

Այսպիսով, վերոհիշյալ դամբարանային նյութերի հետ էլաոի № 38 դամբարանը աղերսվում է ոչ միայն ճարմանդավոր ապարանջանով: Ինչպես վերը տեսանք, էլաոի դամբարանի նյութերի անմիջական զուգահեռները կարելի է տեսնել Արթիկի II խմբի կատակոմբաներում, Գիլիջանի Կամոյի փողոցի քարակղզից հայտնաբերված նյութերում, որտեղ իրենց զուգահեռներն ունեն ոչ միայն ճարմանդավոր ապարանջանը, այլև երկրորդ խմբի զարդարուն ապարանջանները, երկկոնիկ կախիկները: Երևանի Զեյթունի թաղամասի դամբարանային նյութերի հետ այն դարձյալ աղերսվում է ճարմանդավոր ապարանջանով, ապարանջան-

<sup>71</sup> Կ. Կարամյան, նշվ. աշխ., էջ 210, նկ. 123:

ների երկրորդ խմբով, նաև խեցեղենով, որի մասին կիսովի ստորև:

Հնագետները մասսիվ, լայնածայրով, դար-դարուն ապարանջաններով դամբարանային կոմպլեքսները հիմնականում թվագրում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով:



Նկ. 125. Քրեղան № 38 դամբարանից:

Դիլիջանի կատալոգի հեղինակները Կամոյի փողոցի բարարկղի ժողովածուն թվագրում են մ. թ. ա. X—VIII դդ.<sup>72</sup>, Արթիկը պեղող հնագետը, կլենով այգ ապարանջաններին ուղեկցող նյութերից, այդ դամբարանային կոմպլեքսները թվագրում է մ. թ. ա. XII—IX դդ.<sup>73</sup>: Երևանի Զեյթուն թաղամասի դամբարանադաշտի որոշ նյութեր, լայնածայրով են ճարմանդազարդ ապարանջանի հետ, հրատարակողը թվագրում է մ. թ. ա. XII—XI դդ.<sup>74</sup>:

Էլաոի № 38 դամբարանում ընդամենը երեք կավաման է հայտնաբերվել: Լայնաբերան խորը բրեղանը (նկ. 125, ՀՊՊԹ, № 2624/32) և կարճ վզիկով, ուռուցիկ իրանով կավամանը, որոնք գլանաձև ծաված շուրթից ցած, ուսերին ունեն զիգզագ, ալիքաձև և նրանից ցած տարածվող բազմաշար հորիզոնական գոտիներ (նկ. 126, ՀՊՊԹ, № 2624/33): Այս կավամանների անմիջական զուգահեռները Մեծամորի № 32 դամբարանում են, Ակնալուն՝ 1931 թ. հայտնաբերված դամբարանային խեցեղենում (ՀՊՊԹ, № 767/1), Կիրովականի ժողովածուի բարարկղներից մեկում (ՀՊՊԹ, № 1236/75):

<sup>72</sup> «Կատալոգ Դիլիջանի...», էջ 49:

<sup>73</sup> Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 72:

<sup>74</sup> Ս. Ամիրջան, նշվ. աշխ., էջ 275:

Ավելի բան թվագրող հատկանիշներ ունի էլաոի դամբարանում հայտնաբերված երրորդ կավամանը: Դա բավական երկար վզով (բարձրությունը 13 սմ), ուռուցիկ, երկկոնիկ իրանով (տրամագիծը 22 սմ) մի մեծ կճուճ է (բարձրությունը 31 սմ), որի հատակը փոքր է և ուռուցիկ (տրամագիծը՝ 8 սմ): Կճուճի վզի հիմքի երկու հորիզոնական ծայրամասերի միջով անցնում է զիգզագ ալիքաձև գոտի: Սրանցից ցած կճուճի ուսերը զարդարված են երկրաչափական ֆիգուրներով՝ հատիկածածկ եռանկյունիներով, լայն ու նեղ քառանկյունի դաշտերով, որոնք ներքևից եզերված են խորաքանդակ հորիզոնական գոտիով (նկ. 127, ՀՊՊԹ, № 2624/31):

Երկարավիզ նման կճուճները բնորոշ են հատկապես ուշ բրոնզի զարգացած փուլի, մ. թ. ա. XIII—XI դդ. մշակույթին: Ուշ բրոնզի վաղ փուլերի համար շնայած հատկանշական են երկարավիզ կճուճներ, սակայն նրանք հիմնականում զարդարված են փայլեցման եղանակով, օրինակ՝ Արթիկի մ. թ. ա. XIII—XI դդ. թվագրվող կճուճները<sup>75</sup>, Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում հայտ-



Նկ. 126. Կավաման № 38 դամբարանից:

նաբերվածները (№ 2304/4)<sup>76</sup>, Կարմիր-բերդում, Պ. Վ. Զարկովսկու կողմից պեղված և Վրաստանի թանգարանում պահվող երկարավիզ կճուճների մի մասը (ՎՊԹ, № 28—58 : 136, 142, 143, 200,

<sup>75</sup> Գ. Խաչատրյան, Древняя культура Ширака, стр. 192.

<sup>76</sup> Ս. Սալյան, Լ. Կարապետյան, Նորահայտ դամբարանադաշտը Երևանի մոտ, ՊՔԶ, 1965, № 4, Երևան, էջ 281—285, աղ. 1; 4, 7:

201, 210) և այլն: Կա նաև երկարավիզ կճուճների մի խումբ, որոնց վրա փայլեցման եղանակով կատարված զարդանախշերը համադրված են խորաքանդակ, փորելու եղանակով կատարված զարդանախշերի հետ: Նման երկարավիզ կճուճներ հայտնաբերվել են Արթիկի կատակոմբաներում<sup>77</sup>, Երևանի հարավ-արևմտյան ծայրամասի դամբարանադաշտում:

Վերջիններս էլաոի կճուճի նման վզի հիմքի և իրանի ուռուցիկ մասով անցնող հորիզոնական գոտիների մեջ ամփոփված դաշտում խորաքանդակ զարդանախշեր ունեն, միայն թե սրանց զարդամոտիվը գազաթներով վեր, իրար մեջ դասավորված խորաքանդակ սուրանկյունների շարան է (ՀՊՊԹ, № 2304/14, 16):

Սակայն կա երկարավիզ կճուճների մի երրորդ խումբ, որն իր ձևով, մեծությամբ և զարդանախշերի կատարման եղանակով հար և նման է էլաոի կճուճին: Օրինակ՝ հատիկների և ալիքների խորաքանդակ ու ուլիեֆ գոտիներով են զարդարված Կիրովականի «Դիմաց-Քաղում» 1940 թ. պեղված դամբարաններից մեկում հայտնաբերված երկարավիզ կճուճի ուսերը (ՀՊՊԹ, № 1741/11): Մուխանյան-Քափայի դամբարաններից 1932 թ. հայտնաբերված կճուճներից մեկը զարդարված է հորիզոնական խորաքանդակ ալիքներով և գոտիներով (№ 1019/5), իսկ մյուսը՝ էլաոի լայնածայրով են ապարանջանի տիպի հասկազարդ գոտիներ ունի վզի հիմքում և իրանի ուռուցիկ մասում (ՀՊՊԹ, № 1019/2): Էլաոի կճուճին ժամանակակից պետք է համարել Երևանի Զեյթուն թաղամասի դամբարանադաշտում «վազող» պարույրների զարդանկարով ճարմանդազարդ ապարանջանի հետ հայտնաբերված երկարավիզ կճուճը, որի ուռուցիկ ուսերը զարդարված են խորաքանդակ նույնպես «վազող» պարույրների գոտիներով<sup>78</sup>: Նման զարդապատկերով մեկ ամբողջական կճուճ էլ հայտնաբերվել է Արթիկի II խմբի № 87 դամբարանում<sup>79</sup>: Այս խմբին են հարում դարձյալ Արթիկի երկրորդ խմբի դամբարաններում հայտնաբերված խորաքանդակ գոտիներով և ալիքներով զարդարված երկարավիզ կճուճները<sup>80</sup>, էլաոի տիպի զարդանկարով, սակայն ծավալով փոքր մի շարք կճուճներ<sup>81</sup>:

<sup>77</sup> Գ. Խաչատրյան, Материальная культура..., стр. 129, рис. 15.


<sup>78</sup> Ս. Ամիրջան, նշվ. աշխ., էջ 270, աղ. 1; 7:

<sup>79</sup> Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 227, նկ. 141:

<sup>80</sup> Նույն տեղում, էջ 220, նկ. 132:

<sup>81</sup> Նույն տեղում:

Հորիզոնական գոտիներով և ալիքով է զարդարված նաև Մեծամորի № 27 դամբարանում հայտնաբերված երկարավիզ կճուճը (ՄԹ, № 4/47): Այս դամբարանի ապարանջանները (ՄԹ, № 4/57, 58), մատանիները (ՄԹ, № 4/59), երկկոնիկ կախազարդ (ՄԹ, № 4/55) հար և նման են էլաոի դամբարանում հայտնաբերվածներին: Հետևաբար, ամբողջ դամբարանն էլ ժամանակակից է էլաոի № 38 դամբարանին:




Նկ. 127. Երկարավիզ կճուճ № 38 դամբարանից:

Այսպիսով, էլաոին զուգահեռ երկարավիզ կճուճների վերոհիշյալ երրորդ խումբը շունի ալիքի վաղ փուլերին բնորոշ փայլեցման եղանակով կատարված զարդանախշեր, բացարձակապես զարդարված է խորաքանդակ զարդապատկերներով, որոնք ալիքի շուտ կապվում են վաղ երկաթի դարաշրջանին բնորոշ զարդամոտիվների հետ: Բացի այդ, ինչպես վերը տեսանք, էլաոի № 38 դամբարանի երկկոնիկ կախազարդ ապարանջանների III խմբի զուգահեռները նույնպես մոտենում են մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի մշակույթին: Հավանաբար սխալված չենք լինի, եթե էլաոի № 38 դամ-

բարանն իր նյութերով հանդերձ թվագրենք մ. թ. ա. XI դարի սկզբով:

Գրեթե նույն զուգահեռներն ունեն նաև հիմնահողային № 21 և 23 դամբարաններում հայտնաբերված նյութերը:



Նկ. 128. Կավաման № 21 դամբարանից:

№ 21 ավերված դամբարանում ընդամենը հրեք կավաման հայտնաբերվեց՝ ալիքազարդ հասարակ թաղար (աղ. XVII; 16, ՀՊՊԹ, № 2246/72), լայնաբերան կլորացող իրանով խորը քրեղան, ուսերը զարդարված՝ փայլեցման եղանակով կատարված ցանցադաշտով (աղ. XVII; 19, ՀՊՊԹ, № 2246/70), նույն եղանակով զարդարված հատակով մեծ կավաման, ուռուցիկ ուսերին՝ ալիքաձև և ուղղագիծ հորիզոնական գոտիներ (Նկ. 128, ՀՊՊԹ, № 2246/71), հատկանիշներ, որոնք հիմնականում աղերսվում են ուշ բրոնզի խեցեղենի հետ, հարատևում մինչև մ. թ. ա. II հազարամյակի վերջը:

№ 28 դամբարանում թաղումը հրեխայի էր, վզի ողբերի մոտ հայտնաբերվեցին մածուկից տարատեսակ ուլունքներ (ՀՊՊԹ, № 2246/76)՝ տակառաձև սպիտակ, նեղ եզրակով ավարտվող, որի զուգահեռները Կիրովականի «Դիմաց-թաղի» սրբազան բզեզով դամբարանում են (ՀՊՊԹ, № 1536), գլանաձև սպիտակ մեծ ուլունք, բավական նման Կ. Գ. Ղաֆաղարյանի՝ Կիրովականում պեղված դամբարաններից մեկում հայտնաբերվածին

(ՀՊՊԹ, № 1236/92), սպիտակ, սև և մի քանի հատ էլ բաց շագանակագույն փայլուն մակերևույթով պլանաձև մանր ուլունքներ (աղ. XXI; 5, 6, ՀՊՊԹ, № 2246/76), որոնք բազմաթիվ զուգահեռներ ունեն ուսումնասիրվող ժամանակաշրջանի հուշարձաններում: նման ուլունքներ, ինչպես տեսանք, բնորոշ են № 38 դամբարանին, հայտնաբերվել են էլաոի նաև № 7 դամբարանում: Մեծ քանակությամբ մածուկից պլանաձև ուլունքներ գտնվել են Դվինի նախաուրարտական շերտում, Արթիկի դամբարաններում (ՀՊՊԹ, № 2255/21, 134, № 2173/90, 228—232), Կամոյում (ՀՊՊԹ, № 20/162) և այլուր:

Դամբարան № 27-ում կմախքի ցաք ու ցրիվ սակորների հետ հայտնաբերվեցին երկու կավաման, սարդիոնից ու կապարից ուլունքներ:

Սև, ագաթափայլ, ետ ծավված շուրթերով կավամանները խորաքանդակ գոտի ունեն ուսերին և իրանի ուռուցիկ մասում (ՀՊՊԹ, № 2246/83, 84): նման մի կավաման հայտնաբերվել է նաև 1947 թ. քանդված դամբարաններից մեկում (ՀՊՊԹ, № 1805/49): Այս կավամանների զուգահեռները գտնվել են Կարմիր-բլուրից 3 կմ հարավ ընկած դամբարանադաշտում, Կարմիր-բերդի № 31 դամբարանում, որը Ս. Եսայանի կողմից թվագրվում է մ. թ. ա. X—VIII դդ.<sup>82</sup>:

Կապարից պատրաստված ուլունքները շորս տիպի են՝ օղակաձև, կանելուրազարդ, տակառաձև կամ օվալաձև (որոնք ավարտվում են նեղ եզրակով), պլանաձև մեջքով և ծակոտկեն թևերով ուլունքներ: Վերջինիս կողերի կարը հուշում է նրա երկփեղկանի կաղապարում ձուլված լինելու հանգամանքը (աղ. XXI; 7, և XXVI; 9, ՀՊՊԹ, № 2246/87):

Այս ուլունքները տարածման լայն շառավիղ ունեն: Կապարի ուլունքների վերոհիշյալ բոլոր տիպերից հայտնաբերվել են Ռեդկին-լագերում 1879 թ. Ֆ. Բայերնի պեղած դամբարաններում, ծարիրե մեղալիոնների հետ միասին<sup>83</sup>: Կիրովականի «Դիմաց-թաղի» դամբարաններում էլ նրանք հիմնականում ուղեկցվում են ծարիրե ուլունքներով մեղալիոններով: Օրինակ՝ Կ. Գ. Ղաֆաղարյանի պեղած № 3 դամբարանում մեղալիոնների հետ կնոջ կմախքի մոտ հայտնաբերվել

<sup>82</sup> С. Есаян, Ереван, табл. 31; 2, 5, табл. 32; 7, табл. 34, 2.

<sup>83</sup> F. Bayern's, Untersuchungen über die ältesten Gräber und Schatzfunde in Kaukasien, Zeitschrift für Ethnologie 17 Jahrgang, Berlin, 1885, Supplement, Taf. IX; 6, 8, 14.

են տասնչորս օվալաձև և երկու կանելուրազարդ կապարե ուլունքներ (ՀՊՊԹ, № 1236/93): 1940-ական թվականներին պեղված մեկ այլ դամբարանից հայտնաբերված օվալաձև կապարե ուլունքն ուղեկցվում է ծարիրից սուպաձև, փշատաձև, օղակաձև և վարդյակատիպ ուլունքներով (ԿՆԹ, № 496): Իսկ 1965 թ. պեղված № 1 դամբարանում գտնված պլանաձև մեջքով և ցանցկեն կիսաշրջանաձև թևերով, էլաոի տիպի մեկ ուլունք ուղեկցվում է դարձյալ ծարիրե մեղալիոններով (Նկ. 156, 1, 2, ԿՆԹ, № 441): Այս ուլունքի ամենավաղ օրինակը հայտնաբերվել է Արթիկի ուշ բրոնզի վաղ փուլով թվագրվող № 5 դամբարանում՝ ծարիրից այլ ուլունքների, զարդերի հետ միասին<sup>84</sup>: Վերոհիշյալ տիպի մեկ ուլունք էլ հայտնաբերվել է Սամթավրոյում, 1947 թ. պեղված № 285 դամբարանում (ՎՊԹ, № 6052): Այն հար և նման է էլաոում հայտնաբերվածին:

Այսպիսով, էլաոի № 27 դամբարանն իր նյութերով հանդերձ, կարող է թվագրվել մ. թ. ա. X—IX դդ.:

Դամբարան № 7: Վաղ երկաթի դարաշրջանի նյութական մշակույթի զարգացման բարձր մակարդակը վկայող հուշարձաններից մեկը էլաոի № 7 դամբարանն է: Այն հայտնաբերվեց 1961 թ. ավազահանքի հարավային ծայրաթևում, որտեղ հանքն ավարտվում է և սկսվում են կարկանդակները: Այստեղ ավազը բավական խորն էր և ծածկված էր կավաշերտերով: Մակերեսին արտաքին նշաններ չէին պահպանվել, չկար հողաթուփ կամ ծածկի սալ: Հանքի կտրվածքում, մոտ 3,0 մ խորության մեջ, նշմարվում էին սակորներ, կավամանի բեկորներ:

Հողի մոտ 2,5 մ լիցքը հեռացնելուց հետո սկսվեց շագանակա-գորշագույն, մոտ 0,3 մ հաստությամբ փտած փայտի մի ստվար շերտ, որի տակ բացվեց թաղումը:

Պարզվեց, որ այն հիմնահողային կավածեփ մի դամբարան է, որի մեծ մասը հանքի շահագործման ժամանակ ոչնչացել էր: Պահպանվել էր նրա կավացիտով լավ ամրացված, մոտ 5,0 մ երկարությամբ հարավային պատը, որի երկայնքով կողք-կողքի շարված էին երկարազանգ ութ մարդու կմախք՝ նստած կամ պոչված վիճակում: Մի քանիսի գանգերը կոնքի և ծավված ոտերի սակորների վրա էր, ստորին ծնոտը մի փոքր հեռու, մյուսներինը՝ գտնվեցին կմախքների միջև

<sup>84</sup> Т. Хачатрян, Материальная культура Артика, стр. 86, табл. 8.

րիանրսիվայր կամ կողքի ընկած: Մի մասն էլ հայտնաբերվեց շարված վիճակում (Նկ. 129):

Դամբարանի հարավային կողմ մարրելիս, նրա հարավ-արևելյան անկյունում և նույն դժով 3,0 մ դեպի արևմուտք բացվեցին, մոտ 0,3 մ տրամագծով բավական խոր երկու փոս, որոնք լիցուն էին շագանակագույն փոշիացած փայտով: Անշուշտ, դրանք դամբարանի ծածկը պահող հենասյուների մնացորդներ են, որոնք գտնվելով ոչ բարենպաստ միջավայրում, փտել, ոչնչացել էին:

Կմախքների վրա նստած և կավածեփ հատակին թափված փայտի դորշ շագանակագույն հաստ խավերը վկայում են, որ դամբարանն ունեցել է գերաններից կազմված ծածկ, որը հենվել է ուղղահայաց կանգնեցված սյուների վրա: Սակայն ժամանակի ընթացքում գերանները և սյուները փտել են և ծածկն իր ամբողջ ծանրությամբ իջել է դամբարանի մեջ, որի հետևանքով կմախքների մի մասը շարդվել է, սակայն գրեթե նույն դիրքով պահպանվել իր տեղում:

Այսպիսով, պարզվեց, որ մենք գործ ունենք դամբանաբլուրի հետ, որի տակ գտնվող հիմնահողային կավածեփ դամբարանն ունեցել է գերանակա օղակ: Դամբարանի պահպանված հատվածում հայտնաբերվեցին խոշոր և մանր կենդանիների սակորներ: Իրերը հայտնաբերվեցին մեծ մասամբ կմախքների միջև եղած տարածություններում: Կույտով գտնվեցին բրոնզից և պղնձից տասնչորս ցանցկեն դանդակներ և մեծ քանակությամբ տարբեր մեծությամբ, հավանաբար զբոսաձև, լանջապանակը ծածկող վահանաձև կոճակներ: Մեկ այլ տեղ խմբված էին ծարիրից պատրաստված բազմաքանակ սուպաձև և օղակաձև ուլունքներ: Կմախքներից մեկի վզի ողբերը պարուրել էին կապարից երկու մանյակները: Դամբարանի տարածքում հայտնաբերվեցին բրոնզից դաշույն՝ ծակոտկեն գլխիկով, զարդաբրոցներ, ապարանջաններ, կախազարդեր, ծարիրից և կապարից պատրաստված դանազան պերճանքի առարկաներ՝ մեղալիոններ, պես-պես գինդեր-կախիկներ, կոճակներ, մածուկից, ապակեման զանգվածից, ծովային խեցուց և սարդիոնից ուլունքներ, երկու ամբողջական կավաման և մեկ այլ կավամանի բեկոր: Կավամաններից մեկը սև, կրապատ կճուճ է՝ պլանաձև վզով, որի ուսերի խորաքանդակ գոտիների միջև զույգ, կիսազնդաձև կոճակների հրեք խմբեր են արված (Նկ. 130, ՀՊՊԹ, № 2246/29): Այս զարդամոտիվը բավական սիրված է մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյ-

յակի սկզբի խեցեղենի համար: Չորս կիսագնդա-  
ձև ելուստներով են զարդարված Կիրովականի  
«Դիմաց-թաղի» № 2 դամբարանում հայտնաբեր-  
ված նույնատիպ կճուճը (ՀՊՊԹ, № 1236/56),

վերջով թվագրվող կավամանր<sup>85</sup>, Կամոյի կավա-  
մանը (ՀՊՊԹ, № 115/184), Կիրովականի 1965 թ.  
պեղված № 1 դամբարանում, ծարիրի մեղալիոնի  
հետ հայտնաբերվածները (ԿՆԹ, № 441/19), Գե-



Նկ. 129. Դամբարան № 7:

Կամոյում հայտնաբերվածը (ՀՊՊԹ, № 115/93),  
Կիսագնդաձև կոճակներով են զարդարված և ալլ  
տիպի կավամաններ, որոնք, անշուշտ, ժամանա-  
կակից են էլաոի կճուճին, օրինակ՝ Դիլիջանում  
հայտնաբերված է մ. թ. ա. II հազարամյակի

տարեկ-Կալաքինդի № 28 քարակղում ծարիրի  
մեղալիոնների հետ հայտնաբերված կավամանր<sup>86</sup>  
և այլն:

էլաոի մուգ շագանակագույն, դնդաձև թա-  
ղարը, ուսերին՝ ալիքաձև և ուղղագիծ զծային  
հորիզոնական խորաքանդակ գոտիներ (աղ. XVII:  
20, ՀՊՊԹ, № 2246/27), իր զուգահեռներն ունի  
դարձյալ Կիրովականում (ՀՊՊԹ, № 1236/7, 14),  
Դիլիջանում<sup>87</sup>, Արմավիր բլուրում (ՊՊԹ, №  
414/1), Ակնալճի դամբարաններում (ՀՊՊԹ, №  
767/1) և Ոսկեվազում (ՀՊՊԹ, № 555/14):

Նրորող թաղարի միայն բեկորն է պահպան-  
վել, որի ուսերը զարդարված են հատիկներով,  
խորաքանդակ գոտիներով (ՀՊՊԹ, № 2246/28):

Դամբարանում հայտնաբերված միակ ղեկը  
անագային բրոնզից պատրաստված դաշույնն է

<sup>85</sup> «Կատալոգ Դիլիջանի...», աղ. II, 7, աղ. XVIII, 4:  
<sup>86</sup> А. Иванов: Кий, № 24. աշխ., էջ 104, աղ. XIII, 17:  
<sup>87</sup> «Կատալոգ Դիլիջանի...», աղ. XV, 5:



1 3

Նկ. 130. Կճուճ № 7 դամբարանից:

(4,5% անագ, նկ. 131, աղ. XXIV, 1, ՀՊՊԹ, №  
2246/88)<sup>88</sup>: Այն պատկանում է Հայկական լեռնաշ-  
խարհի վաղ երկաթի մշակույթին բնորոշ, եռան-  
կյունաձև շեղբով դաշույններին, որոնց միջին  
մասում ներճկված միաձուլյ զաստակը, փայտե  
կոթն իր մեջ պահելու համար, երկու կողմերից  
ավարտվում է աղեղնաձև ծայրած թիթեղյա եղ-  
րերով: Նման տիպի դաշույններ բավական մեծ  
քանակությամբ հայտնաբերվել են մերձսևանյան հուշար-  
ձաններից և. Լալայանի պեղումների ժամանակ<sup>89</sup>:  
Այժմ քսանութ դաշույններ մեզ հայտնի են քսան-  
երկու այլ հնավայրերից:

Ելնելով շեղբի առանձնահատկություններից,  
այս դաշույնները կարելի է երեք խմբի բաժանել.

I. Սեպաձև դեպի ցած նեղացող բարձրադիր  
միջնամաս ունեցող շեղբով դաշույններ (աղ.  
XXIII, 1—5):

II. Նեղ, սլացիկ երկթեք շեղբով դաշույններ  
(աղ. XXIII, 6—11):

III. Գրեթե հարթ կամ թույլ շեղաված մեջքով  
դաշույններ, որոնց մեծ մասը կրում են երկայ-  
նակի երակներ (աղ. XXIV):

Առաջին խմբի դաշույններից հայտնաբերվել  
են Արթիկի № 39 դամբարանում (աղ. XXIII, 1)<sup>90</sup>,  
Ալավերդիում (աղ. XXIII, 4, ՀՊՊԹ, № 759/7),  
Գոլովինոյում<sup>91</sup>, Իջևանի շրջանում (աղ. XXIII,  
2)<sup>92</sup>, Դիլիջանի ջրամբարի կառուցման տեղամա-  
սում (նախկինում՝ Պապանինո, աղ. XXIII, 5)<sup>93</sup> և  
Կահույքի ֆարերկայի մոտ (աղ. XXIII, 3)<sup>94</sup>: Գա-  
շույնների այս խմբի մեջ են մտնում նաև մերձ-  
սևանյան հուշարձաններում հայտնաբերվածներից  
մի քանիսը<sup>95</sup>:

Արթիկի դաշույնը Թ. Խաչատրյանի կողմից  
վերագրվում է ուշ բրոնզի I փուլին և թվագրվում  
մ. թ. ա. XIV—XIII դդ<sup>96</sup>: Մյուս դաշույններն  
ուղեկցող նյութեր շունեն, բացի Ալավերդու դա-

<sup>88</sup> Մետաղյա իրերի անալիզները կատարել է Ա. Գևորգ-  
յանը:

<sup>89</sup> Ն. Լալայան, Դամբարանների պեղումները..., էջ 156:

<sup>90</sup> Т. Хачатрян, Древняя культура Ширака, стр. 176, рис. 86.

<sup>91</sup> Զ. Մնացականյան, Դամբարանների պեղումները Գո-  
լովինո գյուղում, Աշխատություններ Հայաստանի պատմու-  
թյան պետական թանգարանի, հատ. V, Երևան, 1959,  
էջ 11, նկ. 3:

<sup>92</sup> «Կատալոգ Դիլիջանի...», աղ. XX, 2:

<sup>93</sup> Լ. Կարապետյան, Ա. Ծախիճյան, Հնագիտական հայտ-  
նագործություններ Դիլիջանում, ԳԱ «Տեղեկագիր», № 12,  
1961, Երևան, էջ 72, նկ. 4, ձախից:

<sup>94</sup> «Կատալոգ Դիլիջանի...», աղ. XX, 4:

<sup>95</sup> Ն. Լալայան, նշվ. աշխ., էջ 156:

<sup>96</sup> Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 173—176:

շույնից, որը երևան է գալիս ուշ բրոնզի մշակույ-  
թին բնորոշ ուշագրավ իրերի միջավայրում՝ ձեռ-  
քի յուրօրինակ հատիչ-սակերի և հատկապես  
շրջանակավոր դաստակ ունեցող սրի հետ<sup>97</sup>,  
որոնց զուգահեռները Լճաշենում են, Արթիկում և  
այլուր ու հնադարների կողմից թվագրվում են  
մ. թ. ա. XIV—XIII դդ.<sup>98</sup>:




Նկ. 131. Բրոնզե դաշույն  
№ 7 դամբարանից:

Ինչ վերաբերում է Գոլովինոյի № 1 դամբա-  
րանում հայտնաբերված դաշույնին, ապա այն  
հար և նման է Ալավերդիի դաշույնին, իսկ նրա

<sup>97</sup> Տե՛ս ՀՊՊԹ, № 759. Ժողովածուն:  
<sup>98</sup> С. Есаян, Оружие..., стр. 86, 87, 89, табл. XV, 4  
Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 177, 178:



հետ հայտնաբերված կտրած շուրթերով, հորիզոնական գծագրողներով զարդարված կարճ, երկկոնիկ վերին մասով սև ագամափայլ մեծ թասը, հատակին խորաքանդակ, համակենտրոն շրջաններ (ՀՊՊԹ, № 1901/48), հարում է ուշ բրոնզի վաղ փուլերի խեցեղենին:



Նկ. 132. Խոյազուխ կանթով կավաման Կիրովականից:

Այս զուգահեռներն, անշուշտ, հնարավորություն են բնձնում դաշույնների վերոհիշյալ խումբը ուշ բրոնզի I փուլով թվագրելու: Իհարկե բացառված չէ նրանց հարատևությունը նաև հաջորդ փուլերում:

Երկրորդ խմբի դաշույնները հավանաբար սկիզբ են առնում ուշ բրոնզի II փուլում: Նրանք շեղբի ձևով հիշեցնում են սևանյան լեզվակավոր դաշույնների վաղ տիպը, հայտնաբերված՝ Թաբիսյում, Վարդաբարում, Տուրոսում:

Երկրորդ խմբի դաշույններից շորսը՝ Կիրովականի երկու դաշույնները (աղ. XXIII; 7, 8, ՀՊՊԹ, № 1864/5, 7), Գիլիջանի (աղ. XXIII; 9)<sup>99</sup> և ՀՊՊԹ-ում պահվող դաշույնը (որը համար շունի, սակայն համարվում է Կամոյից գտնված, աղ. XXIII; 6), ունեն երկարավուն, սլացիկ նեղ շեղբ և միաձույլ՝ տափակ դաշույնների մեջ ամենամեծն են (երկարությունը՝ 32,5—30,5 սմ), շեղբի չափերով էլ գրեթե նույնը (շեղբի երկարությունը՝ 23 սմ, լայնությունը հիմքի մոտ՝ 4 սմ): Նման մի դաշույն էլ հայտնաբերվել է Ուզունթեֆեի (Աստրախան-բազարի շրջանի նովոգոլովկա գյուղի մոտ) դամբարանադաշտում (ԱՊԹ,

№ 3060)<sup>100</sup>: Վերջիններիս ավելի մոտ է Մեծամորի № 30 դամբարանում հայտնաբերվածը (աղ. XXIII; 10, ՄԹ, № 4/63), իսկ Լորուտի դաշույնը (աղ. XXV; 2, ՎՊԹ, № 51—05 : 1), Գետաբեկի և Կալաբենդի միջև ընկած դամբարանադաշտում պեղված № 23 և 66 քարաղվերից, նաև Կարաբուլաղի № 88 դամբարանաբլուրից հայտնաբերվածները (աղ. XXIII; 11)<sup>101</sup>, չափերով բավական զիջում են վերջիններին:

Այս խմբի դաշույնները հիմնականում ուղեկցվում են մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող միաձույլ, լայնաշեղբ կտրած կամ կլորացրած ծայրեր ունեցող սրերով և շարժական երախճաններ ունեցող սանձերով:

Կիրովականի երկու դաշույնները, որոնց դաստակի մեջ պահպանվել է փայտե կոթը, հայտնաբերվել են «Գիմաջ-թաղի» սեղանաձև բարձունքի, 1940 թ. պեղված դամբարաններից մեկում, արժաթե ապարանջանի, բրոնզից մասսիվ ապարանջանների (ՀՊՊԹ, № 1864/1—3) կլորացող ծայրով ավարտվող միաձույլ սրի (ՀՊՊԹ, № 1864/8)<sup>102</sup> և խոյազուխ կանթով մեծ և գեղեցիկ կավամանի հետ (Նկ. 132, ՀՊՊԹ, № 1864/9): Նման սրերը սկիզբ են առնում մ. թ. ա. XII դարից և Անդրկովկասում տարածման լայն շառավիղ ընդգրկում<sup>103</sup>:

Ավելորդ չէ նշել, որ Կիրովականի խոյազուխ կանթով վերոհիշյալ կավամանն իր ամենամոտ զուգահեռն ունի Մաղկայի շրջանի Բևշտաշենի ճանապարհի մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող հիմնահողային դամբարանների խեցեղենում<sup>104</sup> և, որ ամենահետաքրքրականն է, այդ դամբարաններից մեկում (№ 11) հայտնաբերվել է կոբանյան տիպի խոյազուխ ճարմանդով բրոնզե գոտի<sup>105</sup>: Անշուշտ, այս հանգամանքը ևս հաստատում է Մաղկայի և Կիրովականի դամբարանաբլուրների ժամանակակից լինելը ու միաժամանակ վկայում նրանց՝ Հյուսիսային Կովկասի հետ ունեցած

<sup>100</sup> И. М. Джафарзаде. Элементы археологической культуры древней Мугани, Известия Академии Наук Азербайджанской ССР, вып. IV, № 9, Баку, 1946, стр. 31, табл. V. 2.

<sup>101</sup> А. Ивановский, ԿՊ. աշխ., էջ 101, 134, 155, աղ. VII; 5:

<sup>102</sup> А. Мартиросян, ԿՊ. աշխ., էջ 104, С. Есаян, Оружие..., стр. 88—89, табл. XV: 5.

<sup>103</sup> А. Мартиросян, ԿՊ. աշխ., էջ 114, Т. Хачатрян, ԿՊ. աշխ., էջ 290—292:

<sup>104</sup> Б. Кухтин, Археологические раскопки в Триалети, стр. 67, 74, рис. 83, стр. 337, табл. LI.

<sup>105</sup> Նույն տեղում, էջ 68, աղ. 70:

մշակութային սերտ կապերի, փոխազդեցությունների առկայությունը վերոհիշյալ ժամանակաշրջանում:

Այսպիսով, Կիրովականի դամբարանն իր դաշույններով հանդերձ կարող է թվագրվել մ. թ. ա. XII—XI դդ.:

Լորուտի դաշույնին ուղեկցող իրերը՝ սակրը, ապարանջանները, լայնաշեղբ ծանր սուրը (աղ. XXV; ՎՊԹ, № 51—05 : i—6)<sup>106</sup>, իրենց բաղաձայնի գուգահեռներն ունեն նույնպես մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող հուշարձաններում:

Լորուտի սուրը՝ շեղբի հիմքի վաղուց պարույնների զարդանկարով և քառաշար երակներով հատկապես նման է Մեծ Չալ կոշվող վայրում (Աղստե գետի ձախ ափին)<sup>107</sup>, Գետաբեկ-Կալաբենդի № 26 դամբարանում<sup>108</sup> և Խանլարի № 1 դամբարանում<sup>109</sup> հայտնաբերված սրերին:

Ավելորդ չէ նշել, որ Խանլարի նույն դամբարանում հայտնաբերված դաշույնն իր լայն շեղբով բավական տարբերվում է վերոհիշյալներից (աղ. XXIV; 2)<sup>110</sup>: Անշուշտ, ուշ բրոնզի դեռևս վաղ փուլում սկիզբ առած, համեմատաբար լայն շեղբով դաշույնները հարատևել են, ինչպես վերը նշվեց, նաև հաջորդ փուլում, կրելով մասնակի փոփոխություններ:

Ինչ վերաբերում է Մեծամորի № 30 դամբարանի դաշույնին, ապա նրան ուղեկցող շարժական երախճաններով սանձերը<sup>111</sup>, որոնց զուգահեռները հայտնաբերվել են Կիրովականում, Ալավերդում, Առաջաձորում, Խանլարում, Մինգեչաուրում և թվագրվում են մ. թ. ա. XI—X դդ.<sup>112</sup>, իրավունք են տալիս Մեծամորի դաշույնը նույն ժամանակով թվագրելու:

Նշված ժամանակաշրջանով թվագրվող Առաջաձորի դամբարանաբլուրներում գտնված դաշույններն (աղ. XXIV; 6) իրենց նեղ շեղբով հարում են II խմբի դաշույններին, սակայն երկայնակի երակներով օժտված շեղբի տափակ մեջքով ավելի մոտ են III խմբի դաշույններին<sup>113</sup>: Նրանք

<sup>106</sup> Լորուտի դամբարանի նյութերը վրաստանի պետական թանգարանին 1905 թ. հանձնել է Արսեն Մելիքյանցը:

<sup>107</sup> «Կատալոգ Գիլիջանի...», աղ. I; 4:

<sup>108</sup> А. Ивановский, ԿՊ. աշխ., էջ 101—102, աղ. I; 1:

<sup>109</sup> Я. Гуммель, ԿՊ. աշխ., աղ. VI; 11:

<sup>110</sup> Նույն տեղում, աղ. V; 13:

<sup>111</sup> Պեղումները՝ հեղինակի, նյութերը հրատարակված չեն:

<sup>112</sup> А. Мартиросян, ԿՊ. աշխ., էջ 145:

<sup>113</sup> К. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVII, М., 1957, стр. 162, рис. 7; 7.

առես մի կապող օղակ լինեն այս երկու խմբերի դաշույնների միջև:

Ուշագրավ են նաև Բջնիում (աղ. XXIV; 11, ՀՊՊԹ, № 319/47) և Գեղամի աղբյուր դամբարանադաշտում (Կրասնոսելսկի շրջան) հայտնաբերված դաշույնները<sup>114</sup>: Սրանք II խմբի դաշույնների նման ունեն սլացիկ իրան, մեջքն ուսուցիկ է շեղբի հիմքը գտրգտրված կետածածկ գիզգազով: Սակայն Բջնիի դաշույնի շեղբն ունի երկայնակի սելիեֆ երակներ: Նման դաշույնները հարատևում են մինչև I հազարամյակի սկիզբը:

Անդրադառնալով Ուզունթեֆեի դաշույնին, հարկ է նշել, որ այն շնչաժ ուղեկցող նյութեր չունի, սակայն նույն դամբարանադաշտում հայտնաբերված այլ նյութերը՝ երկփողաբախ կամ հովաբաձև գլխիկով և եղանաձև վերջավորություն ունեցող բառակող երախակալով սրերն ու դաշույնները, բրոնզե դաշույնների գմբեթաձև ցանցկեն գլխիկները, առաջավորասիական և մերձսևանյան տիպի դաշույնները, թաղման որոշ ծեսեր (ձիով թաղումները) և այլ նյութեր<sup>115</sup>, հուշում են այդ դամբարանադաշտի մ. թ. ա. XI—IX դդ. պատկանելը և ուսումնասիրության առարկա հանդիսացող մշակութային միասնություն սահմանների մեջ ընդգրկված լինելը:

Երրորդ խմբի դաշույններն իրենց տեսքով, մասամբ նաև չափերով բավական մոտ են առաջին խմբին, սակայն ունեն հարթ կամ թույլ արտահայտված մեջք, որոնց մեծ մասը կրում է շեղբի հիմքի աղեղնաձև գոտուց սկիզբ առնող կենտրոնական և եղրային սելիեֆ կամ փորված երկայնակի երակներ (աղ. XXIV): Այս խմբի մեջ է մտնում էլաոի դաշույնը: Նման դաշույններից երբեք հայտնաբերվել են Կամոյում (աղ. XXIV; 2, 4, 5), մեկական դաշույններ Ռեղկին-լագերում (աղ. XXIV; 3)<sup>116</sup>, Կիրովականում (աղ. XXIV; 7, Կեթ, № 307/456), երկուսը՝ Մինգեչաուրում (աղ. XXIV; 8, 9)<sup>117</sup>, նման տիպի մեկ դաշույն էլ հայտնաբերվել է Լճաշենի «Միայնակ» դամբարանի վերին շերտում (ՀՊՊԹ, № 2118/164) և էլաոի դաշույնի նման ուղեկցվում է կապարե մանյակներով, ուլունքներով, կոճակներով (ՀՊՊԹ,

<sup>114</sup> Բջնիի № 319 ժողովածուում տեղ են գտել, հավանաբար, տարբեր ժամանակաշրջանների նյութեր: Գեղամի աղբյուրի դաշույնը տե՛ս С. А. Есаян, Древняя культура племен Северо-восточной Армении, Ереван, 1976, стр. 140, 185, табл. 129; 17.

<sup>115</sup> И. М. Джафарзаде, ԿՊ. աշխ., էջ 22—50:

<sup>116</sup> В. Вирубов, ԿՊ. աշխ., աղ. III; 3:


<sup>117</sup> Г. Асланов, Р. Вандов, Г. Поне, ԿՊ. աշխ., էջ 70, Նկ. 53, աղ. XIII; 4, 9:

<sup>99</sup> «Կատալոգ Գիլիջանի...», աղ. XX; 1:

№ 2118/169—170)<sup>118</sup>; Այս դաշույնի հետ, դամբարանում հայտնաբերվել է բրոնզե միասայր, կորաշեղբ դանակ (2ՊՊԹ, № 2118/165): Դաշույնների III խմբին է հարում Շամբորի հովտում՝ Չովդարում հայտնաբերվածը (ԱՊԹ, № 335), որն իր ձևով հիշեցնում է այս խմբի մեջ մտնող Կիրովականի դաշույնը (աղ. XXIV, 7):

Ավելորդ չէ նշել, որ երրորդ խմբի դաշույնները հիմնականում ուղեկցվում են կամ կեռ միասայր դանակներով, կամ սեանյան տիպի լեզվակավոր դաշույններով (Ռեդկին-լագեր, Կամո, Լճաշեն, Առաջածոր, Մինգեչաուր):

Այս երրորդ խմբի դաշույններով հուշարձանները հիմնականում թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով, իսկ ավելի կոնկրետ՝ X դ. վերջով և IX դ. սկզբով<sup>119</sup>:



Նկ. 133. Բրոնզե քորոցներ № 7 դամբարանից:

Այսպիսով, միաձույլ դաստակով վերոհիշյալ դաշույնները ներկա տվյալներով, սկսվելով Արարատյան դաշտավայրից, հասնում են Ալավերդի, իսկ արևելքում նրանց վերջնակետը Ուլուն-թեփեն է: Բացառված չէ, որ նրանց ծայրակետը հյուսիսում լինի Սամթավրոն, քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում, այս մշակութային միասնության սահմանների մեջ էին ընդգրկվում նաև Սամթավրոն, Բեշտաշենը, ընդհանրապես Մաղկայի սարավանդը:

<sup>118</sup> Պեղումները՝ Հ. Մնացականյանի, նյութերը հրատարակված չեն:

<sup>119</sup> A. Martirosyan, նշվ. աշխ., էջ 108:

էլաոի № 7 դամբարանում հայտնաբերված պերճանքի առարկաների շարքը պետք է դասել անագային բրոնզից պատրաստված երկու ոչ մեծ քորոցները (նկ. 133, 134; 1, 2ՊՊԹ, № 2246/3): Մեկը սնկաձև գլխիկով է, անցքը ցողունի միջին, լայն մասում (նկ. 133; 1), մյուսի գլխիկը գրնդաձև է: Նրա շեղանկյունաձև կտրվածքով անցքը, հակառակ նախորդի, ցողունի վերին մասում է, գլխիկին ավելի մոտ, իսկ ցողունը նախորդից նուրբ է և դեպի ցած աստիճանաբար սրվում է (նկ. 133; 2):

Ձարդաքորոցներն ընդհանրապես շատ վաղ ծագում ունեն: Միջագետքում նրանք գործածվել են սկսած վաղ դինաստիական ժամանակաշրջանից<sup>120</sup>: Լ. Վուլին ոսկուց, արծաթից պատրաստված քորոցների յոթ տիպ է առանձնացնում և նշում, որ այդ քորոցների անցքի միջով անցնում է լար, որին ամրացվում էր ուլունք կամ զլանաձև կնիք<sup>121</sup>:

Սնկաձև գլխիկով քորոցներ հայտնաբերվել են Ուրի դամբարաններում, Հյուսիսային Սիրիայում՝ Թել-Բրակում<sup>122</sup>, իսկ Ռաս-Շամրա Ուզարիթում, Բիրլոսում, էլ Համմալում, Թել-Ասում, Մեգրիդում, Տրոյա III-ում, Տարսուսում, Ալաշա-Հույուկում և Ալիշար-Հույուկ II-ում գտնվել են էլաոի վերոհիշյալ քորոցների երկու տեսակների վաղ օրինակները<sup>123</sup>:

Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Անդրկովկասում սնկաձև գլխիկով քորոցները լայն տարածում են գտնում սկսած միջին բրոնզի դարաշրջանից: Նման քորոցներ հայտնաբերվել են Մեծամորում, Կարմիր վանքում<sup>124</sup>, Մաղկայի V և XVII դամբարանաբլուրներում<sup>125</sup>, Հարավային Օսեթիայում, Նուլի գյուղի մոտ, 1931 թ. Ե. Պլեյլինայի և Կ. Սմիռնովի կողմից պեղված կուրեկ-տիվ թաղումներով դամբարաններում<sup>126</sup>, նաև Տլիի դամբարաններում<sup>127</sup>:

<sup>120</sup> K. R. Maxwell-Hyslop, Western Asiatic Jewellery c 3000-612, B. C., London, 1971, p. 12-13.

<sup>121</sup> Նույն տեղում, էջ 13, 25:

<sup>122</sup> Նույն տեղում, էջ 12-18, նկ. 10a, էջ 25, նկ. 14a:

<sup>123</sup> Cl. Schaeffer, Stratigraphie Comparée et Chronologie de l'Asie Occidentale, London, 1948, pl. XII, fig. 56; 1-3, pl. XVI, fig. 59, 67-69, 104; 17, 18, 138, 141, 164; 6, 173.

<sup>124</sup> A. Martirosyan, նշվ. աշխ., էջ 51, նկ. 20a; 1;

<sup>125</sup> Զ. Գոգաձե, Периодизация и генезис..., табл. 17; 2, 24; 7.

<sup>126</sup> Բ. Կոֆտյան, Археологическая маршрутная экспедиция, 1945, стр. 31, табл. XVII; 1.

<sup>127</sup> Ե. Ետև, Очерки древней истории и археологии Юго-Осетии, Тбилиси, 1971, стр. 102, рис. 27; 6, 7.

էրդրումի մոտ (Քյոփրի-Քյոյում) հայտնաբերված սնկաձև գլխիկով քորոցները թվագրվում են մ. թ. ա. XIV դարով<sup>128</sup>, իսկ Գեղարտուի № 3 դամբարանում հայտնաբերվածը՝ մ. թ. ա. XIII—XII դդ.<sup>129</sup>:

Մեղ մոտ, ինչպես Ուրում, այդ քորոցների էույն ֆունկցիան կատարելը, վկայում է Արթիկի մ. թ. ա. XI—XI դդ. թվագրվող № 355 դամբարանում հայտնաբերված սնկաձև գլխիկով քորոցը, որի անցքի երկու կողմերին կայած են մածուկից պատրաստված զեղնավուն ուլունքներ (2ՊՊԹ, № 2327/384)<sup>130</sup>: Հայրավանքի ուշ բրոնզե-դարյան դամբարաններից մեկում, կմախքի կրծոսկրների վրա գտնվել են բրոնզե լարին հագցրված քորոցների և ուլունքների մի ամբողջ շարան, սրանցով զարդարված է եղել հանգուցյալի հագուստի կրծքի մասը<sup>131</sup>:

Սնկաձև գլխիկով նման տասներկու քորոցներ հայտնաբերվել են Զանգեզուրում (2ՊՊԹ, № 962/5—11), ծարիրից քառանկյունաձև ութ ճարմանդների հետ (աղ. XXX, 7, 2ՊՊԹ, № 962/4): Բացառված չէ, որ նրանցով նույնպես զարդարված է եղել հանգուցյալի շրջագգեստը:

Սնկաձև գլխիկով քորոցներ հայտնաբերվել են Օզնիի ուշ բրոնզի դարաշրջանին վերագրվող աղջկա դամբարանում<sup>132</sup>, Բեշտաշենի մոտի դամբարանադաշտի մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող № 20, 27 դամբարաններում<sup>133</sup>, Սամթավրոնում<sup>134</sup>, Հարավային Օսեթիայի Ստիրֆազ գյուղի մոտ պեղված՝ ուշ բրոնզեդարյան կրոմլեխներում<sup>135</sup>:

Սակայն հիշատակված զուգահեռներից զատ, էլաոի սնկաձև գլխիկով քորոցին հար և նման է և կարծես մի կաղապարում լինի ձուլված Պարսկական Թալիշում հայտնաբերվածը, որը Շեֆերը թվագրում է մ. թ. ա. 1450—1350 թթ.<sup>136</sup>: էլաոի քորոցի նման Պարսկական Թալիշի քորոցների օվալաձև ճեղքվածքով անցքը ցողունի գրեթե կենտրոնական մասում է, հակառակ վերոհիշյալ մյուս քորոցների:

<sup>128</sup> A. Martirosyan, նշվ. աշխ., էջ 93:

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 93, աղ. XXXV:

<sup>130</sup> T. Хачатрян, նշվ. աշխ., էջ 212, նկ. 125:

<sup>131</sup> Հ. Մնացականյանի բանավոր հաղորդումից:

<sup>132</sup> Բ. Կոֆտյան, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, Тбилиси, 1948, стр. 33—34, табл. VIII; 7—9.

<sup>133</sup> Նույնի՝ Археологические раскопки в Тriaлетии, стр. 73, рис. 80; 3, 4.


<sup>134</sup> T. Чубинишвили, Древнейшие археологические памятники Мцхета, стр. 101, рис. 13.

<sup>135</sup> Ե. Ետև, նշվ. աշխ., էջ 137, 140, նկ. 47:

<sup>136</sup> Cl. Schaeffer, նշվ. աշխ., նկ. 217, 15, 16:

Այնուամենայնիվ, էլաոի քորոցների միջավայրը ավելի քան կապվում է մ. թ. ա. II հազարամյակի ամենավերջի հուշարձանների հետ: Այսպիսով, բրոնզե քորոցները մարդու կենցաղի մեջ են մտել սկսած հնագույն ժամանակներից և լայն տարածում գտել նաև ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում:

Բավական վաղ ծագում ունեն նաև ապարանջանները, մանյակներն ու մատանիները, սրանց բրոնզե և կապարե օրինակները: Հայտնաբերվել են էլաոի № 7 դամբարանում (նկ. 134):



Նկ. 134. Քորոցներ, մատանի, ապարանջաններ և մանյակ № 7 դամբարանից:

Բրոնզի տափակ լարից պատրաստված, ծայրերն իրար վրա եկած մատանին (նկ. 134; 2, նկ. 135; 18, 2ՊՊԹ, № 2246/14) բազմաթիվ զուգահեռներ ունի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի հուշարձաններում: Նրանց կարելի է հանդիպել գրեթե յուրաքանչյուր դամբարանում:

Բրոնզե կլոր ձողից պատրաստված երկու ապարանջանների ծայրերը մի փոքր քերված, տափակեցված են և իրար վրա բերված (նկ. 134; 3, աղ. XXVI; 3, 2ՊՊԹ, № 2246/7): Երրորդ ապարանջանը ներսից տափակ է, դրսից կլոր, դեպի ծայրերն ապարանջանը մի փոքր նրբանում է, ծայրերը կտրած են և իրարից հեռու (նկ. 134; 4, աղ. XXVI; 4, 2ՊՊԹ, № 2246/6): Իրար վրա ծավլված և մոտեցող ծայրերով բրոնզե կլոր, նուրբ ձողից պատրաստված ապարանջանները հատկա-

պես բնորոշ են մ. թ. ա II հազարամյակի վերջով թվագրվող հուշարձաններին, օրինակ՝ Արթիկի դամբարանների II խմբին, որտեղ, ինչպես պեղող հնագետն է նշում, նրանց ուղեկցում են տարբեր ուլունքներ, օձուկավոր բունքազարդեր<sup>137</sup>։ Նման ապարանջաններ հայտնաբերվել են Դիլիջանի Կամոյի փողոցի դամբարաններից<sup>138</sup>։

Իրար վրա ծավալած վերջավորություններով էլաոի տիպի ապարանջաններ գտնվել են Հրազդանի շրջանի Օզունլար գյուղում՝ 1963 թ. շինարարական աշխատանքների ժամանակ բացված դամբարանում (ՀՊՊԹ, № 2267/1, 2), ծարիրից կոճակների, բրոնզից փոքրիկ պանդուկի, երկաթալուծն ցողունով, գնդաձև գլխիկով կախիկի, բարդիոնից կնքամոմատիպ կոտորած ուլունքների հետ (ՀՊՊԹ, № 2267/1), որոնք, ինչպես ստորև կտեսնենք, հարևան են էլաոի № 7 դամբարանում հայտնաբերվածներին։

Մոտեցող ծայրերով բրոնզե նուրբ ձողից, աղնվածանգով պատած մի ապարանջան հայտնաբերվել է Թումանյանի ենթաշրջանի Քարինջ-Մարց խճուղու շինարարության ժամանակ, Մամխորի կալ տեղամասում բացված քարակղզից (ՀՊՊԹ, № 1708), որտեղ հայտնաբերվել է նաև ծարիրից մեղալիոն (ՀՊՊԹ, № 1711)։

Նմանատիպ բրոնզե ապարանջաններ հայտնաբերվել են նաև Մուխանի քարակղզիներում<sup>139</sup>, Երևանի Զեյթուն թաղամասի դամբարաններում<sup>140</sup>։ Նրանք բնորոշ են Թաքիայում հայտնաբերված իրերի ժողովածուին<sup>141</sup>։

էլաոի դամբարանում գտնված, կապարի կլոր ձողից պատրաստված երկու ապարանջանների ծայրերը կոտրված են (նկ. 134; 5, ՀՊՊԹ, № 2246/8, 113), իսկ ձվաձև ծավաժքով մանյակներից միայն մեկն է ամբողջական (նկ. 134; 6, ՀՊՊԹ, № 2246/4, 5, 113)։ Մանյակի մի փոքր տափակեցրած, ծակած, օձի գլխի տպավորություն թողնող ծայրերն իրար վրա են բերված։ Կապարից նման մի մանյակ էլ, ինչպես վերը տեսանք, գտնվել էր էլաոի պատահականորեն բացված դամբարանում (աղ. XX; 7)։

<sup>137</sup> Т. Хачатрян, Материальная культура..., стр. 68, 69, табл. 4.

<sup>138</sup> «Կատալոգ Դիլիջանի...», էջ 30, 50, աղ. XXVI; 7, 8.

<sup>139</sup> А. Мнацаканян, Археологические раскопки на осушенной территории оз. Севан, СА, XXIII, 1955, стр. 193, рис. 7; 1, 4, 6.

<sup>140</sup> Ս. Ամիրջան, նշվ. աշխ., էջ 271, աղ. II; 10, էջ 273.

<sup>141</sup> А. Мартиросян, Т. Хачатрян, Комплекс изделий из могильника Такиа (Агвесацзор), ԳԱ ՎՏԵԿԿԱՊԻՐ, № 11, Երևան, 1959, էջ 93—94, նկ. 7.

Որակական սպեկտրալ անալիզի տվյալներով այս մանյակներում և ապարանջաններում կապարը հիմքն է, սակայն ունի մեծ քանակությամբ ծարիրի և անագի, բխմուտի խառնուրդ։ Ապարանջաններից մեկում բխմուտի և ծարիրի խառնուրդից բացի կա նաև 4,5% անագ (ՀՊՊԹ, № 2246/8)։ Ճիշտ նույն եղանակով են պատրաստված Մուխանի № 3 դամբարանում, Երկաթե դաշույնի հետ հայտնաբերված կապարից ապարանջանները, որոնց ծայրերը կոտրված են և էլաոի մանյակների նման՝ ծակած (ՀՊՊԹ, № 1921/18, 19)։ Վերը տեսանք, որ Մուխանի նույն դամբարաններում են էլաոի նաև բրոնզե ապարանջանների զուգահեռները։ Մուխանի ցամաքած տարածության 1951—1952 թթ. պեղված վերոհիշյալ դամբարանները թվագրվում են մ. թ. ա. X—VIII դդ.<sup>142</sup>։

Կապարից ապարանջաններ, տարատեսակ պերճանքի առարկաներ, այդ թվում նաև մեղալիոններ, Ժ. Մորգանի կողմից հայտնաբերվել են Շեյթան-դաղում<sup>143</sup>։

էլաոի դամբարանում գտնվել են կապարից պատրաստված նաև այլ իրեր՝ մինիատյուր թըռչուն (նկ. 135; 19, ՀՊՊԹ, № 2246/19), որն իր զուգահեռները դեռևս չունի, տանձաձև փոքրիկ կախիկ (նկ. 135; 7, ՀՊՊԹ, № 2246/21), քառակող ձող՝ վրան անցքեր (աղ. XXVI; 7), օվալաձև գլխիկով, գլանաձև երկար ցողունով հմախլ-կախիկ, որում կապարի հետ դարձյալ խառնված է մեծ քանակությամբ բխմուտ և ծարիր (աղ. XXVI; 6, ՀՊՊԹ, № 2246/15), նրա բրոնզե օրինակը, ինչպես վերը տեսանք, Օզունլարի դամբարանում էր (ՀՊՊԹ, № 2267/3), Կամոյում (ՎՊԹ, № 50—66, VI : 24)։ Նման կախիկներ, սակայն երկկոնիկ գլխիկով, հայտնաբերվել են նաև Մինդեշաուրի մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբով թվագրվող դամբարանաբլուրներում<sup>144</sup>։

էլաոի դամբարանում հայտնաբերված կապարից պատրաստված քսան մեծ, կիսագնդաձև կոճակները (աղ. XXVI; 1, 2, աղ. XXVII; 1, ՀՊՊԹ, № 2246/10) ծարիրից նմանատիպ կոճակների հետ հավանաբար լանջապանակին են ծառայել։ Նրանք եզրերին փոքրիկ ելուստ ունեն, որը, հավանաբար, ստացվել է ունեխով կաղա-

<sup>142</sup> А. Мнацаканян, նշվ. աշխ., էջ 193, նկ. 9; 2, 3, էջ 187.

<sup>143</sup> J. Morgan, նշվ. աշխ., էջ 50, նկ. 10.

<sup>144</sup> Г. Асланов, Р. Ваидов, Г. Ионе, նշվ. աշխ., աղ. XVII: 25, 26, 30, 31:

պարից հանելու պահին (աղ. XXVII, վերևում)։ Ներսի կողմից կոճակներն ունեն աղեղնաձև կամ բրջակ՝ թևի համար անցքով։ Նման կոճակներ հայտնաբերվել են նաև Կիրովականի «Գիմաց-թաղ» Կուրդինյան փողոցի մոտ (ԿԵԹ, № 219/5), 1944 թ. պեղված (ՀՊՊԹ, № 1764—1768) դամբարաններում և Լճաշենի ուշ բրոնզի վաղ փուլերով թվագրվող № 1 դամբարանությունում (ՀՊՊԹ, № 2007/34, 60), Ռեդկին-լագերում, Մուրյեի պեղած դամբարաններում<sup>145</sup>։

Ուշագրավ են էլաոի դամբարանում հայտնաբերված, փոքրիկ կիսագնդաձև ելուստներով դարդարված կապարից գնդաձև ուլունքները։ Նրանք թվով վեցն են (նկ. 136, ՀՊՊԹ, № 2246/23) և հավանաբար ձուլվել են երկփեղկանի կաղապարում։ Ուլունքների վրա պահպանվել են ձուլման կարերը։ Կապարից ուլունքներ վերը տեսանք, որ բնորոշ են էլաոի № 27 դամբարանին (աղ. XXI; 7)։ Կապարից գնդաձև ուլունքներ հայտնաբերվել են նաև Մուսի-Երիում<sup>146</sup>։

Բազմազան են էլաոի դամբարանում հայտնաբերված պղնձից և բրոնզից պատրաստված հմախլ-կախիկները։ Գնդաձև, ծակոտկեն տասնընչորս մեծ գանգակներ շղթայի մասերի հետ դամբարանում հայտնաբերվեցին մեկ կույտով։ Նրանք ներսում ունեն փոքրիկ քար՝ գանգը հնչեցնելու համար (աղ. XXVIII, ՀՊՊԹ, № 2246/9)։ Երեքը պատրաստված են կապարային բրոնզից, իսկ տասնմեկը՝ մաքուր պղնձից։ Նման գանգակները բավական լայն տարածում ունեն ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի հուշարձաններում։ Մեծամորի № 32 դամբարանում նրանք հայտնաբերվել են արծվազուլի կանթերով հնազույն բուրվառի շղթաներին ամրացված (ՄԹ, № 4/74)։ Նմանատիպ գանգակներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են Լճաշենի դամբարանությունում, Արթիկում<sup>147</sup>, Կարմիր-բլուրի մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող № 1 դամբարանում, Կարմիր-բլուրում (ՎՊԹ, № 28—58 : 58), Թաղավորանիստում (ՀՊՊԹ, № 1535), Կամոյում (ՀՊՊԹ, № 1566)<sup>148</sup>, Անիի ուսումնասիրվող ժամանակաշրջանի դամբարաններում (ՀՊՊԹ, № 123/1457), Ռեդկին-լագերում, Դիլիջանի Կամոյի փողոցի քարակղզիներում<sup>149</sup>։

<sup>145</sup> А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 201.


<sup>146</sup> J. Morgan, նշվ. աշխ., էջ 108, նկ. 69.

<sup>147</sup> Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 73, աղ. 5.

<sup>148</sup> А. Мартиросян, Город Тейшебаши, стр. 58, 59, рис. 26.

<sup>149</sup> Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 173, նկ. 139, էջ 152, նկ. 189.

Այս գանգակների տարատեսակները լայն տարածում ունեն Շամբոր դեօի հովտի հուշարձաններում<sup>150</sup>, Կիրովաբաղ-Խանյարի մշակույթի



Նկ. 135. Պերճանքի առարկաներ № 7 դամբարանից։


դարգացման ուշ փուլում (մ. թ. ա. XI—IX դդ.)<sup>151</sup>, որոնց սահմանն արևելքում ընդգրկում է Մինդեշաուրը ներառյալ<sup>152</sup>։

<sup>150</sup> «Կատալոգ Դիլիջանի...», աղ. XXVIII; 3.

<sup>151</sup> А. Ивановский, նշվ. աշխ., աղ. IX:

<sup>152</sup> Н. Минкевич-Мустафаева, նշվ. աշխ., աղ. V, էջ 131, աղ. VIII:

էլաոի դամբարանում պղնձից կամ բրոնզից պատրաստված տարբեր տիպերի գինդեր-կախիկներ են հայտնաբերվել (նկ. 135, շՊՊԹ, № 2246/21):



1 0 1

Նկ. 136. Կապարից և ծարիրից ուլունքներ № 7 դամբարանից:

1. Գնդաձև գինդեր լայն օղակով՝ կախելու համար (նկ. 135; 8): նմանները գտնվել են Կամոյում (ՎՊԹ, № 64—65 : V—3), Օղունլարում (ՇՊՊԹ, № 2267/5), Կիրովականի «Գիմաց-թաղում» 1959 թ. պեղված դամբարանում (ՇՊՊԹ, № 2271/5), Արթիկի դամբարաններում (ՇՊՊԹ, № 2255/291)<sup>153</sup>:

2. Տանձաձև ձգված իրանով կախիկներ, որոնցից երեքն անզարդ են, իսկ մեկն ունի հորի-

<sup>153</sup> В. Фоменко. Грунтовое погребение № 63 в Мингечауре, МКА, III, Баку, 1953, стр. 70—73, табл. I, II.

զոնական խորաքանդակ գոտիներ (նկ. 135; 3, 6, 9, 10): Չուգահեռները դարձյալ «Գիմաց-թաղի» վերոհիշյալ դամբարանում են (ՇՊՊԹ, № 2271/5), մեկ շարան էլ հայտնաբերվել է Մեղրիում (ՇՊՊԹ, № 124/20), Կամոյում (ՎՊԹ, № 20—05: IV—22), Կարմիր-բերդում (ՎՊԹ, № 28 : 58—75), Մինգեչաուրում<sup>154</sup>:

3. Երկկոնիկ իրանով, մանր գնդիկներով զարդարված կախիկներ (նկ. 135; 4, 5): նմանները հայտնաբերվել են Կարմիր-բերդում (ՎՊԹ, № 28—58 : 75, 99), Մինգեչաուրում<sup>155</sup>:

4. Գդալաձև կախիկներ՝ երկու տարբեր տիպի (նկ. 135; 1, 14, ՇՊՊԹ, № 2246/21), որոնք, անշուշտ, մեծ հմախլ-կախիկների կոմպոզիցիոն մասերն են կազմել: Օրինակ՝ Ջարխեչում Մուրջի պեղած դամբարաններից մեկում հայտնաբերվել են հասկազարդ, սպարուրազարդ, եռանկյունաձև հիմքից շղթայով կախված՝ տանձաձև և գդալաձև հմախլներ<sup>156</sup>: նմանատիպ կախիկների մի փունջ էլ հայտնաբերվել է Կիրովականի «Գիմաց-թաղի» Կուրդինյանի փողոցի դամբարաններից մեկում (ԿՆԹ, № 219/4), ծարիրից մեղալիոնների, ոսպաձև ուլունքների հետ միասին: Յա. Գումելի՝ Խանլարի № 1 դամբարանաբլուրում հայտնաբերած գդալանման հմախլը, որի ծայրերին շղթաներով կախված են թռչունների ծակոտկեն ֆիգուրները<sup>157</sup>, անշուշտ, արվեստի լավագույն նմուշների շարքը կարելի է դասել:

Գդալիկից կախված գդալիկների մի ամբողջ կոմպոզիցիա է ներկայացնում է. Ռեսլերի՝ Խանլարում պեղածը<sup>158</sup>: նման մի գդալիկ հայտնաբերվել է Խաչրուլաղում<sup>159</sup>:

էլաոում գտնված հմախլ-կախիկներից մեկն էլ պատրաստված է հղջերուի ատամից (նկ. 135; 2, ՇՊՊԹ, № 2246/18):

№ 7 դամբարանի նյութերում մեծ տեղ են զբաղեցնում ծարիրից պատրաստված պերձանքի ատարկաները: Գրանք մեղալիոններ են, տարասևսակ կախիկ-հմախլներ, կոճակներ, ուլունքներ:

<sup>154</sup> Г. Асланов, Р. Вагдов, Г. Нонз, Կշվ. աշխ., աղ. XXXVIII: 8:

<sup>155</sup> Նույն տեղում, աղ. XVII: 25, 26, 30, 31:

<sup>156</sup> А. Мартыросян, Կշվ. աշխ., էջ 202:

<sup>157</sup> Я. Гуммель, Կշվ. աշխ., էջ 16, աղ. IX: 26:

<sup>158</sup> ОЛК за 1899. СПб, 1902, стр. 59, р.с. 110.

<sup>159</sup> III. Садыхзаде, Исследование памятников Ходжалы-Кедабекской культуры в Хачбулаке, Труды музея истории Азербайджана, т. VII, Баку, 1968, стр. 5—16, табл. VI.

Շրջանաձև, տափակ, կախելու անցքի ակունքիկով տաս մեղալիոններ են հայտնաբերվել՝ զարդարված ուլիֆ երկրաչափական պատկերներով (նկ. 137, աղ. XXVII: 6, ՇՊՊԹ, № 2246/16): Նրանք ունեն 1,8—2 սմ տրամագիծ, ձուլվել են հատուկ կաղապարում, երեք մեղալիոնների զարդամոտիվը «S»-աձև հյուսվածքներով են արտահայտված, որոնք բավական չորօրինակ են և դեռևս շունեն իրենց զուգահեռները: Մյուսների զարդապատկերների հիմքը խաչն է և նրանով առաջացած տարածությունները կամ բջիջածածկ են, կամ կողբերից եռանկյունաձև ելուստներ ունեն, կամ պսակված են մեծից-փոքր, իրար մեջ հագած անկյուններով: Ծարիրից շրջանաձև, տափակ մեղալիոնների ամենավաղ օրինակները (հինգ հատ), հայտնաբերվել են Լճաշենի ուշ բրոնզի վաղ փուլերի № 1 դամբարանաբլուրում (ՇՊՊԹ, № 2007/90): Սակայն նրանց զարդերը, հակառակ էլաոի, ծակոտկեն են, որով և տարբերվում են ատուրե ներկայացվող մեղալիոններից:

էլաոի մեղալիոնների զուգահեռները մի ստվար խումբ են կազմում, որոնք հիմնականում երևան են գալիս № 7 դամբարանին համանման նյութերի միջավայրում: Նրանց ամենամոտ զուգահեռները Ռեզկին-լագերի Ֆ. Բաչերի պեղած վաղ երկաթի դարաշրջանի դամբարանային նյութերում են, որոնք, ինչպես վերը տեսանք, ուղեկցվում են էլաոի տիպի դաշույնով, ծակոտկեն զանգակներով, ծարիրից սրտաձև կախիկներով, բազմաթիվ կոճակներով, տարատեսակ, մեծ բանակույթյամբ կանելուրազարդ, ոսպաձև, տակառաձև, հատիկաձև և այլ տեսակի ուլունքներով<sup>160</sup>: Ի. Մ. Ջաֆարյանը 1926 թ. Ռեզկին-լագերում կատարած պեղումների ժամանակ հայտնաբերել է ծարիրից խաչազարդ շրջանաձև մեղալիոն և շեղանկյունաձև ցանցազարդ կախիկ<sup>161</sup>: Չնայած Կ. Շեֆերը Ռեզկին-լագերի վերոհիշյալ նյութերը թվագրում է մ. թ. ա. 1300—1100 թթ.<sup>162</sup>, սակայն ավելի համոզիչ է Հ. Ա. Մարտիրոսյանի թվագրությունը՝ մ. թ. ա. X դ. վերջ և IX դ. սկիզբ<sup>163</sup>:

<sup>160</sup> F. Bayern's, Կշվ. աշխ., աղ. IX: «Museum Caucasicum», вып. V, 1902, составила П. С. Уварова, стр. 48, 50, 59, 60, 61.

<sup>161</sup> Е. Крупнов, Каякентский могильник-памятник древней Албании, Труды ГИМ, вып. XI, М., 1940, стр. 12.

<sup>162</sup> С. I. Schaeffer, Կշվ. աշխ., ԿԿ. 298; 4—8, էջ 506:

<sup>163</sup> А. Мартыросян, Կշվ. աշխ., էջ 200:

Աղստե գետի այլ ափին, «Մեծ Չալ» կոչվող վայրում Ա. Բորբինսկու պեղած դամբարաններից մեկում հայտնաբերված մեծ և փոքր ծարիրե մեղալիոնների զարդապատկերը, էլաոինի նման,






1 0 1

Նկ. 137. Ծարիրե մեղալիոններ № 7 դամբարանից:



դարձյալ խաչն է և ունի ֆեոնանկյունները<sup>164</sup>։ Ավելորդ չէ նշել, որ այդ դամբարաններում, մարդուն, բացի կավամաններից, ապարանջաններից, օձուկով քունքազարդից, ուղեկցել են նաև ծարիրից կիսալուսնաձև կախիկ-Տմախի, կոճակատիպ հինգ կախիկներ, շեղանկյունաձև և խաչաձև կախիկներ ու 125 մանր ուլունքներ սարդիոնից, բրոնզից և ծարիրից<sup>165</sup>։

Մարիրից շրջանաձև տափակ մեղալիոններ հայտնաբերվել են վաղ երկաթի դարաշրջանի մեկ



Նկ. 138. Կապարի մեղալիոն Իջևանից (1), ծարիրի մեղալիոններ Կիրովականի «Գիմաց-թաղից» (2-6)։

այլ հուշարձանում՝ Ջարխեջում, Մուրյեի պեղումների ժամանակ։ Նրանցից մեկի կենտրոնում սվաստիկա է պատկերված, իսկ մյուս, ավելի փոքր մեղալիոնը՝ խաչազարդ է, անկյուններում՝ ունի ֆեոնանկյունները<sup>166</sup>։

Ուշագրավ են նաև Կիրովականի «Գիմաց-թաղի» սեղանաձև բարձունքի վրա գտնված ծարիրի ինը մեղալիոնները։ Նրանցից երեքը հայտնաբերվել են մ. թ. ա. XI—X դդ. թվագրվող նյութերի միջավայրում, 1935 թ. պեղված № 3 ընտանեկան դամբարանում, կնոջ և երեխաների կմախքների հետ<sup>167</sup>։ Մեծ է ամենափոքր մեղալիոնների երկու երեսն էլ զարդարուն (ՀՊՊԹ, № 1236/93, 96)։ Մեծի մեկ երեսին սվաստիկա է, մյուսինը՝ հինգ կիսազրնգերի և անկյունների զարդանկարը (նկ. 138; 2, աղ. XXIX; 3 և աղ. XXX; 1), իսկ փոքրը, որ պատկանել է, անշուշտ, երեխային, մեկ երեսին ունի խաչ, մյուս երեսին՝ իրար մեջ հագած անկյուններ, որոնց կենտրոնը պսակում է շեղանկյունին (նկ. 138; 3)։ Այս մեծ և փոքր մեղալիոնները ձուլվել են երկմասանի կաղապարներում։ Միջին մեծության մեղալիոնի միայն մեկ երեսն է զարդարուն (նկ. 138; 6, աղ. XXIX; 2)։ Նույն դամբարանում հայտնաբերված ծարիրից, կապարից, սարդիոնից և ապակեման զանգվածից տարատեսակ ուլունքների (աղ. XXIX; 4—7, 10) զուգահեռները դարձյալ էլաոի № 7 դամբարանի նյութերում են։

Չափերով էլաոի մեղալիոններին ավելի մոտ է Կուրդինյան փողոցի դամբարաններից մեկում հայտնաբերվածը, որի զարդանկարը, սակայն, վարդյակն է (նկ. 139; 3, ԿԵԹ, № 219/7)։ Ուշագրավն այն է, որ այս դամբարանները էլաոի նման հարուստ են ծարիրից պերճանքի և այլ առարկաներով՝ զարդարուն օվալաձև ուլունքներով, էլաոի տիպի վահանաձև մեծ և փոքր կոճակներով, նաև զարդարուն մակերես ունեցող կոճակներով, որպես ուլունքներով (նկ. 139; 1, 2, 4—6, ԿԵԹ, № 219/5)։ Բացի այդ, բրոնզից պատրաստված մարդակերպ ֆիգուրից և շղթաներից կախված գդալաձև, տանձաձև և զնդաձև հմախիները (ԿԵԹ, № 219/5), որոնք այնքան բնորոշ են մ. թ. ա. X—IX դդ. մշակույթին, նույնպես իրենց զուգահեռներն ունեն էլաոի № 7 դամբարանի նյութերում։

<sup>166</sup> С. Есаян, Амулеты, связанные с культом солнца из Армении, СА, № 2, М., 1968, стр. 259, рис. 3; 8, 10.

<sup>167</sup> Կ. Ղաֆադարյան, Դամբարանների պեղումներ Կիրովականում, ԳԱ «Տեղեկագիր», № 3—4, 1941, երևան, էջ 58, եկ. 6։

Մյուս կողմից, Կուրդինյան փողոցի դամբարանների ծարիրից վերոհիշյալ զարդարուն կոճակների զուգահեռները լճաշենի 1956 թ. պեղված № 2 դամբարանբլուրում են, իսկ վարդյակատիպ զարդապատկերով մեղալիոնի զուգահեռը (սակայն, պատրաստված գիշերից) լճաշենի մեկ այլ դամբարանբլուրում (ՀՊՊԹ, № 2188/187), որի նյութերը ընդհանրապես մի փոքր ավելի վաղ են էլաոից։

Երկու այլ մեղալիոններ հայտնաբերվել են Կուրդինյան փողոցի այլ դամբարաններից (նկ. 140; 3, 4, ԿԵԹ, № 220—221)։ Կենտրոնական խաչով և եզրային բջիջներով է զարդարված «Գիմաց-թաղի» 1959 թ. պեղված № 1 բարակըղում հայտնաբերված ծարիրի մեղալիոնը, որն ուղեկցվում է էլաոին հար և նման տարատեսակ բրոնզե կախիկներով, սարդիոնից ու մածուկից պատրաստված ուլունքներով, ծարիրից ոսպաձև ուլունքներով (աղ. XXIX; 11, ՀՊՊԹ, № 2171/5, 6) և ուղղադիմ գոտիներով զարդարված տասը կճուճներով<sup>168</sup>։

«Գիմաց-թաղում» ծարիրից մեկ մեղալիոն՝ կենտրոնական խաչի և եռանկյունների զարդանկարով հայտնաբերվել է 1944 թ. պեղված դամբարաններից մեկում (նկ. 138; 4, ՀՊՊԹ, № 1769), իսկ 1966 թ. բացված մեկ այլ դամբարանում (№ 1) ծարիրից երկու մեղալիոնների հետ (նկ. 140; 1, ԿԵԹ, № 441/26) հայտնաբերվել են ծարիրից զլանաձև մեջքով և ցանցկեն կիսաշրջանաձև թևերով ուլունք (նկ. 140; 2), սարդիոնից և մածուկից էլաոի տիպի ուլունքներ, սևանյան տիպի լեզվակավոր դաշույն, տերևաձև դաշույն, փորված հիմքով վանակատից նետասլաքներ (ԿԵԹ, № 441/18, 19, 22, 23, 30), կանխուրազարդ, հասկազարդ, կոճակազարդ խեցեղեն, որոնք իրավամբ թվագրվում են մ. թ. ա. XI—IX դդ.<sup>169</sup>։


Այսպիսով, Կիրովականի մեղալիոններ պարունակող բոլոր դամբարանները էլաոի նման հարուստ են ծարիրից այլ զարդերով և հիմնականում ուղեկցվում են էլաոին համանման նյութերով։

№ 7 դամբարանին ժամանակակից են Թումանյանի շրջանի Մամիսորի կալ տեղամասի քարայրըղում հայտնաբերված նյութերը, այդ թվում

<sup>168</sup> Պեղումները՝ հեղինակի, նյութերը հրատարակված չեն։

<sup>169</sup> Ս. Մեղունյան, Ուշ բրոնզեդարյան դամբարան Կիրովականի «Գիմաց» թաղամասում, էջ 281—285։

նաև ծարիրի մեղալիոնը՝ զարդարված կենտրոնական կիսազնդով և իրար մեջ հագած անկյուններով։ Դամբարանում հայտնաբերվել են նաև դոմինոյի տիպի ուլունքներ (ՀՊՊԹ, № 1706—1714)։ Ավելորդ չէ նշել, որ դոմինոյի տիպի ու-



Նկ. 139. Ծարիրի զարդարուն կոճակներ, մեղալիոն, ուլունք-անջատիչ Կիրովականի «Գիմաց-թաղի» Կուրդինյան փողոցի դամբարանադաշտից։

լունքներ հայտնաբերվել են նաև Ռեդկին-լագերի № 59 դամբարանում, ծարիրից ոսպաձև ուլունքների հետ միասին<sup>170</sup>։


Սամթավրոյում հայտնաբերված ծարիրի մեղալիոնները Կիրովականի նման բջջազարդ

<sup>170</sup> Б. Кюфтин, Археологические раскопки... стр. 57.

են և նույնպես ուղեկցվում են ծարիրն ուլունք-անջատիչներով և ներձկված հիմք ունեցող համախլներով<sup>171</sup>: Ստորև կատաններ, որ վերջիններս հար և նման են էլաոի № 7 դամբարանում հայտնաբերվածներին: Ռեխիեֆ խաչի պատկերով մեկ ծարիրն փորրիկ շրջանաձև մեղալիոն հայտնա-

ները, նաև սարդիոնից և մածուկից բաղմարանակ ուլունքները:

Ավելի բան շքեղ են այս մեղալիոններին ուղեկցող Շամքորի հովտի № 12, 28 քարարկղնե-րում հայտնաբերված ծարիրն, բավական մեծ սկավառակներ-ճարմանդները, կենտրոնում՝ սր-



Նկ. 140. Ծարիրն մեղալիոններ և ուլունք-անջատիչ: Կիրովականի «Իրմաց-Քաղի» տարբեր դամբարաններից:

բերվել է Հյուսիս-արևելյան Կովկասում, հորոչուկյան դամբարանադաշտի № 2 դամբարանում, էլաոի տիպի ծարիրն կիսաշրջանաձև կոճակների, ուլունքների և կախիկների հետ միասին<sup>172</sup>:

Այսպիսով, ծարիրից շրջանաձև, տափակ մեղալիոնների հարավային սահմանն առաջմ էլաոն է, իսկ հյուսիսայինը՝ Սամթվորոն: Արևմտյան Հայաստանի տարածքում վերոհիշյալ ժամանակաշրջանի հուշարձաններ գեոես պեղված չեն և այդ մեղալիոնների տարածման սահմանը մեկ հայտնի չէ: Սևանա լճից արևելք նրանք հայտնաբերվել են Ա. Ա. Իվանովսկու պեղումների ժամանակ: Շամքորի հովտում գտնվածները, շնայած Կիրովականի որոշ մեղալիոնների նման եզերվում են բջջաշարով, սակայն նրանց կենտրոնը վարդարում է քարայծր<sup>173</sup>: Նրանք այլ մանրամասներով էլ մասամբ զանազանվում են վերոհիշյալներից: Անշուշտ, սրանք մեկ միասնական մշակույթի լուկալ տարբերակներ են: Ուշագրավն այն է, որ Շամքորի և Վարանդայի հովիտների քարարկղների և դամբանաբլուրների հիմնական գույքը էլաոի նման պերճանքի առարկաներն են, բրոնզից ապարանջանները և մեծ մասամբ ծարիրից պատրաստված զարդակոճակները, ուլունք-

վաստիկա, նրա շուրջը՝ եղջերուներ, այծեր, եռանկյունիներ, որոնք եզերվում են ջրային թռչուններով<sup>174</sup>: Նման սկավառակներ հայտնաբերվել են նաև Կարա-բուլաղի № 87 դամբանաբլուրում<sup>175</sup>:

Ըստ Ա. Ա. Միլլերի, այս ճարմանդների կենտրոնում պատկերված է երկինքն իր էլեմենտներով, արևը խորհրդանշող սվաստիկայով և ամպերը ներկայացնող շերտներով, ապա երկիրն իր լեռներով, այծերով, եղջերուներով և սկավառակը եզերող ջրային աշխարհը՝ լողացող թռչուններով<sup>176</sup>:

Ուշագրավ են Ա. Ա. Միլլերի դիտողությունները նաև Հյուսիսային Կովկասի բրոնզե շրջանաձև կախիկներ-մեղալիոնների վերաբերյալ: Նա գտնում է, որ դրանք արևի և երկնքի խորհրդանիշներով մոզական շրջաններ են, կախվել են վզնոցի կենտրոնում, ամրացվել նաև մանկական գլխարկներին, հագուստին որպես պահպանիչ հրամախլներ<sup>177</sup>:

Վերը տեսանք, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված ծարիրն մեղալիոնները նույնպես պարուրված են տիեզերական էլեմենտներով, արևը խորհրդանշող վարդյակներով, խաչով, սվաստիկայով, մուրրակները խորհրդանշող ու-

լիեֆ կիսագնդերով ու այլ զարդապատկերներով: Նրանք նույնպես երկնքի, արևի և այլ յուսաստանների պաշտամունքի հետ աղերսով ու մոզական հմախլներ են:


Ծարիրից պատրաստված մեղալիոնները, ինչպես տեսանք, լայն տարածում են գտնում հատկապես մ. թ. ա. XI—IX դդ.:

Շրջանաձև, տափակ մեղալիոնները Հույկական լեռնաշխարհում սկիզբ են առնում գեոես վաղ բրոնզի դարաշրջանում, որի լավագույն ասպացույցներից մեկը Շենգավթում հայտնաբերված ոսկե մեղալիոնն է<sup>178</sup>: Օձուկում (Ուզունյար) գտնված ոսկե հմախլ-կախիկը միջին բրոնզի դարաշրջանի է<sup>179</sup>: Մ. թ. ա. II հազարամյակի II կեսից սկսած, ինչպես վերը տեսանք, մեղալիոններ-հմախլները պատրաստում են նաև կիսաթանկարժեք քարերից (գիշեր, սարդիոն): Մեկ հայտնի են նրանց նաև բրոնզե օրինակները, հայտնաբերված՝ Կամոյում և Ապարանում<sup>180</sup>: Վերջիններս իրենց զարդանկարով հար և նման են Կիրովականի ծարիրն զարդակոճակներին (նկ. 139) և, անշուշտ, նրանց թվագրությունը մ. թ. ա. II հազարամյակի վերջից այս կողմը չի անցնում:

Հավանաբար, ծարիրն մեղալիոններին դուրընթաց գործածվել են նաև կասպից պատրաստվածները, որոնց լավագույն օրինակներից մեկը հայտնաբերվել է Իշխանում (նկ. 138; 1, ՀՊՊԹ, № 1151), սակայն նրանց տարատեսակներն ավելի լայն տարածում են գտնում մ. թ. ա. I հազարամյակի սկզբի հուշարձաններում: Մորզանք Ախթալայի, Մուսի-Սրիի, Շեյթան-դաղի դամբարաններից անիվաձև, ցանցկեն մեղալիոնների մի շարք օրինակներ է հայտնաբերել<sup>181</sup>:

II. Լուսնի մասիկի տիպի կախիկները, որոնցից № 7 դամբարանում գտնվել են երկուսը (նկ. 141; 9, աղ, XXVII; 6, ՀՊՊԹ, № 2246/17), դարձյալ երկնային մարմինների պաշտամունքի հետ են կապվում: Գիշեր քարից նման կախիկներ հայտնաբերվել են Լճաշենի ուլ բրոնզի վաղ փուլի դամբանաբլուրներից մեկում՝ վարդյակազարդ, նույնպես գիշեր քարից պատրաստված մեղալիոնի հետ (ՀՊՊԹ, № 2188/187), իսկ արծաթից

օրինակը գտնվել է Բողազ-Քետում, մ. թ. ա. 1450—1200 թթ. նյութերի միջավայրում<sup>182</sup>: Նմանատիպ բրոնզե մի հմախլ հայտնաբերվել է Անիի դամբարաններից մեկում (ՀՊՊԹ, № 123/1380):



Նկ. 141. Ծարիրն կոճակներ, հմախլ-կախիկներ էլաոի № 7 դամբարանից:

Ծարիրն կախիկներին ձևով ավելի մոտ, լուսնի մասիկի տիպի սարդիոնե հմախլ հայտնաբերվել է Խանյարի № 1 դամբանաբլուրում<sup>183</sup>:

Սակայն էլաոի № 7 դամբարանին ժամանակակից հնավայրերում լուսնի մասիկի տիպի հմախլները դերազանցապես ծարիրից են պատրաստված և նրանց զուգահեռները գրեթե նույն հուշարձաններում են, ինչ որ մեղալիոններին: Ծարիրից նման կախիկներ հայտնաբերվել են Գիլիջանի «Մեծ Չալ»-ի դամբարաններից մեկում,

<sup>171</sup> Т. Чубинская, Կ2Վ. աշխ., էջ 121, աղ. XVIII 307, աղ. XIX, № 3820, 2087, 5495:

<sup>172</sup> А. Круглов, Северо-восточный Кавказ во II—I тысячелетиях, МИА, № 68, М.—Л., 1958, стр. 100—102, рис. 25; 15:

<sup>173</sup> А. Ивановский, Կ2Վ. աշխ., էջ 94, 104, աղ. VI; 7, 8:

<sup>174</sup> Նույն տեղում, էջ 104, աղ. VI; 9, 10:

<sup>175</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>176</sup> А. Миллер, Элементы «неба» на вещественных памятниках. Из истории докапиталистических формаций, Сборник статей к сорокапятилетию научной деятельности Н. Я. Марра, М.—Л., 1933, стр. 144, рис. 11:

<sup>177</sup> Նույն տեղում, էջ 146, 147:

<sup>178</sup> Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, ԿԿ. 45; 1:

<sup>179</sup> Б. Кухтин, Археологические раскопки в Триплетти, стр. 99, рис. 106:

<sup>180</sup> С. Есаян, Կ2Վ. աշխ., էջ 258—259, ԿԿ. 3; 1, 2:

<sup>181</sup> J. Morgan, Կ2Վ. աշխ., էջ 50, ԿԿ. 10, 1, 2, 3, 6, էջ 106, ԿԿ. 69, էջ 159, ԿԿ. 175, 176:

<sup>182</sup> Cl. Schaeffer, Կ2Վ. աշխ., ԿԿ. 183; 36:

<sup>183</sup> Я. Гуммелс, Կ2Վ. աշխ., էջ 17, աղ. X; 47:

խաշաձև զարդապատկերով ծարիրի մեղալիտնի հետ<sup>184</sup>:

Մեզ հայտնի է լուսնի մահիկի տիպի հմախիլ նաև կաղապարը, Մեծամորի մ. թ. ա. I հազարամյակի սկզբով թվագրվող պերճանքի առարկաների եռափեղկ կաղապարի վրա<sup>185</sup>:

III. Ներձկված հիմքով կամ «սրտաձև» հմախիլներ հայտնաբերվել են հինգ հատ (նկ. 141; 10 և աղ. XXVII; 6, ՀՊՊԹ, № 2246/17): Նմանատիպ կախիկներ հայտնաբերվել են Ռեդկին-լագերում<sup>186</sup>, Սամթավրոյում<sup>187</sup>, Մինգեշաուրում (ԱՊԹ, № 11246): Նման մի կախիկ, սակայն բրոնզից, հայտնաբերվել է Հյուսիսային Օսեթիայի վերին Ռուխտա դամբարանադաշտում, ծարիրի այլ տիպի կախիկների հետ<sup>188</sup>:

Որակական սպեկտրալ անալիզի տվյալներով, էլյառի վերոհիշյալ հմախիլներում ծարիրի խառնուրդում շատ է կապարը, կա նաև անագ:

IV. Բավական մեծ թիվ են կազմում ծարիրից պատրաստված տարբեր մեծություն վահանաձև կոճակները (աղ. XXVII; 1, 4), որոնք թելի համար պատրաստված անցքի տարբեր ձևեր ունեն և ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

ա) Կիսագնդաձև ուռուցիկ քսանհինգ փոքր կոճակներ, որոնք կապարե մեծ կոճակների նման ներսից ունեն աղեղնաձև կամրջակ՝ թելի համար անցքով (նկ. 141; 1, 2, 7, ՀՊՊԹ, № 2246/11):

Որակական սպեկտրալ անալիզի տվյալներով նրանց հիմքը ծարիրն է, ունեն կապարի մեծ պարունակություն և շնչին քանակով անագ: Նման կոճակներ հայտնաբերվել են Կիրովականում (ՀՊՊԹ, № 1525), Եղեգնուտում (ՀՊՊԹ, № 2054/4), Լուսաձորի № 17 դամբարանում (ՀՊՊԹ, № 2429/94)<sup>189</sup>, Արթիկի № 287 դամբարանում (ՀՊՊԹ, № 2327/152, վերջինիս մակերեսը զարդարուն է):

բ) Վահանաձև, ոչ շատ ուռուցիկ շորս մեծ կոճակներ (տրամագիծը՝ 25 մմ). ներսից ունեն ռելիեֆ կամրջակ՝ անցքով (աղ. XXVI; 10, 12, ՀՊՊԹ, № 2246/12): Նրանց զուգահեռները Լճաշենի դամբարանաբլուրներում են (ՀՊՊԹ, № 2007/

26, 30), Գետաբեկ-Կալաբենդի № 14 դամբարանում և Կարա-բուլազի դամբարանաբլուրի նյութեքում<sup>190</sup>:

գ) Շրջանաձև տասնհինգ կոճակներ, թույլ շեշտված մակերեսով: Նրանք ներսի կողմից անցքի համար ունեն ռելիեֆ, երկայնակի ակոսված գոտի, որը երկու ծայրերում ավարտվում է թելի համար փոքր անցքերով, իսկ կենտրոնում ունեն խաշաձև դրված աղեղնաձև կամրջակ կամ կիսա-չնդաձև ակոսված ելուստ, որոնցով թելը ամուր կնստեր կոճակի տակին (աղ. XXVI; 6, նկ. 141; 3—6, ՀՊՊԹ, № 2246/13): Այս խմբի կոճակների զուգահեռները բավական շատ են: Նման կոճակներ հայտնաբերվել են Կարմիր-բերդում (վՊԹ, № 28—58 : 70, 72), Հրազդանի շրջանի Աթարբեկյան գյուղի դամբարանաբլուրի վերին շերտում (ՀՊՊԹ, № 1939/63), Օզունլարում (ՀՊՊԹ, № 2267/4), Կիրովականի դամբարաններում (ՀՊՊԹ, № 1525, ԿԵԹ, № 219/5), Ակնեում (Ունակ) Ե. Թաղաիշվիլու պեղած № 40 դամբարանում<sup>191</sup>: Զարդարուն մակերեսով կոճակներ հայտնաբերվել են Կուրդինյան փողոցի դամբարաններում (նկ. 139, ԿԵԹ, № 219/5), Լճաշենում (ՀՊՊԹ, № 2007/92), Կարմիր-բլուրի նախաուրարտական մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող դամբարաններից մեկում<sup>192</sup>, Ստեփանակերտի շրջանի Կարմիր-գյուղ բնակատեղիում (աղ. XXVI; 8, ՍՊԵԹ, № 1425):

Բացմազան են նաև էլյառի № 7 դամբարանում ծարիրից պատրաստված ուլունքները, որոնք բոս ձևի ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

1. Նեղ և երկար, վեց նիստերով ուլունքներ, որոնք դեպի ծայրերը մի փոքր սեղմվում են: Որակական սպեկտրալ անալիզի տվյալներով հիմքը ծարիրն է, ունի նաև կապարի խառնուրդ: Նման երեք ուլունքներ են հայտնաբերվել (նկ. 136, ՀՊՊԹ, № 2246/23), որոնց զուգահեռները Կիրովականի «Իմաց-թաղում» են (ՀՊՊԹ, № 1525), իսկ ամենավաղ օրինակները Լճաշենի ուլունքի վաղ փուլի № 2 դամբարանաբլուրում (ՀՊՊԹ, № 2007/147):

2. Փշատի կորիզի տիպի տասներկու ուլունքներ, որոնցում կա բավական կապար և անագ (նկ. 136, ՀՊՊԹ, № 2246/23): Նրանց ութ երկայնակի

<sup>184</sup> ОАК за 1891, СПб., 1893, стр. 117, 118.  
<sup>185</sup> Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 55, նկ. 78:  
<sup>186</sup> F. Vaerns', Նշվ. աշխ., աղ. IX; 13:  
<sup>187</sup> Т. Чубинишвили, Նշվ. աշխ., աղ. XIX; 5995:  
<sup>188</sup> Е. Крупнов, Древняя история Северного Кавказа, стр. 460, табл. XXXVIII; 14.  
<sup>189</sup> Պեղումները՝ Ս. Եսայանի:

<sup>190</sup> А. Ивановский, Նշվ. աշխ., էջ 95, աղ. VIII; 10, 11, էջ 153, աղ. VIII; 10, 11.  
<sup>191</sup> А. Круглов, Նշվ. աշխ., էջ 91:  
<sup>192</sup> А. Мартиросян, Город Тейшебани, стр. 57—59.

ակոսները հատվում են կարճ ռելիեֆ կողերով: Նման ուլունքներ գտնվել են Կարմիր-բերդում (վՊԹ, № 28—58 : 92), «Իմաց-թաղում» (ԿԵԹ, № 496, 497):

3. Կանելուրազարդ փոքրիկ ուլունքներ երկու հատ (նկ. 135; 15, 17, ՀՊՊԹ, № 2246/24): Նման ուլունքներ հայտնաբերվել են էլյառի նաև № 27 դամբարանում: Այս ուլունքների գուգահեռները դարձյալ «Իմաց-թաղի» դամբարանային նյութերում են (ՀՊՊԹ, № 1236/93):

4. Վարդյակատիպ փոքրիկ ուլունքներ ութ հատ, որոնք նարդից ծաղկի սերմերն են հիշեցնում (աղ. XXVII; 7, ՀՊՊԹ, № 2246/24): Նույն մեծությամբ տասներեք նման ուլունքներ գտնվել են «Իմաց-թաղի» դամբարաններից մեկում (ԿԵԹ, № 496), իսկ փոքր և մեծ վարդյակատիպ ուլունքներ՝ 1938 թ. Ե. Մոմջյանի պեղած դամբարանում (աղ. XXX; 4, 5) ոսպաձև ուլունքների (աղ. XXX; 3) և մածուկից պատրաստված, թևվերը սև ներկված սրբազան կավաբեզո-մեղալիտնի հետ (աղ. XXX; 6, նկ. 142, ՀՊՊԹ, № 1536), որն իր զուգահեռները դեռևս չունի: Մարիբից վարդյակատիպ ուլունքներ հայտնաբերվել են Ակնեում՝ Ն. Յա. Մառի և Ե. Թաղաիշվիլու պեղումների ժամանակ<sup>193</sup>:

Ուշագրավն այն է, որ վարդյակատիպ ծարիր ուլունքներ բնորոշ են Դաղստանի Խորոշուկայարենայան մշակույթին: Չորսից-վեց փերանի, մեկ երեսը տափակ, մյուսը վարդյակատիպ ուլունքներ հայտնաբերվել են Խորոշույի № 2 և 29 դամբարաններում, Բուլնակում<sup>194</sup>:


5. Օղակաձև ուլունքներ, որոնցից դամբարանում հայտնաբերվել են 925 հատ (աղ. XXVII; 4, ՀՊՊԹ, № 2246/24): Մեծ քանակությամբ նման ուլունքներ գտնվել են նաև Ռեդկին-լագերում<sup>195</sup>:

6. Սկավառակաձև ուլունքներ կենտրոնական ռելիեֆ խողովակով: Նման հինգ ուլունքներ-կախիկներ են հայտնաբերվել էլյառում (նկ. 141; 11, 12, ՀՊՊԹ, № 2246/17), որոնց զուգահեռները «Իմաց-թաղում» են (աղ. XLIX; 2, 3, ՀՊՊԹ, № 1236/91, 92, № 1526), ավելի վաղ օրինակները՝ Արթիկի ուլ բրոնզի I և II փուլերի դամբարանային նյութերում (ՀՊՊԹ, № 2327/153, 364, 365, 427, № 2208/42, 50, № 2255/18)<sup>196</sup>, իսկ ոսկուց

<sup>193</sup> А. Круглов, Նշվ. աշխ., էջ 82, 91:  
<sup>194</sup> Նույն տեղում, էջ 71, 100—103, նկ. 25; 19, 20:  
<sup>195</sup> „Museum Caucasicum“, вып. V, стр. 61.  
<sup>196</sup> Т. Хачатрян, Նշվ. աշխ., էջ 185, նկ. 92, էջ 217:

պատրաստվածները՝ Լճաշենի № 2 դամբարանաբլուրում<sup>197</sup>:

Նման տիպի ուլունքները բավական լայն տարածում են ունեցել Հին Արևելքի մի շարք երկրներում, ոսկուց պատրաստված նախատիպերը հայտնաբերվել են Այազա-Հույսուկում և այլ նյութերի հետ թվագրվում են մ. թ. ա. 2300—2100 թթ.<sup>198</sup>: Շուտերում նրանք հայտնի են վաղ դինաստիական ժամանակաշրջանից (մ. թ. ա. III հազարամյակ)<sup>199</sup>: Ոսկուց բավական մեծ քանակությամբ նման ուլունքներ հայտնաբերվել են Հնդկաստանում, Մոհենջո-Դարոյում, որը նույնպես թվագրվում է մ. թ. ա. III հազարամյակով<sup>200</sup>:



Նկ. 142. Սրբազան մեղալիտ-կավաբեզո Կիրովականի «Իմաց-թաղի» դամբարանից:

7. Ոսպաձև ուլունքներ, որոնցից դամբարանում գտնվել են 350 հատ (տխտ. II; 1, աղ. XXVIII, ՀՊՊԹ, № 2246/25): Որակական սպեկտրալ անալիզի տվյալներով մեծ քանակությամբ ծարիրի հետ կան կապարի և անագի հետքեր:

Ուշագրավն այն է, որ Ռեդկին-լագերի № 59 դամբարանում հայտնաբերված լանջապանակի գլխաթասակը պատրաստված է եղել ոսպաձև ուլունքներից<sup>201</sup>: Հավանաբար, էլյառի ոսպաձև ուլունքներն էլ ծառայել են նման թասակի, քանի որ դամբարանում կապարից և ծարիրից 64 տար-

<sup>197</sup> А. Мнацаканян, Раскопки курганов на побе-режье оз. Севан в 1956 г., СА, № 2, 1957, стр. 151, рис. 11.  
<sup>198</sup> Ekrem Akurgal, The art of the Hittites, New-Jork, № 4, 19, վերևից 11 շարք, էջ 299. Seton Lloyd, The art of the ancient near east, New-Jork, Washington, 1961, էջ 111, նկ. 74, աջից՝ ուլունքների շարանը:  
<sup>199</sup> Гордон Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1976, стр. 246.  
<sup>200</sup> Նույն տեղում, աղ. XXXI:  
<sup>201</sup> Ե. Кухтин, Նշվ. աշխ., էջ 57:



բեր շափերի կոճակների առկայությունը հուշում է էլաոի № 7 դամբարանում գործվածքի կամ կաշվի վրա այդ կոճակներով կազմված լանջապանակի և նրա թասակի գոյությունը: Ավելորդ չէ նշել, որ բրոնզե կոճակներով է կազմված Գուլիստի «Ջինվորի» դամբարանում հայտնաբերված լանջապանակը<sup>202</sup>, որը ժամանակով մոտ է էլաոին, թվագրվում է մ. թ. ա. XII—XI դդ.<sup>203</sup>:

Ոսպածև ուլունքների ամենավաղ օրինակները լճաշենի մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող դամբարանաբլուրներում են (ՀՊՊԹ, № 2007/151 և 2297/62): Նրանցից մասսայաբար հայտնաբերվել են «Դիմաց-թաղում», մեծ քանակությամբ սրբազան բղբի դամբարանում (աղ. XXX; 3, ՀՊՊԹ, № 1526), մ. թ. ա. XII—XI դդ. թվագրվող դամբարաններում (աղ. XXIX; 4, ՀՊՊԹ, № 1236/91, 92), Կուրդինյան փողոցի դամբարաններում (ԿԵԹ, № 219/6), հեղինակի կողմից պեղված դամբարանում (աղ. XXIX; 4, ՀՊՊԹ, № 2177/6) և Ս. Մեսրոպյանի պեղած դամբարանում (ԿԵԹ, № 496, 497):

Ոսպածև ուլունքներ հայտնաբերվել են նաև Աթարեկյանի № 1 դամբարանում (ՀՊՊԹ, № 1925/75), Գետաբեկ-Կալաբենդի № 37 բարակրդում<sup>204</sup>, Յա. Գումելի ինստիտուտի պեղած № 71, 72, 73 դամբարաններում (Կիրովաբադի երկրագիտական թանգարան № 3755), Մինգչաուրում (ԱՊԹ, № 10763), Շամբորի շրջանի Սելֆալի գյուղի դամբարաններում (Կիրովաբադի երկր. թանգ., № 3706), Սամթավրոյի № 175 (ՎՊԹ, № 3240) և № 264 (ՎՊԹ, № 5494) դամբարաններում, ինչպես նաև Մարիում պեղված դամբարաններից մեկում՝ ոսկուց պատրաստված պարուրազարդ ուլունքների հետ<sup>205</sup>, որոնց զուգահեռները լճաշենի մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող № 2 դամբարանի նյութերում են<sup>206</sup>: Այս կապակցությամբ ավելորդ չէ հիշել Մարիի վերաբերյալ պահպանված պատմական տվյալները: Բարելոնի հիմնադրումից հետո Համուրապին գրավում է Ուրուկը, Իսին և Մարին: Վերջինս մեծ դիմադրություն է ցույց տալիս, որի պատճառով բարելացիները հրդեհում են Մարին, ավերում Իշտարի տաճարը, փշրում արձանները:

Ութ տարի հետո այստեղ հիմնադրվում են ասուրական իշխանները: Մարին մ. թ. ա. XIII դարում դառնում է ասուրական կայսրի համար մի փոքրիկ քաղաք, որտեղ նրանք տնկում են արմավենիներ և բուծում մեղու: Մարիի ավերված պալատների բակերը դառնում են ասուրական կայսրի նեկրոպոլը, որտեղ պեղված դամբարաններից մեկում (№ 126) հայտնաբերվել են վերոհիշյալ ոսպածև և պարուրազարդ ոսկե ուլունքները<sup>207</sup>:

Անշուշտ, վերը բերված փաստերը հաստատում են ոսպածև ուլունքների տեղական ծագումը, որը սկիզբ առնելով ուշ բրոնզի վաղ փուլերում (սկսած մ. թ. ա. XIV դ.), մեծ տարածում է գտնում հատկապես մ. թ. ա. II և I հազարամյակների սահմանազխում: Այլ տեղերում նրանք հայտնի չեն և միակ օրինակները հայտնաբերվել են Մարիի վերոհիշյալ դամբարանում: Ասուրական զինվորականներն այն հավանաբար ձեռք են բերել ավարի միջոցով, Հայկական լեռնաշխարհ կամ Նախիկ կատարած արշավանքների ժամանակ:

Ոսպածև ուլունքները բավական երկար կյանք են ունեցել: Հյուսիսում նրանք լայն տարածում են գտնում ավելի ուշ: Ապակենման զանգվածից պատրաստված ոսպածև ուլունքներ հայտնաբերվել են Հյուսիս-արևելյան Կովկասի մ. թ. ա. VI—IV դդ. թվագրվող մի շարք հուշարձաններում՝ Արկասյան բնակատեղիում, Խաբազինյան, Նեստերովյան և Մուժիլի (Լուզովոյե) դամբարանադաշտերի նյութերում<sup>208</sup>:

Նման ուլունքները լայն տարածում են գտել նաև Հյուսիսային Կովկասի մ. թ. ա. VI—V դդ. հուշարձաններում<sup>209</sup>: Ծաղկալում նրբաշերտ ոսպածև ուլունքներ հայտնաբերվել են Ջեմո-Ավճալայի (Մցխեթի մոտ) հռոմեական, պարթևական ժամանակաշրջանի կարասային թաղումներից<sup>210</sup>:

էլաոի № 7 դամբարանում հայտնաբերվել են նաև սև, սպիտակ, շագանակագույն և երկնագույն օղականման մանր ուլունքներ՝ ապակենման մասսայից (նկ. 135; 12, ՀՊՊԹ, № 2246/24): Մածուկից են պատրաստված նաև գլանաձև՝ կարճ և երկար, սպիտակ ուլունքները, որոնցից երկուսը



II. Ոսպածև ուլունքներ ծաղիկից

<sup>202</sup> Հ. Մնացականյան, Գամբարանների պեղումներ Գուլիստի գյուղում, էջ 36, նկ. 15:

<sup>203</sup> А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 117—119:

<sup>204</sup> А. Ивановский, նշվ. աշխ., էջ 113:

<sup>205</sup> Andre' Parrot, Mari, une ville perdue, Paris, 1945, рис. 39.

<sup>206</sup> О. А. Мнацаканян, Раскопки курганов..., стр. 154, рис. 11.

<sup>207</sup> Andre' Parrot, Mari..., էջ 201—228.

<sup>208</sup> Л. Пукель, Эпоха раннего железа в Дагестане, Махачкала, 1957, стр. 73.

<sup>209</sup> Նույն տեղում:

<sup>210</sup> Б. Куфтин, Археологические раскопки в Триалеги, стр. 25.



որ կապարի լայն օգտագործումը Հայաստանում սկսվում է վաղ երկաթի դարաշրջանում, մեծ ծավալ ընդունելով հատկապես մ. թ. ա. I հազարամյակի սկզբին: Վերը տեսանք, որ կապարից պատրաստել են ապարանջաններ, մանյակներ, մեղալիոններ, ճարմանդներ-կոճակներ, տարատեսակ ուլունքներ, արդուզարդի այլ իրեր:

Էլաոսի հայտնաբերված պերճանքի իրերի շարքում հատկապես մեծ տեղ են զբաղեցնում ծարիրից պատրաստվածները: Ներկա տվյալներով ծարիրն իրերը հայտնի են, սկսած ուշ բրոնզի վաղ փուլերից (Լճաշեն, Արթիկ), սակայն նրանք մասսայական գործածության առարկա են դառնում և մեծ քանակով երևան գալիս վաղ երկաթի դարաշրջանում, հատկապես մ. թ. ա. XI—IX դդ.:

Էլաոսի միայն № 7 դամբարանում ծարիրից պերճանքի առարկաների թիվը հասնում է 1366-ի: Բացի ծիսական, պաշտամունքային նշանակություն ունեցող մեղալիոններից, կախիկ-համախնիքից, պես-պես ուլունքներից, զարդարանքներից, ծարիրն ճարմանդներով ու սոսպաձև ուլունքներով են կազմվել լանջապանակներն ու զրահի զլխաթասակները:

«Գիմաց-թաղում» պեղված գրեթե չորս-բանչյուր դամբարանում հայտնաբերվել են ծարիրից զարդեր: 1935 թ. № 3 դամբարանում, կնոջ կմախքի մոտ բազմաթիվ այլ ուլունքների շարքում գտնվել են ծարիրից մեղալիոններ, պանդուրներ, կոճակներ և 169 ուլունք<sup>220</sup>: Ծարիրն զարդերի բազմազանությամբ և առատությամբ աչքի են ընկնում նաև Գիլիջանի հուշարձանները, հատկապես Ռեդկին-լագերը: Հարյուրից ավելի ծարիրն զարդեր հայտնաբերվել են միայն Ֆ. Բայերնի պեղած մենավոր թաղումներով քսանհինգ դամբարաններից<sup>221</sup>:

Սևանի ավազանն ու նրանից արևելք ընկած հուշարձանները Հայկական լեռնաշխարհի ծարիրից պաշտամունքային ցայտուն ատրիբուտներով պերճանքի առարկաների լուկալ մի նոր տարատեսակ են ներկայացնում:

Վերը տեսանք, որ Հայաստանում ծարիրից զարդեր հայտնաբերվել են մոտ քսան տարբեր հնավայրերում: Վերոհիշյալ հնավայրերին ծարիրով սպասարկել են հավանաբար Սևանի Հյուսիս-արևելյան ափի, ինչպես նաև Աղիզբեկովի շրջանի Վալոց ձորի (Ազատեկ) և Ամասիայի

շրջանի ծարիրի հանքերը<sup>222</sup>: Գեռես այգ վաղեմի անցյալում ուշադրություն է գրավել ծարիրի հանքի ցայտուն, վառ փայլը և նրա դյուրահալությունը, որը և մղել է մարդուն, նրանից պերճանքի առարկաներ ստանալուն:

Ինչպես տեսանք, էլաոսի № 7 դամբարանում հայտնաբերված ծարիրից վարդակատիպ ուլունքների, մասամբ նաև խաչաձև, անկյուն կազմող զարդանկարով մեղալիոնի զուգահեռները հայտնաբերվել են Հյուսիս-արևելյան Կովկասում: Բացի այդ, Ե. Ի. Կրուպնովը նշում է, որ Ռեդկին-լագերում 1926 թ. Զաֆարզադեի կողմից հայտնաբերված ծարիրից ցանցազարդ շեղանկյունաձև կախիկին բացարձակապես նման է Կալաբրենտում հայտնաբերվածը<sup>223</sup>:

Սակայն Հյուսիս-արևելյան Կովկասի յոթ հուշարձանների՝ Կալաբրենտի<sup>224</sup>, Խորոչոյի, Բույնակակի<sup>225</sup>, Միատլիի, Մանասի, Զանդակի<sup>226</sup>, Մամայ-Կուտանի<sup>227</sup> դամբարաններում հայտնաբերված ծարիրն պերճանքի առարկաները բավական ինքնատիպ են: Ամենայն հավանականությամբ, ինչպես նկատել է Վ. Մարկովին, նրանք տեղական արտադրության արդյունք են, քանի որ տեղում կան նաև ծարիրի հանքեր<sup>228</sup>: Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհի հեռուներում վերը հիշատակած զուգահեռներին, ապա նրանք, անշուշտ, փոխանակային և մշակութային համագործակցության արդյունք են: Հյուսիս-արևելյան Կովկասի ծարիրն զարդերն ավելի մոտ են Հյուսիսային Կովկասում, Կորան գյուղի մոտ<sup>229</sup> (Կուբուլտա), Վերին Ռուխտայում (Գիգորիա) հայտնաբերված և Պ. Ս. Ուվարովայի հրատարակած ծարիրն զարդերին<sup>230</sup>: Վերին Ռուխտայում Ե. Ի. Կրուպնովի կողմից պեղված № 1 և 8 կոմպլեքսի ծարիրն զարդերը, որ նրա կողմից վերագրվում է կորանյան մշակույթի I

<sup>222</sup> „Геология Армянской ССР“, VI, Ереван, 1967 թ. 228.

<sup>223</sup> E. Крупов, Каякентский могильник..., стр. 12.

<sup>224</sup> Նույն տեղում, էջ 8. A. Круглов, Նշվ. աշխ., էջ 100—124.

<sup>225</sup> Նույն տեղում, էջ 71, 81.

<sup>226</sup> B. Марковин, Дагестан и горная Чечня в древности, М., 1969, стр. 69.

<sup>227</sup> B. Котович, Новые археологические памятники Южного Дагестана, МАД, I, Махачкала, 1959, стр. 136—138, табл. 3—5; 7, 8.

<sup>228</sup> B. Марковин, Նշվ. աշխ., էջ 69.

<sup>229</sup> П. Уварова, Могильники Северного Кавказа, МАК, VIII, 1900, стр. 71, табл. XL; 12.

<sup>230</sup> Նույն տեղում, էջ 211—212, 221.



III. Սարգիոնե սպունգներ (2) էլաոսի № 7 դամբարանից

<sup>220</sup> Կ. Ղաֆաղաբյան, Նշվ. աշխ., էջ 59:

<sup>221</sup> „Museum Caucasicum“, вып V, стр. 48—61.



փուլին և թվագրվում մ. թ. ա. IX—VIII դդ.<sup>231</sup>, դարձյալ նման են Հյուսիս-արևելյան Կովկասում հայտնաբերվածներին:

Այսպիսով, վաղ երկաթի դարաշրջանում Անգրիկովկասում և ընդհանրապես ամբողջ Կովկասում լայն ծավալ է ստանում ծարիրից և նրա տարբեր միացություններից պատրաստված իրերի արտադրությունը: Միաժամանակ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները սերտ համագործակցության մեջ են գտնվել Կովկասի հետ:

Ինչ վերաբերում է էլաոի № 7 դամբարանի թաղման ծեսին, ապա այն հիշեցնում է վաղ երկաթի դարաշրջանի բազմահարուստ իշխանավորների դամբարանները: Օրինակ՝ Խոնլարի մ.տ. 3ա. Գումելի պեղած № 1 դամբարանների կենտրոնական հիմնահողային, մեծ (երկարությունը՝ 13,3 մ, լայնությունը՝ 3,5 մ) դամբարանը, որը ժամանակին ունեցել է կաղնու հենասյուների վրա կանգնեցրած գերանատիպ ծածկ<sup>232</sup>:

Այս կենտրոնական դամբարանում, խոշոր գետաբարերով կաղմված շրջանակում, մեծ հանդիսավորությամբ թաղվել է իշխանը: Նրա հետ կենտրոնական դամբարան են զրվել բոնի սպանված, վեցից-յոթ մարդուց կաղմված շբախումբն իրենց ձիերով, զենքերով, զարդերով, ուտեստով լի կավամաններով:

Երեք շարք իրար վրա զրված հսկա գերանների ծածկ է կրել Վարանդայի աջ ափին՝ Կարաբուզղում Ա. Ա. Իվանովսկու պեղած № 5 (91) դամբարանների տակ բացված, մոտ 10 մ երկարություն և 2 մ լայնություն ունեցող դամբարանը<sup>233</sup>: Մեջքի վրա պառկած հիմնական ննջեցյալին ուղեկցել են նրա երկու կողմում նստեցրած երկու ծառաները: Դամբարանի կենտրոնում և մուտքի մոտ հայտնաբերվել են երկու ուղտի կրամախք՝ բավական շքեղ զարդարանքներով<sup>234</sup>: Գլխավոր ննջեցյալի և նրա ուղեկիցների մոտ հայտնաբերված հարուստ նյութերը վկայում են այդ դամբարանների տիրոջ բարձր խավին պատկանելը:

Հենասյուների վրա կանգնեցրած գերանա-կապ ծածկով դամբարաններ է. Ռեսլերը հայտնաբերել է Բալուկայայի (Արցախ)<sup>235</sup> և Բոր-

չալուի (Գուգարք)<sup>236</sup> դամբարանաբլուրներում: Նրանցից յուրաքանչյուրում թաղված է եղել մեկ առանց պիտի մարդ, հարուստ ուղեկցող նյութերով:

Գերանակապ ծածկ է կրել նաև մերձսևանյան հուշարձաններից Ներքին Գետաշենի № 17 դամբարանը, որի կենտրոնում շորս եզներ լծած փորագրություններով մի զիակառքի վրա պառկեցրած մեծազարմ իշխանավորի հետ զրվել են երկ-ժանի, զենքեր, զոտի, գավազան, ապարանջաններ, մատանի և այլ իրեր<sup>237</sup>: Կառքի շուրջն անկանոն ընկած տասներեք ստրուկների կմախքների հետ հայտնաբերվել են սակավաթիվ իրեր՝ մատանիներ, մի բանի ապարանջան և կավամաններ:

Քանի որ էլաոի դամբարանաբլուրում հայտնաբերվել են նստեցրած կմախքներ, անհրաժեշտ են համարում այստեղ ներկայացնել մեզ հայտնի նման թաղման ձևը և վեր հանել նրա սոցիոլոգիական արմատները:

Բացի վերը հիշատակվածներից, հիմնական ննջեցյալին ուղեկցող նստեցրած թաղումներ հայտնաբերվել են նաև Առաջածորի, Ախմախիի և մերձսևանյան դամբարանաբլուրներում:

Առաջածորի № 1 դամբարանաբլուրի տակ պեղված մեծ սալարկղում՝ բրոնզե սրով, սակրով, գաշույնով, դուրով շրջապատված, մեջքի վրա պառկած հիմնական ննջեցյալին ուղեկցում են բոնի սպանված և նրա մոտ նստեցրած սաղավարտավոր երեք մարդ՝ կողքերին ձիու սանձ<sup>238</sup>: Ենթադրվում է, որ այստեղ թաղվել է առաջնորդն իր զինվորներով<sup>239</sup>, կամ զինվորական կաստայի ներկայացուցիչներով<sup>240</sup>:

Ախմախիի № 1 դամբարանաբլուրում միջին կարողության տեր հիմնական ննջեցյալին ուղեկցում են երեք նստած մարդ, իսկ № 3 դամբարանաբլուրի քարարկղում՝ երկու շարք կողք-կողքի նստած ութ մարդ<sup>241</sup>:

поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVI, М., 1957, стр. 147, 155.

<sup>236</sup> А. Спицын, Археологические исследования Э. Реслера в Елисаветпольской губернии в 1901 г., ИАК вып. 16, 1905, стр. 4.

<sup>237</sup> Ե. Խալայան, Դամբարանների պեղումներ..., էջ 100—161:

<sup>238</sup> Б. Пиотровский, Археология Закавказья, стр. 58.

<sup>239</sup> К. Кушнарeva, Կղ. աշխ., էջ 137:

<sup>240</sup> Նույնի, К вопросу о социальной интерпретации некоторых погребений Южного Кавказа, КСИА, вып. 134, 1973, стр. 17.

<sup>241</sup> Б. Пиотровский, Կղ. աշխ., էջ 58:

<sup>231</sup> Е. Крупнов, Древняя история Северного Кавказа, М., 1960, стр. 219, 222, 236, 238, 460, табл. XXXVII: 1—8.

<sup>232</sup> Я. Гуммель, Կղ. աշխ., էջ 10—12, 20.

<sup>233</sup> А. Ивановский, Կղ. աշխ., էջ 157—158.

<sup>234</sup> Նույն տեղում, էջ 158—168:

<sup>235</sup> К. Кушнарeva, Некоторые памятники эпохи

Նման թաղումներ բնորոշ են նաև Ե. Լալա-  
յանի պեղած մերձսևանյան հուշարձաններին:  
Պատաշարի (Կամոյից 6 կմ արևմուտք) երկրորդ  
դամբանաբլուրի մեջքի վրա պատկած հիմնական  
ննջեցյալը թաղվել է իր ձիով, սրով, նիզակով և  
երեք նստած ուղեկիցներով, որոնցից մեկը տղա-  
մարդ է, երկուսը՝ կին<sup>242</sup>: Պատաշարի III դամ-  
բանաբլուրում դարձյալ հիմնական ննջեցյալին  
ուղեկցում են երեք նստած մարդ<sup>243</sup>:

Կամոյի մոտակայքում, «Մալականի դարի  
ղուխ» կոչվող տեղամասում պեղված դամ-  
բարաններից մեկում, մեջքի վրա պատկած կնոջն  
ու տղամարդուն ուղեկցել են պղծած հինգ մարդ:  
Պատկած տղամարդու հետ դրված է եղել բրոնզե  
գոտի և դաշույն, իսկ կնոջ հետ՝ ուլունքներ,  
ապարանջան, մատանի և հերուն<sup>244</sup>:

Ուշագրավ է նաև Ներքին Գետաշենի V դամ-  
բանաբլուրի քարաբլդի թաղումը: Այստեղ դամ-  
բարանի կենտրոնում աջ կողքի պատկած ննջեց-  
յալին (սրի հետ գտնվել են բրոնզե դաշույն,  
ապարանջաններ) ուղեկցել են տասներեք նստած  
կմախքներ, որոնցից երկուսը՝ երեխայի են: Երեք  
կմախք էլ գտնվել է անկանոն ընկած վիճա-  
կում<sup>245</sup>:

Նման թաղումներ հատկանշական են Սևանի  
ավազանի նաև այլ հուշարձաններին<sup>246</sup>:

Այն հանգամանքը, որ նստած թաղված մար-  
դիկ ներկայանում են որպես բազմահարուստ  
պաշտոնյաների, զինվորական առաջնորդների,  
իշխանների ուղեկիցների, հնագետներին, ինչպես  
տեսանք, հնարավորություն է տալիս եզրակաց-  
նելու, որ նրանք, հավանաբար, բռնի կերպով  
սպանված շքախմբի անդամներ են, թիկնապահ  
զուգազորակներ, նաև ստրուկներ, որոնք իրենց  
տիրոջը պետք է ուղեկցեին հանդերձյալ աշխար-  
հում: Ըստ Բ. Պիտտրովսկու, ստրուկներ են դար-  
ձել հավանաբար ռազմական ընդհարումների  
ժամանակ ձեռք բերված գերիները, որոնք օգտա-  
գործվել են տնտեսության մեջ<sup>247</sup>:

Անշուշտ, այստեղ ակնառու է թաղման ծեսի

և հասարակության սոցիալական կառուցվածքի  
բացահայտ կապը:

Ուշագրավն այն է, որ նստած թաղված ծա-  
ուաներ-ստրուկներով ուղեկցվում են ոչ միայն  
հարուստ բարձրաստիճան զինվորականները, իշ-  
խանավորները, այլև միջին կարողության տեր  
մարդիկ (Ախմախի, մերձսևանյան հուշարձան-  
ներ): Ծագումով վերջիններս հավանաբար պատ-  
կանել են աղնավան վերնախավին, որոնք, ան-  
կախ ունեցվածքից, հատուկ կողքսով իրավունք  
ունեին թաղվելու իրենց ծառաներով:

Հիմնական ննջեցյալին ուղեկցող նստած  
թաղումներ Արցախում առայժմ հայտնի են  
սկսած մ. թ. ա. III հազարամյակից: Ստեփա-  
նակերտի դամբանաբլուրում յուրաքանչյուր հայր-  
իշխանական ընտանիքի զլխավորը թաղվել է  
մեջքի վրա պատկած վիճակում, իսկ նրա շուրջը՝  
ընտանիքի անդամները, այդ թվում նաև երեխա-  
ները թաղվել են կծկված և նստած վիճակում<sup>248</sup>,  
Ուշագրավն այն է, որ ուղեկցող իրերի մեծ մասը  
հայտնաբերվել է զլխավոր ննջեցյալի մոտ<sup>249</sup>:

Այսպիսով, թաղման ծեսում սոցիալական  
շերտավորման փաստերն ակնառու են նաև  
հայրիշխանական ընտանիքում, սկսած մ. թ. ա.  
III հազարամյակից:

Արժե հիշատակել, որ նման թաղումներ բնո-  
րոշ են նաև Գինչիի (Դաղստան) դամբարանա-  
պաշտի ընտանեկան դամբարաններին, որոնք հա-  
րատում են միջին բրոնզի դարաշրջանից մինչև  
ուշ բրոնզը ներառյալ<sup>250</sup>:

Սակայն թաղման ծեսերի ընձեռած նյութե-  
րով սոցիալական շերտավորումը հստակորեն  
արտացոլվում է դեռևս նեոլիթյան որսորդների և  
ձկնորսների հասարակությունում: Նրանց մոտ  
ծագում է մարդկային զոհաբերությունների սովո-  
րույթը, և դամբարանադաշտում հասարակական  
դիրք ունեցող անձանց խիստ լոկալիզացիան<sup>251</sup>:

Ուշագրավ են նաև ազգագրական նյութերի  
ընձեռած հնարավորությունները, որոնք մեջ են  
բերվում Վ. Մ. Մասսոնի աշխատություններում:  
Օրինակ՝ պապուասների վաղ երկրագործական  
արխաիկ հասարակությունում առանձնանում են  
առաջնորդներ, զուշակներ, համայնքի անդամներ,

<sup>242</sup> Я. Гуммель, Некоторые памятники раннебронзо-  
вой эпохи Азербайджана, КСИИМК, XX, 1948, стр. 15--22

<sup>243</sup> Նույն տեղում:

<sup>244</sup> Я. Гуммель, Некоторые памятники раннебронзо-  
вой эпохи Азербайджана, КСИИМК, XX, 1948, стр. 15--22

<sup>245</sup> Նույն տեղում:

<sup>246</sup> Նույն տեղում:

<sup>247</sup> Я. Гуммель, Եզ. աշխ., էջ 20, Б. Пиотров-  
ский, Археологическое изучение древнейшего Закав-  
казья, ВДИ, № 3, М.—Л., 1947, стр. 187, Նույնի, Ар-  
хеология Закавказья, стр. 58.

«ծառաներ», որոնք ծագումով հավանաբար կապ-  
ված են ռազմագերիների հետ: Կամ ՄԷլանեգիա-  
յում, նախնադարյան հասարակության բայթայ-  
ման փուլում առաջնորդների մի ամբողջ սիստեմ  
է առանձնանում՝ տոհմական խմբերի մանր ղե-  
կավարներ, զինվորական պարագլուխներ անձնա-  
կան ծառաներով, խոշոր առաջնորդներ-վաշխա-  
ուունք<sup>252</sup>:

Անդրադատնայով նստած թաղումներին, ար-  
ժե հիշատակել, որ նրանք միշտ չէ, որ ուղեկցողի  
զերում են հանդես գալիս: Վաղ երկաթի դարա-  
շրջանի բազմաթիվ դամբարաններ են մեզ հայտ-  
նի միայն նստած թաղումներով: Նման դամբա-  
րաններ պեղվել են Դիլիջանում, Կիրովականում,  
Սևանի ավազանի տարբեր դամբարանադաշտե-  
րում, Շամքորի հովտում, Սամթավրոյում, Ար-  
ցախում, նաև Հյուսիս-արևելյան Կովկասում:

Նստած թաղվածներ Ռեդկին-լագերում պեղել  
է Ֆ. Բայերնը<sup>253</sup>: 1935 թ. «Դիմաց-թաղում» պեղ-  
ված № 5 սալարկղում, նստած վիճակում, թաղ-  
ված ննջեցյալի հետ դրվել են հինգ կավաման և  
բրոնզից նիզակի ծայր<sup>254</sup>:

Խանլարում՝ Զիգդիխֆյուրյան ջրանցքի մոտի  
դամբանաբլուրներում, է. Ռեսլերի պեղած հիմ-  
նահողային դամբարաններում թաղվածների մեծ  
մասը գրեթե նստած դիրքով են և ուղեկցվում են  
խեցեղենով, բրոնզե իրերով, կոճակներով, ու-  
լունքներով<sup>255</sup>: Դարձյալ Խանլարում, Գ. Օ. Ռո-  
զենգորֆի պեղած յուրօրինակ դամբարաններից  
մեկում հայտնաբերվել են դեմառդեմ նստած եր-  
կու կմախք՝ առանց ուղեկցող նյութերի<sup>256</sup>: Ըիշտ  
նույն դիրքով նստած երկու կմախք հայտնաբեր-  
վել է Ախմախիի № 2 դամբանաբլուրի քարաբլ-  
դում, իսկ № 5 դամբանաբլուրի սալարկղում շրս  
մարդու կմախք է հայտնաբերվել, երկուսը՝ արե-  
վելյան պատի տակ, երկուսը՝ կենտրոնում, մեկը  
մյուսի հետևից<sup>257</sup>:

Շամքորի հովտում պեղված յոթանասուներ-  
կու քարաբլդներից քսանյոթը նստած միայնակ

<sup>252</sup> В. Массон, Древние гробницы вождей на Кав-  
казе (некоторые аспекты социологической интерпретации), Кавказ и Восточная Европа в древности, М,  
1973, стр. 103. Նույնի, Экономика и социальный строй...  
стр. 159.

<sup>253</sup> „Museum Caucasicum“, вып. V, стр. 8--19.

<sup>254</sup> Կ. Ղաֆաղարյան, Եզ. աշխ., էջ 61:

<sup>255</sup> ОАК за 1900 г., СПб., 1902, стр. 72.

<sup>256</sup> ОАК за 1903 г., СПб., 1906, стр. 96. рис. 182.

<sup>257</sup> ОАК за 1897 г., СПб., 1900, стр. 158, 159, К.  
Кушнарева, Եզ. աշխ., էջ 148, 153:

թաղումներ են, որոնք ուղեկցվում են խեցեղենով,  
պերճանքի առարկաներով, երբեմն նաև դաշույ-  
նով<sup>258</sup>: Իրենց գույքով նրանք գրեթե չեն տարբեր-  
վում նույն դամբարանադաշտի մյուս սալարկղ-  
ներից, որտեղ կմախքները մեջքի վրա պատկած  
են, կամ կողքի՝ կծկված<sup>259</sup>, Խոշալիի մոտ պեղ-  
ված շրս քարաբլդներից երկուսը (83, 84) նրս-  
տած թաղումներ են<sup>260</sup>:

Նստած թաղումներով հատկապես հարուստ  
են մերձսևանյան դամբարանադաշտերը: Մեծ  
քանակությամբ նման թաղումներ հայտնաբերվել  
են Ե. Լալայանի<sup>261</sup> և Ա. Իվանովսկու պեղումների  
ժամանակ<sup>262</sup>:

Արծվաքարի (Ղշլաղ) Մանիշար բլուրի երրորդ  
դամբանաբլուրում բացվել են երկշերտ թաղումներ,  
յուրաքանչյուր շերտում ինը մարդ՝ նստած վի-  
ճակում: Միայն առաջին շերտի նստած կմախքի  
ձեռքերի մոտ հայտնաբերվել է մեկ կճուճ՝ պեր-  
ճանքի առարկաներով լի, իսկ մյուսների հետ  
իրեր չեն գտնվել<sup>263</sup>: Գյուլի VI դամբանաբլուրի  
№ 1 դամբարանում հայտնաբերվել են տղամար-  
դու, կնոջ և երեխայի նստած կմախքներ<sup>264</sup>: Նույն  
դամբանաբլուրի II դամբարանում գտնվել են ութ  
նստած մարդու կմախք և ընդամենը մեկ կճուճ<sup>265</sup>:

Նստած թաղումներ պեղվել են նաև Հ. Ա.  
Մարտիրոսյանի կողմից: Նորատուսի № 9 կրոմ-  
լեխի և № 3 դամբարանի կենտրոնում հայտնա-  
բերվել են նստած երեք կմախք և նրանց հետ  
բրոնզե դաշույններ, պերճանքի առարկաներ,  
խեցեղեն<sup>266</sup>: № 4 և 8 դամբարաններում գտնվել  
են նստած մեկ մարդու կմախք պերճանքի առար-  
կաներով, խեցեղենով հանդերձ<sup>267</sup>: Ֆ. Բայերնի  
Սամթավրոյում պեղած քսանհինգ միայնակ  
դամբարաններում հիմնականում նստած թաղում-  
ներ են: Միայն մեկ դամբարանում հայտնաբեր-  
վել են նստած կին և երեխա, իսկ մեկ այլ դամ-  
բարանում կինը՝ նստած, երեխան՝ պատկած<sup>268</sup>:

<sup>258</sup> А. Ивановский, Եզ. աշխ., էջ 90—91, 93—94,  
100—107, 113—115, 117—140:

<sup>259</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>260</sup> Նույն տեղում, էջ 150—151:

<sup>261</sup> Ե. Լալայան, Եզ. աշխ., էջ 84—116:

<sup>262</sup> А. Ивановский, Եզ. աշխ., էջ 140—142:

<sup>263</sup> Ե. Լալայան, Եզ. աշխ., էջ 82:

<sup>264</sup> Նույն տեղում, էջ 103—104:

<sup>265</sup> Նույն տեղում:

<sup>266</sup> А. Мартиросян, Армения в эпоху..., стр. 193—  
194.

<sup>267</sup> Նույն տեղում:

<sup>268</sup> „Museum Caucasicum“, стр. 64.

Վերոհիշյալ թաղման ծեսը բնորոշ է նաև Հյուսիս-արևելյան Կովկասի Կայաքենո-խորոշու-յան մշակույթի համար (վաղ երկաթի դարաշրջան, մ. թ. ա. II հազարամյակի վերջ, I-ի սկիզբ):

1898 թ. Վ. Ի. Գուբեթևի Կայաքենոյի դամբարանադաշտում պեղած 34 դամբարաններից 30-ում կմախքները գտնվել են նստած վիճակում և միայն շորսում՝ մեջքի վրա պառկած<sup>269</sup>: նստած թաղված են նաև երեխաները (դամբարաններ № 14, 25, 27, 28, 29)<sup>270</sup>:

Ուշագրավն այն է, որ Կայաքենոյում նույնպես նստած թաղումներն իրենց գույքով ոչնչով չեն տարբերվում մեջքի վրա պառկածներից: Ուղեկցող իրերը շատ աղքատիկ են և միանման: Իոլոր դամբարաններում պարտադիր ձևով դրված են կավամաններ, միայն տասնմեկ դամբարաններում հայտնաբերվել են բրոնզե սակավաթիվ զարդեր, № 16 դամբարանում ծարիրից և կապարից երեք կախիկներ<sup>271</sup>: 1939 թ. պատահական բացված № 1 դամբարանում նստած կմախքի հետ հայտնաբերվել է կավաման, ապարանջան, ուլունքներ<sup>272</sup>: Ենթադրվում է, որ Չոխ գյուղի մոտի դամբարանում հայտնաբերված տասներեք կմախքները թաղվել են նստած վիճակում<sup>273</sup>: Զանդակի դամբարանադաշտի սալարկղերին նույնպես բնորոշ են նստած, կողքի կծկված և մեջքի վրա պառկած թաղումներ<sup>274</sup>:

Նստած թաղումով դամբարաններ հայտնաբերվել են Խասավ-Յուրտ քաղաքի մոտակայքում, այժմյան Տալգի առողջարանի մոտ և Տարկի գյուղի մոտ, Չիր-Յուրտի մոտի VII խմբի № 2 դամբարանաբլուրում, Ուրմա գյուղի մոտի դամբարանադաշտում և Խալիմբեկ-աուլում<sup>275</sup>:

Վ. Ի. Մարկովիչի կարծիքով՝ նստած թաղման ձևը բնորոշ է Հյուսիս-արևելյան Կովկասի արևելյան շրջանների բնակչության համար, իսկ կողքի կծկված թաղումները՝ արևմտյան շրջանի<sup>276</sup>:

Սակայն պեղված դամբարանների քանակը

<sup>269</sup> ОАК за 1898 г., СПб., 1901, стр. 142, Е. Крупнов, Каякендский могильник..., стр. 8, 13.

<sup>270</sup> նույն տեղում, էջ 8:

<sup>271</sup> նույն տեղում, էջ 8, 13:

<sup>272</sup> А. Круглов, նշվ. աշխ., էջ 140:

<sup>273</sup> Р. Мунчаев, Археологические исследования в Нагорном Дагестане в 1954 г., КСИИМК, вып. 71, М., 1958, стр. 46.

<sup>274</sup> М. Пикуль, նշվ. աշխ., էջ 19:

<sup>275</sup> В. Марковин, նշվ. աշխ., էջ 39:

<sup>276</sup> նույն տեղում, էջ 39, 86:

մեծ չէ, որպեսզի նման ընդհանրացումներ արվեն և կարևորն այն է, որ երկու շրջաններում էլ կան և՛ նստած, և՛ կողքի կծկված թաղումներ:

Ըստ Ա. Ա. Իվանովսկու՝ պառկած թաղումները գուտ ֆիզիոլոգիական պատճառներ ունեն: Քանի որ մահից հետո մարդու մարմինն արագորեն փայտանում է և նրան այս կամ այն ձևը կարելի է տալ միայն մահանալուց անմիջապես հետո, ուստի բոլոր այն դեպքերում, որ ժամանակին չեն հասցնում նրան նստեցնել, ստիպված թաղում են պառկած վիճակում<sup>277</sup>: Իրականում թաղման տարբեր ձևերը բխում են հասարակության դադափարական պատկերացումներից, որոնց ձևավորման վրա ազդում են երկու կարևոր գործոններ՝ էթնիկական առանձնահատկությունները և հասարակական հարաբերությունները<sup>278</sup>: Ըստ Բ. Բ. Պիտրովսկու, թաղվածների տարբեր սոցիալական վիճակը նշվում էր նաև դամբարանում նրանց տարբեր դիրքով տեղավորելով<sup>279</sup>:

Ինչ վերաբերում է էլաոի № 7 դամբարանին, ապա վերը տեսանք, որ շնայած նրա մի փոքր հատվածն էր պահպանվել, սակայն իր կառուցվածքով այն հարում է Խանլարի, Վարանդայի բալամահարուստ իշխանավորների դամբարաններին: Նրանում հայտնաբերված լանջապանակի և գլխի թասակի հետքերն ու հարուստ նյութերը հուշում են, որ դամբարանը պատկանել է մի մեծազամ իշխանավորի, որի հետ թաղվել են իր թիկնապահներն ու ծառաներ-ստրուկները:

Իսկ ովքե՞ր էին էլաոի և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի վաղ երկաթի դարաշրջանի մ. թ. ա. XI—IX դդ. մշակույթի կրողները: Վերը տեսանք, որ Արգիշտի I-ի՝ էլաոում թողած արձանագրությունից պարզվում է, որ Ուլուանի կրկիրն իր Դարանի քաղաքով ուրարտացիների նրվաճման նախօրեին գտնվել է էթիունիի կազմում:

Էթիունին կամ էթիուխին հիշատակվում է միայն ուրարտական արձանագրություններում: Գր. Ղափանցյանը էթիուխին հակված է տեսնելու հայկական «տուհ»-երի շրջանում, որը տեղադրում է Նիգ գավառում (Քասաղ գետի վերին ավազանում, Արագածի հյուսիսային կողմում)<sup>280</sup>:

<sup>277</sup> А. Ивановский, նշվ. աշխ., էջ 167:

<sup>278</sup> В. Массон, նշվ. աշխ., էջ 149:

<sup>279</sup> Б. Пиотровский, Археологическое изучение древнего Закавказья, стр. 187.

<sup>280</sup> Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимии Древней Армении, Ереван, 1941, стр. 18.

Դիոնիսիոս Թրակացու Քերականության հայերեն հին թարգմանության մեջ, ըստ Գր. Ղափանցյանի, հայկական «տուհ»-ը նշված է որպես հին էթնիկական տերմին<sup>281</sup>:

Ըստ Գ. Ա. Մելիքիշվիլու, Հարավային Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքական և էթնիկական կազմավորումները ուրարտական տեքստերում հիշվում են՝ կապված էթիունիի հետ, դիտվում որպես էթիունիի կազմում գտնվողներ<sup>282</sup>:

Էթիուխի-էթիունին հիշատակող գրեթե բոլոր ուրարտական տեքստերում, վերնագրային ընդունված համօրինակ գեկլարացիայում նշված է Խալգի աստծու կամ տվյալ արձանագրության հեղինակ՝ ուրարտական թագավորի կողմից էթիունիի դեմ հաղթանակը և անշուշտ նրա կազմում գտնվող զավառների, քաղաքների, ամրոց-բերդերի նվաճումը:

Ըստ Բ. Ա. Տուրակի, որի հետ համաձայն է նաև Գ. Ա. Մելիքիշվիլին, էթիունի անվան տակ ուրարտացիները հավանաբար ակնարկում են Հարավային Անդրկովկասի գրեթե ամբողջ տարածքը<sup>283</sup>:

Ուրարտական արձանագրությունների տվյալներով էթիունին ընդգրկել է «Աշխարհացուցում» նշված Մեծ Հայքի տասնհինգերորդ աշխարհի՝ Այրարատի մեջ ընդգրկված գրեթե բոլոր քանահինգ զավառները<sup>284</sup>, որոնք այստեղ մեջ են բերվում ուրարտական անունների հետ համատեղ:

1. **Բասեան**—**Տարիուն**<sup>285</sup>: Հիշատակվում է միայն Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրությունում, նրա թագավորության II տարում կատարած արշավանքի նկարագրությունում<sup>286</sup>: Ըստ Ն. Վ. Հարությունյանի, Սարգուրի II-ի ժամանակ Տարիունին և Զարախան (Ջավախք) մտել են Իգա(նի)ի կազմի մեջ<sup>287</sup>: Ստորև կատանենք,

<sup>281</sup> նույն տեղում, էջ 19:

<sup>282</sup> Гр. Меликишвили, Наирн-Урарту, Тбилиси, 1954, стр. 56.

<sup>283</sup> Б. А. Тураев, История Древнего Востока, II, М., 1936, стр. 35.

<sup>284</sup> В. С. Селмյан, Հայաստանը ըստ «Աշխարհացուցում»-ի, Երևան, 1963, էջ 111—112, 118, տե՛ս քարտեզը:

<sup>285</sup> Տարիունին Գ. Ա. Մելիքիշվիլին տեղադրում է Չըլզըր լճից հարավ-արևմուտք, տե՛ս УНК, էջ 442, Ն. Վ. Հարությունյանն այն նույնացնում է Բասենի Գարունք բնակատեղիի հետ, Արաքսի վերին հոսանքներում, տեղադրում՝ Գիաուխի (Տայր) և Զարախայի (Ջավախք) միջև: Н. В. Арутюнян, Близилиан (Урарту), Ереван, 1970, стр. 408.

<sup>286</sup> Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, 127, 1.

<sup>287</sup> Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 408:

որ Իգա(նի)ն եղել է էթիունիի կազմում, հետևաբար Տարիունին և Զարախան ինքնուրույն նույնպես եղել են էթիունիի կազմում:

2. **Հաանուհիք**—**Արուն**<sup>288</sup>: Նվաճվել է Արգիշտի I-ի և Սարգուրի II-ի կողմից: Արունին հիշատակվում է Գիաուխի թագավորին օգնության գնացած էթիունյան երկրների շարքում, որոնց Գիաուխից վերադառնալիս Արգիշտի I-ը պատժում է<sup>289</sup>: Սարգուրի II-ի տարեգրությունում Արունին հիշատակվում է նրա թագավորության II կեսում կատարած արշավանքներից մեկի ժամանակ նվաճված մի շարք այլ երկրների շարքում<sup>290</sup>:

3. **Աբեդեանք**—**Աբիլիանիս**<sup>291</sup>: Խորխորյան տարեգրության համաձայն Արգիշտի I-ը իր թագավորության III տարում (մ. թ. ա. 784) մի շարք այլ երկրների շարքում նվաճում է Աբիլիանիսին, նշում, որ նվաճեցի էթիունին և հասա Ուղուրի-էթիունի<sup>292</sup>: Իսկ Սարգուրի II-ը Աբիլիանիսին նվաճում է երեք անգամ<sup>293</sup>:

4. **Արշարունիք**—**Անիշտիրգա**, **Գուլուտախի**<sup>294</sup>: Արգիշտի I-ը նվաճում է երկու անգամ: Գուլուտախին հիշատակվում է Գիաուխիին օգնության գնացած էթիունյան երկրների շարքում<sup>295</sup> և իր թագավորության վերջին տարիների նվաճումների կապակցությամբ Անիշտիրգայի հետ մեկտեղ<sup>296</sup>: Անիշտիրգան նա նվաճում է նաև իր թագավորության III տարում կատարած արշավանքի ժամանակ<sup>297</sup>:

5. **Բագրեանդ**—**Ուխտերուխիի հարավ-արևմրյան հատվածը**, 6. **Մաղկոտն**—**Լուշա**, 7. **Կոզովիտ**—**Կատարգա**<sup>298</sup>: Նվաճվում են Իշուլիսիի

<sup>288</sup> նույն տեղում, էջ 399—402:

<sup>289</sup> УКН, 128В1, նաև УКН 127, 1.

<sup>290</sup> УКН, 155F.

<sup>291</sup> Աբիլիանիսին Գր. Ղափանցյանը տեղադրում է Երևանի մոտ, Արաքսի վերին հոսանքներում, նրա ձախ ափին, տե՛ս Гр. Капанцян, նշվ. աշխ., էջ 6:

<sup>292</sup> УКН, 127, 1.

<sup>293</sup> УКН, 155С21, 37, F15.

<sup>294</sup> Ն. Վ. Հարությունյանը տեղադրում է Արիաշտի Արարունք Արաքսի հետ խառնվելու շրջանում, հավանաբար Արշարունիքում (Է. Ն.), տե՛ս Ն. Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 199:

<sup>295</sup> УКН, 128В1.

<sup>296</sup> УКН, 129 а, в.

<sup>297</sup> УКН, 127, 1.

<sup>298</sup> Այս երկրները տեղադրվում են տարբեր, սակայն ավելի հավանական է Գր. Ղափանցյանի նրանց Բագրեանդում, Կոզովիտում և Մաղկոտնում տեղադրումը, տե՛ս Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 16:



և Մենուայի, նաև Արգիշտի I-ի կողմից: Իշպուրի-  
նին և Մենուան հետ մղելով Ուրարտուի սահ-  
մանների վրա էթիունիի՝ ուխտերուխի, լուշա  
և կատարյալ ցեղերի հարձակումները, ներխուժում  
և նվաճում են նրանց տարածքները, հասնում՝  
Անաշե ու հզոր Կուկուրու քաղաքները<sup>299</sup>: Անաշեն  
ուսումնասիրողների կողմից նույնացվում է Ալաշ-  
կերտի (Ալաշ-կերտ) հետ<sup>300</sup>: Այս երկրների թա-  
գաժորները նույնպես օգնել էին Գիսուխիին և  
Արգիշտի I-ը այնտեղից վերադառնալիս նվաճում  
է նրանց երկրները, անգամ պատժում Լուշայի  
թագավորին<sup>301</sup>: Ուխտերուխին Արգիշտի I-ը նվա-  
ճում է նաև իր թագավորության XIII տարում  
(մ. թ. ա. 774)<sup>302</sup>: Այն նվաճվել է նաև Սարգուրի  
II-ի կողմից, իր թագավորության II կեսում<sup>303</sup>:

**8. Գաբեղվանք—Ուխտերուխի հյուսիս-արե-  
վելյան հատվածը:** Քանի որ Իշպուրիին և Մենուան,  
ինչպես նաև Արգիշտի I-ը և Սարգուրի II-ը իրենց  
վերջին արշավանքների ժամանակ Ուխտե-  
րուխին ամբողջությամբ են նվաճել, պարզ է, որ  
այդ նվաճումները վերաբերում են նաև Գաբեղ-  
վանքին:

**9. Վանանդ—Աշտուխի<sup>304</sup>, Իգա(ն)ի<sup>305</sup>:**  
Վանանդի տարածքում մեզ հայտնի են առայժմ այս  
«երկրների» անունները: Սարիղամիշում գտնված  
արձանագրության համաձայն, Արգիշտի I-ը նվա-  
ճում է Աշտուխի երկիրը Ախուրիանի քաղա-  
քով և նշում, որ նվաճել է էթիունի երկիրն ամբող-  
ջությամբ<sup>306</sup>:

Էթիունյան երկրների շարքում Իգայի թագա-  
վորի ստրկացման մասին Արգիշտի I-ը հիշատա-  
կում է սուրբ Սահակի արձանագրությունում<sup>307</sup> և  
նրա նվաճման մասին նշում նաև Խորխորյան  
տարեգրությունում<sup>308</sup>: Իգա(ն)ի մասին ուշագրավ  
են նաև Սարգուրի II-ի սովյալները: Տարեգրու-

թյունում, կապված մ. թ. ա. 748—746 թթ. դեպ-  
քերի հետ, նա նշում է, որ Խալդին հաղթեց էթիու-  
խի թագավոր իգայի Գիուսիին<sup>309</sup>: Այս արձա-  
նագրությունը վկայում է, որ Իգան գտնվել է  
էթիուխի կողմում, և էթիուխի թագավորը իգա-  
յի է եղել: Սարգուրի II-ը կապված մ. թ. ա. 742—  
739 թվականների արշավանքների հետ, պատ-  
մում է, որ Խալդին հաղթեց Իգանի երկրի թագա-  
վոր Կուկուրինին<sup>310</sup>, Իգանի քաղաք Մակալու-  
նիի նվաճման մասին նա հիշատակում է Դաշ-  
քյորիի գլուղում թողած արձանագրությունում<sup>311</sup>:

**10. Ծիրակ (Էրիսխի<sup>312</sup>, Իրդանիունի<sup>313</sup>,  
Կուլիանի<sup>314</sup>):** Էրիսխին Արգիշտի I-ի կողմից  
նվաճվում է երեք անգամ: Իր թագավորության  
II տարում այն հիշատակվում է Գիսուխիին օգ-  
նության գնացած էթիունյան երկրների շարքում,  
որոնց նվաճում է և նրանց թագավորին պատ-  
ժում<sup>315</sup>: Նույն տարում երկրորդ անգամ արշավում է,  
և այլ երկրների շարքում նվաճում նաև էրիսխին<sup>316</sup>,  
ապա երրորդ անգամ այն նվաճում է իր թագա-  
վորության XIII տարում<sup>317</sup>: Սարգուրի II-ը էրիս-  
խին նվաճում է հինգ անգամ<sup>318</sup>:

Էթիունիի Իրդանիունի քաղաքի գրավման  
մասին հիշատակված է Արգիշտի I-ի Ղանլիջա-  
յում թողած արձանագրությունում<sup>319</sup>, իսկ Կուլիա-  
նի երկրի Գուրուբանի քաղաքի նվաճման մասին՝  
Ղուլիջանի արձանագրությունում<sup>320</sup>:

**11. Աշոցք—Տաշիր Վերին (Պուզունիա եր-  
կիրը, Ալիանիա և Յուղալա քաղաքները)<sup>321</sup>:** Էթիու-  
նյան այս երկրները նվաճում է Սարգուրի II-ը<sup>322</sup>:

<sup>309</sup> YKH, 155C, նաև YKH, стр. 302.

<sup>310</sup> YKH, 155F, նաև YKH, стр. 305.

<sup>311</sup> YKH, 159.

<sup>312</sup> Էրիսխին տեղադրվում է Երիսխում, տե՛ս Գր. Ղա-  
փանցյան, նշվ. աշխ., էջ 8:

<sup>313</sup> Իրդանիունին տեղադրվում է Լենինականի տարած-  
քում, այսինքն էրիսխիում, YKH, էջ 430:

<sup>314</sup> Կուլիանին Գուրուբանի քաղաքով տեղադրվում է  
արձանագրության հայտնաբերման վայրում, Ղուլիջան գյու-  
ղի մոտ, Լենինականից մի փոքր հյուսիս, Արագածի հյու-  
սիս-արևմտյան լանջին, տե՛ս YKH, էջ 138:

<sup>315</sup> YKH, 128B1.

<sup>316</sup> YKH, 127, I.

<sup>317</sup> YKH, 127, V.

<sup>318</sup> YKH, 155, C, E, B, F.

<sup>319</sup> YKH, 133.

<sup>320</sup> YKH, 132.

<sup>321</sup> Տեղադրվում են Լենինականից հյուսիս-արևմուտք,  
հավանաբար Աշոցքում (Է. Խ.), տե՛ս YKH, էջ 436:

<sup>322</sup> YKH, 155F.

**12. Նիգ (Տուհաց աշխարհ՝ Էթիուխի):** Վերը  
տեսանք, որ Գր. Ղափանցյանը էթիուխին նույ-  
նացնում է «տուհ»-երի հետ և տեղադրում Նիգ  
գավառում<sup>323</sup>:

**13. Վարածունիք (Իշտիկունի)<sup>324</sup>:** Լճաշենի  
արձանագրության համաձայն, Արգիշտի I-ը նվա-  
ճելով էթիունիի Կիսունի քաղաքի երկիրը, հաս-  
նում է Իշտիկունի քաղաքը<sup>325</sup>:

**14. Մալազ (Կիսունի)<sup>326</sup>:** Քայի Լճաշենի  
արձանագրությունից, Խորխորյան տարեգրությու-  
նում նույնպես Արգիշտի I-ը նշում է, որ նվաճե-  
լով Կիսունի քաղաքի ծովեզրին տեղադրված  
երկիրը, հասնում է Ալիշտու քաղաքը<sup>327</sup>:

**15. Կոտայք (Ուլուանի):** Տեղադրվում է,  
ինչպես տեսանք, էլստում գտնված արձանագրու-  
թյան համաձայն<sup>328</sup>:

**16. Արագածոտն—Ազա երկիրը (Աշտա-  
րակի, Էջմիածնի և Հոկոսեմբերյանի շրջանները):**

**17. Ուտան Հայոցը,**

**18. Ուրծաձորը,**

**19. Արածոյ կողմը,**

**20. Վայոց ձորը,** որոնց տարածքում ուրար-  
տական արձանագրություններ գտնա չեն հայտ-  
նաբերվել, սակայն շրջապատված լինելով էթիուն-  
յան երկրներով, ակներևաբար պետք է գտնվելին  
էթիունիի կազմում:

**21. Մասեաց ոտն— Էրիկուա(խի) —Իր(ե)-  
կուախի—Իրկուա<sup>329</sup>:** Մենուան նվաճում է Էրի-  
կուա(խի)—Իր(ե)կուախի երկիրը և արքունի քա-  
ղաք Լուխիունին<sup>330</sup>: Սարգուրի II-ը նվաճված  
էթիունյան շորս երկրների շարքում հիշատակում  
է նաև Իրկուա երկիրը<sup>331</sup>, որը նույնացվում է  
Իր(ե)կուախիի հետ:

**22. Ծակատք, գտնվում է Մասյացոտնից**

<sup>323</sup> Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 18:

<sup>324</sup> Տեղադրվում է Սեանի հյուսիս-արևմտյան ափին,  
տե՛ս YKH, стр. 132.

<sup>325</sup> YKH, 134.

<sup>326</sup> YKH, 127, II.

<sup>327</sup> Ալիշտուն տեղադրված է Աղստեի հովտում, տե՛ս  
Ս. Տ. Երևմյան, Հայկական ՍՍՌ Ատլաս, Երևան—Մոսկվա,  
1961, էջ 192: Ալիշտուն, հավանաբար, Ղազախ քաղաքի  
արևմտյան ծայրամասի Սարի-Թեփեի ամրոցն է, տե՛ս «Մե-  
ծամոր», էջ 57—58:

<sup>328</sup> YK<sup>4</sup>, 131.

<sup>329</sup> Տեղադրված է Արարսի աջ ափին, Յուլիերտի մոտ՝  
Մասյացոտնում. տե՛ս Գ. Ա. Мелукашвили, Наир-  
Урарту, стр. 65, 251, 252. Նաև՝ YKH, стр. 425.

<sup>330</sup> YKH, 30 35.

<sup>331</sup> YKH, 155 A.

արևմուտք: Նրա տարածքում գտնա արձա-  
նագրություններ չեն հայտնաբերվել, սակայն այն  
նույնպես շրջապատված է էթիունյան երկրներով:

Անշուշտ, էթիունիի կազմում է եղել Մեծ Հայ-  
քի իններորդ աշխարհ Սյունիքը: Նրա Գեղարքունի  
գավառում հայտնի են՝

**1. Կամոն (Նոր Բալազետ)—Ուելիքունի-  
Ուելիքուխի<sup>332</sup>:** Սարգուրի II-ը նվաճում է երեք  
անգամ<sup>333</sup>: Այն նվաճում է նաև Ռուսա I-ը և  
տեղում Խալդիի անունով տաճար կառուցում<sup>334</sup>:  
Ուելիքուխիի նվաճման մասին Ռուսա I-ը հիշա-  
տակում է նաև Մովսիսարի արձանագրությունում,  
լճի այս կողմի շորս թագավորների շարքում<sup>335</sup>:

**2. Գետաշենը՝ Լուխիսի արքունի քաղաք  
Տուլիսուն (Սեանի հարավ-արևմտյան ափին):**  
Սարգուրի II-ը նվաճելով Տուլիսուն և հյատա-  
կեցնելով նրա թագավոր Մինալիբիին, նշում է,  
որ հասա Ուգուրի-էթիունի<sup>336</sup>:

**3. Մուկը—Մուկուա երկիրը, Գան Իրդուա,  
Ամուշա քաղաքները** հիշատակվում են էթիունիի  
հետ մեկտեղ, Արգիշտի I-ի արձանագրությունում.  
հայտնաբերված Միսիանից 17 կմ արևմուտք.  
Արևիս գյուղից ոչ հեռու Քանահաս վանքի վերա-  
կանգնման աշխատանքների ժամանակ<sup>337</sup>:

Անշուշտ, էթիունիի բաղկացուցիչ մասն է  
կազմել, կամ նրանից վասալական կախման մեջ  
գտնվել ուրարտական արձանագրություններում  
հիշատակվող Ուգուրի-էթիունին, որը Գր. Ղա-  
փանցյանը համարում է մի ընդարձակ կթնու-աշ-  
խարհագրական միավոր, որտեղ սմ-սրի կարող է  
նշանակել «ուտիական», կապված, հավանաբար,  
հայկական սմ (հունարեն σμ—σμε) էթնիկական  
տերմինի հետ<sup>338</sup>:

Ուգուրի-էթիունիի կազմում են եղել Սյունիքի  
մի մասը, որն ընդգրկել է Սեանա լճի հարավային  
և արևելյան ափերը, հավանաբար Մեծ Հայքի  
տասներորդ աշխարհ Արցախը և տասներկուեր-  
րորդը՝ Ուտիքը<sup>339</sup>:

<sup>332</sup> Սեանի արևմտյան ափի կենտրոնական մասում.  
Ռուսա I-ի արձանագրության համաձայն, YKH, 265:

<sup>333</sup> YKH, 156D1 — DII, YKH, 155F.

<sup>334</sup> YKH, 265.

<sup>335</sup> YKH, 266.

<sup>336</sup> YKH, 160.

<sup>337</sup> Ն. Հաբուրյունյան, Կ. Հովհաննիսյան, Ս. Նաիրյան-  
յան, Սեպագիր Միսիանի շրջանից, «Սովետական Հայաս-  
տան», օրաթերթ, 1975, № 194:

<sup>338</sup> Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 23:

<sup>339</sup> Ս. Երևմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի,  
էջ 110:

Սյունիքի գավառներից Ուրուրի-էթիունի կազմում են եղել Սարգուրի II-ի կողմից Սևանի հարավային ափին նվաճված Կամանիան, Լուսբունին, և Սևանից արևելք Սոթք գավառում՝ Արբուքիվր և Ուրտեխիին<sup>340</sup>:

Սարգուրի II-ը Կամանիան և Արբուքիվր նվաճում է նաև մ. թ. ա. 742—741 թթ. և մ. թ. ա. 740—739 թթ. ընկած ժամանակահատվածում, միաժամանակ գավթում նոր երկրներ՝ Ադախու (նի), Լուսպրունի, էշումա, Կուհայբանի, Ուսունի, Տերիանի, մարտերում նվաճում 20 ամրոց ու 120 բաղաբ և այդ վայրերից Ուշկիանի և Բամնի<sup>341</sup> լեռները փախած ժողովրդին պաշարում է, մի մասին սպանում, այրում, մյուս մասին գերում և մեծ ավարով վերադառնում<sup>342</sup>:

Ռուսա I-ը Մովսիսարի արձանագրությունում նշում է, որ մեկ արշավանքի ընթացքում ստրկացնում է լճի այս կողմի շորս երկրների՝ Ադախուի, Ուշկիբուի, Լուսբունի և Արբուքիվր թագավորներին (Գուրկուսի, Շանատուա, Ռիշուա) — գուա, Արիա, Զամա, Իրկիմա, էլա, էրիբտուա, Ադիամանիվ, Գուրիա, Ալվիրա, Պիրուա, Շիլա, Ուիդուա, Ատեզա, Ագամբուն), լճի այն կողմում բարձր լեռներում և նշում, որ մեկ տարվա ընթացքում նվաճում է 23 երկրների թագավորներին<sup>343</sup>:

Ռուսա I-ի Մովսիսարի արձանագրությունում նշված՝ լճի այն կողմի տասներեք երկրներ, ըստ Մ. Վ. Նիկոլսկու, պետք է փնտրել Արաքսի հովտում, Արաքսի հոսանքով նրա ափերին, նրանից Գյուկչա (Սևան) տանող լեռնանցքներում<sup>344</sup>: Ի. Ի. Մեղանինովը այդ տասներեք երկրները հակված է տեղադրելու կուր-արաքսյան միջագետքի արևելյան մասում, որտեղից վերադառնալիս Ռուսան արշավանքի վերջնակետում՝ Սևանա լճի հարավային ափին թողնում է իր արձանագրությունը<sup>345</sup>, «ղեպի արևելք, Ադրբեջանի կողմը կատարած արշավանքի, տարեկան ընդհանուր ավարով»<sup>346</sup>: Մեկ

այլ աշխատությունում նա այդ երկրները տեղադրում է Սևանա լճի արևելյան և հյուսիսային ափերին, դեպի լեռները և դեպի Գյանջալի կողմը, կամ հյուսիս՝ Գիլիջանի շրջակայքը, կամ դեպի հարավ՝ Նախիջևանի կողմը<sup>347</sup>, Սակայն Ի. Ի. Մեղանինովն ավելի քան հակված է այդ տասներեք երկրները տեղադրելու Փոքր Կովկասի լեռներում, մասամբ՝ Ադրբեջանում<sup>348</sup>:

Ի. Ի. Մեղանինովի այս վերջին կարծիքին համաձայն է Գ. Ա. Մելիքիշվիլին<sup>349</sup>:

Սարգուրի II-ի տարեգրությունում՝ Լուսպրունի, էշումա, Կուհայբանի, Ուսունի երկրների շարքում նվաճված Տերիանի երկիրը Ս. Տ. Երեմյանը նույնացնում է Տրտու (այժմ՝ Քարթլո) գետի միջին հոսանքում, Ուտիքի՝ Տոի գավառի հետ (միջին դարերում Զրաբերդ)<sup>350</sup> և գտնում, որ «մեջբերված անուններում պահպանվել է տրերների՝ թրակական ցեղերից մեկի անունը», որը, հավանաբար, կիմերական ցեղերից մեկն է<sup>351</sup>: Եթե համոզիչ են այս դիտողությունները, ապա Տերիանիի հետ նշված վերոհիշյալ երկրները և մարտերում նվաճված 20 ամրոցներն ու 120 բաղաբները պետք է փնտրել արևելք՝ Արցախի և Ուտիքի տարածքում:

Հավանաբար, էթիունի կազմում է եղել նաև Աեծ Հայքի տասներեքերորդ աշխարհ՝ Գուգարքի մեծ մասը: Վերջինիս գավառներից Զավախք Վերինը (Զաբախա)<sup>352</sup>, Խորխորյան տարեգրության համաձայն Արգիշտի I-ը նվաճում է իր թագավորության II տարում<sup>353</sup>, Վերը տեսանք, որ Սարգուրի II-ի ժամանակ Զաբախան Իգալի կազմում էր<sup>354</sup>, հետևաբար այն նաև էթիունի կազմում էր, այսինքն Զավախք Վերինը նույնպես էթիունի կազմում էր:

Իգա(նի)ի մոտակայքում է տեղադրվում

<sup>347</sup> Նույնի, Колагранская надпись, Известия Академии наук, Л., 1932, № 1, стр. 84.

<sup>348</sup> Նույնի, Восточное Закавказье времен халдских завоеваний, стр. 75—76.

<sup>349</sup> Г. А. Меликишвили, Папири — Урагу, стр. 69, 268.

<sup>350</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 110:

<sup>351</sup> Նույնի, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոլովորների դեմ, ՊՐԶ, 1968, № 2, էջ 92:

<sup>352</sup> Այժմյան Ախալքալաքի տարածքում, տե՛ս ՄԿՈ, էջ 446:

<sup>353</sup> ՄԿՈ, 127, I.

<sup>354</sup> В. Арутюнян. Կով. աշխ., էջ 408:

նաև էթիունի Կուրիանի (ասորական տեքստերում Գուրիանիա) երկիրը<sup>355</sup>, որը նվաճվում է Սարգուրի II-ի կողմից<sup>356</sup>:

Գուգարքի գավառներից Թուզքը և նրանից դեպի արևելք ու հարավ-արևելք ընկած գրեթե բոլոր գավառները, ինչպես հնագիտական նյութերն են վկայում, էթիունի էթնո-մշակութային միասնության բաղկացուցիչ մասերը պետք է լինեն: Բացառված չէ, որ այդ մշակութային միասնության մեջ ընդգրկված լինեն Մեծ Հայքի (ըստ «Աշխարհացոյցի») նաև տասներեքերորդ աշխարհը՝ Փայտակաբանը (Կասպք), քանի որ նրա տարածքում գտնվող Ուզուն-թեփեի հնագիտական նյութը մշակութային փոխազդեցությունների արդյունք չէ, այլ ամբողջությամբ, թե՛ թաղման ծեսով, և թե՛ հայտնաբերված բոլոր տիպի նյութերով կրկնում է վերոհիշյալ մշակույթի յուրահատկությունները:

Այսպիսով, այդ մշակութային միասնությունը զբաղեցրել է մի լայնարձակ տարածք, որի հարավային սահմանը եղբրվել է Արաքսով, ապա ընդգրկել Կոզովիտը, Մաղկոտը, Բագրևանդը, արևմուտքում՝ Բասենը, Վանանդը, հյուսիսում՝ Գուգարքը, հյուսիս-արևելքում՝ Կուրից հարավ ընկած տարածքը, հարավ-արևելքում նրա սահմանը Փայտակաբանն է և վերջնակետը՝ Կասպից ծովը:

Հարկավ ուրարատական տեքստերի անբավարար վերծանվող ռազմական նկարագրությունները հնարավորություն չեն ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու էթիունի սոցիալ-բաղաբական կարգի, տնտեսության դարգացման մակարդակի, նաև արտաքին աշխարհի հետ ունեցած հարաբերությունների մասին: Վերոհիշյալ հարցերի լուսաբանման գործում տակավին մեծ են նյութական մշակույթի ընձեռած հնարավորությունները:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ էին իրենցից ներկայացնում էթիունի կազմում գտնվող այդ գավառները, կամ իշխանությունները: Ուրարատական տեքստերի համաձայն, յուրաքանչյուր երկիր կամ շրջան իր մեջ ամփոփել է բազմաթիվ ամրոցներ և բաղաբներ: Այս հարցում բավական խոսուն են Սարգուրի II-ի արձանագրությունները: Տարեգրության համաձայն, միայն Իգա(ն)ի երկրում նա նվաճել է 35 ամրոց և 200 բաղաբ<sup>357</sup>, Ուշկիբուիում՝ 22 ամրոց, իսկ Սևանա լճից

<sup>355</sup> ՄԿՈ, էջ 438:

<sup>356</sup> ՄԿՈ, 155F.

<sup>357</sup> ՄԿՈ, 155.

հարավ և արևելք ընկած մի շարք երկրների հետ նա նվաճում է նաև 20 ամրացված միջնաբերդ և 120 բաղաբ<sup>358</sup>: Բացի այդ, արձանագրությունների համաձայն, յուրաքանչյուր շրջան կամ իշխանություն ունեցել է իր գլխավոր, կենտրոնական բաղաբ, հավանաբար վարչարարական կենտրոնը, որոնց ուրարատցիներն անվանում են արքունի բաղաբ: Վերը տեսանք, որ Իգա(ն)ի արքունի բաղաբը Մակալուտունի էր, էրիկուա-Իրկուաի՝ արքունի բաղաբը Մենուայի նվաճման ժամանակ՝ Լուսիունին<sup>359</sup>, իսկ Սարգուրի II-ի ժամանակ՝ Իրուիան, Ուտեբուիինը՝ Ուրիեիանին, Աշտուխիինը՝ Ախուրիանին, Աբուների երկրինը՝ էրիանը<sup>360</sup> և այլն:

էթիունի կազմում գտնվող երկրներից մի քանիսի հնագիտական ուսումնասիրությունը գալիս է հաստատելու, լրացնելու, մասամբ էլ ճշտելու և հարստացնելու նախաուրարատական ժամանակաշրջանի Հայկական լեռնաշխարհի մի զգալի հատվածի մշակույթի վերաբերյալ ունեցած մեր գիտելիքները:

Վերը տեսանք, որ Գարանին (էլուր) այդ մշակույթի նշանավոր օջախներից մեկն է: Գտնվելով արքունական հինավուրց և բանուկ ճանապարհի մի այսպիսի հանգուցակետում, որ մուտք էր բացում Արարատյան դաշտավայրից դեպի հյուսիս, Գարանի բաղաբն ուներ ռազմատարտեզիական խոշոր նշանակություն: Այդ իսկ պատճառով հարավ և հարավ-արևելյան կողմից նրա մատուցները պաշտպանում էին ֆորպոստի դեր կատարող Առինջի և Արամուսի ամրոցները:

Գարանին, անշուշտ, Ուլուանի երկրի գլխավոր բաղաբն էր, որի շուրջն էին համախմբվել մի շարք ոչ մեծ բնակատեղիներ, ավաններ, տեղավորված այժմյան Շահար, Նոր ըլուր, Ակունը գյուղերի տարածքում:

Բնական, բարձր բլուրի վրա գտնվող, կիկլոպյան պարսպով շրջապատված Գարանի միջնաբերդը բազմասենյականոց մի համալիր էր լայնարձակ բակով: Ամրոցի առջև, նրա հյուսիսային կողմում տարածվում էր մոտ 80 հա մակերես զբաղեցնող բաղաբը և նրա պարիսպներից դուրս՝ դամբարանադաշտը:

էթիունյան ժամանակաշրջանի ամրոց-բնակատեղիների խիստ ցանցով է ծածկված Արարատյան դաշտավայրը:

<sup>358</sup> Նույն տեղում:

<sup>359</sup> ՄԿՈ, 30, 31.

<sup>360</sup> ՄԿՈ, 155A.

Ազատ երկրում, ներկայիս էջմիածնից Հոկ-տեմբերյան ընկած տարածքում, բազմաթիվ մանր բնակատեղիների շարքում, հայտնաբերված՝ էջմիածնում, Լենուղիում, Առատաշենում, Ար-շալույսում, Ակնալի մոտակայքում, ամենա-նշանավորը Մեծամորն է:

Երևանից մոտ 30 կմ արևմուտք գտնվող ուշագրավ հնավայրի նախաուրարտական միջնա-բերդը տեղավորված է միջին շորորդական հա-սակի (աշել-մուսոյե) հրաբխային հրեք կոններից ամենախոշորի վրա, որը կից հարթավայրի նը-կատմամբ ունի 27—28 մ հարաբերական բարձ-րություն<sup>361</sup>: Հզոր կիկլոպյան պարսպով պաշտ-պանված միջնաբերդի ստորին դարավանդներում կենտրոնացած են արտադրական գլխավոր շինու-թյունները՝ ձուլարանները, հարստացման կառուց-վածքները, իսկ վերին դարավանդներում և գազա-թին՝ բազմաթիվ պաշտամունքային կոթողներ, տաճարական համալիրն ու վերնախավի բնակելի շինությունները: Միջնաբերդին կից հարթավայրի քաղաքն ու դիտահարթակներով հնագույն աստ-ղադիտարան-պաշտամունքային փոքր բլրաշարքը պարսպապատ են և զբաղեցնում են շուրջ 30 հա մակերես: Այս հատվածը արևմուտքից շրջափակ-վում է նաև Մեծամոր գետի ճահճոտ հուններով, իսկ արևելյան կողմից եզերվում՝ արհեստական ջրապատնեշով, որի համար ժամանակին փորված, մոտ 20—30 մ լայնություն ունեցող արհեստա-կան խրամատի հետքերն ակնհայտ են: Արհեստա-կան ջրապատնեշի եզրից սկսած դեպի արևելք և հատկապես հյուսիս, դեպի Մեծամոր լճակը (Ակնալի) տարածվող, մոտ 40—50 հա մակե-րես ընդգրկող դաշտավայրում, որտեղ տեղավոր-ված են եղել հավանաբար այդ հինավուրց քաղա-քի արվարձանները, հողային աշխատանքների ժամանակ անընդմեջ հայտնաբերվում են շենքերի հիմնապատեր, մ. թ. ա. XI—IX դդ. թվագրվող հնագիտական իրեր, իսկ այդ տարածքի «Կարմիր քարեր» կոչվող տեղամասում՝ նաև ժայռափոր պաշտամունքային կառուցվածքների հատվածներ:

Մեծամորի միջնաբերդից շուրջ 0, 5—1,0 կմ դեպի արևելք և հարավ-արևելք ծավալվում է դամբարանադաշտը, որը վերջին տվյալների համաձայն զբաղեցնում է գրեթե 36 հա մակերես և բնորոշվում արտակարգ մեծ խտությամբ:

Այս բոլորն արդյոք իրավունք չեն տալիս Մեծամորը դիտելու որպես Ազատ երկրի արքունի

<sup>361</sup> Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մե-ծամոր, էջ 8:

քաղաք և զլխավոր պաշտամունքային կենտրոն, որին հարել են, հավանաբար, Ազատ երկրի վերո-հիշյալ ոչ խոշոր բնակատեղիները:

Նմանատիպ բազմաթիվ հուշարձաններով է ծածկված եղել Արարատյան դաշտավայրի մեկ այլ հատվածը՝ պատմական Ոստան Հայոց դա-վառը, որտեղ էթիունյան ժամանակաշրջանի մի շարք բնակատեղիների շարքում, հայտնաբերված՝ Այգեանում, Մրգանուշում, Արեշատում, Զրա-հովտում, Այգեստանում, ամենանշանավորը Դվինն է, որը և, ամենայն հավանականությամբ, Արա-րատյան դաշտավայրի վերոհիշյալ տարածքի «արքունի քաղաքն» է եղել:

Դվինում նախաուրարտական միջնաբերդը տեղավորված է հատած կոնի ձևի, մոտ 30 մ բարձրություն ունեցող և շուրջ 4000 մ<sup>2</sup> տարածք զբաղեցնող արհեստական բլրի միջնադարյան շերտի տակ<sup>362</sup>: Ամրոցում պեղումների ժամանակ հայտնաբերվել են սրբարաններ՝ յուրօրինակ կոթողներով պսակված ղոհասեղաններով, տա-րատեսակ արհեստանոցներ, ձուլարաններ՝ մե-տաղե իրերով և ձուլման կաղապարներով, ջնարա-կած խեցեղենի վառարանների կոմպլեքսներ, նաև բնակելի մեծածավալ շինություններ: Ամ-րոցն օղակող քաղաքում, որի մի փոքր հատվածն է պեղվել, հատկապես Դվինի կենտրոնական թաղամասում, միջնադարյան շինությունների տակ բացվել են մ. թ. ա. XI—IX դդ. շենքերի քարե հիմքեր և դարձյալ զոհասեղան՝ ուշագրավ կո-թողներով հանդերձ: Քաղաքի մերձակայքում հո-ղային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է դամբարանադաշտը՝ ֆալլատիպ և մարդակերպ դամբանաբար-կոթողներով:

Հուշարձանների մեծ խտություն է նկատվում նաև երևանյան գոգավորությունում՝ նախաուրար-տական Կուարլինի հովտում, որտեղ հայտնաբեր-ված բնակատեղիների շարքում արժե հիշատակել Մուխաննաթ-թափայի (երկաթուղային կայարանի մոտ)<sup>363</sup> վերին շերտի մ. թ. ա. XI—IX դդ. ամրոցը, Հրազդանի աջ ափին՝ հզոր կիկլոպյան պարսպով շրջապատված Կարմիր-բերդ ամրոցը (Ֆիզիկայի ինստիտուտի մոտ): Սակայն Կուարլինի հովտի էթիունյան մշակութային նշանավոր կենտրոնը՝ Կարմիր բլուրի նախաուրարտական, հավանա-բար, արքունի քաղաք-ամրոցն է:

<sup>362</sup> Կ. Գ. Ղաֆաղյան, Դվին քաղաքը և նրա պեղում-ները, Երևան, 1952, էջ 22—24:

<sup>363</sup> Ն. Բայրուդյան, Հայաստանի գունազարդ կերամի-կայի պրոբլեմը, էջ 276:

Հրազդանի հրվանդանի բարձրագույն դարավան-դում, ուրարտական միջնաբերդի տեղում ժամա-նակին կանգնած է եղել նախաուրարտական քա-ղաքի ամրոցը, որը, ինչպես Հ. Մարտիրոսյանն է նշում, հիմնահատակ կործանվել է Թեյշեբա-աստծո քաղաքի միջնաբերդի կառուցման ժամա-նակ<sup>364</sup>: էթիունյան ամրոցի գոյությունն են վկա-յում ուրարտական շինությունների հատակների տակ, ամրոցի տարբեր հատվածներում հայտնա-բերված մ. թ. ա. XI—IX դդ. մշակույթին բնորոշ նյութական բազմաթիվ մնացորդներ, խեցեղեն և մետաղաձուլության հետ առնչվող իրեր<sup>365</sup>:

Ամրոցի առջև, Հրազդանի III դարավանդում, Թեյշեբայի քաղաքի ավերակների տակ հայտնա-բերվել է նախաուրարտական քաղաքը, որը զբա-ղեցրել է 45—50 հա մակերես: Այն իր հերթին բոլոր կողմերից պաշտպանված է եղել քարե և կավե շաղախով պատրաստված մի հզոր պարիս-պով, որի միայն հիմքերն են պահպանվել<sup>366</sup>:

Բնակատեղին բնորոշվում է մ. թ. ա. XII—IX դդ. թվագրվող երեք միմյանց հաջորդող շինա-րարական շերտերով, որոնց համար հատկանշա-կան են փոքր ընտանիքներին պատկանող բնա-կարանների մեկուսացված խմբեր<sup>367</sup>: Քաղաքի պարիսպներից դուրս պեղվել է դամբարանա-դաշտը, որին դարձյալ բնորոշ են ֆալլատիպ կոթողներ:

Արարատյան դաշտավայրի մեկ այլ հատվա-ծում, էթիունյան էրիուկախի երկրում (պատմա-կան Մասեացոտն) մ. թ. ա. XI—IX դդ. պատկա-նող երեք կիկլոպյան անառիկ ամրոցներ և նրանց շուրջը սփռված բնակելի տներ ու տնտեսական շինություններ է պեղել Ա. Ա. Իվանովսկին<sup>368</sup>:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես մերձսևանյան ամրոցների, դամբա-րանադաշտերի, ինչպես նաև լճից արևելք ընկած Ուղուրի-էթիունի կիկլոպյան ամրոցների, պատ-մական Արցախից մինչև Մինգեչաուր տարած-վող դամբարանադաշտերի ուսումնասիրություն-ը<sup>369</sup>:

<sup>364</sup> А. А. Мартиросян, Город Тейшебани. Улицы, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 187. Նույնի. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարա-նադաշտեր, էջ 8:

<sup>365</sup> Նույն տեղում:

<sup>366</sup> А. А. Мартиросян, Армения в эпоху... стр. 161.

<sup>367</sup> Նույնի, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր..., էջ 12:

<sup>368</sup> А. А. Ивановский, По Закавказью, стр. 33—53.

Հ. Ա. Մարտիրոսյան, Նշվ. աշխ., էջ 7:

<sup>369</sup> А. А. Аджаян, Л. Т. Гюзальян, Б. Б. Пиотров-

Սևանա լճի արևմտյան, հարավային և արև-վելյան ափերի հետադոտությունները պարզել են, որ դեպի լիճն իջնող լեռնաշղթաները լճափնյա ամբողջ տարածությունը բաժանում են գետերով պսակված հինգ առանձին հովիտների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է աշխարհագրա-կան մի ամփոփ միջավայր, որը և հնագույն շրջ-ջանից թելադրող է հանդիսացել քաղաքական բա-ժանումների համար<sup>370</sup>: Այդ հինգ աշխարհագրա-կան առանձին միավորներից յուրաքանչյուրում, ըստ ուրարտական արձանագրությունների, տեղա-վորված են եղել՝ Կիխունի, Ուելիբուխի, Լուե-րուխի, Ագախունի և Արբուբիների երկրները<sup>371</sup>: Ուսումնասիրությունների բնթացքում պարզվում է, որ իրոք Կամոյի (Նոր Բայազետ) ինքնամփոփ շրջանում մինչև այժմ էլ գոյություն ունեն Ուելիբ-ուխիի 22 ամրոցները, որոնք միասին զբաղեց-նում են 23—25 կմ երկարություն և 20—23 կմ լայնություն<sup>372</sup>:

Այդ ամրոցներից ամենահզորը՝ Կամո քա-ղաքի արևմտյան մասում, մոտ 40—50 մ բարձ-րություն ունեցող հրվանդանի վրա, 5 հա մակերես զբաղեցնող, աշտարակավոր կիկլոպյան պարիս-պով պաշտպանված «Բերդի գլուխ» ամրոցն է. ստորերկրյա գետնուղիով և միջնաբերդից դուրս՝ բնակելի տների համալիրներով<sup>373</sup>: Մի շարք մեծ ու փոքր բերդեր պաշտպանել են այս ամրոցի մատուցները<sup>374</sup>: Ռուսա I-ը նվաճելով, այն վեր-անվանում է «Խալց աստծո քաղաք» և գարձնում փոխարքայության կենտրոն:

Հզոր են նաև լճաջրի տարածքում տեղա-վորված կիկլոպյան անառիկ ամրոցները, որոնց նվաճման մասին հիշատակվում է Արգիշտի I-ի

ский, Циклопические крепости Закавказья, Сообше-ние ГАИИМК, № 1—2, 1938, Н. Н. Мезцанинов, Цик-лопические сооружения Закавказья, ГАИИМК, т. XIII, вып. 4—7, 1932. Б. Б. Пиотровский, Л. Т. Гюзальян, Крепости Армении доурартского периода, ГАИИМК, 1933, № 5—6, Գ. Հ. Միրսայելյան, Սևանի ավազանի կիկ-լոպյան ամրոցները, ՀՀՀ, Երևան, 1968, Н. Джафарова-де, Обследование циклопических сооружений Ар. ССР, «Известия АЗФАИ СССР», 1939, № 3, А. А. Иванов-ский, Նշվ. աշխ., Գ. М. Аджаян, Р. М. Ваидов, Г. Н. Дюне, Древний Мингечаур.

<sup>370</sup> Ս. Բաբոյանյան, Վելիբուխի երկիրը, նյութեր հին Հայաստանի պատմության, 1935, Երևան, էջ 163:

<sup>371</sup> Նույն տեղում:

<sup>372</sup> Նույն տեղում, էջ 164—166:

<sup>373</sup> Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայ-րեր..., էջ 14:

<sup>374</sup> Նույն տեղում:



թողած արձանագրությունում, ուր, ինչպես վերը տեսանք, նա նշում է Կիխունի երկրի նվաճման և Իշտիկունի քաղաքը հասնելու մասին: Մյուս կողմից, Խորհրդյան տարեգրության համաձայն, Արգիշտի I-ը Կիխունին նվաճելուց հետո հասնում է Աիշտու քաղաքը, որը, ինչպես նշվեց, հավանաբար Աղստեի հովտի՝ Ղազախ քաղաքի Սարի-Քեփեի ամրոցն է: Այն շուրջ 10 մ բարձրություն ունեցող, մեծ մասամբ ավերված մի բլուր է, որի նախաուրարտական շերտը կրում է հրդեհի, ավերածության հետքեր, բնորոշվում՝ կենտրոնում կառուցված քառանկյունաձև մեծ սրբարանով, որի զոհասեղաններն ու թասանման զոգավորություններով կավակերտ հորինվածքները, ինչպես նաև խեցեղենը, պաշտամունքային իրերը<sup>375</sup> հիշեցնում են Մեծամորում, Դվինում հայտնաբերվածներին: Սարի-Քեփեի վերին շերտում գտնված խեցեղենի մի մասը պեղող հնագետների կողմից նույնացվում է Կարմիր բլուրում հայտնաբերված սրբարտական խեցեղենի հետ<sup>376</sup>:

Վերոհիշյալ հնագիտական տվյալները, ինչպես նաև Alistu-ն Աղստեի հետ նույնացնելու հանգամանքը տողերիս հեղինակին ժամանակին հնարավորություն են տվել ենթադրելու, որ Սարի-Քեփեն Արգիշտի I-ի կողմից նվաճված Աիշտու քաղաքն է<sup>377</sup>: Սակայն վերջերս պարզվում է, որ Սարի-Քեփեից գատ, Ղազախ քաղաքի մոտակայքում գտնվել են նույն ժամանակաշրջանի ևս երկու հուշարձան, որոնք տեղավորված են Բաբա-Գերվիշ IV—V բլուրների վրա և բնորոշվում են դարձյալ սրբարաններով ու հետաքրքրական կավակերտ զոհարաններով<sup>378</sup>:

Աղստեի հովտում ուշագրավ են նաև Դիլիջանի՝ Ռեդկին-լագեր դամբարանադաշտի, ինչպես և Խրատնոցի, Զարխեջի, Պապանինոյի ընդարձակածավալ դամբարանադաշտերը՝ էթիունյան ժամանակաշրջանին բնորոշ թաղման ձևերով և իրերով: Վերջիններիս ժամանակակից են նաև

Իջևանի մի շարք դամբարանադաշտեր (հիվանդանոցի մոտի, Աստղի-բլուրի, Պակերի, Մեծ Զալի)<sup>379</sup>:

Էրիախի երկրի (Շիրակ) հուշարձաններից մասամբ ուսումնասիրվել է Շիրակից դեպի Վանանդ ու Արարատյան դաշտավայր տանող ճանապարհների հանգուցակետի բնակատեղին (Լեւինականի մոտ կոմբինատի մոտ) իր դամբարանադաշտով: Այս բնակատեղում Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից հայտնաբերվել է մետաղագործի արհեստանոց՝ մարտական սակրի կաղապարով և այրված գերանների մոխրի հոծ շերտով ծածկված բնակելի շինություններ<sup>380</sup>, որոնք, հավանաբար, հրդեհվել են ուրարտացիների նվաճումների ժամանակ:

Էթիունյան մշակույթի խոսուն վկաները առկա են նաև Կիրովականում, Ստեփանավանում, Արավիրդիում և այլուր: Նրա շառավիղները տարածվում են Թբիլիսից հարավ՝ Դիզոմիի դանգավածը, որտեղ պեղված բնակատեղիի կացարանների համալիրների պաշտամունքային անկյունը պահպանում է Կարմիր բլուրի և Մեծամորի տիպի մարդակերպ ֆիգուրների մինիատյուր օրինակը<sup>381</sup>:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Զրլզրը լճից հյուսիս, Ախալքալաքից դեպի արևմուտք գտնվող Խովյե բնակատեղին, որն իր պաշտամունքային կոթողներով հարում է էթիունյան վերոհիշյալ սրբատեղիներին<sup>382</sup>:

Ինչպես տեսանք, էթիունյան վերոհիշյալ քաղաքներից և ոչ մեկը լիարժեք կերպով դեռևս ուսումնասիրված չեն, այդ իսկ պատճառով դժվար է նրանց մասին ամբողջական պատկերացում կազմել: Սակայն վերոհիշյալ փաստերի գումարը հնարավորություն է տալիս մասնակիորեն վերականգնելու նրանց բնորոշ ընդհանուր գծերը:

Էթիունյան երկրները հատկանշվել են նաև ազգաբնակչության մեծ խտությամբ, որոնց խոսուն վկաները ուրարտական արձանագրություններն են:

Յուրաքանչյուր հաղթանակից հետո ուրարտացի թագավորն ավարի հետ տարել է նաև մեծ քանակությամբ գերիներ: Օրինակ, Սարգուրի II-ը, իր թագավորության երկրորդ կեսում, Աբիլիանի կատարած I արշավանքի ժամանակ

դերի է տարել մեկ ( ) հազար 890 պատանի, 3496 տղամարդ, 6 ( ) հազար 408 կին, ընդամենը 9904 մարդ<sup>383</sup>, իսկ մեկ կամ երկու տարի հետո, II արշավանքի ժամանակ դերի է 7150 մարդ<sup>384</sup>, էրիախի կատարած արշավանքի ժամանակ (մ. թ. ա. 747 թ. ոչ շուտ և 745 թ. ոչ ոչ) Սարգուրի II-ը դերի է տարել 6436 պատանի, 15553 կին, ընդամենը՝ 21989 մարդ<sup>385</sup>, իսկ հաջորդ տարում էրիախի կրկին նվաճման ժամանակ դերի է 3225 պատանի, 4928 կին, ընդամենը՝ 8153 մարդ<sup>386</sup>: Այսպիսով, էրիախի կատարած երկու արշավանքների ընթացքում նա գերել է 30140 մարդ:

Ուխտերուխիի նվաճման ժամանակ Սարգուրի II-ը գերել է 8100 պատանի, 9110 կին, ընդամենը 17200 մարդ<sup>387</sup>: Նույն Սարգուրի II-ը Սևանի հարավ և հարավ-արևելյան կողմում նվաճված՝ 20 ամրոց և 120 քաղաքից գերված կանանց և տղամարդկանց մի մասին բաժանել է իր մարտիկների մեջ, իսկ իր հետ տարել՝ 10000 պատանի, 4600 տղամարդ և 23200 կին, ընդամենը՝ 37800 մարդ<sup>388</sup>:

Ուրարտական տեքստերում ուշագրավ տեղեկություններ են պահպանվել նաև էթիունցիների տնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության և հատկապես անասնապահության վերաբերյալ:

Էթիունիի դաշտավայրերի՝ պատմական Շիրակի, Վանանդի, Արարատյան հովտի տարատեսակ հացաբույսերի և բանջարեղենի աճի համար բարենպաստ բնակլիմայական պայմանները՝ բերքատու, լայնարձակ հողերն ու ջրային ռեսուրսները հնագույն ժամանակներից նրանց զարճել են Հայկական լեռնաշխարհի շտեմարանը:

Ուրարտացիների կողմից հացահատիկի շտեմարանների գրավման մասին խոսվում է Արգիշտի I-ի և Սարգուրի II-ի արձանագրություններում:

Աշտուխիի երկրի (պատմական Վանանդ) Ախուրիանի քաղաքի նվաճման հետ Արգիշտի I-ը Սարիզամիշի արձանագրությունում նշում է նաև Աշտուխիի երկրի հացահատիկի շտեմա-

բանի գրավման մասին<sup>389</sup>: Վերականգնելով արձանագրության վնասված հատվածը, Ն. Վ. Հարությունյանը գտնում է, որ Արգիշտի I-ը այստեղ գործ է ունեցել հացահատիկի շատ շտեմարանների հետ և իրավացիորեն նշում է, որ Արգիշտի I-ը շատ մեծ նշանակություն է տվել Աշտուխիի երկրի հացահատիկի պաշարների գրավմանը, որի պատճառով հարկ է համարել նրա մասին հատուկ տեղ հատկացնել իր նվաճումների վերաբերյալ թողած արձանագրություններում<sup>390</sup>:

Հնուց ի վեր հացահատիկային մշակույթի բարձր զարգացումով և լեցուն շտեմարաններով աչքի է ընկել հատկապես Շիրակի դաշտը, որի մի հատվածի, էրիախի նախահայրերի կողմից կառուցված 150 թաքցրած պահեստների նվաճման մասին է խոսվում Սարգուրի II-ի արձանագրությունում<sup>391</sup>:

Կարմիր բլուրի նախաուրարտական քաղաքի հացահատիկի բազմաթիվ մեծ հորերում ցորենի, գարու և կորեկի ածխացած մնացորդները<sup>392</sup>, ինչպես նաև Մեծամորի ամրոցում հացահատիկով լեցուն օձաղարդ կարանների, «օջախներով շինությունում» այրված հատիկների կույտերի առկայությունը<sup>393</sup>, անշուշտ, վկայում են հացաբույսերի մեծ առատությունը նաև Արարատյան դաշտավայրում, դաշտավայր, որը նստակյաց երկրագործական մշակույթի մեծ ավանդույթներ ուներ: Բնականաբար այն նետադաշտում դառնում է նաև ուրարտացիների երկրագործական ամենախոշոր օջախներից մեկը<sup>394</sup>:

Հին ջրանցքների հետքերը՝ էլեմիաձնում, Աշտարակի շրջանում, Հոկտեմբերյանում, նաև Արագածում, Գեղամա լեռներում, հավաստում են զարգացած ոռոգման սիստեմների առկայությունը Արարատյան դաշտավայրում, որը մեծ թափով զարգացավ ուրարտացիների օրոք:

Սակայն հացաբույսերի առատությունը միայն բնակլիմայական պայմաններով չէր պայմանավորված: Հարկավ երկրագործության արտադրողականության բարձրացման գործում վերոհիշյալ

<sup>375</sup> Дж. Халилов, Поселение на холме Сарн-Тепе, СА, № 4, 1960. И. Нариманов, Дж. Халилов, Археологические раскопки на холме Сарн-Тепе (1956), МКА, IV, Баку, 1962.

<sup>376</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>377</sup> Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պաղսամյան, Մեծամոր, էջ 58:

<sup>378</sup> В. Алиев, Поселения эпохи поздней бронзы и раннего железа в Баба-Дервинге. МКА, VIII, Баку, 1976, стр. 104—130. Д. А. Ахундов, Интерьеры храмов Митры (II тыс. до н. э.), «Ученые записки», X серия, № 3, Баку, 1976, стр. 16—29.

<sup>379</sup> С. А. Есаян, Древняя культура племен Северо-восточной Армении, стр. 131—138.

<sup>380</sup> Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 12—13:

<sup>381</sup> Պեղումները՝ Ռ. Աբրամիշվիլու

<sup>382</sup> Պեղումները՝ Գ. Մուսիելաշվիլու

<sup>383</sup> УКИ, 155 С.

<sup>384</sup> УКИ, 155 С, стр. 301—302.

<sup>385</sup> УКИ, 155 Е, стр. 302, 303.

<sup>386</sup> УКИ, 155 В, стр. 303.

<sup>387</sup> УКИ, 155 Д.

<sup>388</sup> УКИ, 155 F.

<sup>389</sup> УКИ, 130.

<sup>390</sup> И. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, стр. 74.

<sup>391</sup> УКИ, 155 С.

<sup>392</sup> А. А. Мартirosian, Город Тейшебаши, стр. 13, 16, 17, 20, 69. Նույնի, Армения в эпоху..., стр. 182.

<sup>393</sup> Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պաղսամյան, Մեծամոր, էջ 66:

<sup>394</sup> Ն. Վ. Հարությունյան, Ուրարտական թագավորության գյուղատնտեսությունը. 2-րդ, էջ 364:

ժամանակաշրջանում առաջնակարգ նշանակու-  
թյուն ունեցավ ինչպես երկաթե զործիրների ներ-  
գրությունը, այնպես էլ նոր տեսակի աշխատանքի  
միջոցների՝ փայտե գոթիանի օգտագործումը,  
որի պատկերը մենք ունենք Խոջալիի № 20  
դամբանաբլուրում հայտնաբերված կավամանի  
վրա<sup>395</sup>, նաև փայտե կամերի, կալսիչների կիրա-  
րումը, որոնց օրինակները մեզ հայտնի են Ախ-  
թալայից<sup>396</sup>, Խանյարի № 2 դամբանաբլուրից<sup>397</sup>,  
Սամբավրոյի դամբարանադաշտից<sup>398</sup>, իսկ նրանց  
բարե ներդրումները հայտնաբերվել են Արթիկի  
№ 508 դամբարանից<sup>399</sup>:

Հացահատիկային տնտեսության բուռն վերել-  
քի խոստուն վկաններն են կիրառական արվեստում  
այնքան սիրված հատիկի, հասկի զարդամոտիվ-  
ները և ընդհանրապես բուսական պատկերները,  
որոնցով զարդարված են ինչպես հասարակ, այն-  
պես էլ պաշտամունքային կավամանները, պտղա-  
բերության աստվածուհիների քանդակները:

Անշուշտ, էթիունյան պտղաբեր հովիտներում  
աճեցրել են նաև բանջարաբուստանային կուլտու-  
րաներ, որոնց նախատարատական նմուշները մենք  
դեռևս չունենք, սակայն բազմաթիվ հնավայրերում  
գտնված պերճանքի առարկաներում տարատեսակ  
սերմերի ձևերի ընդօրինակումը վկայում են այդ  
կուլտուրաների նշանակալից օգտագործումը  
մ. թ. ա. XI—IX դդ.:

Բանջարաբուստանային կուլտուրաներից  
լայն տարածում է ունեցել հատկապես ոսպի  
մշակությունը, որի խոստուն վկաններն են էթիուն-  
յան գրեթե բոլոր հնավայրերում հայտնաբերված  
ծարիրից պատրաստված ոսպաձև ուլունքները,  
իսկ ոսպի սերմերի հայտնագործումը Կարմիր  
բլուրում<sup>400</sup> վկայում են այդ կուլտուրայի աճեց-  
ման ավանդույթի գոյությունը նաև ուրարտական  
ժամանակաշրջանում:

Հայկական լեռնաշխարհը հնագույն ժամա-

նակներից ի վեր այգեգործության նշանավոր օ-  
ջախներից է: Այդ են վկայում ծիրանի կորիզի  
հայտնագործությունը Գառնիում<sup>401</sup>, մ. թ. ա. III  
հազարամյակի շերտում և դեղձինը Ջրահովտում՝  
մ. թ. ա. II հազարամյակի սկզբի շերտում<sup>402</sup>,  
խաղողի կորիզների հայտնագործությունը՝ Սարի-  
թեփեի մ. թ. ա. XI—IX դդ. թվագրվող սրբարա-  
նում:

Անշուշտ, այգեգործության վաղ ավանդույթ-  
ների շարունակությունը պետք է համարել՝ սա-  
լորի-ալուշայի, խնձորի, խաղողի տարբեր տե-  
սակների, դեղձի, մանրահատիկ բալի, նռան և  
ընկույզի պտուղների ու կորիզների մնացորդները՝  
հայտնագործությունը Կարմիր բլուրում<sup>403</sup>:

Այս բոլորն աներկբայորեն վկայում են էթի-  
ունյան երկրներում երկրագործության ինտենսի-  
վացում, որին բնորոշ է անցումը մասնագիտացված  
տնտեսությունների՝ խաղողագործության, այգե-  
գործության, բանջարաբուստանային կուլտուրա-  
ների մշակության, դաշտավարության և արտա-  
վայրային անասնապահության, որոնք, հավանա-  
բար, վարում էին անհատ, փոքր բնտանիքները:

Ավելի քան խոստուն են տնտեսության առա-  
ջատար ձևի՝ անասնապահության բուռն վերելքի  
վերաբերյալ պահանջված տվյալները: Հնագիտու-  
թյան ընձեռած հնարավորությունները հավաս-  
տում են դաշտավայրերի տափաստանային գո-  
տիներում հատկապես խոշոր, եղջյուրավոր կեն-  
դանիների զգալի աճը: Պարզվում է, որ Կարմիր  
բլուրի նախաուրարտական քաղաքում խոշոր եղ-  
ջյուրավոր անասունների թիվը մոտավորապես  
չորս անգամ ավելի է եղել մանր եղջյուրավորների  
համեմատությամբ<sup>404</sup>: Մեծամորի միջնաբերդում  
հայտնաբերված ոսկրաբանական նյութերում  
դարձյալ գերակշռում են խոշոր եղջյուրավոր  
կենդանիները<sup>405</sup>:

Սակայն զարգացման այս նոր փուլում՝ վաղ  
երկաթի դարաշրջանում, փոխադրամիջոցների  
կատարելագործման պայմաններում, ինչպես և  
դաշտավայրերի հողային տարածությունների հա-

ցահատիկային ու բանջարաբուստանային կուլ-  
տուրաների նաև այգեգործության նպատակով  
ավելի ուսցիտնալ օգտագործման պայմաններում,  
բնականաբար, մեծ թափ է ստանում հեռագնաց  
անասնապահությունը: Նրա զարգացման կարևո-  
րագույն խթաններից մեկը՝ լեռնային արտա-  
վայրերում, հնագույն ժամանակներից ի վեր գո-  
յություն ունեցող ջրային ռեսուրսների էլ ավելի  
ընդլայնումն էր նորանոր ջրամբարների սիստեմ-  
ների կառուցումներով:

էթիունյան երկրներում հեռագնաց անասնա-  
պահության գերիշխանության խոստուն վկանների՝  
մանր եղջյուրավոր կենդանիների քանակական  
զգալի գերակշռությունը խոշորի նկատմամբ հա-  
վաստում են ուրարտական տեքստերը:

Վանում, սուրբ Պողոս եկեղեցում հայտնա-  
բերված արձանագրության համաձայն Իշպուհինին  
և Մենուան Անաշե քաղաքից (Ալաշկերտ) տարել  
են 13540 խոշոր և 20785 մանր եղջյուրավոր կեն-  
դանի<sup>406</sup>:

Միայն Ուրարտուից Արգիշտի I-ը տարել է  
29504 խոշոր և 60 հազար մանր եղջյուրավոր կեն-  
դանի<sup>407</sup>, իսկ Սարգուրի II-ը՝ 17300 խոշոր և  
13600 մանր եղջյուրավոր կենդանի<sup>408</sup>: Սարգուրի  
II-ի տարեգրության համաձայն, Մասեացոտնի  
էթիունյան շորս ամրոցներից նա տարել է՝ 8525  
խոշոր և 18000 մանր եղջյուրավոր կենդանի<sup>409</sup>,  
իսկ էրիախի կատարած միայն երկու արշա-  
վանքների ընթացքում՝ 23194 խոշոր և 63420  
մանր եղջյուրավոր կենդանի<sup>410</sup>:

Մեծաքանակ են հատկապես Ուրարտու-էթի-  
ունից Սարգուրի II-ի տարած կենդանիների  
քանակը՝ 40353 խոշոր և 214, 700 մանր եղջյուրա-  
վոր կենդանիներ<sup>411</sup>: Մեծ շափերի է հասնում նաև  
Աբիլիանիսից և էթիունյան այլ երկրներից  
տարված կենդանիների զխաբանակը<sup>412</sup>: Սակայն,  
բացի թագավորից, էթիունյան երկրները թալան-  
վել են նաև ուրարտական բանակի կողմից<sup>413</sup>,  
որոնց տարած կենդանիների զխաբանակը մեզ  
հայտնի չէ:

Ուրարտական տեքստերում պահանջված  
տվյալները հուշում են, որ էթիունիում զարգացած

է եղել նաև ձխարտությունը, որն իր հերթին,  
որպես բաշտ ուժ և կապի միջոց, խթանել է  
հեռագնաց անասնապահության զարգացումը:

Չին մեծ դեր է կատարել ընդհանրապես տնտե-  
սության մեջ, պատերազմների ժամանակ օգտա-  
գործվել է մարտակառքերի և հեծելազորի հա-  
մար, որոշակի դեր կատարել որսորդության մեջ:  
Չիեր տարել են էթիունին նվաճող գրեթե բոլոր  
ուրարտական թագավորները, Իշպուհինին և Մե-  
նուան<sup>414</sup>, Արգիշտի I-ը, որը միայն Ուրարտուիցից  
տարել է 1200-ից ավելի ձի<sup>415</sup>, Սարգուրի II-ը  
էրիախի կատարած երկու արշավանքների ժա-  
մանակ տարել է 2025 ձի<sup>416</sup>, Ուրարտուիցից՝ 1500  
ձի<sup>417</sup>, Աբիլիանիսից երկու արշավանքների ըն-  
թացքում՝ 565 ձի<sup>418</sup>, իսկ Ուրարտու-էթիունից՝  
3500 ձի<sup>419</sup>:

Բացի ուրարտական աղբյուրներից, էթիուն-  
յան գրեթե բոլոր երկրների թագավորներում ձիերի  
գանգերի կամ ամբողջական կմախքների առկա-  
յությունը՝ Շիրակից Ուրուն-թեփե, իր հերթին  
վկայում են ձխարտության զարգացման բարձր  
մակարդակը:

Անասնապահության զարգացումը մեծ խթան  
հանդիսացավ կաթնամթերքների առատության  
համար, որոնք վկայում են պեղավայրերում  
հայտնաբերված, այդ մթերքների մշակմանն ու  
պահպանմանը ծառայող տարատեսակ կավաման-  
ների բազմազանությունն ու նորանոր ձևերի  
առատությունը:

Անասնապահության հետ կապված բացի մսի  
մթերումներից մեծ ծավալ են ստանում նաև կա-  
շեգործական և մանածագործական հումքն ու  
պատրաստի արտադրանքը, որոնցով, անշուշտ,  
ողողվում են հին արևելյան շուկաները:

Նուրիի (Յորդան-թեփե, Տիգրիսի վտակ՝  
Աղեմի վերին հոսանքներում) արխիվի մ. թ. ա.  
II հազարամյակի կեսին վերաբերող փաստա-  
թղթերից մեկում, տեղական գործվածքների շար-  
քում հիշատակվում է նաև ծիրանագույն ներկված  
բուրդը՝ tabarru-ն<sup>420</sup>: Ավելի ուշ, Սարգոն II-ի  
տարեգրություններում այդ tabarru-ին վերագրե-

<sup>395</sup> ОАК за 1897, СПб., 1900. стр. 48, рис. 138.

<sup>396</sup> J. de Morgan. Mission scientifique au Cau-  
case, vol. I, Paris, 1889, стр. 59, рис. 18, стр. 139, рис.  
142—143.

<sup>397</sup> Я. И. Гуммель, Курган № 2 близ гор. Ханла-  
ра, КСНИМК, вып. XXIV, 1949, стр. 56, рис. 13.

<sup>398</sup> Т. Н. Чубукишвили, Погребение с молотиль-  
ной доской на Самтаврском могильнике. Сообщение  
АН ГрузССР, т. XII, № 1, 1951, стр. 61, рис. 4.

<sup>399</sup> Т. С. Хачатрян, Древняя культура Артика,  
стр. 254.

<sup>400</sup> Б. Б. Пиотровский, История и культура Ура-  
ту, Ереван, 1944, стр. 177.

<sup>401</sup> Б. Н. Аракелян, Гарни I, Ереван, 1952, стр. 25.

<sup>402</sup> Պեղումներ՝ է. Խանգաղյանի:

<sup>403</sup> Б. Б. Пиотровский, Кармир-блур, т. I, Ереван,  
1950, стр. 31. Նույնի, Кармир-блур, т. III, Ереван, 1955,  
стр. 15—16.

<sup>404</sup> Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը զարգացած կամ  
ուշ բրոնզի դարաշրջանում, ՀԺՊ, էջ 213:

<sup>405</sup> է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, է. Պարսամյան, Մե-  
ծամոր, էջ 66:

<sup>406</sup> УКН, 20.

<sup>407</sup> УКН, 127 V.

<sup>408</sup> УКН, 155 Д.

<sup>409</sup> УКН, 155 А.

<sup>410</sup> УКН, 155 Е, С.

<sup>411</sup> УКН, 155 F.

<sup>412</sup> УКН, 155 С, УКН, 38.

<sup>413</sup> УКН, 155 С.

<sup>414</sup> УКН, 20.

<sup>415</sup> УКН, 127 V.

<sup>416</sup> УКН, 155 В. E.

<sup>417</sup> УКН, 155 Д.

<sup>418</sup> УКН, 155 С.

<sup>419</sup> УКН, 155 F.

<sup>420</sup> Н. Б. Янковская, Некоторые вопросы эконо-  
мики Ассирийской державы, ВДН, 1956, № 1, М., 1956,  
стр. 32.

վում է ուրարտական ծագում<sup>421</sup>: Ըստ Ն. Բ. Յանկովսկայի, ալտայի խոսքը գնում է դեռևս հնուց հայտնի ծիրանագույն III տիպի ներկի մասին, որը, հավանաբար, ստացվում էր անդրկովկասյան որդան կարմիրից<sup>422</sup>:

Սակայն որդան կարմիրը այդ հեռավոր ժամանակներում բնորոշ էր միայն Հայկական լեռնաշխարհին: Ուստի վերոհիշյալի համաձայն tabarru-ն, այսինքն որդան կարմիրով ներկված Հայկական լեռնաշխարհի բուրդը, հայտնի է եղել սկսած մ. թ. ա. II հազարամյակի կեսից: Հավանաբար, այն փոխանակային մեծ արժեք է ներկայացրել և առևտրի ճանապարհով հասել այլ երկրներ, այդ թվում նաև Նուզի, որի արխիվում

այն հիշատակվում է փոխանակվող տեղական գործվածքների շարքում:

Քանի որ որդան կարմիրը ստացել են հատկապես Արարատյան դաշտավայրում և վերր տեսանք, որ ոչխարաբուծությունը էթիունիում պարզացման անկարագրելի շափերի էր հասել, ամենայն հավանականությամբ tabarru-ն ուրարտացիները ավարի, տուրքի ճանապարհով էթիունիից վաճառքի են հանել Առաջավոր Ասիայի շուկաներում:

Այսպիսով, մ. թ. ա. XI—IX դդ. անասնապահության զարգացումը էթիունիում բացարձակ շափերի է հասնում, որը խթանում է հավելյալ արժեքների մեծացմանը, հարստությունների կուտակմանը, առևտրական կապերի ընդլայնմանը և դասակարգային շերտավորման էլ ավելի խորացմանը:

<sup>421</sup> Նույն տեղում:

<sup>422</sup> Նույն տեղում:

## Ք Լ Ո Ւ Խ Վ

### ԷԼԱՌԸ ԵՏՈՒՐԱՐՏԱԿԱՆ, ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐՑԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ամրոցի պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերն ապացուցում են, որ ուրարտական պետության անկումից հետո բլուրի վրա կյանքը շարունակվել է:

1973 թ. պեղումների ժամանակ, երկու փոսորակների վերին շերտի խառը լիցքում հայտնաբերվեցին ետուրարտական, հելլենիստական դարաշրջանների և միջնադարյան խեցեղենի բեկորներ: Բացի այդ ամրոցի հանույթում պարզորոշ կերպով երևում է, որ միջնաբերդի բակի տարածքում տեղավորված շինությունները՝ հիմնականում վերաբերում են վերոհիշյալ ժամանակաշրջաններին և չեն կապվում ավելի վաղ՝ նախաուրարտական և ուրարտական դարաշրջանի բազմասենյականոց համալիրի հետ:

Ետուրարտական և հելլենիստական ժամանակաշրջանից խեցեղենի մի փոքր ժողովածու ունենք, որը բնորոշվում է փիլանների, թասերի, օյնոխոյների, զունազարդ տափաշների և այլ կավամանների բեկորներով:

Հայտնաբերված փիլանի բեկորի (ՀՊՊԹ, № 2625/18) վերին հատվածն արտահայտված է ուղիղ պատերով, իսկ անցումը դեպի ստորին, կիսագնդաձև մասը շեշտված է ռելիեֆ եզրով (աղ. XXXI, 5): Դրսից և ներսից այն պատած է վարդագույն անգորով, իսկ ստորին հատվածը մուգ դեղնավուն է և ավելի փայլուն: Շուրթն արտաքինից մի փոքր անկյունավոր է և հիմքի մոտ թույլ շեշտված: Ձևով նման փիլաններ հայտնաբերվել են Ջրառատի մ. թ. ա. V դարով թվագրվող սալարկղում<sup>1</sup>, Թեյշեբանի քաղաքի՝ ետուրար-

տական ժամանակի № 3 դամբարանում<sup>2</sup>, Կիրովականի Քոսի-Ճոթեր բնակատեղիում<sup>3</sup>, Արզիշտիխինիլիում<sup>4</sup>: Փիլաններ հայտնաբերվել են նաև Արմավիրի մ. թ. ա. III—I դդ. թվագրվող նյութերի միջավայրում<sup>5</sup>, Գառնիում<sup>6</sup>: Այսպիսով, նման փիլանները ծագումով կապվելով ուրարտական ժամանակաշրջանի հետ, իրենց հետագա զարգացումն են ստանում ետուրարտական, աքեմենյան դարաշրջանում և հարատևում մինչև մ. թ. ա. II—I դդ.:

Ուշագրավ են էլաոի ամրոցում հայտնաբերված թասերի բեկորները: Բոլորը դրսից և ներսից պատած են կարմիր անգորով, շուրթի տակ, զրուսից, ներձկված են և անցումը դեպի իրանի ստորին մասը շեշտված է սուր եզրով: Թասերից մեկի շուրթը մի փոքր շեշտվում է և կլորանում (աղ. XXXI, 1, ՀՊՊԹ, № 2625/26), իսկ մյուսինը՝ վերսից տափակ է, լայնադիր, ներսից և դրսից սուր եզրով շեշտված (նկ. 143, ՀՊՊԹ, № 2625/22):

Հայտնաբերվել են երկու այլ թասերի բեկորներ՝ պրոֆիլացված շուրթերով: Մեկի շուրթից ցած ներձկումը թույլ է արտահայտված և

<sup>2</sup> А. А. Мартиросян, Горэд Тейшебани, стр. 144, рис. 68.

<sup>3</sup> Է. Վ. Խանգաղյան, Հետախուզական պեղումներ Կիրովականի մերձակայքում, էջ 19, աղ. 2:

<sup>4</sup> А. А. Мартиросян, Археистихинили, АПА. № 8, Ереван, 1974, стр. 43, рис. 25.


<sup>5</sup> Б. А. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ИФЖ, 1969, № 4, стр. 169.

<sup>6</sup> Ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանում գտնված զունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ, ՊԲՀ, № 1, 1966, էջ 256, աղ. II, 2:

<sup>1</sup> А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, ԳԱ «Տեղեկագիր», № 8, 1961, էջ 77, աղ. 4:



արտաքինից ծածկված է ալ կարմիր անգորով, իսկ ներսից բաց շագանակագույն է ներկված (ՀՊՊԹ, № 2625/22), մյուս բեկորի շուրթը դուրս է ճկվում, այն ավելի ուժեղ է պրոֆիլացված և



Նկ. 143. Պրոֆիլացված շրթով թասի բեկոր Գարանի ամրոցից:

ունի բաց շագանակագույն, առանց անգորի մակերես (ՀՊՊԹ, № 2625/22): Մեկ այլ բաց մոխրագույն թասի բեկոր հիշեցնում է ուրարտական թասերը, կիսագնդաձև է, շուրթը սահուն անցումով և արտաքինից հիմքում մի փոքր շեշտված, ներսից և դրսից ունի ուղղահայաց, թույլ սեղմելու եղանակով կատարված՝ նեղ ժապավեն (աղ. XXXI, 4, ՀՊՊԹ, № 2625/5): Անվիճելիորեն վերոհիշյալ թասերի բեկորները նույնպես ետուրարտական են և ծագումով դարձյալ կապվում են Եւրարտական նմանատիպ թասերի հետ:

Ուրարտական սկիզբ ունեն նաև օջնոխոյները, որոնք լայն տարածում են գտնում հատկապես արեմենյան և հելլենիստական մշակութայիններում: Օջնոխոյների եռաթերթ պսակով ծորակների մի քանի բեկորներ են հայտնաբերվել էլաոսի ամրոցում (ՀՊՊԹ, № 2625/13, 16): Նրանք կարմիր անգոր ունեն և իրենց ձևով հիշեցնում են Արմավիրի մ. թ. ա. III—I դդ. և Գեղաղիի վաղ հելլենիստական շրջանի օջնոխոյների ծորակները<sup>9</sup>:

Էլաոսի ամրոցում հայտնաբերվել են նաև տափաշշերի բեկորներ, որոնք թվով յոթն են (աղ. XXXI, 2, 3, 6, 7, ՀՊՊԹ, № 2625/8, 22, 26): Չորսի հիմնագույնը կարմիր է: Երեքի վարդաժապավենները մուգ կարմիր են, իսկ մեկինը՝ սպիտակ: Կան տափաշշերի կենտրոնական մասեր՝ խաշվող ժապավեններով (աղ. XXXI, 2, 3): Կան բեկորներ, որ բաց դեղնավուն հիմնագույնի վրա ունեն կարմիր ժապավեններ, սպիտակամոխրա-

<sup>9</sup> Բ. Ի. Аракелян, Նշվ. աշխ., էջ 169, աղ. III-ի վերևում, աջից: Գ. Ա. Тирациян, Древнеармянская керамика из раскопок Армавира, ИФЖ, № 1, 1971, Ереван, стр. 222, табл. 1; 13, III; 10.

<sup>8</sup> Ժ. Գ. Խաչատրյան, էջվ. աշխ., էջ 255, աղ. I; 3:

վուն հիմնագույնի վրա՝ սրճագույն լայն ժապավեններ (աղ. XXXI, 7): Մեծ մասի դարդանկարը համակենտրոն շրջաններ են: Նման տափաշշեր հայտնաբերվել են Արմավիրում<sup>9</sup>, Գվինի՝ նույնպես արեմենյան և հելլենիստական դարաշրջանների շերտերում<sup>10</sup>:

Ամրոցում է հայտնաբերվել տաշտանման կավանոթի մասը, որը բաց շագանակագույն է, ունի հելլենիստական դարաշրջանին բնորոշ՝ վերևից տափակ և արտաքինից սուր եզրերով շեշտված պսակ (նկ. 144, ՀՊՊԹ, № 2625/26):

Հելլենիստական ժամանակաշրջանով են թվագրվում նաև էլաոսում պատահականորեն հայտնաբերված գունազարդ խեցեղենի երեք այլ բեկոր: Երեքն էլ բաց դեղնավուն հիմնագույնի վրա կրում են բաց կարմիր դարդանախշեր: Երկուսը կարմիր ժապավեններ են կրում (ՀՊՊԹ, № 1805/35, 38), իսկ երրորդը մեծ կավամանի ուռուցիկ



Նկ. 144. Տաշտանման կավանոթի մաս Գարանի ամրոցից:

մաս է (աղ. XXXI, 8, ՀՊՊԹ, № 1805/34): Նրա կանթի հիմքից ցած՝ դեղին հիմնագույնի վրա դազաթներով ցած ալ կարմիր, մեծ եռանկյունիներ են պատկերված, որոնք ստորին մասում եզերվում են հորիզոնական ժապավենով: Կավամանի այս բեկորը նման է Գառնիում հայտնաբերված հելլենիստական շրջանի ուռուցիկ իրանով բաց դեղնավուն անգորով երկկանթանի կարասիկին, որի ուսերը վարդարված են պարույրներով, իսկ կանթերից ցած՝ բաց կարմիրով պատկերված է էլաոսի կավամանի տիպի գազաթներով ցած եռանկյունիների շարք, որոնց ծայրերը նույնպես հանգում են հորիզոնական կարմիր ժապավենի վրա<sup>11</sup>:

Այսպիսով, էլաոսի ամրոցում ետուրարտական և հելլենիստական ժամանակաշրջաններն առայժմ ներկայացվում են միայն խեցեղենին բնո-

<sup>9</sup> Բ. Ի. Аракелян, Նշվ. աշխ., աղ. II, աջից:

<sup>10</sup> Գ. Ա. Тирациян, О расписной керамике древней Армении, ИФЖ, 1965, № 3, стр. 267, табл. II.

<sup>11</sup> Գ. Ա. Тирациян, Նշվ. աշխ., աղ. II; 2, էջ 269, 278:

րոշ օրինակներով, սակայն նրանց տարատեսակների բաղադրումը մյուս համաժամանակյա ավելի քան նշանավոր հուշարձանների խեցեղենի հետ հաստատում է, որ էլաոս իր վարդացմամբ վերահիշյալ դարաշրջաններում ետ չի մնացել մյուսներից:

Մեր թվագրության I—IV դդ. էլաոսում կյանքի հարատևության ուշագրավ ապացույցներից են նաև դամբարանային նյութերը:

Մ. թ. II—III դարերով է թվագրվում 1963 թ. ավազահանքի դամբարանադաշտի սալարկղնիքից մեկում հայտնաբերված մուգ մանուշակագույն մեկկանթանի ապակե սրվակը, որն ունի ներձկված կողեր և հատակ, իսկ վզին վերադիր օձազարդ (նկ. 145, ՀՊՊԹ, № 2261/22)<sup>12</sup>:

Ոչ պակաս հետաքրքրական են դամբարանադաշտի II տեղամասում, հանքի հարավ-արևմուտյան եզրում 1961 թ. պեղված սալարկղի նյութերը: Դամբարանի մեծ մասը հանքը շահագործելիս ավերվել է: Տեղում մնացել էին զլխամասի կարճ սալը և արևմտյան եզրի սալերից մեկը: Սալարկղում թաղված էր մի աղջնակ, որի գանգը սաստիկ վնասված էր: Պահպանվել էին վզի սղերը, ողնաշարի մի մասը և թևի ոսկորները: Աղջնակի գանգի մոտ հայտնաբերվեց ականջի օղ, վզի ողերի մոտ՝ ուլունքներ, մատներին ուներ մատանիներ, իսկ ձեռքին՝ բրոնզե ապարանջան: Կրճի մասում հայտնաբերվեց ջարդված ապակե փոքրիկ սրվակ, բրոնզե գանգակ և զարդարուն մի կնիք-ուլունք: Մեքի ողերի մոտ դրված էին երեք կավաման և կոնաձև սև քար:

Սալարկղում հայտնաբերված վարդագույն կավից պատրաստված, հավանաբար, անուշահոտ յուղի կամ քսուքի համար օգտագործվող մինիատյուր կավամանը (աղ. XXXII, 2, ՀՊՊԹ, № 2246/112), դուրս ճկված շուրթերով, ուռուցիկ իրանով, ոչ մեծ տափակ հատակով հասարակ թաղաուր (աղ. XXXII, 1, № 2246/113) և դեպի ցած լայնացող իրանով, տանձաձև մեկ կանթանի, տափակ լայնադիր հատակով վարդագույն հասարակ կրճուճիկը (ՀՊՊԹ, № 2246/110) նման են Գառնիի մի փոքր ավելի վաղ մ. թ. ա. I—II դդ. թվագրվող դամբարանային խեցեղենին<sup>13</sup>:

<sup>12</sup> Թ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Գ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակին: ՀՀ, № 3, պրակ I, Երևան, 1969, էջ 48, նկ. 84:

<sup>13</sup> Բ. Ի. Аракелян, Гарни, I, стр. 43, рис. 29. Նույնի, Гарни, II, Ереван, 1957, стр. 50, рис. 16а, там же, табл. XI, справа II.

Նույն դուրահեռներն ունեն նաև բրոնզե կլոր ձողից պատրաստված, մի փոքր սեղմված և իրար վրա եկած ծայրերով ապարանջանն (աղ. XXXII, 5, ՀՊՊԹ, № 2246/101) ու գազաթին անցքով



Նկ. 145. Ապակե սրվակ (մուգ-մանիշակագույն) էլաոսի դամբարանադաշտից:

կոնաձև գանգակը (աղ. XXXII, 6, ՀՊՊԹ, № 2246/103): Հավանաբար, կնիքի համար է պատրաստվել, սակայն անավարտ մնացել, հղկած, փայլուն մակերեսով կոնաձև սև քարը (աղ. XXXII, 4, ՀՊՊԹ, № 2246/103): Հայտնաբերված մատանիներից մեկը բրոնզից է (աղ. XXXII, 9, ՀՊՊԹ, № 2246/107), նմանները հայտնաբերվել են դարձյալ Գառնիի սալարկղներում<sup>14</sup>: Մյուս մատանին անթափանցիկ փղոսկրագույն ապակուց է, ներսից տափակ, դրսից՝ կլորացող (աղ. XXXII, 8, ՀՊՊԹ, № 2246/108): Ապակենման մասսայից են պատրաստված անփայլ սև մակերեսով քսաներեք ուլունքները (աղ. XXXII, 10, ՀՊՊԹ, № 2246/104): Սակայն ավելի քան ուշագրավ է երեք դինդերից կազմված անշարժ ցողունով ականջի օղը, որն արվեստի նմուշների շարքը կարելի է դասել (նկ. 146, ՀՊՊ, № 2246/106): Ստորին երկու դինդերը պատրաստված են սև մասսայից: Նրանց կենտ-

<sup>14</sup> Նույնի, Гарни, I, էջ 56, նկ. 51, ձախից:

րոնը զարդարում է սպիտակավուն, բաց գույնի հորիզոնական ժապավեններ: Գինգերն ունեն խողովակաձև վզիկ: Վերին, երրորդ գինգը պատրաստված է դեղնակաթնագույն ոչ թափանցիկ ապա-



Նկ. 146. Ականջի օղ էլաոի սալարկղից:

կուց: Գազաթին ունի բրոնզե օղ, որին միանում է երկձալ, բրոնզե ոլորված նուրբ թելը: Նրա մեկ ծայրը օղակ է կաղմում, իսկ մյուսը՝ ասեղի նման սրածայր է, ականջին հագցնելու և ազուցելու համար:

Գնդաձև իրանով, երկար վզիկով և փոված շուրթերով ապակե փոքրիկ սրվակը (աղ. XXXII; 7, ՀՊՊԹ, № 2246/109) հիշեցնում է Գառնիի և Վերին Գետաշենի մ. թ. I դ. թվագրվող սալարկղերում հայտնաբերվածներին<sup>15</sup>:

Սակայն սալարկղը հիմնականում թվագրվում է սասանյան տիպի ուլունք-կնիքով: Այն պատրաստված է սպիտակավուն ոչ թափանցիկ ապակե դանգվածից (նկ. 147, ՀՊՊԹ, № 2246/106), արտաքինից ամբողջությամբ զարդարուն է: Կենտրոնում, ակի մասում, ողորկ, հարթ մակերեսին ունի խաչի խորաքանդակ զարդադաստակեր, որի երկու կողմից սկիզբ են առնում երկրաչափական ֆիգուրներ: Բրոնզից, բյուրեղապակուց, սարդիոնից «սասանյան» տիպի նման ուլունք-կնիքներ, սակայն այլ զարդանկարով, հայտնաբերվել են Վաղարշապատում, Հոփսիմեի շրջակայքի դամբարաններում<sup>16</sup>: Քարից պատրաստված «սասանյան» տիպի ուլունք-կնիքներ հայտնաբերվել են նաև Մինգեչաուրիի II—III դդ. թվագրվող կատա-


<sup>15</sup> Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 38, նկ. 39—41:

<sup>16</sup> Աշխատիքի Գալանքար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, էջ 58—59, նկ. 14, 3, 4:

կոմբաներում<sup>17</sup>: Այսպիսով, վերոհիշյալ գուգահեռները հնարավորություն են տալիս էլաոի սալարկղը թվագրելու III դարով:

Վերոհիշյալ սալարկղի մեկկանթանի տանձաձև կճուճիկին մոտ է էլաոում պատահականորեն հայտնաբերված դեղնավուն կավից պատրաստված դեպի ցած լայնացող, տափակ, մի փոքր ներձկված հատակով կանելուրազարդ կրճուճը, որը նույնպես ունի շուրթից սկզբով և ուսերին ավարտվող աղեղնաձև կանթ (աղ. XXXIII; 4, ՀՊՊԹ, 127/458): Այն իր վերոհիշյալ հատկանիշներով բնորոշ է վաղ միջնադարին և կարող է թվագրվել IV—V դարերով:

Էլաոի ամրոցում և նրա շրջակայքում հայտնաբերված նյութերը լիովին համոզում են, որ այն միջին դարերում ևս ետ չի մնացել զարգացման բնահանուր բնթացքից և այստեղ ևս առկա են քրիստոնեական ժամանակաշրջանի մշակույթի ու արվեստի գործեր:



Նկ. 147. Ուլունք-կնիք ապակեման գանգածից (էլաոի սալարկղից):

IV—VII դդ. Հայաստանի ինքնուրույնության և անկախության համար մղվող պայքարի ժամանակաշրջանում տեղական մշակույթը զարգացման մի նոր վերելք է ապրում, որը բնորոշվում է ճարտարապետական նշանավոր կոթողների կառուցմամբ, աշխարհիկ ու կրոնական բնույթի բանդակներով:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում լայն տարածում են գտնում պատվանդանի վրա կանգնեցվող սյունանման կոթողները, նրանց վրա քանդակված կրոնական և այլ պատկերներ ու տեսարաններ: Կոթողների և նրանց պատվանդանների վրա հաճախ հանդիպում են նաև Գանիելն առյուծների գրում և Տրդատի առասպելը պատկերող տեսարաններ:

<sup>17</sup> К. В. Тревер, Очерки по ис орни и культуре кавказской Албании, 1959, М.—Л., стр. 183, рис. 30, 31.

Նման սյուժեներով վաղ միջնադարյան կոթողներ հայտնաբերվել են նաև էլաոում:

Առյուծների սկիզբի պատկերներով երկու բազաներ կամ պատվանդաններ, ինչպես վերը տեսանք, գտնվել են Ն. Բայբուրդյանի և Ն. Լալայանի պեղումների ժամանակ ամրոցի հարավարևելյան լանջում, «Կարոյի կալում», վաղ միջնադարյան բառակուսի շինության մեջ, միմյանցից 4,5 մ հեռավորության վրա<sup>18</sup>: Ըստ Ն. Լալայանի. մոտ 1,2 մ երկարություն և 0,6 մ լայնություն ունեցող կարծր բարից պատրաստված այդ բառանկյունի բազաների մեկ կողմում քանդակված է եղել առյուծ, մյուսում՝ վիշապ<sup>19</sup>: 1931 թ. այդ կոթողները հանձնվել են Հայաստանի պատմության պետական թանգարան (ՀՊՊԹ, № 356):

Առյուծազարդ երրորդ պատվանդանը գրված է եղել էլաոի կոլոնադայի ապամբի հիմքի հարավարևելյան անկյունի շարվածքի մեջ: 1940 թ. Բ. Ն. Առաքելյանը տեսել է պատվանդանի միայն մեկ երեսը առյուծի պատկերով և կոհել, որ նրա վրա պատկերված է Գանիելը՝ երկու առյուծների արանքում<sup>20</sup>:

1941 թ. այս պատվանդանն ակումբի պատից հանվել և տեղափոխվել է Հայաստանի պատմության պետական թանգարան:

Պատվանդանը խորանարդաձև է, պատրաստված դեղնավարդագույն կարծր տուֆից, ունի 0,9 մ լայնություն և 0,78 մ հաստություն: Աջ կողմում բարձրությունը 0,8 մ է, իսկ ձախ կողմում՝ 0,77 մ: Պատվանդանի վերին հրապարակը ողորկ է և մյուսների նման փորվածք չունի՝ կոթողը հագցնելու համար: Գուցե այն ծառայել է որպես սյան բազա, կամ նրա վերին հարթության վրա, ինչ-ինչ պատճառներով, շեն հասցրել կոթողի համար հիմք փորել:

Պատվանդանի ճակատային մասի կենտրոնում դիմացից բանդակված է Գանիելը՝ երկար զրուստով (նկ. 148, ա, բ): Նրա զրուստը և իրանի վերին մասը եղծված են: Գոտակատեղն արտահայտված է ցայտուն ներձկումով, որից ցած կոնքերը լայնանում են, իսկ զրուստի փեշերը կենտրոնում դեպի վեր գոգավոր աղեղ են կաղմում: Ոտքերի կրունկները միացած են, իսկ թաթերը աջ և ձախ դարձած: Գանիելին երկու կողմից մոտեցել են առյուծները: Նրանց միայն զրուստներն են պատ-

<sup>18</sup> E. A. Байбуртян, По поводу..., стр. 209—210.

<sup>19</sup> Ն. Լալայան, նշվ. աշխ., էջ 46:

<sup>20</sup> Բ. Ն. Առաքելյան, Հայկական պատկերաբանականները IV—VII դարերում, Երևան, 1949, էջ 33, 61, 86:

վանդանի ճակատային մասում, իսկ մարմինները տարածվում են պատվանդանի ուղ և ձախ կողմերում: Առյուծները բանդակված են պրոֆիլ: Նրանք երախները բաց, լեզուները հանած կարծես լիզում



Նկ. 148 ա, բ. Խորանարդաձև պատվանդան: Գանիելն առյուծների գրում վաղ քրիստոնեական սյուժեով (էլաոից):

են Գանիելի կոնքերը: Ռելիեֆ են բանդակված նաև առյուծների մեկ աչքն ու ականջը: Բաշերն արտահայտված են սկիզբի և խորաքանդակ, երկարավուն փորվածքներով:

Առյուծները հենվելով առջևի ոտքերից մեկի վրա, մյուս ոտքը բարձրացրած առաջ են բերել և ասես հպել Գանիելի փեշերին: Հստակորեն



շեշտված են թաթերի շորս մատները: Ետևի երկու տարերի միջև պատկերված է օվալաձև մազափրնջով ավարտվող պոչը: Առյուծները վարպետորեն են կերտված և բավականաչափ արտահայտիչ տեսք ունեն: Նրանց կեցվածքից զգացվում է ներքին ուժ և դինամիկա: Չնայած հզորությունը, նրանց զեմքերը մեղմություն ու բարոյություն են արտահայտում:

Պատվանդանի շորրորդ երեսին, այսինքն Գանիկի հակառակ կողմում քանդակված է թևատարած մի մոնումենտալ արձիվ, որը բավականաչափ եղծված է: Լավ է պահպանվել նրա ստորին մասը, սելիեֆ արտահայտված ոտքերով:

Այսպիսով, էլաոի պատվանդանը վաղ բրիտանեական շրջանի IV—VII դդ. սյուժետային և սիմվոլիկ քանդակներից է: Գանիկն առյուծների գրում սյուժետով քանդակները Հայաստանում բավական տարածված են եղել, որոնց մասին մանրամասն խոսվում է Բ. Առաքելյանի աշխատությունում<sup>21</sup>:

Ուշագրավ է նաև էլաոի քառակող կոթողը, որն այժմ կանգնեցված է սուրբ Ստեփանոս եկեղեցու պարսպի վրա (գունավոր նկար III): Կոթողը պատրաստված է հրաբխային մուգ, բծավոր քարից: Նրա վերին հատվածը կտրված է և այն պահպանվել է 0,81 մ բարձրությամբ: Քանդակազարդ են նրա երեք երեսները: Հանգիպակաց կողմերից երկուսն ունեն 0,44 մ, իսկ մյուսը՝ 0,4 մ լայնություն:

Կոթողն իր վրա կրում է առասպելական բրնձիկի ուշագրավ սյուժեներ, որոնց էությունը ժողովրդին բրիտանոյա օձելու արարողությունն է և հեթանոսական կրոնի հալածանքը:

Կոթողի համեմատաբար լայն երեսները, որոնք վատ են պահպանված, երկու կողմերից կղերված են շեղ ափսոսվոր սյուժեներով:

Լայն երեսներից մեկի վերին հատվածում պատկերված է գահույթի վրա նստած Տիրամայրը, մանուկ Հիսուսը գրկին, որոնց վերին մասերը կտրված են (աղ. XXXIV; 1): Տիրամայրն ունի երկար շրջազգեստ, ոտքերին՝ սրածայր մուճակներ: Նրանից ցած քանդակված են զլուխները խոնարհած մարդկային ֆիգուրներ: Չախ կողմինը կնոջ զեմք է հիշեցնում, իսկ աջ կողմինի գլուխը մի փոքր ավելի մեծ է, սակայն բավականաչափ եղծված: Այդ ծունկի եկած, խոնարհված մարդիկ, անշուշտ, երկրպագում են Տիրամորն ու Քրիստո-

սին: Հայաստանում մեծ տարածում ունեն Տիրամոր և Հիսուսի պատկերաքանդակներով կոթողները: Նրանցից հայտնաբերվել են Հառիճում, Թալինում<sup>22</sup>, Տիրամայրը՝ Հիսուսը գրկին պատկերված է Օձունի կոթողի օբելիսկի վրա, իսկ եկեղեցու ներսի խորշում գրված է նրանց քանդակը<sup>23</sup>: Էլաոի նման, Օձունի կոթողի եզրերը նույնպես պահված են նեղ ափսոսվոր սյուժեներով:

Էլաոի կոթողի հակադիր, II լայն երեսը նույնպես անչափ վատ է պահպանված (տխտ. III և աղ. XXXIV; 2): Վերին հատվածում հագիվ նշմարվում են երկու ֆիգուրներ: Աջ կողմինը թվում է, թե դարձյալ Տիրամայրն է՝ Հիսուսը գրկին: Կոթողի ստորին կեսում քանդակված են մարդկանց երեք ֆիգուր, երեքն էլ ներկայացված են անֆաս: Կենտրոնում կանգնածը մարմնով փոքր է, ունի կարճ կտրած վարսեր, աչքերը նշված են փոքր անցքերով, բերանն արտահայտված է ուղիղ գծիկով: Գոտկատեղում շեշտված է իրանը: Երկար զգեստն ավարտվում է աղեղնաձև, դեպի վեր գոգավորվող եզրերով: Հագին ունի երկարաճիտ կոշիկներ: Ոտքերը միմյանցից հեռու են, թաթերը աջ և ձախ դարձած: Չախ թևը ծալված է և թևի տակ ունի հավանաբար օձման արարողության հետ առնչվող ինչ-որ իրեր: Աջ ձեռքը պարզել է և բռնել իրենից աջ կանգնածի գոտուց: Նրա ձախ կողմի ֆիգուրան համեմատաբար լավ է պահպանված: Ունի լուսապսակ, սրածայր մորուք և երկար զգեստ, որի ներքևի մասում երկու ուղղահայաց ծալքեր են քանդակված: Զգեստի առջևի մասը ձևավորված է գոգնոցի տեսքով: Չախ ձեռքը ծալված է, իսկ աջը կարծես հենել է կենտրոնում կանգնածի ուսին: Աջ կողմի ֆիգուրը ավելի բարձրահասակ է, գոտեպինդ, առանց լուսապսակի և առանց մորուքի: Այն իր զգեստով էլ տարբերվում է նախորդից և նմանվում կենտրոնում կանգնածին: Գոտին լայն է, զգեստի փեշերը աղեղնաձև դեպի վեր ճկված: Ոտքերն իրարից հեռու են, թաթերը աջ և ձախ դարձած: Հագած է երկարաճիտ կոշիկներ: Աջ ձեռքով կրծքի վրա բռնել է գավաթ, իսկ ձախ ձեռքը բարձրացրել դեպի վեր և կարծես թասով ջուր է հեղում կենտրոնում կանգնածի գլխին: Անշուշտ, այս քանդակը պատկերում է կրոնափոխության հետ կապված մի սյուժե, որը կապված է Գրիգոր Լուսավորչի և Տրդատի առասպելի հետ: Գրիգոր Լուսավորչին այստեղ քանդակված է լուսապսակով,



IV. Քառակող կոթող սուրբ Ստեփանոս եկեղեցու բակում

<sup>21</sup> Բ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ.

<sup>22</sup> Նույն տեղում, նկ. 21, 23:

<sup>23</sup> Նույն տեղում, նկ. 15, 16, 41:



մորուքով և հոգևորականին բնորոշ զգեստով, իսկ Տրդատը և կենտրոնում կանգնածը՝ աշխարհիկ զգեստով: Գրիգոր Լուսավորիչը և Տրդատը կենտրոնում կանգնածին քրիստոնեյա են օծում: Ուշագրավ է, որ կենտրոնում կանգնած մարդը ձախ թևի տակ ունի ինչ-որ իրեր, իսկ աչ ձեռքով բռնել է Տրդատի գոտուց, որով ցանկացել են շեշտել նրան կրոնափոխության մեջ նեղուկ լինելու, ապավինելու հանգամանքը:

Կոթողի երրորդ երեսի պատկերաբանդակները, հավանաբար, հնամենի առասպելական, սիմվոլիկ բնույթի հասկացություններ են արտահայտում (նկ. 149, աղ. XXXIII; 2): Այստեղ միակ գործող անձն, բայց երևույթին, քրիստոնեություն ընդունած Տրդատն է, որն ունի երեք տարբեր ֆունկցիա:

Կոթողի վերևում, անշուշտ, պատկերված է եղել բազմոցին նստած մի տղամարդ, սակայն պահպանվել է միայն նրա ծնկների վրա գոգավորվող շրջագծեստը և բազմոցի ստորին եզրը: Նրա տարազն աշխարհիկ է: Հագին ունի երկար անդրավարտիք: Աջ և ձախ դարձած ոտքերի ծայրերով նա կարծես թե ճզմում, տրորում է գալարվող վիշապ օձի հաստ մարմինը, որի գլուխըն ու պոչը վեր են պարզված: Հավանաբար, բազմոցին նստածը Տրդատն է և նրա ոտքերի տակ ընկած վիշապ օձն, անշուշտ, հեթանոսության հետ է աղերսվում և որպես շարիք տրորվում Տրդատի կողմից: Տրդատի լեզենդի հետ կապված ուղիղ օձի պատկերով մի կոթող էլ հայտնաբերվել է Տաշքի Ակրակ գյուղում<sup>24</sup>, որտեղ Տրդատի ոտքերի տակ նույնպես օձ է պատկերված, սակայն այլ պիրքով: Նրա մարմինն օղակ է կազմել, իսկ պլուխն ու պոչը դարձյալ վերևում են: Բ. Առաքելյանը այն բացատրում է որպես հեթանոսության կամ շարի մարմնացում, որը տրորվում է քրիստոնեություն ընդունած Տրդատի կողմից<sup>25</sup>:

Կոթողի ստորին մասում մեծից փոքր երեք տղամարդ են քանդակված: Միջին հասակով մեջտեղի տղամարդը պատկերված է դիմացից, կարճ մազերով գդակը գլխին, շեշտված ծնոտով: Մեջքը գոտեկապ է, շրջագծեստի եզրերը ղեպի վերև աղեղնավորված: Հագել է երկարաձիտ կոշիկներ: Աջ ձեռքը հենել է գոտուն, իսկ ձախում ունի խաչ, որը բռնել է իրենից ձախ գտնվող տղամարդու գլխին: Կոթողի աչ անկյունում քանդակված տղամարդը մարմնով փոքր է, նույնպես անֆաս է պատկերված, գուցե և չոքած է, սակայն

կոթողի աչ հատվածը կտրված է: Նա աչ ձեռքով բռնել է խաչը ձեռքին տղամարդու գոտուց և գլուխը խոնարհել ղեպի խաչը: Հավանաբար խաչը ձեռքին մարդը դարձյալ Տրդատն է և իրենից ձախ կանգնածին քրիստոնեյա է օծում:




Նկ. 149. Պատկերաբանդակներով կոթող Գարանի ամրոցից:

Հայկական հին առասպելների հետ է կապվում հատկապես կոթողի ձախ կողմում քանդակված նետաձիգը: Այն տարբերվում է կոթողի վրա պատկերված մյուս կերպարներից. հաղթանդամ է, գոտեպինդ մարմնով, մինչև ծնկներն իջնող զգեստով և երկարաձիտ կոշիկներով: Դեմքով երիտասարդ է, ունի խրոխտ կեցվածք և լայնալիճ աղեղով նետահարում է փախչող մի այծի, որը շնայած առաջ է սլանում, սակայն վիզը թեթել է, դեմքով դարձել ղեպի աղեղնավորը: Արդյո՞ք այստեղ հին ավանդություններում տեղ գտած քաջ աղեղնավոր Հայկի կերպարով Տրդատը չէ՞, որ հալածում է հեթանոսական աստվածությունը՝ այծին: Այսպիսով, մենք դար-

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 55—56, նկ. 31:  
<sup>25</sup> Նույն տեղում, էջ 56:

ձյալ գործ ունենք վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի մի սյուժեի հետ, որտեղ հեթանոսության դեմ պայքարի մոտիվները դեռևս իրենց ցայտուն արտահայտությունն են գտնում:



Նկ. 150. Միջնադարյան պղնձե զանգակ Գարանի ամրոցից:

Վերը ներկայացրած կոթողները հավաստում են, որ Հայաստանում IV—VII դդ. լայն տարածում գտած պատկերաբանողակների շարքում իրենց ուրույն տեղն ունեն նաև էլառում հայտնաբերվածները:

Միջնադարյան նյութեր էլառի ամրոցում հայտնաբերվել են 1927—1928 թթ. և 1973 թ. պեղումների ժամանակ:

1973 թ. ամրոցի հարավահայաց լանջում գտնվել են ջնարակապատ թաս-քրեղանների մասեր (ՀՊՊԹ, № 2625/7), սև և վարդագույն թաղարների բեկորներ, որոնցից մեկն ունի շուրթից սկզբով ուղ պայտազարդ կանթ (ՀՊՊԹ, № 2625/2): Ուշագրավ է կավից պատրաստված տաշտի բեկորը, լայնադիր, տափակ շուրթին՝ խորաքանդակ ալիքաձև գոտի (ՀՊՊԹ, № 2625/26), իսկ մոխրակաթնագույն անփայլ կճուճի բեկորի վզիկի հիմքը զարդարված է ուլիկի գոտիների մեջ ամփոփված կետագծերի շարանով (ՀՊՊԹ, № 2625/7): Գտնվել են խուփերի բեկորներ, կուժ-կուլաների մեծ, աղեղնաձև կանթեր (ՀՊՊԹ, № 2625/28), ինչպես նաև շեշտված շուրթերով հասարակ, կարմրավուն թասերի բեկորներ (ՀՊՊԹ, № 2625/1): Պղնձե զանգը (նկ. 150, ՀՊՊԹ, № 2625/23) թերի է, սակայն ձևով հար և նման Գառնիի միջնադարյան շերտում հայտնաբերվածին<sup>26</sup>: Ամրոցի վերոհիշյալ խեցեղենի զուգահեռներին կարելի է հանդիպել միջնադարյան Հայաստանի յուրաքանչյուր բնակատեղիում:

Վերը տեսանք, որ միջնադարյան շերտը պեղվել է ամրոցի հարավ-արևելյան փեշերին՝ Ն. Հալալյանի և Ն. Բայրուրդյանի կողմից, որտեղ

<sup>26</sup> Բ. Ն. Առախլյան, Գ. Լ. Կարախանյան, Գառնի, III, Երևան, 1962, էջ 58, նկ. 14, աչից վերևում II-ը:

գտնվել են մեծ մասամբ հասարակ կավամաններ, ջնարակած քրեղանների մասեր, ձիթաճրագներ, կարասների բեկորներ, խփերի մասեր:

Բնորոշ են լայնաբերան հասարակ, անփայլ զորչազույն, շեշտված շուրթերով մեծ թաղարների մասերը, որոնք վզի հիմքում ունեն խորալանդակ գոտի, իսկ իրանի ուռուցիկ մասում՝ կուստ-կանթեր (աղ. XXXIII, 5, ՀՊՊԹ, № 127/64—66, 439): Հատկանշական են հասարակ կավամանների մասերը՝ շուրթից սկզբով ուղ պայտազարդ կանթով (ՀՊՊԹ, № 127/454), որպիսիներն, ինչպես տեսանք, հայտնաբերվել են ամրոցի հարավահայաց լանջում և որոնք իրենց զուգահեռներն ունեն Դվինի, Ջրահովտի, Մեծամորի միջնադարյան շերտերում<sup>27</sup>:

Գեղեցիկ է ձևավորված 1928 թ. հայտնաբերված նրբախեցի, կարճ վզիկով և շեշտված ուռու-



Նկ. 151. Մեկկանթանի սափորիկ Գարանի ամրոցից:

ցիկ ուսերով մեկկանթանի սափորը, որն ունի օղակաձև նստուկ (նկ. 151, ՀՊՊԹ, № 161/68): Նման սափորներ, սակայն, ներձկված փոսիկների զարդագոտիներով, հայտնաբերվել են Դվինի X—XII դդ. թվագրվող նյութերի միջավայրում<sup>28</sup>:

Տիպիկ միջնադարյան են նաև հայտնաբերված վարդագույն, հասարակ ձիթաճրագները (աղ. XXXIII, 3, ՀՊՊԹ, № 161/36, 67), լայնադիր, ալիքազարդ շուրթերով գավերի մասերը (ՀՊՊԹ, № 161/51), ատամնաշար, ակոսազարդ շուրթերով կարասների բեկորները (աղ. XXXIII, 1,

<sup>27</sup> Է. Խանգալյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 63, նկ. 88:

<sup>28</sup> Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 192, նկ. 165:

ՀՊՊԹ, № 161/49, 50), որոնք հայտնի են Հայկական լեռնաշխարհում և նրանից դուրս<sup>29</sup>:

Էլառի միջնադարյան շերտին բնորոշ են նաև կավե խփերի ֆալլատիպ և վերնում փոսիկավոր բռնակներ (ՀՊՊԹ, № 161/93—94, 95), որոնք բազմաթիվ օրինակներով հայտնաբերվել են միջնադարյան հնավայրերում: Ուշագրավ են նաև կանաչ ջնարակի վրա երկրաչափական սև դարդազծիչով (ՀՊՊԹ, № 161/57), կամ դեղնականաչավուն ցայտերով (ՀՊՊԹ, № 127/66) քրեղանների բեկորները, իլիկի գլուխները (նկ. 152), որոնք իրենց զուգահեռներն ունեն Գառնիում<sup>30</sup>, Մեծամորում<sup>31</sup>, Դվինում և թվագրվում են XII—XIII դարերով<sup>32</sup>:

Սակայն, բացի վերոհիշյալ նյութերից, միջնադարյան էլառի մասին մեզ են հասել նաև դրավոր վկայություններ:

Էլառը հիշատակվում է Ստեփաննոս Օրբելյանի մոտ:

Վրաց թագավոր Գեորգի III Լաշայի (1213—1221) հրամանով Իվանեն (նա ամիրսուպասալարի և աթաբակի պաշտոնն էր վարում դեռևս 1212 թվականից, Քամար թագուհու օրոք) էլիկում Օրբելյանի որդի Լիպարիտին իր հայրենական կավածքների փոխարեն մշտական գրով տալիս է Հրաշկաբերդ իր գավառով և այլ բազմաթիվ գյուղեր Վայոց ձորում, Կոտայքում՝ էլառը և այլ շատ գյուղեր:

Այդ մասին Ստ. Օրբելյանը գրում է.

«Յետ որոյ հրամանաւ թագաւորին տույ փոխան հայրենացն Լիպարիտի անանցական գրով զՀրաշկաբերդ իւր գաւառովն և այլ բազում գեղօրէս ի Վայոց ձոր, ի Կոտայքսն զէլառն և այլ գիւղս յուրովս»<sup>33</sup>:

Այս Լիպարիտն է, որ 1221 թ. կառուցել է Ամաղուի նորավանքի զխավոր եկեղեցին՝ սբ. Կարապետը և այդ մասին թողել տասներկու տողից բաղկացած մի արձանագրություն<sup>34</sup>: Անշուշտ,

<sup>29</sup> А. Л. Якобсон, Раскопки на городище Оранкала в 1953—1955 гг., МИА, № 67, М.—Л., 1959, стр. 93, рис. 55, стр. 126, рис. 90.

<sup>30</sup> Բ. Ն. Առախլյան, Գր. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 88, տախտ. III:

<sup>31</sup> Է. Խանգալյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 56, տախտ. III:

<sup>32</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 183, նկ. 156, ներքևում, ձախից երկուսը:


<sup>33</sup> Օրբելյան, աղևկ. Սիւնեաց, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 397:

<sup>34</sup> «Դիվան հայ վիճագրության», պրակ III, կազմից՝ Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1967, էջ 211, արձ. 677:

Ստ. Օրբելյանի մոտ էլառի մասին հիշատակությունը վերաբերում է XIII դարի սկզբներին՝ 1213—1221 թթ. միջև բնկած ժամանակահատվածին:

Այսպիսով, XIII դարի սկզբին էլառը գտնում է Լիպարիտ Օրբելյանի կալվածքներից մեկը:

Սբ. Ստեփաննոս եկեղեցու պատի ու պարսույի շարվածքում և բակում պահպանված XIII դարի խաչքարերը, ինչպես նաև ավելի ուշ շրջանի (XIV—XVI) տապանաքարերը վկայում են, որ էլառում կյանքը հարատևել է նաև հաջորդ դարում:



Նկ. 152. Իլիկի գլուխներ Գարանի ամրոցի միջնադարյան շերտից:

Վերջապես, էլառի մասին վերջին գրավոր վկայությունները վերաբերում են XIX դարին: Հովհան Եպիսկոպոս Շահաթունյանցի մոտ կարգում ենք.

«էլառ, տունը 26, եկեղեցին անուամբ սրբույն Ստեփաննոսի. աստ է ճանապարհ՝ արբունի անցորդաց»<sup>35</sup>:

Էլառը հիշատակվում է նաև Ղևոնդ Ալիշանի մոտ.

«...մերձ յարբունի պողոտայն և ի պահակատունն, էլառ կամ էլիար գեօղ 25 կամ 30 տամբբ Հայոց և Ս. Ստեփաննոս եկեղեցիաւ: Զայս գիւղ Աթաբակն Իւանէ՝ հանդերձ այլովը՝ շնորհեալ էր Լիպարիտ Օրպելեանց: Յերի նմին կայ հին բերդ և ոչ հետի ՚ի քարափն ձորակին՝ արձանագիր բեւեռաքանդակ տասնտողեայ...»<sup>36</sup>:

Այսպիսով, պարզվում է, որ XIX դարի վերջին էլառը 25 կամ 30 տնից բաղկացած մի գյուղ էր և արբունի պողոտայի վրա պահակատան դեր էր կատարում:

<sup>35</sup> «Ստորագրութիւնք կաթողիկէ էջմիածնի և ՚ինկ գաւառացն Արարատայ», Աշխատասիրութլամբ Յովհաննոս Եպիսկոպոսի Շահաթունեանց: Հատ. II, էջմիածին. 1842, էջ 162:

<sup>36</sup> Ղ. Ղևոնդ Վ. Ս. Ալիշան, նշվ. աշխ., էջ 290:

Ե Չ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

Հնագիտական նյութի ուսումնասիրությունն ապացուցում է էլաոի տարածքում պատմական պլուրյեսի անընդմիջությունը մ. թ. ա. III հազարամյակից մինչև մեր օրերը:

էլաոն սկսած մ. թ. ա. III հազարամյակի ամենավաղ փուլերից, տնտեսական վերելքի ու կենսամիջոցների բարելավմանը զուգորդող ցեղերի մշտական տարաբնակեցման հետևանքով ծածկվում է շեների, ավանների խիտ ցանցով: Դրանց շարքում որպես մայր բնակատեղի հանդես է գալիս Դարանի ամրոցն իր մուտքի մոտ աշտարակավոր կիկլոպյան պարիսպով, նրանից դուրս՝ ամրոցի լայնազիր դարավանդներում քարաշեն կլոր կացարաններով և տնտեսական նշանակություն ունեցող տարատեսակ կառուցվածքներով, ստորերկրյա գետնուղիով ու ամրոցից ոչ հեռու դռնով դամբարանադաշտով:

էլաոը Արարատյան դաշտավայրը եզերող նախալեռնային հուշարձան է, որին բնորոշ չէ դաշտավայրերի արհեստական բլուրների կառուցողական շերտերի հզորությունն ու հում աղյուսի լայն կիրառությունը:

Եթե էլաոի ցածրադիր մասերում, հատկապես շագանակահողերով հզոր Կոտայքի զոգավորությունում զարգանում է երկրագործությունը, ապա սարավանդի վրա բարձրացող բուսակալած բլուրակները, Հատիսի զանգվածն ու Գուլիանասարի հրաբխային կոնն իրենց սիզավետ արոտավայրերով և նրանց ստորտններից բխող բաղաբազմ աղբյուրներով հզոր բազա էին անասնապահության զարգացման համար: Այդ իսկ պատճառով էլաոում երկրագործության կողքին մ. թ. ա. III հազարամյակի վաղ փուլերից սկսած ավելի քան մեծ զարգացում է ստանում անասնապահությունը, որը լինելով հավելյալ ար-

ժեքի հիմնական և ամենամեծ աղբյուրը, խթանել է վաղ բրոնզի մշակույթի զարգացմանը և նպաստել բնակչության աննախընթաց աճին, որը հանգեցրել է այդ հին ցեղերի տրոհմանը և տարաբնակեցմանը: Դրա լավագույն ապացույցը էլաոի այդ ոչ մեծ տարածքում, միմյանցից ընդամենը 1,0—2-0 կմ հեռավորության վրա տեղավորված, վաղ բրոնզեդարյան բնակատեղիների առկայությունն է, որոնք ունեցել են մեկ ընդհանուր դամբարանադաշտ:

Հիմնականում շարունակելով նեոլիթ-էնեոլիթյան տնտեսության, կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի ավանդույթները, էլաոի վաղ բրոնզեդարյան մշակույթի կրողներն այն հասցրել են զարգացման ավելի բարձր մակարդակի:

էլաոի այդ հնագույն ցեղերի հոգևոր և նյութական մշակույթի լավագույն վկանները՝ դամբարանները կառուցվածքային, թաղման արարողությունների որոշ տարբերություններ ունեն, որոնք կարող են բացատրվել վաղ բրոնզի դարաշրջանի զարգացման փուլերի ժամանակագրական հաջորդականությամբ: Ընդ որում, դամբարանի կառուցվածքի նոր ձևի երևան գալու հետ փոխվում են նաև ուղեկցող իրերի դասավորությունն ու քանակը:

Ջարգացման յուրաքանչյուր փուլին հատկանշական է իրերի քանակի փոփոխություն և դամբարանում նրանց տեղադրելու ուրույն ձև, որը հուշում է վաղ բրոնզի դարաշրջանում ավանդույթային սովորույթով կանոնացված թաղման արարողությունների գոյությունը:

Միևնույն դամբարանադաշտում տարբեր տիպի դամբարանների առկայությունը հնարավոր չէ տարբեր էթնիկ տարրերի գոյությամբ բացատրել, քանի որ էլաոի երեք տիպի դամբարան-

ներում թաղվածները մարդաբանական նույն խումբին են պատկանում և նրանց թաղման ձևի մեջ էլ տարբերություններ տեսնել հնարավոր չէ:

էլաոի պեղված դամբարաններում մենք չունենք գույքային անհավասարության փաստեր: Երեք տիպի դամբարաններում շարքային թաղումներ են, որոնց հետ դրվել են սահմանված քանակով և ձևով ուղեկցող իրեր:

Ամենավաղ փուլի դամբարաններում դրվել են մսե կերակուրով լի մեկ քրեղան, երբեմն նաև քարից, ոսկրից հմախլներ, կախիկներ: Ջարգացման հաջորդ փուլերում, երեք տիպի դամբարաններում էլ համահավասար ավելանում է ուղեկցող իրերի քանակը: Օջախիկ-պատվանդանով հանդերձ դամբարան են դրվում երկուսից-երեք կավաման՝ ուտեստով և բմպելիքով: Գրեթե բոլոր տիպի դամբարաններում դրվում են նաև զոհաբերված մանր եղջյուրավորի մի մասը և նրանց հետ, հավանաբար, ծիսական նշանակություն ունեցող քարից, բրոնզից դաշույն, նետասլաքներ: Այս ամենն, իհարկե, սոցիալական շերտավորման արտացոլումը չէ: Այն ավելի շատ պայմանավորված էր վաղ բրոնզի մշակույթի զարգացման հաջորդ փուլերի արտադրատեղիի և արտադրամիջոցների վերելքի պայմաններում հասարակության բարեկեցության մակարդակի ընդհանուր բարձրացման ընձեռած հնարավորություններով:

Ամենավաղ փուլերին բնորոշ են հիմնահողային կավածեփ մենավոր թաղումներով դամբարաններ, որոնց նախատիպերը, ինչպես տեսանք, սկիզբ են առնում դեռևս էնեոլիթյան մշակույթի ընդերքում:

Նրանց հաջորդում են սալարկղներն ու քարարկղները, որոնք հիմնահողայիններին զուգահեռաբար շարունակվում են մինչև մ. թ. ա. III հազարամյակի վերջը, իսկ մի շարք այլ հուշարձաններում դարավերջում նրանցում գերիշխող են դառնում կոլեկտիվ թաղումները (Շենգավիթ, Արագած, Ջարջառիս, Սպանդարյան, Ստոնաղբյուր, Հառիճ, Թագավորանիստ, Բաբա-Գերվիշ, Ամիրանիս-գորա): Ավելորդ չէ նշել, որ բրոնզի մշակույթի զարգացման հաջորդ փուլերում, ընդհուպ վաղ երկաթի դարաշրջանը ներառյալ, Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Անդրկովկասում միաժամանակ, զուգահեռաբար շարունակում են գործել դամբարանների դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում սկիզբ առած երեք տիպերը՝ սալարկղները, քարարկղները և հիմնահողային դամբարանները:

էլաոի վերոհիշյալ դամբարաններին ժամա-

նակակից միևնույն մշակութային միասնության հյուսիսային ծայրամասերի հուշարձանների՝ Կիկեթի, Թամարիսի, Թեթրի-Մղարոյի, Սամշվիլցի, Ամիրանիս-գորայի սալարկղներն ու նախապես պայտածե քարարկղները հիմնականում բնորոշվում են կոլեկտիվ թաղումներով և թվաքանակով մ. թ. ա. IV հազարամյակի վերջով և մ. թ. ա. III հազարամյակի սկզբով (բացառյալ Ամիրանիս-գորայի I շինարարական շերտին ժամանակակիցները): Դամբարանների կառուցվածքով, խեցեղենով վերոհիշյալ հուշարձանները նույնանում են էլաոի հետ, համընկնում նաև զարգացման փուլերով, սակայն նրանց թվագրությունը բավական վաղ է, որը վիճարկելի է:

Այսպիսով, էլաոի թաղման ձևի, ձևի և գույքի նույնությունը հյուսիսային ծայրամասի վերոհիշյալ հուշարձանների հետ վկայում է նրանց նույն էթնիկ տարրին պատկանելի:

Ուսումնասիրողների մեծամասնությունը վաղ բրոնզի, կամ ինչպես բնորոշված է անվանել՝ կուրարաքայան մշակույթը կրողներին համարում են խորրո-ուրարտական ցեղեր: Սակայն վերջերս Թ. Վ. Գամկրելիձեն և Վ. Վ. Իվանովը իմենականում ելնելով լեզվական ավանդույթից, ենթադրում են, որ կուրարաքայան մշակույթը կրողները հնդեվրոպացիներ են, որ հնդեվրոպացիների նախահայրերը ժամանակագրորեն և տարածականորեն կարող էր համընկնել կուրարաքայան մշակույթի հետ:

Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ այդ մշակույթի կուրարաքայան, հարավային անդրկովկասյան անվանումները հնացած տերմիններ են: Իրականում այն Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքն ընդգրկող վաղ բրոնզեդարյան մշակույթն է, որի սահմանները հյուսիս-արևմուտքում ընդգրկել է Տայքի ծայրագավառ՝ Սպերի Բլուր (Պուլուր) հնավայրը, հյուսիսում՝ Գուգարքը, Կուրից հարավ ընկած մի շարք նշանավոր հուշարձաններով (Ամիրանիս-գորա, Թեթրի-Մղարո, Թամարիս, Սամշվիլց), հյուսիս-արևելքում և արևելքում՝ ամբողջ կուրարաքայան միջագետքը, հարավ-արևելքում՝ Պարսկահայքը (Գեոյ-Սեփե, Գելենջիկ, Յանիկ-Սեփե), հարավում այն պետք է որ տարածված լիներ Կորճայքում, Մոկրում, Աղձնիքում և հարավ-արևմուտքում ընդգրկելով Ծոփաց կողմը, այն հասնում է նաև Մալաթիա, Արգուվան, իսկ արևմուտքում՝ Սվաղ (Չարա, Հաֆիկ):

Հայկական լեռնաշխարհից դեպի Սիրիա-Պաղեստին միգրացիան, հավանաբար, ծայր է առել



դեռևս մ. թ. ա. IV հազարամյակի սկզբից: Այդ է վկայում Հարավային Պաղեստինում, Բերշերա-Հասուլի խալկոլիթյան շերտերում (մ. թ. ա. 3500 թ.) հայտնաբերված ուղղահայաց փոքրիկ կանթներով խեցեղենը, որն ըստ Ջ. Մելարտի՝ տեղական չէ և բնորոշ է Արևելյան Անատոլիայի եկվոր ցեղերի (այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածներից պալեոլիթի — է. ա.) մշակույթին: Ինչպես տեսանք, էլստում և Արարատյան դաշտավայրում (Ջրահովիտ, Արևիկ, Շենգավիթ) նման կանթերը գոյատևում են նաև ամբողջ մ. թ. ա. III հազարամյակի ընթացքում:

Սակայն այդ միջրացիան հսկայական շափեր է բնորոշում վաղ բրոնզեդարյան մշակույթի ծաղկման շրջանում, երբ այն դուրս գալով իր ասիերից, հեղեղում է Սիրիան ու Պաղեստինը, Եգիպտոսը, Հյուսիս-արևելյան Կովկասն ու հասնում Միջին Եվրոպա:

Ուսումնասիրողների մեծամասնությունը վաղ բրոնզի մշակույթը թվագրում են հիմնականում մ. թ. ա. III հազարամյակով: Սակայն որոշ հնագետներ այժմ այդ մշակույթի սկիզբը հասցնում են մ. թ. ա. IV հազարամյակի նրկորոգ կեսը:

Կորջ ուսումնասիրության կարոտ են նաև վաղ բրոնզեդարյան մշակույթի ավարտի, ինչպես և միջին բրոնզի վաղ փուլերի թվագրության հարցերը: Վերջերս հայտնի են դարձել հուշարձանների մի սավար խումբ, որոնք շնայած կրում են վաղ բրոնզի մշակույթին բնորոշ հատկանիշներ, սակայն նրանցում գերազանցում է նորը: Այդ հուշարձաններից են Շենգավիթ IV-ը, Գլինը, Լճափի-բլուրը, Ջրահովիտ՝ գունազարդի հետ համատեղված խեցեղենով շերտը: Այգեանում պեղված փոսորակը, որտեղ Շենգավիթ IV-ի տիպի խեցեղենով շերտի հաստությունը 4,0 մ ավելի է, անշուշտ համոզիչ է դարձնում, որ վերոհիշյալ հուշարձաններում մենք գործ ունենք ոչ թե անցումային հատկանիշներով մի նուրբ շերտի հետ, այլ մշակութային ուշագրավ նստվածքների, որոնք կարոտ են լուրջ ուսումնասիրության:

Առավել ուշագրավ է այն հանդամանքը, որ վաղ բրոնզի մշակույթի վերջին և միջին բրոնզի սկզբնավորման փուլում տեղականի կողքին երեկվան են գալիս խեցեղենի նոր տիպեր, կատարման նոր եղանակով զարգամտիվներ, որոնք մասամբ աղերսվում են Եգիպտոսի աշխարհի և Անատոլիայի մշակույթի հետ: Վերը տեսանք, որ մ. թ. ա. III հազարամյակի վերջում Հայկական լեռնաշխարհի հուշարձաններում տարածում է գտնում անագային բրոնզը, որով այն դարձյալ կապվում է Անա-

տոլիայի, Եգիպտոսի աշխարհի հետ: Առայժմ դժվար է ասել, այն վերոհիշյալ երկրների հետ մշակութային սերտ համագործակցության արդյունք է, թե էթնիկ նոր տարրի ներթափանցում: Իրականում այն է, որ վաղից միջին բրոնզի անցման փուլում, Հայկական լեռնաշխարհի տարածքում, հյուսիսում, Կուրից հարավ բնկած հուշարձանները ներառյալ, սովորաբար են արևմտափյոց եկող ազդեցությունները, որը և իր կնիքն է դնում միջին բրոնզի պարզացման նաև հաջորդ փուլերի վրա:

Ավելորդ չէ նշել, որ միջին բրոնզի մշակույթի հաստատման շեմին մեծ նմանություն է նրկատվում էլաոի և բնդհանրապես Արարատյան դաշտավայրի գունազարդ խեցեղենի ու Պարսկահայքի խեցեղենի միջև: Գունազարդ խեցեղենի որոշ ձևեր և զարգամտիվներ արձագանքում են Սուլգուլի հովտի (Հասանլու) և Գեոյ-թևիների հետ:

Էլաոի, գերազանցապես դամբարանային նյութերով զրսկորվող միջին բրոնզի մշակույթը, թվում է, թե կամուրջի դեր է խաղացել Հայկական լեռնաշխարհի հյուսիսի և հարավի հուշարձանների միջև: Նրանում, ասես, մի կողմից սինթեզվում են դաշտավարային, մյուս կողմից՝ լեռնային բնույթի մշակութային գծերը:

Վերը տեսանք, որ զարգացման վաղ փուլերում այն իր ակունքներն առնում է վաղ բրոնզի մշակույթի բնդերից, դրանով իսկ հիմնավորելով այն մորֆոլոգիական կապը, որ գոյություն ունի բրոնզի մշակույթի այդ երկու փուլերի միջև:

Ողջ միջին բրոնզի ընթացքում նորի կողքին դարձյալ առկայծում է տեղականը՝ այժպատկերներով, պարույրներով, ցանցածածկ երկրաչափական ֆիգուրներով համակցված հարմոնիկ պատկերները, որոնք բնակատեղիների շերտագրական վերջին տվյալների համաձայն, հարատևում են մինչև մ. թ. ա. II հազարամյակի կեսը:

Այսպիսով, էլաոը լինելով միջին բրոնզի մշակութային միասնության կարևորագույն օղակներից մեկը, իր հերթին լրացնում և հարստացնում է այն նոր, ուշագրավ նյութերով:

Ուշ բրոնզի վաղ փուլերից սկսած, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մի նոր երանգ է ստանում: Բրոնզեդարյան մշակույթն իր ծաղկման գագաթնակետին է հասնում: Այն նշանավորվում է դասակարգային ներհակությունների էլ ավելի խորացմամբ, արտոնյալ դասի տնտեսական հզորացմամբ ու քաղաքական իրավունքների ամրապնդմամբ, որոնց պերճախոս վկաներն են Լճափում պեղված առաջնորդների դամբարանները:

Սակայն մ. թ. ա. XIII դարի վերջում և XIII դարում (մ. թ. ա. 1200—1190 թթ.) արտաքին աշխարհում կատարվող տեղաշարժերի, այսինքն իրակա-փոյուգիական ցեղերի հարվածների տակ կործանվող, երբեմնի հզոր խեթական թագավորության հետ մեկտեղ, պատմական թատերարեմից հեռանում է նաև Հայաստ-Ազգին:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում Գարանի ամրոցում և դամբարաններում հայտնաբերված սակավաթիվ նյութերի բազաումը Արարատյան դաշտավայրի և դեպի հյուսիս, մինչև Սամթավրո ընկած հուշարձաններում հայտնաբերվածների հետ, հաստատում է մշակութային միասնության առկայությունը:

Վաղ երկաթի դարաշրջանում (մ. թ. ա. XI—IX դդ.) Հայկական լեռնաշխարհը թեկախում է զարգացման մի նոր փուլ, որ նշանավորվում է սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնույթի արմատական փոփոխություններով, պետական նոր միավորումների ստեղծմամբ:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի կամ նաիրի լայնարձակ տարածքում առաջացած քաղաքական միավորումներից ամենախոշորներից էին Գայանի-Գիաուեիսին (Տալբում) և էթիունի-էթիուսին:

Մեծ Հայքի մի զգալի հատվածը զբաղեցնող (Այրարատ, Գուգարք, Այունիք, Արցախ, Ուտիք, Փայտակարան) էթիունյան ֆեդերացիան կամ պետությունը, ինչպես տնվանում էր Գր. Ղափանցյալը, արտաքին հարձակումներից պրծ, մտ երկու դար (մ. թ. ա. XI—IX դդ.) տեղ գաղարի բնթացքում բարգավաճում է և բարձր մակարդակի հասնում:

Վերը տեսանք, որ նրա կազմում գտնվող ազգաբնակչության մեծ խտությունը աչքի բնկնող բազմաթիվ գավառներ (ուրարտական տեքստերում՝ երկրները) իրենց մեջ ամփոփել են մի շարք ամրոց-բնակատեղիներ և ունեցել վարչաքաղաքական կենտրոն, որն ուրարտական տեքստերում արբունի քաղաք է կոչվում:

էթիունյան այդ վարչաքաղաքական կենտրոններից յուրաքանչյուրն ունեցել է իր պարսպապատ ամրոց-միջնաբերդը, կառուցված շրջակայքի նկատմամբ գերիշխող դիրք ունեցող արհեստական կամ բնական բլուրի վրա: Նրա առջև տարածվել է պարսպով շրջափակվող քաղաքը, որն իր արվարձաններով հանդերձ զբաղեցրել է շուրջ 50—80 հա մակերես, իսկ քաղաքից ոչ հեռու նրա պարիսպներից դուրս հաստատվել է ավանդույթային դամբարանադաշտը:

Կիլիկիայի պարիսպներով պաշտպանված ամրոցում հիմնականում կենտրոնացվել են վերնախավի՝ իշխանավորների, բրմական դասի բրնակի շինությունները, տաճարական համալիրը և զիսավոր արտադրական միավորները (ձուլարաններ, արհեստանոցներ, հարստացման կառույցներ):

Նախատարատական քաղաքը զբաղեցրել են միջին և ստորին խավերի բնակիչի թագամասերը (Գարանի—էլաո, Թեյշերախինի—Կարմիր բլուր): Յուրաքանչյուր արբունի քաղաք ունեցել է իր առանձին սրբատեղին: Քաղաքի բնակչությունը զբաղվել է տարատեսակ արհեստներով, անշուշտ առևտրով, նաև երկրագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբոստանային մշակույթով:

Անասնապահության զարգացումն էթիունիում բացարձակ չափերի է հասնում, որը խթանում է հավելյալ արժեքների մեծացմանը, հարստությունների կուտակմանը, առևտրական կապերի բնդայնմանը և դասակարգային շերտավորման էլ ավելի խորացմանը:

էթիունյան այդ բնդարձակավալ տարածքին հատկանշական են պաշտամունքային հուշարձանների, թագման ձևերի, մետաղե իրերի, խեցեղենի, պերճախոս առարկաների, արվեստի նմուշների նույնատիպ ձևեր:

I. Սկսած Արարատյան դաշտավայրից (Մեծամոր, Թեյշերախինի, Գլին), բնդրկելով Աղստևի հովիտը (Սարի-թևի, Բաբա-Գերվիշ) մինչև Թիլիսի (Գիղամի) և հյուսիս-արևմուտքում մինչև Ախալքալաք (Խովի) և արևելքում առայժմ մինչև Մինգեչաուր գրեթե համանման զոհասեղաններն են՝ նույնատիպ կուրքերով, կավակերտ կառուցվածքներով, պաշտամունքային սպասքով: էթիունիի ողջ տարածքին բնորոշ են ձեռքերը վեր պարզած մարդակերպ ֆիգուրներ՝ կողային ներձկուններով-աղոթող աստվածություններ, որոնք սկսած Արարատյան դաշտավայրից (Մեծամոր, Թեյշերախինի), հյուսիսում հասնում են Գիղամի, արևելքում՝ Մինգեչաուր:

II. Որպես մահարձաններ հատկանշական են ֆալլատիպ կոթողներն ու մարդակերպ կուրքերը:

III. Թագման ձևում հստակորեն արտացոլվում է էթիունցիների սոցիալական խոր շերտավորումը: Այստեղ ակնառու է թագման ձևի և հասարակության սոցիալական կառուցվածքի բացահայտ կապը:

1. Անշուշտ ավանդույթային սավորույթով,

գուցի և հատուկ իրավական կողերսով սահմանված՝ մեծագույնը ազնվականները թաղվել են դամբարանաբլուրի կենտրոնում, հենասյունների վրա կանգնեցված՝ դերանակապ ծածկ ունեցող սրահի կենտրոնում, մեջքի վրա պառկեցրած և շրջապատված՝ բունի կերպով սպանված ու նստեցրած շքախմբի անդամներով և ստրուկներով, հարուստ ուղեկցող նյութերով, հաճախակի նաև ձիերով:

2. Բունի սպանված և պղծված (նստած) թաղված ստրուկներով, ծառաներով ուղեկցվում էին նաև դուլքով ոչ հարուստ, հավանաբար հին ազնվականությունը պատկանող մարդիկ, որոնք, անկախ ունեցվածքից, իրավունք ունեին հանդերձյալ աշխարհ՝ մեկնելու՝ ստրուկների ուղեկցություններ:

3. Ազատների շարքային թաղումները բնորոշվում են կողքի պառկեցրած և կծկված կրճախներով:

4. Նստած թաղվածները մեկ դեպքում բունի սպանվածներ են և ուղեկցում են իրենց տերերին, մեկ այլ դեպքում նրանք բնական մահով մեռածներ են և թաղված մեկուսի կամ բնտանական դամբարաններում: Վերը տեսանք, որ նրանք իրենց գույքով և դամբարանի կառուցվածքով պրեթև շին տարբերվում կողքի կծկված, շաքարային թաղումներից: Նրանք ունեն նաև մեկ բնդհանուր դամբարանադաշտ:

5. Նստած կամ պղծված թաղվածներն, անշուշտ, ծառաների-ստրուկների մի առանձին դաս են ներկայացնում, կանոնադրությունով հաստատված իրավական սահմանափակումներով, որով նրանք զանազանվում էին ընդհանուր, սակայն ազատ մարդկանցից:

6. Նստած թաղվածների շարքում երեխաների առկայությունը հուշում է, հավանաբար, ծառանգական ստրկության գոյությունը:

Այսպիսով, էթիոնյան միավորմանը բնորոշ է խիստ սոցիալական շերտավորումով մի հասարակություն, որտեղ սոցիալական աստիճանը որոշվում է ծագումով և ոչ գույքային դրություններ:

IV. էթիոնյան հասարակության տնտեսությանը բնորոշ է մետաղագործության բուռն վերելքը:

1. Նախորդ փուլերին բնորոշ, բրոնզից պատրաստված զենքերի, գործիքների, դարդերի կրկրնվող ձևերի կողքին երևան են գալիս նոր տիպեր, որոնք ընդգրկում են էթիոնյան ողջ տարածքը. ընդգծում նրա սահմանները Արարատյան դաշտա-

վայրից Սամթավրո, Շիրակից Ուլուն-թևի (Աստրախան-բաղար): Գծախտաբար, էթիոնյան արևմտյան հատվածները պատմական Հայաստանի տարածքում ուսումնասիրված չեն:

էթիոնյան բնորոշ են մետաղական իրերի հետևյալ տիպերը.

ա) Գաշույններ՝ եռանկյունաձև շեղբով, միաձուլ, աղեղնաձև ծավված կղեր ունեցող դաստակով:

բ) Սևանյան տիպի լեզվակավոր դաշույններ:

գ) Կեռ ծայրով միասայր դանակներ:

դ) Սանձեր՝ շարժական երախճաններով:

ե) Լայն պատկերազարդ գոտիներ:

զ) Սանթ թրեր՝ կտրած կամ կլորացրած ծայրով:

2. Երկաթի անսահման հնարավորությունների օգտագործումը էթիոնյանների կողմից, սկսած դեռևս մ. թ. ա. XI դարից, որը տեխնիկական տեսակետից, անշուշտ, մի քայլ առաջ էր, հավաստվում են Ջրահուսում և Կարմիր բլուրում՝ նախատարատական շերտերում երկաթե սկավառակաձև թուշերկաթի (кшша) առկայությամբ: Այդ են վկայում նաև հիմնականում դամբարաններից հայտնաբերված, բրոնզե ձևերն ընդօրինակած, սեանյան տիպի երկաթե դաշույնները, երկփողերախ կամ հովհարաձև զլխիկով ու եղանաձև վերջավորություն ունեցող երախակալով սրերը, նիզակները, կեռ դանակները, մանգաղները, ապարանջանները և այլն:

3. Պերճանքի առարկաների մեծ քանակություն և բազմազանություն, որը սկիզբ է առնում դեռևս ուշ բրոնզի դարաշրջանում, սակայն մեծ ծավալ է ստանում վաղ երկաթի դարաշրջանում:

4. Բրոնզից և մաքուր պղնձից պատրաստված տարատեսակ դարդերի կողքին մեծ տեղ են զբաղեցնում կապարից և հատկապես ծարիրից պատրաստվածները, որոնց ավանդույթները նույնպես վաղ են, սակայն նրանք մասսայական գործածության առարկա են դառնում, մեծ քանակությամբ և նոր ձևերով երևան գալիս վաղ երկաթի դարաշրջանում: Բնորոշ են հատկապես կապարից մանյակներն ու ուլունքները, ապարանջանները, ծարիրից երկնքի, արևի և այլ լուսատուների հետ աղեղնավոր մոզական մեղալիոնները, տարատեսակ կախիկ-համախիները, պես-պես ուլունքները, լանջապանակին և գլխաթասակին ծառայող տարբեր մեծության ճարմանդներն ու ոսպած ուլունքները:

V. Հսկայական չափեր է ընդունում մաժուկից պատրաստված ուլունքների արտադրությունը,

որոնք էթիոնյան այդ լայնարձակ տարածքում երևան են գալիս նույնատիպ ձևերով և զարգամտորվներով, նրանց արտադրության մեջ նկատվում է միօրինակացում (стандартизация):

VI. Մեծ չափերի է հասնում խեցեղենի արտադրությունը. այդ լայնածավալ տարածքում կավամանների ձևերի և զարգամտորվների հաճախակի կրկնությունը հուշում է խեցեղագործության որոշակի կենտրոնների գոյությունը:

Բնորոշ են դառնում սեղանաձև և կենդանակերպ կանթերով գնդաձև մեծ, զարդարուն կավամանները, երկարավիզ և անշուրթ խեցանոթները, թասեր-ափսեները, որոնց զարդանախշման հիմքում ընկած են ստղաբերության հետ կապված մոտիվներ:

VII. էթիոնյան մ. թ. ա. XI—IX դդ. դառնում է նաև ջնարկած խեցու թրծման կենտրոններից մեկը, որի տեղական արտադրության ցայտուն ապացույցներից են, ինչպես Գվինի նախատարատական միջնաբերդի ջնարակի թրծման գմբեթավոր յուրօրինակ վառարանների համալիրը՝ ջնարկած խեցեղենով և նրանց մեծարանակ խարամով, այնպես էլ տարբեր հուշարձաններում հայտնաբերված բազմազան ջնարակապատ կավամանները (Մեծամոր, Այգեան, Ռեդիկո-լագեր, Կիրովական, Սամթավրո, Խոջալի, Մինգեչաուր), որոնք իրենց ձևերով, զարգամտորվներով կրկնում են տեղական խեցեղենը և նրբեմն նաև գունազարդ կավամանների զարգամտորվները:

VIII. Հատկանշական է առևտրի ոլորտի ընդլայնումը, որը հանգեցնում է փոխազդեցությունների խորացմանը ինչպես առաջավոր և փոքրասիական երկրների, այնպես էլ Կովկասի, Հյուսիսային Կովկասի և Հյուսիս-արևմտյան Իրանի հետ ընդհանրապես:

Վերը բերվածի ամփոփումից պարզվում է, որ էթիոնյան ժամանակաշրջանի Հայկական լեռնաշխարհի հասարակությունն իր բազմաթիվ գծերով նմանվում է հարևան երկրների, հատկապես «հեղհեղուկ պետական կառուցվածք ունեցող» Միտանական հասարակությանը:

Ըստ Գր. Ղափանցյանի «ուրարտական տեքստերում էթիոնյան հավանաբար հասկացվում է որպես մեծ երկիր, կամ պետություն բազմաթիվ մանր շրջանների-իշխանությունների ֆեդերացիայով»:

էթիոնյան այս ֆեդերացիայի կամ պետու-

թյան զուխ, հավանաբար, կանգնած է եղել թագավորը, սակայն մեզ առայժմ հայտնի է միայն Դիոփինի անունը, որն, ըստ Սարգսի II-ի, իրացի էր (ՄԿII, 155 C):

Բացառված չէ, որ էթիոնյան տարածքում բնագրկված են եղել մանր թագավորություններ, կիսանկախ շրջաններ կամ վասալական կախման մեջ գտնվողներ (հավանաբար՝ Ուլուն-էթիոնյան), որոնք թրեա կառավարվում էին թագավորի կամ բարձրաստիճան պաշտոնյաների, կառավարիչների կողմից: Սարգսի II-ի տեքստերից մեզ հայտնի են Իգա երկրի թագավոր՝ Կապուրինին (ՄԿII, 155 F), Աբիլիանիսի թագավոր՝ Մուրինին (ՄԿII, 155C), Տուլիսուսի թագավոր՝ Մինալիբին (ՄԿII, 155C), Ուլիբուսի թագավորներ՝ Մուրինուն և Նիդինին (ՄԿII, 155 F):

էթիոնյան ֆեդերացիայի կամ պետության կազմում գտնվող վերոհիշյալ մանր թագավորությունները կամ կիսանկախ շրջանները, հավանաբար, ինչպես Միտանիում, տուրք են վճարել և անհրաժեշտության դեպքում իրենց բանակներով մասնակցել էթիոնյան մեծ պատերազմներին: Ուշագրավ է այն փաստը, որ Արգիշտի I-ը նվաճելով էթիոնյան, պատժում է նրա կազմում գտնվող հատկապես այն երկրների թագավորներին (Ուլիսերուսի, Լուշայի, Կատարգայի, Գուլուտախի, Աբուսի, Իգայի, Էրիսիսի, այսինքն էթիոնյան մեծ մասի թագավորներին), որոնք միացյալ բանակներով օգնության էին գնացել Դիաուսիին: Արժեքավոր են նաև Իշպուրիի և Սենուայի համատեղ գրված տեքստերի այն տողերը, որտեղ էթիոնյան ուլիսերուսի, լուշա, կատարգա ցեղերի նվաճման առնչությամբ հիշատակվում է նրանց օգնության եկած էթիոնյան բազմաթիվ թագավորների բանակների պարտության մասին:

էթիոնյաններն ունեցել են բավական ուժեղ բանակ: Պեղումներով հայտնաբերված հարձակողական զենքերի՝ լայնաշեղք սրերի, սակրերի, նիզակների, դաշույնների, նետերի ու լայնալիճ աղեղների առատությունը վկայում է նրանց լայն կիրառությունը, իսկ պաշտպանական միջոցների՝ վահանների (պատկերված բրոնզե դոսիների վրա), զրահների, գերազանցապես ծարիր և կապարե սկավառակներով և բազմաթիվ կոճակներով կազմված սաղավարտների ու լանջապանակների, գլխաթասակների առկայությունը ապացուցում է էթիոնյան բանակի լավ պինդ լինելը:

Ձիաբուծության բուռն թափով զարգացումը, դամբարաններում զինվորականների հետ ձիերի

թաղումները վկայում են հեծելազորի և, ամենաչնչ հավանականությամբ, մարտակառքերի առկայությունը էթիոպյան բանակում:

Մյուս կողմից, առաջնորդների դամբարաններում, ինչպես նաև միջին ունեցվածքի տեր մարդկանց հետ նստած վիճակում թաղված ստրուկների մեծ քանակությունը, նաև մեկուսի կամ ընտանիքներով նստած թաղումներն, անշուշտ, հարևան երկրների հետ էթիոպիացիների մղած պատերազմների արձագանքներն են, պատերազմներ, որ էթիոպյան հասարակությանը պետք է ապահովեր աշխատող ձեռքերով և նյութական բարիքներով: Հավանաբար, պատերազմական նման գործողությունների ապացույցներից մեկը էթիոպյան ուխտերուխի, լուշա, կատարգա ցեղերի, Ուրարտուի սահմանների վրա, դեռևս մ. թ. ա. IX դարում, նախահարձակ լինելն է, որը, սակայն, ավարտվում է պարտությունով և Իշպուհինի ու Մենուայի կողմից այդ երկրների նվաճումով (ՄԿԽ, 20—23):

Այսպիսով, էթիոպիում զինվորականներն ակներևաբար սոցիալական մի առանձին կատեգորիա էին ներկայացնում և նրանց հիմնական դրամները արշավանքներն էին, զինվորական ավարի ձեռքբերումը:

Ուրարտական թագավորները նշում են միայն իրենց հաղթանակների մասին, սակայն մեզ հասած սեպագիր արձանագրությունները վկայում են, որ ուրարտացիների նվաճումները էթիոպիում ժամանակավոր բնույթ են կրել և երբեմն ուրարտական զորքերի ետ քաշվելուց անմիջապես հետո նրանք նորից վերականգնել են իրենց անկախությունը: Այդ իսկ պատճառով ուրարտական թագավորները ստիպված են լինում բազմիցս վերանվաճելու էթիոպիի կազմում գտնվող այդ երկրները ու նրանց հնազանդեցնելու նպատակով նվաճված վայրերում կառուցում են իրենց վարչաքաղաքական, կրոնական կենտրոնները:

էթիոպյան հասարակությանը բնորոշ է տնտեսության հիմնական ճյուղերի բուռն վերելք և ինչպես Միտանիում՝ երկրագործության ինտենսիվացում և անցում մասնագիտացած տիպի տնտեսությունների՝ այգեգործության, խաղողագործության, բանջարաբուստանային կուլտուրա-

ների մշակման, դաշտավարության, արոտավայրային անասնապահության, որոնք վարում էին անհատ ընտանեկան բջիջները:

Արտագործության տիրող ճյուղը՝ մետաղագործությունը, իր հերթին անսահման հնարավորություններ է բնօրոգում տնտեսության դարգացման և նյութական բարիքների առատության, նաև Առաջավոր Ասիայի ու կովկասյան երկրների հետ առևտրական, մշակութային սերտ կապերի և համագործակցության բնույթի մասին համար:

էթիոպյան ֆեոդերացիայի կամ պետության կործանման գլխավոր պատճառը, անշուշտ, երկրի մասնատվածությունն էր, առանձին թագավորիկներ-արքաների կամ փոխարքաների կենտրոնախույս ձգտումները: Մյուս կողմից, նրա հզոր ախոյան, ուրարտական պետության հզորացումն էր, պետություն, որի համար էթիոպիան դարձավ հսկայական նյութական միջոցների և աշխատող ձեռքի՝ ստրուկների աղբյուր: Սակայն այդ բոլորին գումարվեց նաև հյուսիսից՝ կիմերների ներխուժումը, որոնց հիմնական բնակավայրերը մ. թ. ա. VIII դարի կեսին դառնում են Փոքր Կովկասի հյուսիսային և հարավային լանջերը, մինչև Մաղկա լեռները և Կուր գետը:

Սակայն ստեղծված պատմական նոր իրավության պայմաններում էթիոպիան շարունակում էր իր ազատագրական պայքարը Ուրարտուի դեմ, երբեմն, հավանաբար, դաշնակցելով Ուրարտուի նոր թշնամիների՝ կիմերների, մի փոքր ավելի ուշ՝ սկյութների հետ:

Հարկավ, նորանոր վավերագրերի հայտնաբերումն ու հնագիտական ուսումնասիրությունները հնարավորություններ կընձեռեն ավելի ստույգ, բազմակողմանիորեն ներկայացնելու էթիոպիի խոր անցյալը:

Դարանին էթիոպյան կարևորագույն օջախներից էր և այն իր արժեքավոր լուծման է ներդրել այդ մշակույթի դարգացման ասպարեզում:

Նտուրարտական, հելլենիստական և միջնադարյան նյութերի ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում էլաոի տարածքում կյանքի ու գործունեության առկայությունն ընդհուպ XX դարը:

## ՀԱՄԱՌՈՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՊԹ—Ազրբեջանի պատմության թանգարան:  
ԿԵԹ—Կիրովականի երկրագիտական թանգարան:  
ՀԺՊ—Հայ ժողովրդի պատմություն:  
ՀՀՀ—Հայաստանի հնագիտական հուշարձաններ:  
ՀՊՊԹ—Հայաստանի պատմության պետական թանգարան:  
ՄԹ—Մեծամորի թանգարան:  
ՊԲՀ—Պատմա-բանասիրական հանդես:  
ՍՊԵԹ—Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարան:  
ՎՊԹ—Վրաստանի պետական թանգարան:  
АО—Археологические открытия.  
ВДИ—Вестник древней истории.  
ВОН—Вестник общественных наук.  
ГАИМК—Государственная Академия истории материальной культуры.  
ГИМ—Государственный исторический музей.  
Изв. АЗФАН—Известия Азербайджанского филиала Академии наук.  
ИАК—Известия Археологической комиссии.  
ИФЖ—Историко-филологический журнал.  
КСИА—Краткие сообщения Института археологии.  
КСИМК—Краткие сообщения Института истории материальной культуры.  
МАД—Материалы по археологии Дагестана.  
МАК—Материалы по археологии Кавказа.  
МИА—Материалы и исследования по археологии.  
МКА—Материальная культура Азербайджана.  
ОАК—Отчеты археологической комиссии.  
СА—Советская археология.  
УКП—Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи.  
AS—Anatolian Studies.  
ТТК—Türk tarih kurumu.



## РЕЗЮМЕ

Армянское нагорье еще с эпохи неолита было заселено раннеземледельческо-скотоводческими племенами, достигшими наивысшего своего культурного развития в период ранней бронзы, изучение истории и культуры которой представляет большую важность для освещения далекого прошлого Ближнего Востока и Кавказа.

Благогатные долины, горные пояса с лесистыми склонами и альпийскими лугами так называемого «горного острова», охватывающего около 300 тыс. км<sup>2</sup> территории, с III тысячелетия до н. э. покрываются густой сетью поселений, изучение которых получило особенно большой размах в последние десятилетия. Новые памятники выявляются и изучаются в Араратской долине, Шираке, Гугарке, в северо-восточной части Армянского нагорья. Исследуется и территория исторической Армении. В связи с проектом Кебан ведутся раскопки десятков памятников золотосной долины Харберда (Элязиг).

В изучении истории носителей этой своеобразной культуры особое место занимает исследование Элара. Этот замечательный памятник с богатым прошлым, носящий на себе следы крупных исторических событий, находится в 16 км севернее г. Еревана. Спустя много веков на его территории возникает современный город Абовян.

Элар является одним из важнейших исторических очагов, где на протяжении длительного времени наблюдается процесс развития этнокультурной общности древнейшего населения Армянского нагорья. Этот интереснейший памятник расположен на горном плато (исторический Котайк) на высоте 1500—1900 метров над уровнем моря, на древнейшей магистральной дороге, которая соединяла Цалкинское плоскогорье и северо-восточный Кавказ с Араратской долиной, Ванским озером, с долинами Муша, Харберда и Малатии. Имея

обширные пастбища, плодородные земли, обилие пресных вод, Элар, естественно, с древнейших времен должен был служить пристанищем человека. Детальное изучение археологического материала подтверждает непрерывность исторического процесса на территории Элара, начиная с III тысячелетия до наших дней.

Научному миру Элар известен с 60-х годов прошлого столетия, когда Месроп Смбалян впервые опубликовал обнаруженный здесь клинописный текст Аргишти I, а комментарии М. В. Никольского показали, что Элар до вторжения урартийцев именовался Дарани. Текст Аргишти I гласит «Бог Халди выступил (в поход) со своим оружием (?), победил он страну Этиуни. Халди могуч, оружие (?), бога Халди—могучее. Могуществом бога Халди выступил (в поход) Аргишти, сын Менуа, завоевал он страну Улуани, страну города Дарани» (УКП, 131, см. рис. 3). Г. Ачарян «Дарани» этимологизирует индоевропейскими языками, возводя его к пехлевийской форме «daran». Таким образом, к местному наименованию Даран урартийцы прибавили свойственное им окончание «и».

Археологические исследования и разведочные раскопки здесь проводились Е. Лалаяном (1927 г.), Е. Байбуртяном (1929 г.). В 1960—1961 и 1969 гг. мною были произведены раскопки погребального поля Элара, а в 1973 г. работы сосредоточены на территории самой крепости.

Крепость расположена в южной части с. Элар, на высоком (40—50 м), большом (площадью 10 га) холме вулканического происхождения (рис. 1).

На вершине холма располагается цитадель, защищенная разновременными оборонительными стенами циклопической кладки. Верхнюю площадку окаймляет древнейшая циклопическая стена, вход которой защищен

выступающими с двух сторон контрафорсами.

Раскопками разведывательного характера выясняется, что она принадлежит к самому раннему слою крепости Дарани, т. е. относится к эпохе ранней бронзы.

Следы поселения ранней бронзы выявлены на вершинной части холма и его террасах. С северо-восточной стороны до сих пор на двух террасах стоят шесть круглых жилищ каменной кладки диаметром 6—8 м, раскопанные Е. Лалаяном. Во всех жилищах и около них обнаружены различные сооружения хозяйственного назначения, вырытые в скале.

На восточном склоне холма («гумно Капро») Е. Лалаяном и Е. Байбуртяном открыты два культурных слоя. Верхний—раннесредневековый слой с тонирами, керамикой, четырехугольным каменным сооружением, внутри которого стояли базальтовые базы с христианскими сюжетными рельефами. Под средневековым слоем раскопаны горизонты эпохи ранней бронзы с зерновыми, хозяйственными ямами, с очагами, керамикой и другими характерными для этой эпохи предметами.

Мною в 1973 г. на южных террасах холма были заложены два стратиграфических раскопа. В раскопе P<sub>1</sub> (9,5 м ниже вершинной части холма, рис. 8) зафиксировано два слоя: раннежелезной эпохи и под ним слой эпохи ранней бронзы (толщиной 1 м) с круглым жилищем, керамикой и орудиями труда.

В раскопе P<sub>2</sub> (9,5 м ниже раскопа P<sub>1</sub>) была вскрыта часть оборонительной стены циклопической кладки. Раскоп P<sub>3</sub> характеризуется тремя этапами эпохи бронзы и завершается на глубине 4,0 м стерильным, глинистым основанием скалы.

Раскопанный материал и некоторые особенности строительного характера дают возможность в слоях эпохи ранней бронзы, выявленных в разных участках крепости Дарани, видеть хронологически последовательные этапы.

Безусловно, раннюю датировку имеют слои, выявленные на северо-восточном и восточном склонах крепости, со своими круглыми жилищами, стены которых выложены двумя рядами неотесанных камней. Внешний круг стены сооружен огромными камнями (высотой с 1—1,5 м). Стены круглых жилищ, выявленные в раскопах P<sub>1</sub> и P<sub>3</sub>, воздвигнуты двумя рядами камней средней величины.

Керамика, раскопанная Е. Лалаяном и Е. Байбуртяном, украшена ямками и «усиками» (рис. 15—18), имеет многочисленные аналоги в нижних слоях поселений Араратской долины (Аревик, Джраовит, Мецамор, Нахичеванская Кюль-Тепе) в курганах Джарата, Лчашена, на территории исторической Армении в погребениях Адилджеваза, Арче-

ша (Эрнис), в Ванской крепости, в Хайке, в памятниках долины Харберда, в Малатии (Аслан-Тепе), в Иранском Азербайджане (Геой-Тепе, слой К), а также на севере, в Квемо-Картли (Кикети, Тамариси, Тетри-Цкаро, Самшвилде). Эти аналоги дают право вышеупомянутые слои Элара датировать первой половиной III тысячелетия до н. э.

Раннебронзовый слой раскопа P<sub>1</sub> с керамикой, имеющей акцентированные переходы частей сосуда и украшенной овальными крупными явками (рис. 25), хронологически следует за слоями, открытыми Е. Лалаяном. Она имеет свои аналоги в V—III (снизу) строительных горизонтах Джраовита, в IV (снизу) слое Аревика, в Гарни, в погребениях № 2 Кахси и может датироваться серединой III тысячелетия до н. э.

Два строительных слоя ранней бронзы раскопа P<sub>2</sub>, со своими материалами, в особенности керамикой, украшенной спиралевидными завитками и линейно-геометрическими узорами (рис. 30—32, табл. I—III), имеет многочисленные аналоги в памятниках, датированных второй половиной III тысячелетия до н. э. Такими памятниками Араратской долины (Шенгавит, Воскеблур, Лчачи-блур, Двиш, Агванатуи, Сев-блур, Шрен-блур, верхние горизонты Джраовита, Айгевана, Мохраблур, Мецамора), Игдыра (Йиджи), Вана (Беркри-Зюлфюбулах), Харберда (верхние горизонты Есенкенда, Тепечика, Ташкуи-кале, V слой Коручу-тепе, датированный 2600—2100 вв. до н. э.), Аднамана, Мараша и Малатии (Хоромхан, Сиврикая), Муша (Шейх-пирим), Маназкерта (Буланых), Карина (Арцен-Караз), Ширака (Карнут, Арч), Кировакана (Коси-Чотер, Такаворанис), долины р. Агетев (Баба-Дервини) и к северу—Шулавери, Тбилизи (Сабуртало).

В конце III тысячелетия до н. э. культура эпохи ранней бронзы достигает наивысшего своего развития. Совершенствуются ремесла. Керамика выделяется своим многообразием. Старые формы сохраняются, широко распространяются варианты одного и того же типа сосуда. Появляются новые формы сосудов. В конце тысячелетия синтезируются формы и орнаменты, характерные для всей культуры ранней бронзы. Здесь можно встретить все варианты орнаментации—рельефный, рельефно-вогнутый, тонко-линейный, ямочный, однако они претерпевают количественные и качественные изменения.

Керамика с вышеуказанными свойствами характерна для всей территории Армянского нагорья.

О богатой духовной и материальной культуре племен, населявших территорию Элара Дарани, свидетельствуют многочисленные данные из раскопок погребений.

На территории песчаных карьеров, где располагается древнейшее погребальное поле Элара, раскопано двадцать одно погребение трех типов.

1. Подковообразные, сложенные из небольших камней (погребения № 4, 6); 2) Ящики каменных плит (№ 3, 10, 36); 3. Глинобитные грунтовые камеры (№ 1, 8, 9, 14—18, 20, 24, 37). Пять захоронений были в сильно разрушенном состоянии (№ 5, 11, 22, 26, 41).

Необходимо отметить, что по стратиграфическим данным погребального поля древними являются большинство из грунтовых, глинобитных камер (№ 9, 14, 16, 17, 20, 24, 37, см. табл. VI; 1, рис. 48, 49, 51, 54), а подковообразные захоронения и ящики, сложенные из плит, возвышаются примерно на 0,3—0,5 м. Кроме того, традиция грунтовых глинобитных погребений имеет более древние корни. В Коручу-тепе (Харберд) они восходят к позднему халкоlitу (3500—3000 гг. до н. э.). Одиночные глинобитные камеры характерны также для нижних—неолитических—слоев Ашинар-блур и Нахичеванской Кюль-тепе. Фактически они являются прототипами эларских погребений. С Нахичеванской Кюль-тепе эларские захоронения сходны и погребальным обрядом, что, несомненно, указывает на их принадлежность к одной этнической группе.

Керамика этих ранних погребений характеризуется неравномерным обжигом, плоским дном, небрежным исполнением орнамента. Плечики сосудов слабо биконичны и орнаментированы мелкими, круглыми ямками, иногда с сочетанием рельефных шпал, ямок или же рудиментарных ручек (рис. 55, 59, 60, 61, табл. VI, IX; 6).

Аналогичная керамика характерна для нижних слоев поселений Аревик, Джраовит, Есамор, Нахичеванской Кюль-тепе. Гёер близ Еревана для слоя «К» Геой-тепе, обнаружена в Кикети, Тамариси, Самшвилде.

Более архаичны также амулеты из погребения № 37 (рис. 56), самые ранние образцы которых обнаружены в неолитических памятниках Тессалии и в VI слое Чатал-Гююка.

Таким образом, эту группу глинобитных погребений Элара можно датировать началом III тысячелетия до н. э.

Более молодыми кажутся глинобитные камеры № 15, 18 (рис. 62, 65), которые как положением скелета, так и группировкой сосудов тяготеют к каменным ящикам. Аналогичная керамика этих погребений (рис. 63, 66, табл. VII; 5, 6) обнаружены в IX—VI слоях (снизу) Джраовита, в приванских каменных ящиках Арчеша (Эриси), Адилчеваза. Она выявлена в долинах Муша (Согком-Тепеси) и Харберда (Есенкаван, Норшун-тепе), в слое К<sub>3</sub> Геой-тепе.

Аналогичной черенкового плоского кинжала из погребения № 18 (рис. 68) является кинжал из Кировакана. Последний найден вместе с керамкой, украшенной «усиками» и ямками (рис. 69, 70).

Поход из яшмы (рис. 72), обнаруженный около погребения № 15, хотя аналогичен по форме бронзовому ножу из каменного ящика № 10 (рис. 71), однако яшмовый найден на 0,3 м ниже погребения № 10 и, следовательно, сравнительно древнее бронзового.

Таким образом, верхняя граница датировки глинобитных камер № 15, 18, по-видимому, приходится на 2700 г. до н. э.

По всей вероятности, серединой III тысячелетия до н. э. могут быть датированы каменные ящики № 3, 10, 36 (рис. 42, табл. IV; 2) и грунтовая камера № 8 (рис. 45), которые стратиграфически находились выше древнейших глинобитных погребений.

Черенковый бронзовый кинжал из погребения № 8 (рис. 47, табл. VII; 9), хотя и моложе найденного в погребении № 18 (рис. 68), однако он древнее случайно обнаруженного в Эларе кинжала (табл. VII; 10), который аналогичен находкам в Эчмиадзине (табл. VII; 11), Арци-Каразе. Кинжалы этого типа предшествовали раннебронзовым кинжалам Кармир Ванского типа (табл. VII; 12) и более близки к кинжалам из Новосвободненских курганов, которые приурочиваются ко второму этапу «Больших кубанских курганов» (2300—2000 вв. до н. э.).

Бронзовому ножу из погребения № 10 (рис. 71) идентичен Нальчикский (курган в «Садках»), который А. А. Иссен относит к раннемайкопскому времени «Больших кубанских курганов» (2500—2400 вв. до н. э.).

Чернолощенная керамика из вышеуказанных ящиков, украшенная ямками, рудиментарными ручками, имеет свои аналогии в нижнем слое Гарни, в поселении Ташкун-Мевки (Харберд) и на Цалкинском плоскогорье.

Кубки эларского и цалкинского типа доходят до Мекенской станицы на северном берегу реки Терек (курган № 4, погребение № 16). Е. И. Крупнов и П. Я. Мерперт отмечают, что аналогии Мекенского кубка датируются серединой III тысячелетия до н. э. (Арчеш, Геой-тепе, Цалка). Однако этот кубок они относят к Майкопской культуре. Р. М. Мунчаев справедливо относит Мекенский кубок к куро-аракской культуре.

Таким образом, вышеуказанные аналогии помогают эларские погребения № 3, 8, 10 датировать 2600—2400 гг. до н. э.

Подковообразные погребения Элара (№ 4, 6, рис. 39, табл. IV; 1), видимо, сразу следуют за каменными ящиками, сосуществуя с ними и во второй половине III тысячелетия до н. э.

Этим же временем может датироваться

наконечник дротика (рис. 75) из погребения № 22, более развитые образцы которого обнаружены в слое В<sub>1</sub> Арци-Караза и в дольменах Эперы.

Второй половиной и концом III тысячелетия могут быть датированы погребения № 5, 11 и 26 (табл. VIII; 1, 3—6, рис. 77).

